



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СЕДРАК БАРХУДАРЯН–120
СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

SEDRAK BARKHUDARYAN–120
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА
ЕРЕВАН 2019

PUBLISHING INSTITUTE ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY NAS RA
YEREVAN 2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՂՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ – 120
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱՃՈՒ

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ս 338

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ պատմ. գիտ. թեկնածու Գագիկ Սարգսյան
պատմ. գիտ. թեկնածու Արսեն Հարությունյան

Ս 338 Սեդրակ Բարխուդարյան–120. Գիտական հոդվածների ժողովածու / Խմբագրությամբ՝
Գ. Գ. Սարգսյանի և Ա. Է. Հարությունյանի. – Եր.: ՀԱԻ հրատ, 2019, 160 էջ:

Ժողովածուն ընդգրկում է պատմաբան, վիճակագրաբան Սեդրակ Բարխուդարյանի
(1898–1970) ծննդյան 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը (30 մայիսի,
2018 թ.), որոնք հիմնականում առնչվում են մեծանուն գիտնականի վիճակագրագիտա-
կան գործունեությանն ու վերջին տարիներին հայտնաբերված մի շարք հայերեն վի-
ճագրերին:

Նախատեսված է աղբյուրագետների, պատմաբանների, հնագետների, հայոց պատ-
մության հարցերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-9178-8-7

© ՀԱԻ Հրատարակչություն, 2019



*Սերբակ Բարխուդարյանը Բշիանապանքի գերեզմանատան
(գ. Վարդենիկ) 1290 թ. խաչքարի վիմագիրն ընթրօրհասկելիս*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | |
| Գիտությանն անմնացորդ նվիրումի վառ օրինակ (Մեղրակ Բարխուդարյանի ծննդյան 120-ամյակի առթիվ) | 9 |
| ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ | |
| Վաճառի Ս. Ստեփանոս վանքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները և նորահայտ արձանագրությունները | 11 |
| ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Անտիպ վիմագրեր Երևանի Կաթողիկե եկեղեցուց | 31 |
| ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ | |
| Նորահայտ արձանագրություններ Վերիշենից. Մեղրակ Բարխուդարյանի հետքերով | 45 |
| ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ | |
| Նորահայտ վիմագրեր Սոթքի տարածաշրջանից | 56 |
| ԱՐՄԵՆ ԲՈՒՐՈՒՅԱՆ | |
| Մեղրակ Բարխուդարյանը և վիշապաքարերի հետազոտությունը 1920–1930-ական թթ. | 65 |
| ՏՈՐԲ ԴԱԼԱԼՅԱՆ | |
| Շիրվանի տարածքի հայ թագավորության պատմության լուսաբանումը Մեղրակ Բարխուդարյանի աշխատանքներում | 78 |
| ԱԼԵԲՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ | |
| Կոզեռն-Կոնդի 591թ. ենթադրեալ բերդի հետքերով | 92 |
| ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ | |
| Գավառանու Միրանշենց տանուտերական տոհմը սաղմոսավանդանի հավելվամբ | 109 |
| ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ, ԿԱՐԵՆ ԱԶԱՏՅԱՆ | |
| Եղեգնաձորի նորահայտ հնձանը | 114 |
| ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | |
| Անձնանունները վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում. նորահայտ անձնանուններ վիմագրերից | 120 |
| ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | |
| Պղնձե արձանագիր առարկաներ Սարդարապատի հայոց ազգագրության թանգարանից | 139 |
| ԳՈՀԱՐ ՄԻՒԹԱՐՅԱՆ | |
| Հայերը գերմանացի ճանապարհորդ Սամուիլ Գմելինի ուղեգրությունում | 152 |
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ | 159 |

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՄԱՑՈՐԴ ԵՎԻՐՈՒՄԻ ՎԱՌ ՕՐԻՆԱԿ
(Սեդրակ Բարխուդարյանի ծննդյան 120-ամյակի առթիվ)

Հայաստանի միջնադարյան պատմության վերաբերյալ յուրաքանչյուր ուսումնասիրություն, պատմագիտական որևէ խնդրին նվիրված մեծ կամ փոքր աշխատություն, գիտական պատշաճ հիմնավորման ու հավաստիացման նպատակաուղղվածություն, անհրաժեշտաբար պահանջում են բազմապիսի սկզբնաղբյուրային ատաղձ՝ ի դեմս մատենագրական, վիմագրական, ավելի ուշ շրջանի համար՝ արխիվային նյութերի: Այս շարքում առանձնահատուկ կարևորություն են վիմական արձանագրությունները, որոնք աչքի են ընկնում եթե ոչ ծավալով, ապա բովանդակությամբ, ճշգրտությամբ ու վավերականությամբ:

Վիմական արձանագրությունները վիմագրագիտություն գիտաճյուղի հետազոտական գլխավոր ու հիմնական առարկան են, իսկ հայագիտական գրվածքներում վիմագրական նյութի օգտագործումը մեծապես նպաստել է ստեղծագործության գիտականությանը:

Այս բնագավառի առավել երևելի ներկայացուցիչը վաստակաշատ Սեդրակ Բարխուդարյանն է, որի ծննդյան 120-ամյակը հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի նախաձեռությամբ գիտական նստաշրջանով նշվեց 2018թ. գարնանը: Արժանահիշատակ հոբելյարը եղել է նշված բաժնի հիմնադիր վարիչը (1960–1970թթ.):

Հայ վիմագրագիտության մեջ անչափելի է Սեդրակ Բարխուդարյանի ավանդը: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում ձեռք բերած հարուստ գիտելիքները նրան հնարավորություն տվեցին արդեն 1920-ական թթ. զբաղվել պատմամշակութային հուշարձանների հետազոտությամբ, ինչին մեծապես նպաստեց երկարամյա գործունեությունը հուշարձանապահպանության բնագավառում: Լայն էին Սեդրակ Բարխուդարյանի գիտական հետաքրքրությունները և, դրանով պայմանավորված, ուսումնասիրությունների ժամանակագրական ու բնագավառային շրջանակները: Գիտական պրպտումների սկզբնափուլում նրա ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում էին ուրարտական ժամանակաշրջանի պատմությանն ու

հուշարձանների քննությունը: Հետագա տասնամյակներում նրա ուշադրությունը կենտրոնացավ Հայագիտություն կարևոր բաղադրիչներից մեկի՝ վիմագրագիտության վրա, որը Սեդրակ Բարխուդարյանին դարձրեց բնագավառի ոլորտաստեղծ մեծամեծների՝ Նիկողայոս Մառի ու Հովսեփ Օրբելու գործի արժանավոր շարունակողն ու զարգացնողը, ի մասնավորի՝ «Դիվան հայ վիմագրություն» մատենաշարի կազմման ու հրատարակման գործում:

Մեծ Հայագետ-վիմագրագետի ստեղծագործությունների պատկան են «Դիվան»-ի ցայսօր հրատարակված տասը հատորներից վեցը, որոնցից միայն երկուսը (II և III հատորները) լույս տեսան իր կենդանություն օրոք (1960թ., 1967թ.), մյուսները (IV, V, IX, X հատորները) հրատարակության պատրաստվեցին ու տպագրվեցին նրա սաների ու գործը շարունակողների կողմից:

Աղբյուրագիտական այս բարձրարժեք մատենաշարի կողքին արժանիորեն տեղ են գրավել նրա՝ Հայոց միջնադարի պատմության ամենատարբեր խնդիրներին վերաբերող բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք անշրջանցելի են ժամանակակից ու մերօրյա Հայագետների համար: Առանձնակի գիտական կարևորություն են ներկայացնում Արցախի և հարևան հայաբնակ տարածքների պատմության ու մշակույթի տարաբնույթ խնդիրների հմտալից քննությունը բովանդակող ծավալուն հոդվածներն ու վերջերս ուղևորեն հրատարակված մենագրությունը (Եր., 2011): Հայոց շինարվեստի, ճարտարապետության ու քանդակագործության ուսումնասիրության լավագույն օրինակ է Սեդրակ Բարխուդարյանի «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» աշխատությունը (Եր., 1963):

Գիտական նստաշրջանի անցկացմանը սիրով արձագանքեցին ինչպես ինստիտուտի, այնպես էլ գիտական այլ հաստատությունների գիտնականներ, ըստ այդմ՝ ներկայացվող հոդվածների սույն ժողովածուն դիտարկում ենք որպես մի համեստ տուրք մեծանուն գիտնականի հիշատակին:

Վիմագրության բաժնի վարիչ,
պատմ. գիտ. թեկնածու Գագիկ Գ. Սարգսյան
26.11.2018թ.

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱԼ

ՎԱՃԱՌԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՎԱՆՔԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՉՈՒԲԵԼԵՐԸ
ԵՎ ՆՈՐԱՐԱՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիմնաբառեր՝ Արցախ, հնագիտություն, վաղբրիստություն, դամբարան, մնարոտ, գավիթ, խաչքար, փաստանաքար, արձանագրություն, քանդակ:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի հնագիտության խումբը (ղեկավար՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ., ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ Համլետ Պետրոսյան, հնագետ՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Արմինե Գաբրիելյան, ճարտարապետ՝ նույն ինստիտուտի գիտաշխատող Լիլիթ Մինասյան, 12 բանվոր մերձակա Ծմակահող և Առաջածոր գյուղերից) 2017թ. հունիս-հուլիս ամիսներին հնագիտական պեղումներ է կատարել Վաճառի Ս. Ստեփանոս վանքում: Սույն հոդվածը ներկայացնում է պեղումների հիմնական արդյունքներն ու արձանագրությունները¹:

Վաճառի Ս. Ստեփանոս վանքը գտնվում է Խաչենագետի ձախ վտակ Վաճառի միջնահովտի ձախ բարձրադիր ափի լեռնաբազուկներից մեկի վրա (նկ. 1), Վաճառ գյուղաքաղաքի ավերակներից մոտ 500մ դեպի հարավ, ներկայիս Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղից հարավ-արևելք:

Ներկա հնագիտական հետազոտության նպատակն էր պարզել Ս. Ստեփանոսի մատուռ-դամբարանի ծավալակառուցվածքային լուծումը, ճարտարապետական մանրամասներն ու գեղարվեստական հարդարումը, լուծել դրա կառուցման ժամանակի հետ կապված խնդիրները: Սակայն պեղումների արդյունքում բացվեցին նաև արևմուտքից մատուռին կից հարթակն ու գավիթը, դրանց կից ընդարձակ տապանաբակերը և որմնափակ խաչքարի մնացորդները:

Ա. Վաճառ գյուղաքաղաքը և Ս. Ստեփանոս վանքը

Վաճառ գյուղաքաղաքի, ինչպես նաև վանքի ու մյուս կառույցների մասին համաժամանակյա մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել: Ս. Ստեփանոսի պաշտամունքն ու նրա հետ կապված եկեղեցական կառույցների, նրա անունով դամբարանի, ապա և վանքի ձևավորումն ու պատմության առանձին դրվագ-

1 Պեղումներն սկսվել են հունիսի 25-ին և ավարտվել հուլիսի 17-ին: Պեղվել է մոտ 700 քառ.մ, միջին խորությունը՝ 1,5մ: Աշխատանքները ֆինանսավորել է բարերար Սուրեն Գրիգորյանը, կազմակերպել է ԱՀ Էկոնոմիկայի նախարարության պատմական միջավայրի պահպանության վարչությունը: Արցախի հնագիտական խումբը շտրիակալություն է հայտնում բարերարին և կազմակերպիչներին: Չավագրություններն ու գրչանկարները՝ Լիլիթ Մինասյանի:

ները հնարավոր է վերականգնել միայն արձանագրական, ճարտարապետական և հնագիտական տվյալների քննությունը:

Արցախում Վաճառ անունով երկու բնակավայր է հայտնի: Մեկը Քարավաճառն է, որի գրավոր առաջին հիշատակությունը գտնում ենք 1402թ. մի հիշատակարանում²: «Քարավաճառ» բառացիորեն նշանակում է հրվանդանի (ժայռի) վրայի Վաճառ, ինչը լիովին համապատասխանում է այդ բնակավայրի տեղագրությունը (այժմ՝ Արցախի Հանրապետության Նոր Շահումյանի շրջանի Քարավաճառ շրջկենտրոնը): Երկրորդը մեր Վաճառն է, որի առևտրական բնույթը անուսից զատ հավաստում են նրա ավերակների նկարագրությունը, որ տվել է Մակար Բարխուդարյանցը 19-րդ դ. վերջերին («Վաճառ աւերակ գիւղաքաղաք. գիւղիս (Ծմակահողի— Հ. Պ.) արևելեան հանդէպ, Վաճառ առուի ձախ ափի լանջի վերայ երևում են ընդարձակ աւերակի հետքեր, տնատեղեր, խանութների և այլ շինութեանց քարուկիր մնացորդներ: Այս է Ջալալեան իշխանների գիւղաքաղաքն, որպէս ցոյց է տալիս և անունն և աւերակն»³), այնպես էլ այս բնակավայրի հետսագույն թուրքերեն «Բագարքենդ» անվանումը (հմտ. օրինակ՝ Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի օրագրի հետևյալ տողերը. «Վաճառն՝ այսինքն] Բագար-քեանտուկ[ա]մ Ծմակահողու փոքր եկեղեցւոյ գիրն է»⁴): Կարծում ենք, հենց այս Վաճառին է վերաբերում Կեչառիսի վանքում Հասան-Ջալալի և նրա կնոջ՝ Մամբանի թողած նվիրատվական արձանագրության հետևյալ հատվածը. «...տվաք ի Հարավոյ Վաճառէն յամէն ամի :Ռ: դուկատ»⁵: Այս ենթադրությունն ավելի է հիմնավոր դառնում, եթե հաշվի ենք առնում, որ Ս. Ստեփանոս վանքը տեղացիները որպես կանոն կոչում են «Հըրավա եղցի»: Կոչիկ անապատի 13-րդ դ. մի արձանագրություն սկսվում է այսպես. «Ես՝ Վասակ, գնեցի հող ի Վաճառատեղս...»: Ինչպես Ս. Բարխուդարյանն է գրում, այստեղ ամենայն հավանականությամբ նկատի է առնված Վաճառը⁶: Եթե այս գիտությունները հիմնավոր են, ապա կարելի է հավանական համարել, որ իրոք Վաճառը 12–13-րդ դդ. Հասան-Ջալալյանների առևտրաարհեստավորական կենտրոնն էր, և նրա սրբությունների հանդեպ էլ իշխանական տան ներկայացուցիչների վերաբերմունքը առանձնահատուկ է եղել: Համաձայն պեղումների ժամանակ հայտնաբերված 1274թ. մի նվիրատվական արձանագրության՝ վանքը նաև եպիսկոպոս է ունեցել (տե՛ս էջ. Նորահայտ արձանագրությունները, արձ. Ա.), այսինքն, հավանական է, որ այն եղել է թեմական կենտրոն: Թերևս

2 «...և յարիեայիսկոսութեան այսմ նահանգիս տէր Զաքարիայի Դադի Վանուց վերատեսչի, ի հոջակատր երկիրս Ծար, ի գւղս Քարավաճառ ...» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կ.Ս, Երևան, 1955, էջ 24):

3 Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 184:

4 ՄՄ ձեռ. Հ^Գ 7821, թ. 20բ: Հավելենք, որ ուշ միջնադարից մինչև անցած դարի կեսերը նույն դերակատարությունն ուներ Ծմակահողի հարևանությամբ գտնվող Առաջածոր գյուղի՝ դեպի լեռնային արտավայրեր տանող ճանապարհին գտնվող արիեստավորաառևտրական թաղամասը, որ ժողովուրդը կոչում էր «դոպրննե» (այսինքն՝ խանութներ):

5 Հետևում են վիմագրագետ Գագիկ Մարգայանի ընթերցմանը, որին ծանոթանալու համար իմ երախտագիտությունն են հայտնում:

6 ԴՀՎ, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 30, արձ. 61, էջ 78:

այս հանգամանքներն էլ դեր են խաղացել, որ ուշադրություն դարձվի վաղը-րիստոնեական դամբարանին, այստեղ «Հայտնվեն» համաքրիստոնեական սրբի մասունքները, կառուցվի նոր եկեղեցի (մինչև Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ տաճարի հիմնարկեքը), և վերակառուցվի վաղքրիստոնեական դամբարանը:

Ս. Ստեփանոսը վանքային համալիր է՝ բաղկացած Ս. Ստեփանոս միանավ բազիլիկ եկեղեցուց և, ինչպես պարզեցին պեղումները, նրան հարավից կից Ս. Ստեփանոսի կրկնահարկ դամբարան-մատուռից, մատուռին արևմուտքից կից գավթից և դրանց շուրջը գտնվող տապանաբակերից (նկ. 2, 3): Պահպանվել են նաև հյուսիսից եկեղեցուն կից դարպասի ու պեղումներով վավերացված որմնափակ խաչքարի մնացորդները (նկ. 4): Ողջ համալիրը ներառված է աշտարակներով ամրացված պարսպապատերի մեջ: Պարսպապատից ներս՝ հիմնական համալիրից դեպի հարավ և հյուսիս, պահպանվել են այլ կառույցների, պարիսպներից դուրս՝ հարավից հյուսիս ձգվող ընդարձակ գերեզմանոցների հետքեր:

Վաճառի Ս. Ստեփանոս եկեղեցու մասին առաջին մատենագրական հիշատակությունը գտնում ենք Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի (գահակալել է 1701–1728թթ.) օրագրում, ուր կաթողիկոսն ընդօրինակել է եկեղեցու և մատուռի շինարարական արձանագրությունները (հատվածաբար և մոտավոր)⁷: Այդ արձանագրություններից պարզ է դառնում, որ եկեղեցին 1229թ. կառուցել է Խաչենի իշխան Հասան-Ջալալը՝ այստեղ Ս. Ստեփանոսի մասունքների «Հայտնվելու» կապակցությամբ, իսկ դամբարանի վրայի մատուռը՝ նրա կին Մամբանը՝ 1251թ.⁸:

Վանքի և նրա կառույցների առաջին համառոտ նկարագրությունը գտնում ենք Մակար եպս. Բարխուտարյանցի հայտնի «Արցախ» աշխատությունում. «Ոչինչ պակաս ընդարձակ ծալալ ունի և Վաճառ գիւղաքաղաքիս հանգստարանն, որի մէջ սրբատաշ չեչ քարով կառուցեալ է մի եկեղեցի, որի երկարութիւնն է 9 մետր 8 սանթիմ, լայնութիւնն 6 մետր 15 սանթիմ: Հիւսիսային խորհրդարանի ետև կայ մի գաղտնի մուտք, որի ետև և մի անյայտ պահարան: Տաճարիս հարաւային կողմում, գրեթէ պատկից շինուած է մի երկյարկանի փոքր մատուռ նոյնպէս սրբատաշ քարով: Գետնայարկի մէջ կայ մի գերեզմանի նման շէնք, որ ուխտատեղի է: Վերնայարկ մատուռն ունի սեղան և լուսամուտ և դուռն արևմտեան կողմից: Փլած է մատրանս հարաւ արևելահայեաց կողմն»⁹: Նա ընդօրինակել է հուշարձանախմբի արձանագրությունների հիմնական մասը, տվել համառոտ բացատրություններ¹⁰: Խաչենից ծագող Խաղբակյան (հետագայում ավելի հայտնի որպես Պոռչյան) իշխանական տան ծագման խնդիրները և, ի մասնավորի, այս տոհմի Ջաջուռ անունով երկու իշխանների ինքնությունը հարցերը քննելիս ակա-

7 ՄՄ ձեռ. Հ^տ 7821, թ. 19բ, 20ա:

8 Այս արձանագրություններն ավելի քան մեկ հարյուրամյակ անց առանց փոփոխության կաթողիկոսի օրագրից արտագրել և իր հայտնի գրքում է գետնելել Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, տես Յ. Շահխաթունյանց, Ստորագրություն Կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 1842, հ. 2, էջ 377:

9 Մակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 184–185:

10 Նույն տեղում:

նավոր հայագետ Գարեգին Հովսեփյանը հատուկ ուշադրություն է դարձրել խաղաղականների հոգևոր կենտրոնի և գերեզմանատան՝ Հավապտուկ վանքի դիմաց, Խաչենագետի հակառակ ափին գտնվող Ս.Ստեփանոս եկեղեցու մի արձանագրություն քննությունը, ուր հիշատակվում է այս տոհմի նշանավոր ներկայացուցիչ քաջ զորական Ջաջուռը, որի Գրիգոր որդին նվիրատվություն է արել վանքին: Նա հնավայրում եղել է 1897թ. և ընդօրինակել հուշարձանի մի քանի արձանագրություններ ևս¹¹: Վաճառի արձանագրություններն, ըստ որոշ տեղեկությունների, 1909թ. հավաքել է նաև ականավոր հայագետ Հովսեփ Օրբելին¹²: Սակայն այդ մասին ավելի հստակ տեղեկություններ մեզ չհաջողվեց գտնել:

Հուշարձանի արձանագրությունների ավելի ամբողջական ընդօրինակումները՝ մեկնաբանություններով հանդերձ, անցած դարի 60-ական թթ. իրականացրել է հայտնի վիճագրագետ Ս.Բարխուդարյանը¹³: Ընդ որում, կարևոր է նշել, որ մատուռ-դամբարանի արևմտյան ճակատն արձանագրություններով հանդերձ դեռ կանգուն էր: Վաճառի և Ս.Ստեփանոս վանքի մասին համառոտ տեղեկություններ կան (հիմնականում նախկին հրատարակություններից քաղված) Շահեն Մկրտչյանի՝ Արցախի հուշարձաններին նվիրված գրքում¹⁴: Հիշատակենք նաև Վաճառին նվիրված գրքույկը, որի հեղինակ Վահրամ Գևորգյանը նկարագրել կամ թվարկել է հին բնակատեղիի հնությունները, այդ թվում և Ս.Ստեփանոս վանքը, հիշարժան վայրերը, ներկայացրել նորահայտ որոշ արձանագրություններ ու խաչքարեր¹⁵:

Ս.Ստեփանոսի դամբարան-մատուռը թեև հիշատակվում է այս նկարագրություններում, սակայն նրա դամբարանային հատվածի կոնկրետ նկարագրությունը և քննությունը բացակայում են:

Բ. Հետազոտության գաղափարը. Տիգրանակերտ, Ամարաս

2014թ. Արցախի Տիգրանակերտի վաղբրիստոնեական հրապարակի փոքր եկեղեցու խորանի տակ արևելյան մուտքով դամբարանի հայտնաբերումը հիմք դարձավ Ամարասի Ս. Գրիգորիսի մատուռի արևելյան հատվածի հնագիտական հետազոտության համար: Այս ուսումնասիրության արդյունքում փաստագրվեց, որ Գրիգորիսի մատուռը հարավարևմտյան և հյուսիսարևմտյան մուտքերից զատ ունեցել է նաև արևելյան մուտք¹⁶: Վաղբրիստոնեական դամբարանային ճարտարապետության մեջ այս արտասովոր դրսևորման պատմամշակութային համատեքստը վերականգնելու համար անհրաժեշտ համարվեց պեղումներ կատարել

11 Գ. Հովսեփյան, Խաղաղական կամ Պոռչյանք Հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 33:

12 Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունները X–XV դարերում, Երևան, 1975, էջ 21:

13 ԴՀՎ, պրակ V, էջ 78–83:

14 Շ. Մկրտչյան, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 31–32:

15 Վ. Գևորգյան, Վաճառ, Երևան, 2004:

16 Այս հետազոտությունների մասին մանրամասն տե՛ս Հ. Պետրոսյան, Արցախի Տիգրանակերտն ու Վաչագան Բարեպաշտի կրոնական բարեփոխումները, ԱՊՀ գիտական ընթերցումներ, Ստեփանակերտ, 2016, Հ^ա 1, էջ 96–103:

նաև Վաճառի Ս. Ստեփանոսի դամբարանում, որը նախնական տվյալներով նույնպես ունեցել է արևելյան մուտք (նկ. 5):

Պեղումների նպատակն էր հստակեցնել Ս. Ստեփանոսի դամբարանի և նրա վրա կառուցված մատուռի ծավալատարածական լուծումը, պարզել ճարտարապետական մանրամասներն ու գեղարվեստական հարդարումը, լուծել դրանց կառուցման ժամանակի հետ կապված խնդիրները:

Գ. Ս. Ստեփանոսի մատուռ-դամբարանի հնագիտական հետազոտությունը

Դամբարանը. Պեղումներն սկսվեցին Ս. Ստեփանոսի դամբարանից: Չեչոտ կրաքարի սրբատաշ սալերով և քարուկիր միջուկով կերտված դամբարանից մինչև պեղումները երևում էր միայն արևելյան պատի փլվածքի հետևանքով առաջացած «մուտքը» (ինչը մինչև պեղումներն ընդունել ենք որպես արևելյան մուտք), որտեղով կարելի էր մտնել դամբարան: Պեղումների սկզբին մաքրվել է դամբարանի դիմացի հրապարակը, որտեղ A4 քառակուսում 0,70մ խորությունում հայտնաբերվել են հասարակ խեցեղենի մի քանի բեկոր և դուրգի վրա պատրաստված նավակաձև ձիթածրագի կեսը: Միաժամանակ A3–B3 քառակուսիներում մաքրվել է շինությունից հարավային պատին կից տարածքը, ուր բացվել են դամբարանի չեչոտ կրաքարի սրբատաշ սալերով շարված հարավային երկաստիճան գետնախարխիսը և պատի ներքնամասը: B3 քառակուսում 1,50մ խորությունում հայտնաբերվել է կաթնագույն կրաքարից պատրաստված լուսամուտի խաչաքանդակ պարակալ (նկ. 6): Նույն քարից և նման ոճային կատարմամբ դռան բարավորի կիսակամարաձև, խաչային հորինվածքով քարի երկու սալեր (նկ. 7) գտնվեցին դամբարանի մուտքի դիմացից՝ A4 քառակուսում՝ համապատասխանաբար 1,70մ և 1,90մ խորությունից: Ամբողջացած բարավորի երկարությունը 60 սմ է: Ամենայն հավանականությամբ բարավորը պսակել է վերակառուցված դամբարանի արևելյան մուտքը, իսկ լուսամուտի պարակալը՝ մատուռի արևելյան կամ հարավային լուսամուտներից մեկը:

A3–B3 քառակուսում մաքրվել է վաղքրիստոնեական դամբարանի հարավային պատին կից տարածքը, որտեղից հայտնաբերվել են մի քանի խաչքարեր, պատի խոշոր, սրբատաշ սալեր, տրամատավորված քիվի բեկորներ, որոնցից մեկի կողին արձանագրություն կա (տե՛ս Է. Նորահայտ արձանագրությունները, արձ. Գ.), ինչպես նաև՝ 2 մ խորությունում՝ երեք հարթ տապանաքարերից բաղկացած հարավարևելյան տապանաքակը (նկ. 8): Զուգահեռ կտրվել են դամբարանի վրա վեր խոյացած փոշնու արմատները, որոնք դժվարացնում էին աշխատանքները: A3 քառակուսում, 1,60 մ խորությունում հայտնաբերվեց երկաթե ամբողջական ճարմանդ: Խեցեղեն գտածոները խիստ սակավ են հանդիպում և հիմնականում վերաբերում են 12–13-րդ դդ.:

Դամբարանի մուտքի դիմաց, 1,80 մ խորությունում հայտնաբերվեց մետաղյա (արծաթ կամ բրոնզ) ողկուզաձև սնամեջ կախիկ: Հավանական է, որ այն դամբարան մտնելիս կորցրել է որևէ ուխտավոր:

Պեղումներն ամբողջովին բացահայտեցին դամբարանի ծավալատարածական առկա լուծումը, հիմք տվեցին հստակեցնել վաղքրիստոնեական կառույցի նախ-

նական լուծումը և պարզել հետագա հավելումները: Ըստ այդ տվյալների՝ դամբարանը արտաքուստ համարյա քառակուսի կառույց է (3,90×4,10 մ, նկ. 9), որի հյուսիսային մասում գտնվում է կիսազլանաձև թաղով նեղ սրահը՝ արևմուտքում կրկնակի պատով ստեղծված «պահարանով», որում, ամենայն հավանականությամբ, պահվել է սրբի մասունքատուփը: Դամբարանն ունի խիստ նեղ ու ցածր արևելյան մուտք, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ այն օգտագործվել է միայն եզակի դեպքերում, երբ մասունքները տարվել են եկեղեցի կամ մատուռ՝ այնտեղ ընթացող ծիսակատարության ժամանակ օգտագործելու նպատակով: Ինչպես դեռ Մակար եպիսկոպոսն էր նկատել, Ս. Ստեփանոս եկեղեցու «հիւսիսային խորհրդարանի ետև կայ մի գաղտնի մուտք, որի ետև և մի անյայտ պահարան»¹⁷: Կարծում ենք, որ հյուսիսային ավանդատան մեջ հատուկ ստեղծված այս պահարանը կարող էր օգտագործվել սրբի մասնատուփը պահելու համար (գուցե մինչև դամբարանի վերակառուցումը կամ էլ սրբին նվիրված ծիսակատարությունների օրերին): Դամբարանի հարավային պատի խիստ մեծ լայնությունը (մոտ 1,90 մ) պայմանավորված է երկրորդ հարկի մատուռի համար անհրաժեշտ ծավալ ապահովելու հանգամանքով: Ակնհայտ է, որ վաղբրիստոնեական դամբարանը վերանորոգելիս արդեն «ծրագրավորված» էր նաև երկրորդ հարկի մատուռի կառուցումը: Պեղումները պարզեցին, որ երկհարկ դամբարան-մատուռն արտաքինապես ամբողջությամբ վերակառուցվել է 13-րդ դ. կեսերին, ինչի մասին վկայում է և Մամբան իշխանուհու շինարարական արձանագրությունը: Թերևս վաղմիջնադարյան կամ նախնական կառույցին են պատկանում դամբարանի ներսույթը և մուտքը, պեղումների ժամանակ հայտնաբերված խաչկալն ու թևավոր խաչի բեկորները:

Մատուռը (նկ. 10, 11). Այն քառակուսի հատակագծով (3,90×4,09 մ) երկաթ-սիդ բազիլիկ կառույց է: Մուտքն արևմտյան կողմից է:

Պեղումները պարզեցին, որ մատուռից պահպանվել են կրաշաղախ հատակը, հարավային պատի և հարավային աբսիդի պատերի երկու շարքերը, արևելյան զույգ խորանների առաջին շարքի քարերը: Ողջ կառույցն իրականացված է չեչոտ կրաքարի սրբատաշ կվադրերով: Հայտնաբերվել են լուսամուտների քանդակազարդ պարակալը, արևմտյան մուտքի եզրաքարերը՝ դեկորատիվ սյունաշարի տրամատավորումով:

Մինչև 20-րդ դ. 60-ական թթ. մատուռը հիմնականում կանգուն է եղել, պատերին եղել են մի շարք արձանագրություններ, այդ թվում և շինարարական, ըստ որի՝ մատուռ-դամբարանը կառուցել է Խաչենի իշխան Հասան-Ջալալի կին Մամբանը՝ 1251թ.¹⁸: Երկու խորաններն, ամենայն հավանականությամբ, նվիրված են եղել Ջալալին և Մամբանին:

Մատուռի հարավային խորանի հատակի վրա գտնվեցին կարմրավուն որմնանկարի հետքերով պատի սալերի բեկորներ¹⁹:

17 Մակար եպս. Բարխուտարեանց, նշվ. աշխ., էջ 184:

18 ԴՀՎ, պրակ V, էջ 80:

19 Բուսաներկրաչափական մոտիվներով և արձանագրության հետքերով որմնանկարներ են պահպանվել նաև Ս. Ստեփանոս եկեղեցու բեմատեղքին (տե՛ս Է. Նորահայր արձանագրությունները, արձ. Ը) և մուտքի բարավորի վրա:

Դ. Գավթի հայտնաբերումն ու հետազոտությունը

Մատուռի նախամուտքը (1,30×2,30 մ) սալահատակված և սվաղված է: Եկեղեցու հարավային մուտքի դիմաց, A2 քառակուսում, 30 սմ խորուժյունում բացվեց գավթի հատակը, որը ներառում է և մուտքի սալահատակը (նկ. 12):

Սակայն ամենաուշագրավը գավթի որմնախարիսխանների, խոյակների և պատկից սյուների հայտնաբերումն էր (նկ. 13): Այն արևմտյան մուտքով, հատակազծում գրեթե քառակուսի (6,80×6,40 մ) շինություն է՝ կառուցված կարմրադարչնազույն կարծր՝ հղկված կամ սրբատաշ քարերով: Որմնախարիսխաններից մեկն իր տեղում է՝ կից մատուռի արևմտյան պատին՝ տեղադրված գավթի արևելյան պատի համարյա միջնակետում (նկ. 13/4): Հավանական է, որ իր տեղում է և հարավային պատի միջնամասին կից խարիսխը (նկ. 13/5): Թերևս հնարավոր է վավերացնել արևմտյան պատին կից խարսխահիմքի մի հատվածը (նկ. 13/6): Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատին պահպանվել են գավթի հյուսիսային պատերի հպման հետքերը՝ մեծ արևմտյան և ավելի փոքր արևելյան կամարների տեսքով: Նկատի ունենանք նաև, որ առկա տապանաքարերը բացառում են սրահում առանձին կանգնած սյուների գոյությունը: Այս տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ գավթի շինությունում է ծածկը պատերի վրա հենվող խաչվող կամարներով տիպին²⁰: Գավթի ներսում, հարավային պատի մոտ, գտնվեց նույն կարմրավուն խոշոր քարից ելնդավոր կամարաքանդակով ելուստավոր մի սալ (գուցե և խաչքարի ստորին մաս), որի վրա՝ կամարի ներքո, փորագրված է ՉԼԳ (1284) թվականը: Չի բացառվում, որ այն ագուցված է եղել գավթի արևմտյան ճակատին և ցուցում է շինության կառուցման թվականը:

B2 քառակուսի 0,70–0,90 մ խորուժյունից հայտնաբերվել են քանդակազարդ խաչքարերի բեկորներ, վաղքրիստոնեական թևավոր խաչի մի քանի բեկոր՝ կարմիր ներկի հետքերով (նկ. 14), տանիքի ճակտոնի քանդակազարդ եզրաքար (նկ. 15): Ծածկի սալեր են հայտնաբերվել պեղումների այլ հատվածներից ևս, որոնք վկայում են, որ մատուռի և գավթի տանիքները եղել են սալապատ: Գավթում բացվել են չորս տապանաքարեր, որոնցից երկուսը պարզ, ուղղանկյուն են, մյուս երկուսը կրկնակի ռելիեֆային շրջանակներով, մեկն ունի արձանագրություն (տե՛ս է. Նորահայտ արձանագրությունները, արձ. Ե.): B1 քառակուսում, անմիջապես գավթի արևմտյան պատին կից՝ 0,90 մ խորուժյունում, հայտնաբերվեց ձեռածեփ, չորս քթիկանի, բռնակավոր ամբողջական փոքր ձիթածրագ:

Ինչպես գավթի ներսում, այնպես էլ կից տարածքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ աղյուսներ: B1–B2 քառակուսի 1,70 մ խորուժյունից աղյուսի բեկորներ, ամբողջական ուղղանկյուն՝ 23×11 սմ և քառակուսի աղյուսներ՝ 22×22 սմ, 23×23 սմ, բարձր. 4–5 սմ, B2–B3 քառակուսիներում գավթի հարթակի հարավային պատին իրար վրա հենած և ոչ կանոնիկ՝ հյուսիս–հարավ ուղղված թյամբ դրված մի քանի ամբողջական խաչքարեր բացվեցին (նկ. 16): Այս հատվածում տարբեր խորուժյուններից մի քանի տասնյակ ինչպես պարզ, հասարակ, այնպես էլ նրբահյուս, քանդակազարդ խաչքարերի բեկորներ են հայտնաբերվել:

20 Հմմտ. С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 15, рис. 4/4.

2,90 մ խորության վրա գտնվեցին խաչակալի ողկուզակիր և որմնասյուններով հարդարված բեկորներ (նկ.17): Հավանական է, որ խաչակալն ու թևավոր խաչը պատկանել են Ս.Ստեփանոսի դամբարանի նախնական համալիրին, ապա վերօգտագործվել գավթի տանիքում՝ որպես երդիկն ամբողջացնող ռոտոնդա:

Նշված քառակուսիներում մաքրվեց պեղումներով բացված հորիզոնական դիրքով ընկած խոշոր սալի շրջակայքը և մակերեսը: Պարզվեց, որ այն խաչքար է՝ պարզունակ խաչաքանդակով: Անմիջապես նրանից ցած սրբատաշ և կոպտատաշ քարերով հիմք է ստեղծվել խաչքարի համար:

Ե. Տապանաբակերը

Պեղումները պարզել են, որ համալիրի բոլոր կառույցներին կից ստեղծված են եղել հատուկ հարթակներ, որոնք օգտագործվել են որպես տապանաբակեր: Գավթի թաղումներից զատ, ընդարձակ տապանաբակեր են պեղվել-բացվել Ս.Ստեփանոս եկեղեցուն արևմուտքից և արևելքից կից բակերում, մատուռ-դամբարանի հարավային բակում, գավթին հարավից և արևմուտքից կից բակերում (նկ.2):

2. Որմնափակ խաչքարը

Ս.Ստեփանոս եկեղեցուց հյուսիս-արևմուտք պեղվել են որմնափակ խաչքարով պսակվող գերեզմանային կառույցի մնացորդները (նկ.18): Խոշոր հարթ տապանաքարերից զատ բացվել են մի քանի ամբողջական և բեկորային խաչքարեր, որմնափակի պատվանդանի, տրամատավորվող եզրագոտիների սրբատաշ բեկորները:

Ե. Նորահայտ արձանագրությունները

Պեղումները երևան են բերել նաև մոտ երեք տասնյակ խաչքարեր ու բեկորներ, հիմնականում 13-րդ դ., մեկ տասնյակ նոր արձանագրություններ և արձանագրությունների հատվածներ: Դրանց մի մասը եկեղեցական կառույցների պատերի սալեր են՝ նվիրատվական բնույթի արձանագրություններով, տապանագրեր և խաչքարային արձանագրություններ: Արդեն ընթերցված և առավել կարևոր արձանագրությունները հետևյալներն են²¹:

Ա. Մատուռի սալաքարերից, 6 տող, կանոնավոր երկաթագրով (նկ.19).

«ԹՎ.:ՉԻԳ. (1274թ.). ես Ներսէ/ս գնեցի զեգատեղե/րս եւ տվի Ս[ուր]բ Ստեփանո/ս: Իպիսկապոսս եւ միա/բանքս տվին Ծա[ռգ]ա/րդարին :Բ: Ժամ»:

Բ. Մատուռի սալաքարերից, 5 տող, կանոնավոր երկաթագրով (նկ.20).

«Զ[ա]հելին որդի ետ/անտառն ի ս[ուր]բ Նահ[ատակ]/: Ժամ գրեցաք Ս[ուր]բ Յա/կոբին: Ով խափանէ՝ դատի,/կատարիչքն՝ աւրհնէ»:

21 Արձանագրությունների վերծանությունները ներկայացրել ենք ըստ ԴՀՎ մատենաշարի սկզբունքների՝ բացառությամբ վերծանության պայմանական նշանների փոփոխության և բնագրի՝ փոքրատառերով շարադրման՝ մեծատառերը կիրառելով միայն ժամանակակից հայերենում ընդունված կանոնների համաձայն: Վերծանությունը մեծատառերով ներկայացնելու սկզբունքը, որ կիրառվում է ԴՀՎ-ում, ոչ միայն դժվարընթեռնելի է դարձնում բնագիրը, այլև հնարավորություն չի տալիս առանց լրացուցիչ փնտրտուքի տարբերակել հատուկ և հասարակ անունները:

Գ. Մատուռի քիվի կողին, երկու տող անկանոն շղագրով (նկ. 21).

«գՍ[ուր]բ խաչին.../Ա: Շուշիկա...»:

Դ. Մատուռի սալաքարերից, արձանագրությունը 6 տող, անկանոն, բոլորգիր, ցրված տողերով, խաչի պոչուկի երկու կողմերում (նկ. 22).

«Խաչ[ս/] մեղացս/ Որք կա/րդեք/՝ յա[ղաւ]թս յիշէք: ԹՎ.: 26Գ: (1264)»:

Ե. Տապանաքար, գավթում, հարթ, ընդգծված զույգ եզրակոսներով, արձանագրությունը երեք տող, անկանոն երկաթագրով (նկ. 23).

«Այս է հանգ/իստ Քիմիայ տ/իկնոջն»:

Զ. Տապանաքար, մատուռի հարավային բակում, հարթ, արձանագրությունը երկու տող, կանոնավոր երկաթագրով (նկ. 24).

«Այս է հանգ/իստ Սերոբ ք[ա]հ[անային]»:

Է. Տապանաքար, մատուռի հարավային բակում, հարթ, ընդգծված զույգ եզրակոսներով, արձանագրությունը՝ յոթ տող, սալի վերնամասում, երկաթագիր և բոլորգիր անկանոն, տարաչափ տառերով (նկ. 25).

«Ով աստր զայ եւ ա/ղաւթե զայս կարի/եւ զիս յիշէ ի .../էր ի :ԺԶ:ին ի Ք[րիստոս]ս/փոխեցայ. զՄա/մաք տիկինս/յիշեցէք»:

Ը. Բեմառէջքի որմնանկարի վերնամասում, կանոնավոր երկաթագիր, սև ներկով, մեկ տող: Արձանագրության սկզբնամասում հնարավոր է տարբերակել «Մամաք», իսկ վերջնամասում՝ «զիս Ա[ստուա]ծ» (նկ. 26) կապակցությունները:

Մնացած արձանագրությունները, որոնք խիստ հատվածային են կամ վատ պահպանված՝ վերծանման ընթացքում են:

Եզրակացութիւններ

Ամփոփելով համալիրի պեղումների արդյունքները՝ կարող ենք ուրվագծել հետևյալ կառուցողական-ժամանակագրական ընթացքը:

ա. Սկզբնապես տեղում եղել է վաղբրիստոնեական դամբարան, որն ունեցել է արևելյան մուտք: Տեղում պահպանվել են դամբարանսրահը, մուտքը: Ամենայն հավանականութեամբ, սկզբնապես դամբարանին կամ նրան կից կոթողի են պատկանել պեղումներով հայտնաբերված խաչակալն ու թևավոր խաչը:

բ. 13-րդ դ. սկզբներին, երբ Խաչենի հզորացող իշխանական տունը նոր՝ համաքրիստոնեական հովանավոր սրբեր էր փնտրում, «հայտնաբերվել» են Ս. Ստեփանոսի մասունքներն ու այն ամփոփող կառուցյւրը:

գ. Տեղում 1229թ. կառուցվել է նոր եկեղեցի:

դ. 1251թ. դամբարանի սրահը հավելվել է նոր ծավալով, և վրան մատուռ է կառուցվել: Հին դամբարանից մնացել են սրահը, արևելյան մուտքը, խաչակալն ու թևավոր խաչը:

ե. 1284թ. մատուռին կցվել է գավիթը:


Հասան-Ջալալյան իշխանական տան կողմից համաքրիստոնեական (և ոչ տեղական-ավանդական) սրբերին նվիրված տաճարների կառուցումը (Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ, Վաճառի Ս. Ստեփանոս) ուներ այն ընդհանուր միտումը,

որ դիտվում է 12-րդ դ. վերջերից սկսած, երբ Զաքարյան իշխանապետության ազատագրական պայքարը նոր բարձրացող հայ իշխանական տներին ուղղորդում է դեպի ընդհանուր քրիստոնեական աշխարհի ազատագրման առաքելականությունը: Արցախում կարելի է առանձնացնել Մխիթար Գոշի և Վանական վարդապետի ջանքերով Դադո-Դադի-Դադուին Թաղեոս առաքյալի աշակերտ և Դադիվանքը առաքելադիր հռչակելը, նման մտայնության հետագա զբսևորում կարելի է դիտել Դադիվանքի կաթողիկեի որմնանկարների թեմաները, այդ թվում և մեր հուշարձանին անմիջապես առնչվող՝ Ս.Ստեփանոսի քարկոծման տեսարանը Դադիվանքի կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատին՝ ներսից: Նման իրողության ավելի ընդարձակ գաղափարական և աշխարհագրական հենքի մասին կարող են վկայել բազմաթիվ այլ փաստեր ևս. օրինակ՝ Պոռչյան իշխանական տան կողմից Նոյյան տապանի մասունքի և սուրբ Գեղարզի ձեռքբերումը, ավելի լայն առումով՝ Մասիսի վերանվանումն Արարատի և այլն: Առայժմ հիպոթետիկ ձևով կարելի է վերականգնել մի իրավիճակ, երբ վիրահայկական ազատագրական պատերազմը և խաչակրաց արշավանքները նպաստում էին ընդհանրական մի գաղափարաբանության տարածմանը, որի հիմքում սուրբ երկրի ազատագրումն էր: Ընդ որում, այդ սուրբ երկիրը ներառում էր համարյա ողջ քրիստոնյա էյկումենը, այդ թվում և, անշուշտ, Հայաստանը:

Առավել ուշագրավ է, որ համահայկական այս մտայնությունը գաղափարական ու նյութական իր զրևորումն է գտել ի դեմս մեր կողմից հետազոտվող հուշարձանի:



Նկ.1 Հնավայրի ընդհանուր տեսքը հարավից



Նկ. 2 Պեղված համալիրի հարակազիծը



Նկ. 3 Հնավայրի ընդհանուր տեսքը հարավից, պեղումներից հետո




Նկ. 4 Որմնափակ խաչքարի և վանքի մուտքի մնացորդները




Նկ. 5 Ս. Սյրևիանոսի դամբարանը մինչև պեղումները, փետրն արևելքից



Նկ. 6 Լուսանյութի պարակալ



Նկ. 7 Վերակառուցված դամբարանի քարավորը




Նկ. 8 Դամբարանին կից տապանաքարեր



Նկ. 9 Դամբարանն արևելքից





Նկ. 10 Մալրոտի ընդհանուր տեսքն արևմուտքից



Նկ. 11 Մալտոսի հայրակազիծը



Նկ. 12 Գավիթն արևմուտքից



Նկ.13 Գալթի հարակազիծն ու ճարտարապետական մանրամասները



Նկ. 14 Թևափոր
խաչի բեկորներ



Նկ. 15 Տանիքի քարե ճակրոն




Նկ. 16 Խաչքարեր՝ հարավային տապանաբակում




Նկ. 17 Խաչակալը




Նկ. 18 Որմնափակ խաչքարը



Նկ. 19 Ներսեսի արձանագրությունը




Նկ. 20 Զահեղի արձանագրությունը




Նկ. 21 Շուշիկի արձանագրությունը




Նկ. 22 Հիշարակագրություն



Նկ. 23– 24 Տիկին Քիմիայի, Սահակ քահանայի փայլանագրերը



Նկ. 25 Մամար փիկնոջ փայլանագիրը



Նկ. 26 Հարված՝ Ս. Սյրեպիանոս եկեղեցու բնամուշքի որմնանկարներից

ГАМЛЕТ ПЕТРОСЯН

ОСНОВНЫЕ РЕЗУЛЬТАТЫ АРХЕОЛОГИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ
МОНАСТЫРЯ СВ. СТЕПАНОСА В ВАЧАРЕ И НОВОНАЙДЕННЫЕ НАДПИСИ

Ключевые слова: *Арцах, археология, раннехристианский мавзолей, часовня, гавит, хачкар, надгробие, надпись, орнамент.*

В статье представлены основные результаты археологического исследования, в частности, новонайденные надписи монастыря Св. Степаноса в Вачаре (Мартакертский район, Республика Арцах). Археологические раскопки были произведены Арцахской археологической экспедицией (Гамлет Петросян, Армине Габриелян, Лилит Минасян) Института археологии и этнографии НАН РА в 2017 году.

Монастырский комплекс состоит из базиликальной церкви Св. Степаноса, выявленной в результате раскопок двухэтажной часовни-мавзолея, гавита (нартекс), примыкающего с западной стороны к часовне, остатков ворот и встроенного в нишу хачкара в северной части. Весь комплекс обнесен крепостной стеной.

Благодаря раскопкам были обнаружены три десятка хачкаров, в основном XIII века, десять новых надписей или их фрагментов, высеченных на плитах, хачкарах и надгробиях.

HAMLET PETROSYAN

THE MAIN RESULTS OF THE ARCHAEOLOGICAL INVESTIGATION OF ST. STEPANOS MONASTERY IN VACHAR AND THE NEWLY FOUND INSCRIPTIONS

Keywords: *Artsakh, archaeology, early Christian mausoleum, chapel, gavit, khachkar, gravestone, inscription, ornament.*

The article presents the main results of archaeological investigation and, in particular, the newly discovered inscriptions of St. Stepanos monastery in Vachar (Martakert province, Republic of Artsakh). The archaeological project was carried out by the Artsakh archaeological expedition (Hamlet Petrosyan, Armine Gabrielyan, Lilit Minasyan) of the Institute of Archaeology and ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia in 2017.

The monastery complex consists of the St. Stepanos basilica, two-storey mausoleum-chapel discovered thanks to excavations, the gavit (narthex) adjacent to the west side of the chapel, as well as the remains of the gate and a khachkar built into the niche in the northern side. The whole complex is surrounded by the fortification walls.

Thanks to the excavation, about three dozens of khachkars, mainly dated back to the XIII century, ten new inscriptions and their fragments carved on slabs, khachkars and tombstones were also revealed.

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՏԻՊ ՎԻՄԱԳՐԵՐ ԵՐԵՎԱՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒՑ

Հիմնաբառեր՝ Երևան, Կաթողիկե եկեղեցի,
վիմաագրական ժառանգություն, Կարո Ղաֆադարյան,
խաչքար, արձանագրություն, մեկենաս:

Նվիրվում է Երևանի 2800-ամյակին

Երևան քաղաքի միջնադարյան պատմության ուսումնասիրման համար հավաստի սկզբնաղբյուրներ են ոչ միայն մատենագրական վկայություններն, ի դեմս ձեռագրերի հիշատակարանների, այլև քաղաքի պատմաճարտարապետական հուշարձաններին, խաչքարերին ու տապանաքարերին պահպանված հարյուրավոր վիմագրերը: Երևանի վիմագրական ժառանգության համալիր ուսումնասիրությունն իրականացրել է անվանի հնագետ, վիմագրագետ Կարո Ղաֆադարյանը, որը դեռևս 1930-ականներին մասնակցել է քաղաքի հնությունների ուսումնասիրությանն ու վիմագրերի ընդօրինակմանը: Նա առաջինն է ուսումնասիրել 1936–1937թթ. Կաթողիկեի բազիլիկ եկեղեցին քանդելու ժամանակ ի հայտ եկած գմբեթավոր փոքր եկեղեցու վիմագրերը: Այս նույն ժամանակաշրջանում հուշարձանի հնագիտական հետազոտությունը զբաղվել է նաև հնագետ Աշխարհբեկ Քալանթարը, որը ոչ միայն հետևել է բազիլիկ եկեղեցին քանդելու ընթացքին, այլև «Երևանի Կաթողիկեն» խորագրով հաշվետու հոդվածում մանրամասն քննության է առել հուշարձանախմբի ժամանակագրությունը, ճարտարապետական հորինվածքը, անվանումը և մի շարք այլ լուսաբանման կարիք ունեցող հարցեր¹: Նորաբաց փոքր եկեղեցին երեք կողմից պարփակված է եղել Ժէ դ. վերակառուցված եռանավ բազիլիկ հորինվածքով մեծ եկեղեցու մեջ, որին ծառայել է իբրև ավագ խորան: Աշխարհբեկ Քալանթարի համոզմամբ՝ ժամանակագրորեն վաղագույնը բազիլիկն է, որն ըստ ամենայնի Ձ դարավերջի կամ Է դարասկզբի կառույց է եղել, իսկ փոքր գմբեթավոր եկեղեցին Ժ–ԺԱ դդ. բնորոշ մատուռ է, որի վիմագրերից վաղագույնները թվագրվում են ԺԳ–ԺԴ դդ.: Ինչպես վիմագրերի, այնպես էլ եկեղեցու քանդակային մի շարք հարդարատարրերի առկայությունը (պատերի խորշերի քանդակազարդ պսակներ, խաչաքանդակներ, բեմառէջքի աստղազարդեր և այլն) ուսումնասիրողների համար հիմք է դարձել, որպեսզի հուշարձանը ևս թվագրվի նշված ժամանակաշրջանով²:

1 Ա.Քալանթար, Երևանի Կաթողիկեն, «Հայաստան. քարե դարից միջնադար» երկերի ժողովածու, Գիտական ժառանգություն, հ. 4, Երևան, 2007, էջ 361–387:

2 Նույն տեղում, էջ 370–372:

Ինչ վերաբերում է նորաբաց եկեղեցու վիճաբերի գյուտին, ապա այն ուշագրավ էր հատկապես քաղաքի ԺԳ–ԺԴ դդ. պատմությունը լուսաբանման տեսանկյունից, քանի որ դրանց քննությունը պարզվել է Երևանի՝ դեռևս հիշյալ ժամանակներից իբրև առևտրաարհեստավորական քաղաք լինելը: Պատահական չէ, որ նույն Կաթողիկեի արձանագրություններում վկայված մի շարք ուշագրավ տերմինների ուսումնասիրությունը ակնհայտորեն վիճաբարգետ Ս. Բարխուդարյանը հետևյալ եզրակացությունն է հանգել. «Երևանը 13-րդ դ. երկրորդ կեսից սկսած, մոնղոլական արշավանքների առաջին շրջանից հետո, դառնում է միջնադարյան տիպի քաղաք, վարչակրոնական կենտրոն, արհեստավորական և առևտրական ձեռնարկություններով»³:

Կ. Ղաֆաղարյանը Կաթողիկեին և նրա վիճաբարությունը նվիրված իր ուսումնասիրությունները նախ ամփոփել է մի հոդվածում⁴, ապա Երևանի վիճաբարական ժառանգությունն ամբողջացնող հատորում, որտեղ ներկայացված 293 վիճաբարից 59-ը Կաթողիկեից է⁵: Նշված վիճաբարերը գիտնականը ներկայացրել է չորս խմբով. առաջինում Ս. Աստվածածին եկեղեցու որմերի 16 վիճաբարներն են՝ թվագրված 1264–1609 թթ., երկրորդ խմբում՝ 1690-ականների սկզբին վերակառուցված եռանավ բազիլիկի 10 վիճաբարերը, երրորդ խմբում՝ նույն եկեղեցու պատերի և մույթերի կրաշաղախի միջուկից դուրս եկած վիճաբարերը՝ 23 միավոր, իսկ չորրորդ խմբում եկեղեցու ծածկի թաղի միջուկից դուրս եկած վիճաբարներն են՝ 10 միավոր, որոնք ժամանակագրորեն հետադուրսներն են՝ ԺԼ–ԺԹ դդ.: Թվում է, թե հմուտ գիտնականը վիճաբարական նյութն ամբողջացրել ու սպառել է, մինչդեռ ներկայիս Կաթողիկե–Ս. Աննա եկեղեցական համալիրի⁶ արևելյան պարսպապատի տակ ցուցադրված են մի քանի քանդակագործ ու արձանագիր քարեր (խարիսխներ, սյուներ, բարավորի քար, խաչքարեր և այլն), որոնք չնայած ժամանակագրորեն վաղ չեն, բայց տեղ չեն գտել Կ. Ղաֆաղարյանի գրքում: Ենթադրելի է, որ դրանք ի հայտ են եկել ավելի ուշ: Մենք այդ բեկորներն ու խաչքարերը լուսանկարել ենք դեռևս 2010 թ., երբ հավաքված էին մի ծածկի տակ՝ եկեղեցու հյուսիսային կողմում:

3 Ս. Գ. Բարխուդարյան, Մի քանի դիտողություններ Երևանի Կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, ՏՀԳ, 1947, Հ^տ 5, էջ 69–70:


4 Կ. Ղաֆաղարյան, Երևանի Կաթողիկեի և նորահայտ հուշարձանի վիճակն արձանագրությունները, «Տեղեկագիր ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի», գիրք Ա, Երևան, 1938, էջ 165–192:

5 Նույնի Երևան. միջնադարյան հուշարձանները և վիճակն արձանագրությունները, Երևան, 1975, էջ 137–158:

6 Հրայր և Աննա Հովնաթյանների նվիրատվությամբ 2013 թ. Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու հարևանությամբ կառուցվել է Ս. Աննա գմբեթավոր եկեղեցին և կից զանգակատունը: Երևանի արձանագրությունը գետնոված է զանգակատան հարավարևմտյան մույթի արևմտյան նիստին՝ հետևյալ բովանդակությամբ. «Ի հայրապետութեան Ս. Տ. Գարեգնի Բ կաթողիկոսին Ամենայն Հայոց, սրտաբուրի նուիրատուութեամբ Հրայր և Աննա Յովնաթյան եկեղեցատե ամուլի, յամի Տեառն 2013 և ի թուին Հայոց ՌՆԿԲ կառուցա Սուրբ Աննա եկեղեցիս ի մայրաքաղաքի Երևան, վասն հոգևոր մխիթարութեան հաւատացելոց: Առաքեսցէ Տէր բիւր օրհնութիւն քարերարացս և յաջողեսցէ զամենայն եկեղեցաշէն, արդար գործս նոցա. ամէն»: Հիշյալ նվիրատուների հիմնադրամի միջոցներով 2016 թ. նորոգվել է նաև Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցին:

Մեր ընդօրինակած արձանագրությունները 15-ն են, որոնցից 2-ը, որ խաչքարային հիշատակագրություն է, Կ.Ղաֆաղարյանը հրատարակել է⁷: Վերահրատարակությունը պայմանավորված է նշված խաչքարերի՝ Ղաֆաղարյանի գրքում ամբողջ, իսկ ներկայումս կոտորված ու վնասված լինելու հանգամանքով: Մեր հավաքածուի վիմագրերից ևս երկուսը եկեղեցու պատերին են, մյուսները՝ պարսպապատի տակ շարված քարերին: Ստորև ժամանակագրորեն ներկայացնում ենք բոլոր 15 վիմագրերի վերծանությունները՝ կից գրչանկարներով⁸ և լուսանկարներով՝ անհրաժեշտ ծանոթագրությամբ: Իբրև հավելյալ տեղեկություն՝ նշում ենք գրեթե բոլոր քարերի չափերն ու վիճակը:

1. Արձանագիր քար (0,56×0,60 մ), պարսպապատին հենած քարերի շարքում, ունի տարբեր ժամանակների երկու արձանագրություն (մեկը՝ թերի), որոնցից վաղագույնը թվագրվում է ԺԳ– ԺԴդդ. և հայտնում է Ջաքարյան իշխանական տոհմի Շահնշահյան նշանավոր տան շառավիղներից Իվանե Բ-ի որդի աթաբակ Ջազայի անունը.



...ԱԹԱԲԱԿ ԶԱԶԱ...

Ցավոք, արձանագրությունից քիչ բան է պահպանվել, ըստ այդմ՝ լրացուցիչ մանրամասներ մեզ հայտնի չեն: Աթաբակ Ջազան ապրել ու գործել է ԺԳ– ԺԴ դդ.: Ինչպես նշում է Հակոբ Մանանդյանը, ԺԴդ. առաջին կեսին Անիում և նրա շրջակայքում շարունակում էին իշխել Շահնշահ Ա-ի թոռները՝ Շահնշահ Բ-ն, Վահրամը, Ջազան, որոնք վիմագրերում կոչվում են աթաբեկներ⁹: Աղբյուրներում Ջազայի մասին հիշատակությունները բավականին սակավ են: Անիի 1301 թվակիր վիմագրերից մեկի վերջում Ջազայի եղբայր Աղբուղա Բ-ն, որը որդին էր «Իւանէի, թոռն մեծացն Ջաքարիայի», նվազեցնում է Անի քաղաքի հարկերն իր եղբայրների «յերկարկենդանութեան եւ արեւշատութեան» համար, նաև ի հիշատակ «նախնեաց գերեզմանին»¹⁰: Ժամանակամերձ այլ վիմագրերում, որոնք կազմվել են դարձյալ Աղբուղայի հրամանով կամ նրա անունից, Ջազան ննջեցյալ է հիշվում: Այսպես, Գրիգոր Խուցիսի որդի Մխիթարը պարոն Աղբուղի հրամանով ապահարկում

7 Կ. Ղաֆաղարյան, Երևան, էջ 147–148, արձ. 22, 23, նկ. 97, 98:
8 Գրչանկարները մերն են:
9 Ը. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 338:
10 ԴՀՎ, պրակ I, Անի քաղաք, կազմեց՝ Հ. Օրբելի, Երևան, 1966, էջ 28, արձ. 84:

է ջրաղացներից գանձվող հարկը. «...վասն պարոնացն արեւշատութեան... վասն պարոն Զազին հոգոյն»¹¹, կամ Պապկանի որդի Գեշը պարոն Աղբուղի արեւշատութեան և պարոն Զազայի հոգու փրկութեան համար ապահարկում է քաղաքի «գքասանկին զգամդէն»¹²:

Առավել ուշագրավ է Բջնիի 1358թ. արձանագրությունը, որի հեղինակը Շահնշահ Գ-ն է՝ աթաբակ Զազայի որդին¹³: Վիմագրի համաձայն՝ մեկիք Աշրաֆի բռնակալութեան ժամանակաշրջանում նրա զորական Հաջիբեկը հիմնահատակ ավերել է Բջնին, տեղի եկեղեցիներն ու կոտորել ժողովրդին: Այդ վայրագություններից հետո է, որ Բջնին դարձյալ անցնում է Զաքարյաններին, և նրանց շառավիղներից Շահնշահ Գ-ին հաջողվում է նորոգել եկեղեցիները, բարեկարգել բնակավայրը և այլ հիշատակման արժանի գործեր անել: Պատմագիտական գրականություն մեջ, սակայն, Զազայի և Շահնշահ Գ-ի հայր և որդի լինելու հարցը չփոթևոթյուն է առաջացրել: Բանն այն է, որ Բջնիի արձանագրության առաջին հրատարակիչ Հովհաննես եպս. Շահխաթունյանցը վիմագրի՝ կասկած հարուցող հատվածն այսպես է կարդացել. «...ես՝ աթաբակ Շահինշահ, որդի աթաբակ Զազայն...»¹⁴, որը Ղևոնդ Ալիշանն այսպես է ուղղել. «...ես՝ աթաբակ Շահինշահ(ի) որդի աթաբակ Զազայս...»¹⁵: Ալիշանի ուղղումը ճիշտ համարող պատմաբան Լ. Բաբայանի կարծիքով 1357թ. Անիի գրավման ժամանակ Շահնշահ Գ-ն ապաստան է գտել Բջնիում և մեկ տարի անց՝ 1358թ. մահացել, իսկ Հաջիբեկի հրոսակախմբերի կողմից ավերված Բջնին վերականգնել է Զազան: Լ. Բաբայանը վերջինիս համարում է Շահնշահի որդին՝ բացատրելով, թե Զաքարյան տան ավագությունը 1340-ականներին անցնում է Շահնշահ Բ-ի թոռանը, իսկ Զաքարյանի Շահնշահ Գ որդուն, որը մեկիք Աշրաֆի ասպատակությունների ժամանակ կարողանում է Անիից փախչել Բջնի: Վերջինիս մահից հետո՝ 1358թ., ժառանգորդի դերում հանդես է գալիս նրա որդին՝ Զազան, որը նրանց վերջին շառավիղն էր, որից հետո, ըստ երևույթին, նրանք բոլորովին նսեմանում և կորցնում են իրենց քաղաքական կշիռը¹⁶: Բարեբախտաբար, վիմագիրը, որը գտնվում է Բջնիի Ս. Աստ-

11 Նույն տեղում, էջ 28, արձ. 85:

12 Նույն տեղում, էջ 30, արձ. 88:

13 Ե. Մուշեղյան, Բջնիի 1358թ. արձանագրության մասին, ՏՀԳ, 1956, Հ^տ7, էջ 98: Արձանագրության ճշգրտված վերծանությունը պատրաստվում է տպագրության «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի Կոտայքի մարզի հատրում: Բնագիրը մեզ տրամադրեց հատորը կազմող Գագիկ Սարգսյանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը:

14 Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զատասցն Արարատայ, աշխատասիրությամբ Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 330:

15 Ղ. Ալիշան, Այրարատ. քնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 273: Չնայած վիմագրում կատարած ուղղմանը՝ Ալիշանն իր «Հայապատում» աշխատության մեջ, Զաքարյանների ազգացուցակում, Շահնշահ Գ-ին համարում է աթաբակ Զազայի որդի (Ղ. Ալիշան, Հայապատում. պատմիչք և պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 447):

16 Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII–XIV դարերում, Երևան, 1964, էջ 359–360, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 642: Արձանագրության անդրադարձել է նաև Հ. Մանանդյանը, սակայն զերծ է մնացել մեկնաբանություններից (Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 344):

վածածին եկեղեցու հարավային պատին, արտաքուստ բավականին լավ է պահպանվել, և որի վերընթերցումը բացառում է ինչպես Ալիշանի ուղղումը, այնպես էլ Ջազային Շահնշահ Գ-ի որդի համարող Լ. Բաբայանի տեսակետը, քանի որ վիմագրի վիճելի հատվածը հետևյալն է. «...ես՝ աթապակ Շահինշայ, որդի աթապակ Ջազային...»: Մնում է փաստել, որ աթաբակ Ջազան Իվանե Բ-ի որդին է, Աղբուղա Բ-ի եղբայրը, Շահնշահ Գ-ի հայրը, որը վախճանված պետք է լինի ԺԴդ. առաջին կեսին:

Խնդրո առարկա արձանագրությունն ընդլայնում է աթաբակ Ջազայի անվան վիմագրական հիշատակումների աշխարհագրությունը և լրացնում նրա վերաբերյալ առկա սակավ աղբյուրների շարքը ևս մեկով:

2. Միևնույն քարին պահպանվել է ավելի ուշ և անվարժ գրչի ձեռքով փորագրված քառատող արձանագրություն, որը հիմնականում ընթեռնելի է (գրչագիրը՝ վերևում).

ՈՎ ԳԻՆՈՒ ԼԻՏՐ

:Դ: (4) ՉԼԱՐԷՅԻԲ Կ... ՉԴՆԴԻ¹

ԱՅ ԱՆԻԾԱԾ ԸԼԼՆ/Ի:

Դատելով բովանդակությունից՝ արձանագրությունը կարծես գինու լիտրաչափին վերաբերող ինչ-որ կարգ լինի, որը չկատարողը պետք է նզովված լինի Աստծուց: Չարքը որևէ բանի մեկ քառորդ մասն է և իբրև տերմին գործածվում է տարբեր մեծությունների, այդ թվում՝ հեղուկի չափի համար¹⁷: Սույն վիմագրում այն թերևս պետք է ընկալել 1 լ գինու մեկ չորրորդ, քառորդ մասը իմաստով:

Ժամանակագրորեն հաջորդ վիմագրերը եկեղեցու որմերին են.

3. Խաչքար, ագուցված եկեղեցու արևմտյան պատին, ապակեպատ մուտքի ձախ կողմում: Խաչքարը կիսով չափ է պահպանվել, այն կտրած-հարմարեցված է պատի շարվածքում իբրև շինաքար, որի ուղղահայաց խաչաթևի աջ կողմում ելնդատառ թվականն է.




ՋԻԱ. (1472)

Ելնդատառ թվականներով նմանատիպ խաչքարեր հայտնի են Հավուց թառից, Առինջից, Վաղարշապատից և հարակից այլ բնակավայրերից:

17 Հայերէն քաղաքական բառարան, հ. IV, կազմեց՝ Ստ. Մայիսսևեանց, Երևան, 1945, էջ 15:

4. Հիշատակագրություն, եկեղեցու հարավային պատին, 2 տող.



ԾԱՌԱՅ ԲԻ
ՊԵՏՐՈՍ, ԹՎԻԻՆ, ԴՆՂԳ. (1624):

Այս նույն թվականին ոմն Պետրոս հիշատակված է նաև Երևանի Ս. Սարգիս եկեղեցու՝ 1970-ականների վերափոխության ժամանակ գտնված կոթողի բեկորի վիմագրում¹⁸ և չի բացառվում, որ վկայված է նույն անձը:

5. Խաչաքանդակ քար, բնորոշ ժե-ժԶ դդ., քարի վերնամասում պահպանվել է միատող անավարտ արձանագրություն.



ՄԲ ԽԱՉՍ ԱԲԵՂԱ...

Վկայված «աբեղա»-ն միգուցե անձնանուն է, ինչպես օրինակ՝ Սարկավազը, որը հոգևոր կոչում լինելուց զատ նաև անձնանվան իմաստ է ձեռք բերել:

6. Խաչքարի կամ խաչաքանդակ քարի բեկոր (0,37×0,31 մ), բնորոշ ժԶ– ժԷ դդ., կտորված, աջակողմյան հատվածն է, որտեղ պահպանվել է նաև եռատող արձանագրությունը.



ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵ՝ ԽԱԻՍ/ԿՈՍՍ/ԱՆԻՆ:

18 Կ. Ղաֆաղարյան, Երևան, էջ 224, արձ. 282:

Պարսպապատի տակ շարված քարերի մնացյալ վիմագրերը ժէ– ժԸ դդ. են:

7. Խաչքարի բեկոր (0,71 × 0,44 մ), ստորին մասն է, ուր պահպանվել է նաև երկտող վիմագիրը.



ՅԼԻՇԱՅԸԱՅ Է ՄԲ ԽԱՅՉՍ ԾԱՍՏՈՒՐԻ ՈՐԴԻ/
ՄԵԼԻՔ ԱՂԱՄԱԼԻՆ: ՌՃԽԲ. (1693):

Խաչքարը 1679թ. մեծ երկրաշարժից հետո վերակառուցված եռանավ բազիլիկ եկեղեցու ժամանակակիցն է և ագուցված է եղել նրա որմերից մեկին: Այն կարևոր սկզբնաղբյուր է նաև եկեղեցու վերակառուցման ժամանակի ու մեկենասի անձի լուսաբանման առումով, ըստ այդմ՝ երկրաշարժից հետո Արարատյան դաշտում կառուցված եկեղեցիների շարքում պետք է նշել նաև երբեմնի կանգուն բազիլիկը, որը Երևանի մյուս եկեղեցիների պես հնի տեղում վեր է խոյացել 1690-ականների սկզբներին, Նահապետ Ա Եղեսացի (1691–1705) կաթողիկոսի օրոք, իսկ մեկենասն ակնհայտորեն Աղամալյան նշանավոր տոհմից Ծատուրի որդի մելիք Աղամալն է, որի մեկենասությամբ է կառուցվել նաև Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (1710թ.)¹⁹:

Ս. Էջմիածնի միաբաններ Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, հետագայում նաև Մեսրոպ արք. Սմբատյանցն իրենց տեղագրական աշխատություններում համառոտ անդրադարձել են Կաթողիկեի երբեմնի կանգուն բազիլիկ եկեղեցուն: Նրանք նշում են, որ այդ եկեղեցին կառուցված է քար ու կրով, օրորոցածև, չորս սյունների վրա, ունի մի պատարագի սեղան՝ Ս. Աստվածածնի անունով, որի սեղանի վրա մեծ կաթողիկեն է, իսկ երկու փոքր սեղանները, որոնք կրում են Ս. Ստեփանոս Նախավկայի և Ս. Հովհաննես Մկրտչի անունները, նույնպես գմբեթակիր են²⁰: Սմբատյանցի հավաստմամբ՝ եկեղեցին շինարարական արձանագրություն չունի, փոխարենը արևմտյան պատին ագուցված մարմարյա քարի վրա հետևյալ արձանագրությունն է. «Յիշատակ է Սուրբ Խաչա Օհանէսի որդի Աղամալին, թվին ՌՃԽԲ. (1693)»²¹: Եկեղեցու հարավային մուտքին կից երբեմնի կանգուն զանգակատան հարավային պատին հետևյալ արձանագրությունն է եղել. «Նորոգեցաւ գաւիթս արդեամբ ժողովրդոց, երաշխաւոր երեսփոխան Օհան Եսայեան Օհաննէսով, թվին 1861 փրկչական, ծախսն է 1150 մանեթ»²²: Նշված արձանագրություն-

19 Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու վիմագրերը հրատարակել է Կ. Ղաֆադարյանը, տե՛ս նշվ. աշխ., էջ 169–175, արձ. 91–107:

20 Յովհաննէս եպս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջ 301, Տեղագիր Գեղարքունի ծովագաղղ գաւառի, որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, գրեց Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանց, Վաղարշապատ, 1895, էջ 9:

21 Մեսրոպ արք. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 9:

22 Նույն տեղում:

ներից առաջինը հրատարակելով՝ Կ. Ղաֆաղարյանը նշել է, որ այն գտնվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում: Նա թվականը կարգացել է ՌՃԽԳ (1694), Աղամալի հոր անունը՝ Յոհան²³:

8. Խաչքար (0,60×0,50մ), վերնամասը կոտրված է, ժամանակակից է նախորդին, ազուցված է եղել միևնույն եռանավ բազիլիկի որմերից մեկին: Թվականի տասնավորն ու միավորը խաչաթևերի ստորին հատվածում են, բուն վիմագիրը՝ խաչքարի ստորին մասում՝ 2 տող.



ՅԻԻՇԱՅԱՅԱԿ Է ՄԲ ԽԱՅՉՍ/ ՆԻԿՈՂՈՍԻՆՆԻ:
ԹՎԻՆՆՆ ՌՃ/ԽԳ. (1694):

Հրատ. Ղաֆաղարյան, 147–148, սրճ. 22

Ենթադրելի է, որ հիշատակված Նիկողոսը օժանդակել է եկեղեցու կառուցմանը և պատիվ է ունեցել իր անվանակիր խաչքարն ունենալ նրա որմերից մեկին: Այս արձանագրությունը Կ. Ղաֆաղարյանը ժամանակին հրատարակել է լուսանկարով, որտեղ խաչքարն ամբողջական է:

9. Խաչքար (0,84×0,56 մ), ժամանակակից է նախորդին, ազուցված է եղել եռանավ բազիլիկի որմերից մեկին: Վիմագիրը ստորին հատվածում, 2 տող.




ՅԻԻՇԱՅԱՅԱԿ ԷՆ ՄԲ ԽԱՅՉՍ/ ԳՐԻԳՐՈՐԻ
ՈՐԴԻ [ՈՐԴԻ] ԱՆՄԱՆԻՆ:

Հրատ. Ղաֆաղարյան, 148, սրճ. 23

Այս արձանագրության բնույթը ևս պետք է մեկնաբանել նախորդին համահունչ, այսինքն՝ խաչքարը ձուլված է Գրիգորի որդի ոմն Անանի հիշատակին, որը ևս պետք է որ իր աջակցությունը ցուցաբերած լինի ընթացող շինարարական աշխատանքներին: Վիմագրի վերձանությունն ու խաչքարի լուսանկարը ևս տեղ է գտել Կ. Ղաֆաղարյանի գրքում, միայն թե քարի ստորին հատվածը ներկայումս տեղ-տեղ ջարդված է, իսկ վիմագրի երկրորդ տողը՝ մեծապես վնասված:

23 Կ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ., էջ 217, սրճ. 255:


10. Տապանաքար (0,47×0,41 մ), կոտրված, գիրը վնասված, 4 տող.



ՂԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԲԱՐՍԵՂԻՆ,
ՂՈՐ Է ՈՐԴԻ ՄԱՆՂՈՒԿԻՆ, ԹՕԲ...
... ՂԹՂԱՐՎԷԶՑԻ,
... ՂԹՎԻՆ ՌՂՄԻԱ. (1772):

Դատելով մասնակի պահպանված արձանագրության հնարավոր վերծանութիւնից, այն տապանագիր է, ննջեցյալը՝ ոմն Մանուկի որդի Բարսեղը, որը ծագումով Թավրիզից կամ Թուրքաթից է: Վերջին տողում առկա տառերն ակնհայտորեն վերաբերում են թվականին, միայն թե պետք է վերականգնել Ռ հազարավորը և կարդալ ՌՄԻԱ-1772թ., որին ևս համապատասխան է տառաձևերի հնագրական ոճը:


11. Տապանաքար (0,47×0,30մ), կոտրված, դատելով ձևից՝ օրորոցաձև է եղել, գիրը՝ 3 տող.



ՂԱՅՍ Է՛ ՏԱՊԱՆ ՄՕՍԷՍԻՆ,
ՂՈՐ Է ՈՐԴԻ ՍԻՄԷՕՆԻՆ,
ՂՎԱԽՃՂԱՆԵՑԱԻ Ի ՌՄԼԸ. (1789) ԹՎԼԻՆ:]

Տապանագրի տողերի սկզբնամասը ևս վնասված է, սակայն հեշտ վերականգնելի:

12. Տապանաքար (0,31×0,22×0,40 մ), կոտրված, գիրը վնասված, 5 տող.



...
...ՂՅՈՎՂԱԿԻՄԻ
...ՅԱՄԵՆԱՅՆԻ
...ՍԷ
...ՕԻ:

Այս բեկորը թերևս ուղղանկյունաձև տապանաքարի մաս է, իսկ ննջեցյալի անունը պայմանականորեն կարդացել ենք Հովակիմ: Ըստ ամենայնի՝ ժամանակա-

կից է նախորդներին: Այս և վերոնշյալ տապանաքարերի բեկորները վկայում են, որ եկեղեցու շրջակայքում նաև գերեզմանոց է եղել, որի տապանաքարերից շատերը հետագայում իբրև շինաքար են օգտագործվել: Իհարկե, բացառված չէ, որ այս բեկորները տեղափոխված լինեն Կոնդ-Կոզեռնի կամ հարևանությունում գտնվող երբեմնի Գեթսեմանի մատուռի հարակից գերեզմանոցից:

13. Արձանագիր քարաբեկոր (0,30×0,27 մ), 2 տող.



...
...ՀԱՆՋՈՒ...
...ԽԵՉՈՒՄ...

14–15. Քարե սրբապատկերներ, մեկը պատկերում է Քրիստոսին, մյուսը՝ Գաբրիել հրեշտակապետին, ունեն համապատասխան արձանագրություններ.



ՅՄ ՔՄ ԵՄ ԵՄ/ ԼՈՅՄ Ա/ՇԽՂԱՐՀԻՂ
ԳԱԲ/ՐԻԷԼ/ ՀՐԵ/ՇՏԱ/Կ

Բավականին հետաքրքիր այս քարե սրբապատկերներն, ըստ էության, ծագումով Վան-Վասպուրականից են, քանի որ ակնհայտորեն կրկնում են Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ժղ. ստեղծված բարձրաքանդակները: Հնարավոր է, որ առարկաները Երևան են բերել վասպուրականցիներն ու նվիրել Կաթողիկե եկեղեցուն: Կարելի է թվագրել ժԸ–ժԹ դդ.:

Ամփոփելով հարկ է արձանագրել, որ ներկայացված վիմագրերը Երևանի վիմագրական ժառանգության ամբողջացմանն ուղղված աշխատանքների համատեքստում առաջնային նշանակություն ունեն: Դրանք քաղաքի գլխավոր եկեղեցիներից մեկի՝ Կաթողիկե Ս. Աստվածածնի և կից, երբեմնի վերակառուցված եռանավ բազիլիկ հորինվածքով դահլիճի պատմության հավաստի պատասխաններն են, որոնց հավաքումն ու հրատարակումը մեծ կարևորություն ունի նախ և առաջ Երևան քաղաքի պատմության լուսաբանման համար:



Նկ. 1 Երևանի Կաթողիկե Ս. Ասրվաճաճին և Ս. Աննա եկեղեցական համալիրը հարավ-արևմուտքից



Սրձ. 1-2



Սրձ. 3



Սրձ. 4



Սրձ. 5



Սրձ. 6



Մրձ. 7



Մրձ. 8



Մրձ. 9



Մրձ. 10



Մրձ. 11



Մրձ. 12



Մրձ. 13



Մրձ. 14



Մրձ. 15

АРСЕН АРУТЮНЯН

НЕИЗДАННЫЕ ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ
ИЗ ЦЕРКВИ КАТОГИКЕ В ЕРЕВАНЕ

Ключевые слова: *Ереван, церковь Катогики, эпиграфическое наследие, Каро Кафадарян, крест-камень (хачкар), надпись, ктитор.*

Значительную часть эпиграфического наследия Еревана составляют памятные надписи церкви Св. Катогики, расположенной в центре Еревана. Первое комплексное исследование этих надписей было осуществлено известным археологом, специалистом по эпиграфике Каро Кафадаряном, который еще в 1930-ые годы участвовал в изучении древностей города и копировал лапидарные надписи. Исследования церкви Св. Катогики и ее памятных надписей были обобщены К. Кафадаряном в сборнике, подытоживающем результаты изучения эпиграфического наследия Еревана, в котором 59 надписей из представленных 293 относились к церкви Св. Катогики.

В настоящее время у восточной ограды церковного комплекса Катогики–Св. Анна выставлено несколько камней, покрытых резной орнаментацией и памятными надписями: базы и другие фрагменты колонн, детали свода, хачкары (крест-камни) и пр. Несмотря на то, что они не датируются ранним периодом, они не были представлены в книге К. Кафадаряна. Можно предположить, что эти фрагменты были обнаружены позже. Общее число памятных надписей – 15, из которых тринадцать ранее не были опубликованы. Датируются они XIII–XIX веками, и по своему содержанию весьма разнородные: строительные, посвятельные и другие. Благодаря расшифровке надписей нам становятся известны имена и деятельность живших в XIII–XIV веках Атабака Зазы, сына мелика (князя) Цатура – мелика Агамала, прихожан-дарителей Никогоса, сына Григора – Анана и др., а памятная надпись на хачкаре Агамала свидетельствует о том, что при его ктиторстве в 1693-ем году была перестроена трехнефная зала церкви.

ARSEN HARUTYUNYAN

UNPUBLISHED LAPIDARY INSCRIPTIONS
FROM KATOGHIKE CHURCH IN YEREVAN

Keywords: *Yerevan, Katoghike Church, epigraphic heritage, Karo Ghafadaryan, cross-stone (khachkar), inscription, patronage.*

The lapidary inscriptions of the St. Katoghike church, located in the center of Yerevan, constitute an enormous part of the epigraphic heritage of the city. The first comprehensive study was conducted by the renowned archaeologist, epigraphist Karo Ghafadaryan, who was engaged in the study of antiquities of the city and copied the lapidary inscriptions in the 1930's. K. Ghafadaryan finally summarized his studies dedicated to the St. Katoghike and its inscriptions in the volume, covering the epigraphic heritage of Yerevan, where 59 of the presented 293 lapidary inscriptions are from St. Katoghike church.

Several stones with carved ornaments and commemorative inscriptions, such as bases and other column fragments, vault details, cross-stones (khachkars), etc., are currently exhibited near the eastern wall of the St. Katoghike and St. Anna church

complex. Even though these stones are not dated back to the early periods, however, they were not included in the book by K. Ghafadaryan. Most probably, these fragments were found much later. The total number of commemorative inscriptions is fifteen, thirteen of which are unpublished. They are all dated back to the XIIIth–XIXth centuries and are of various contents: building, dedicatory inscriptions, etc. Thanks to the inscription deciphering, the names and activities of Atabek Zaza, Melik Aghamal son of Melik Tsatur, visitor-donors Nikoghos, Anan son of Grigor and others, who lived in the XIIIth–XIVth cc were revealed. A commemorative inscription on the khachkar of Melik Aghamal attests to the fact that once, in 1693, the three-nave hall of the church was reconstructed under his patronage.

ՍԱԹԵՆԻԿ ԽՈՒՐՆՈՒԴՅԱՆ

ՆՈՐԱՅԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԻՇԵՆԻՑ.
ՍԵՂՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ՅԵՏՔԵՐՈՎ

Հիմնաբառեր՝ Գորիս, գյուղ, Սյունիք, քաղաք,
եկեղեցի, գեյր, արձանագրություն:

Վերիշեն գյուղը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Գորիս քաղաքից 2 կմ հյուսիս-արևմուտք, Վարարակ գետի ափին: Ըստ պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հարկացուցակի՝ գյուղը հիշատակվում է պատմական Աղահեճք գավառում՝ Վերին շեն տարբերակով¹: Կարծում ենք, այն չի կարող նույնացվել այսօրվա Վերիշենի հետ, քանի որ վերջինս գտնվելիս է եղել Հաբանդ գավառում՝ ներկայիս Գորիս քաղաքի տարածքում²: Գյուղում կանգուն է Ս. Հռիփսիմե միանավ բազիլիկ եկեղեցին, որն, ըստ մուտքի ճակատակալ քարի արձանագրություն, հիմնովին վերակառուցվել է 1621թ., որի հնագույն մուտքը հարավային կողմում է: Դասելիճի երկայնական պատերին առկա են հնգական կամարակապ որմնախորշեր, որոնք արևելքում ավարտվում են ներսից և դրսից կիսաշրջանաձև խորանով³: Եկեղեցին ունի երկու մուտք՝ հարավից և արևմուտքից: Հարավային մուտքի բարավորի արձանագրությունը եղծված է, ըստ այդմ հնարավորություն չեղավ տեղում ընթերցել և հստակեցնել վերականգնման թվականը: Սակայն, Սերո Խանզադյանի արխիվում պահվող «Մատյան վիմագրություն» նյութերի ժողովածուում գտանք 1621-ը որպես վերակառուցման թվական փաստող վկայություններ: Ներկայացնում ենք հիշյալ ժողովածուում տեղ գտած քննվող խնդրին առնչվող վիմագրերը.

Արձանագիր քար՝ ագուցված եկեղեցու պատի մեջ.

ՁՏԷՐ... ՆՈՐՈՒԳԵՑԱԻ ԹՎԼԻՆ՝ ՌՀ. (1621)⁴:

Փաստելի է, որ 1621թ. այստեղ նորոգումներ են կատարվել:

Մեկ այլ խաչքարի արձանագրության համաձայն.

ՇՆՈՐՀ...ՏՐ... ԳՐԻԳՈՐՈ... ՌՀ. (1621)⁵:

1 Պատմություն նահանգի Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելյան արքեպիսկոպոսի, Թիֆլիս, 1910, էջ 398:

2 ԴՀՎ, պրակ II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 75:

3 ՀՍՀ, հ.11, Երևան, 1985, էջ 407:

4 Ս. Խանզադյան, «Մատյան վիմագրության», անտիպ, էջ 42:

5 Նույն տեղում:

Ս. Հռիփսիմե եկեղեցու պատերի շարվածքում օգտագործված են 4–5-րդ դդ. Հայ ճարտարապետությունը բնորոշ բեկորներ, ատամնավոր քիվ և այլ հնաոճ քանդակային մանրամասներ, որոնց հիմամբ Վերիշենի եկեղեցին համարվել է 4-րդ դ. հուշարձան⁶:

Ենթադրվում է, որ եկեղեցին կառուցվել է նախկին մեհյանի տեղում, որի մասին վկայում են 2007 թ. Վերիշենի գյուղապետարանի բարեկարգման աշխատանքների ժամանակ հայտնաբերված մինչքրիստոնեական գտածոները՝ սյունախոյակներ, սանդանման քար և տապանաքարեր, որոնք բնորոշ են հեթանոսական կամ վաղ քրիստոնեական տապանաքարերի ձևերին: Եկեղեցու տարածքում եղել են այլ շինություններ ևս, որոնցից պահպանվել է միայն եկեղեցուց դեպի հյուսիս-արևելք գտնվող երկհարկանի մի կառույց, որը, հավանաբար, ծառայել է իբրև սեղանատուն⁷:

«Դիվան Հայ վիմագրություն» մատենաշարի II պրակում Ս. Բարխուդարյանը վերծանել և հրատարակել է Ս. Հռիփսիմե եկեղեցու բակի վիմագրերը: Ցավով պետք է նշել, որ Վերիշենից «Դիվան»-ում տեղ գտած վիմագրերը չեն պահպանվել, բացառությամբ արևմտյան մուտքին իբրև բարավոր օգտագործված խաչքարի արձանագրություն և ևս մի արձանագիր խաչքարի, որը ներկայումս գտնվում է Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում⁸: Վերջերս մենք առիթ ունեցանք տեղում ուսումնասիրելու նշված խաչքարը: Համեմատելով պրակում տեղ գտած արձանագրության վերծանություն հետ՝ պարզեցինք, որ նախկինում խաչքարի արձանագրությունը վերծանվել և հրատարակվել է մասամբ (հավանաբար Ս. Բարխուդարյանը չի նկատել խաչքարի՝ հողում թաղված ստորին հատվածի երկտող վիմագիրը): Ներկայացնում ենք Ս. Բարխուդարյանի հրատարակած այդ արձանագրությունը.

1. Խաչքար. քիվին, կողին, 2-ական տող.

ԵՍ՝ ԴԵԴԻԵԱՆ ՍԱԼԱՀԴԱՏ, / ԿԼԱՆԳՆԵՑԻ ԽԼԱՂՍ ՆԱԻՐՆ
ԻՄ ՄԱՐԿՈՍԻՆ, / ԹՎԼԻՆՅ ՌԼ. (1581)⁹:

«Սալահդատ-Սալահ՝ արաբ. *salah* բառից, որ նշանակում է բարելավում, բարեպաշտություն, իբրև անձնանուն գործածված է 1631 թ.»¹⁰: Ըստ վիմագրագետ Աշ. Մանուչարյանի՝ Սալահ նշանակում է նաև բարիք, բարեմիտ, արդարամիտ: Վերջին բառը ելակետ ընդունելով՝ կարող ենք Սալահդատ անձնանունը ստուգաբանել որպես արդարադատ:

«Դիվան»-ում տեղ չգտած խաչքարի ստորին հատվածում, 2 տող (նկ. 1).

6 Մ. Հասրաթյան, Հայաստանի արտաքուստ շեշտված արսիդով միանավ հուշարձանները, ԼՀԳ, 1976, Հ^ա 11, էջ 28:

7 Ժ. Միրումյան, Վերիշենի Ս. Հռիփսիմե եկեղեցին, Գորիսի պետական համալսարանի միջազգային գիտաժողովի աշխատանքների ժողովածու, Գորիս, 2010, էջ 196:

8 Նույն տեղում, էջ 199:

9 ԴՀՎ, պրակ II, էջ 76, արձ. 221:


10 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 344:

ԲՆԷՆԱՐԾԱՆՉԱՄԱՆԿԵՐ
ԵՍ ՆԵԿՍԱՐ ԾԿՉՈՂՈՎԱՆՈՎ

...ԵԼՍ՝ ՆԵԿՏԱՐ, ԱՐԾԱՆ ՂԱՏԱՇ ԿԾՕՂ/
ԵՍ՝ ՆԵԿՏԱՐ [Ծ] ԿԱԶԱՄՍՅՈՂ, ՈՒՍԱ... ԹՎ (°):

Առաջին հայաքերից պարզ, ընթեռնելի թվացող վիմագիրն իրականում տարակուսանքի տեղիք է տալիս: Հստակ է, որ այստեղ հիշատակված են խաչքարագործ վարպետները, որոնցից մեկն, ըստ էության, արձան (վիմագրում՝ արձան) կանգնեցրած Ղատաչ գծողն է (վիմագրում բարբառի ազդեցությամբ՝ կծող) և նեկտար կազմողը: Այդուհանդերձ, վերծանությունն որոշ վերականգնումներ թեական են մնում, իսկ երկրորդ տողի ավարտը՝ անհասկանալի (խմբ.):

2. Խաչքար. քանդակագարդ, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, քիվին 3 տող (նկ. 2).



ԱՐՈՂՈՐՄԻ/ՈՒԱՆԻՍԻՆ/Ի ԹՎ.ԻՆ, ՌԼ. (1581):

Արձանագրությունը հրատարակված է նաև ԴՀՎ II պրակում՝ մասնակի տարընթերցմամբ.

ԱՐՈՂՈՐՄԻ/Ի ԹՎ.ԻՆ, ՌԼ. (1581)¹¹:

Ամենայն հավանականությամբ, մեծանուն գիտնականը վիմագիրը վերծանել է ԴՀՎ-ում հրատարակված լուսանկարի հիմամբ, որտեղ իրականում բացահայտ ընթերցվող երկրորդ տողը ստվերում է:

Այսպիսով, մեզ հաջողվեց գտնել Ս. Հռիփսիմե եկեղեցուց Գորիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակ տեղափոխված խաչքարերը և մեկ տապանաքար:

Ս. Հռիփսիմե եկեղեցու բակում, ինչպես վերը նշեցինք, կան մեծ թվով խաչքարեր և տապանաքարեր (նկ. 3): Կատարված ուսումնասիրությունն արդյունքում ընթերցողին ենք ներկայացնում մեր կողմից ընդօրինակված նորահայտ վիմագրերը.

3. Խաչքար. ավագաքարից, քիվին, 3 տող (նկ. 4).


ԵՍՏՈՂԱԻԻՅՍԿԱՆԿԵՐ
Ո ԻՑԻՂԱԼՔՈՒՄՍՈՒՄՍՈՒՄ
ԹԵԻԱՆԻԱՋԻՆԻՆՑԵ ԳԵՔԻՔՍ ԹՎՂԹ

ԵՍ՝ ՏՐ ԴԱԻԻԹՍ, ԿԱՆԿԵՑ/ՈՒՑԻ
ԶԼԽԱԶ ՀՈԳՈՅՍ ՓՐԿՈՒ/ԹԵԼԱՆ,
ԽԱՆԻՆԱԶԻՆ, ԻՇԵՑԵՔ Ի ՔՍ,
ԹՎ.ԻՆ, ԶԼԹ. (1550)¹²:

11 ԴՀՎ, պրակ II, էջ 76, արձ. 222:
12 Ժ. Միրումյան, նշվ. աշխ., էջ 200:


Արձանագրութեան նախորդ հրատարակիչ ժ.Միրումյանը Դավիթ անվան փոխարեն կարգացել է Տրդատ և Թորոս, իսկ Խանինազի պարագայում՝ Խանին Աշինի:

4. Խաչքար. քիվին՝ 2, հիմնախաչի վերևում՝ 1 տող, թվագիրը՝ երնգավոր տառերով՝ խաչաթևերի վերին անկյուններում (նկ 5).




ՄԱՐԿՈՍ ՔԱՀԼԱՆԵՍ ԿԱԿՆԵՑԻ ԽԱՂՁՄ/
ՀԱԻՐՆ ԻՄ ՍԱՀԱԿ ՔԱՀԼԱՆԱԿԻՆ ԵԻ/
ՄԱԻՐՆ ԻՄ ԽԱԹՈՒՆԻՆ /,
Ի ԹՎԻՆՅ ՌՃ. (1651):

5. Խաչքար. քիվին՝ 1 տող, շարունակությունը՝ եղծված, թվականը չի ընթերցվում, սակայն, երևելով խաչքարի քանդակներից և դրանք համեմատելով նախորդ երկու կոթողների ոճական առանձնահատկությունների հետ, կարելի է ենթադրել, որ այն ևս 16–17-րդ դդ. խաչքար է (նկ. 6).




ԵՍ ԱՂԱՄՍ, ԿԸՆԸԿԵԼՑԻ...:

6. Տապանաքար. հարթ, գորշ գրանիտից, եզերված գծագարդերով, վրան խոշոր տառերով, 2 տող (նկ. 7).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՍ ՈՍԿԼՈՂԻՆ,
ԹՎԻՆՅ ՌՂԸ. (1649):


7. Տապանաքար. գորշ գրանիտից, գծագարդերով, վրան խոշոր տառերով, 2 տող (նկ. 8).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՍ ՇԱՀ/ՆԱԶԱՐԻՆ,
ԹՎԻՆՅ ՌՂԵ. (1648)^Բ:

8. Տապանաքար. օրորոցաձև, չրջված, արձանագրության երկրորդ տողի սկզբնամասը ջարդված, 2 տող (նկ. 9).

13 Նույն տեղում, էջ 199:




ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ ԲԻԻՆԱԹԼԻ, ...
ԴԱԻԻԹԻՆ, ԹՎԼԻՆ, ՌՂԷ. (1648):

Ենթադրելի է, որ երկրորդ տողի սկզբնամասը պետք է վերականգնվի՝ որդի:
9. Տապանաքար. օրորոցածև, վերնամասում և կողին՝ 2-ական տող (նկ. 10ա, բ).



ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ Բ/ԱԲՈՒԹԻՆ, ԹՎԼԻՆ, ՌՃԺ. (1661):
ՈՐԴԻ ՄԵԼՔՈՆ/ԻՆ:

10. Տապանաքար. հարթ, գորշ ավազաքարից, աջակողմը կտրված, վրան 2 տող (նկ. 11).



ԱՅՍ է ՀԱՆԳԻՍՏ ՀՈՒՆԻՆ, ԹՎԼԻՆ, Ռ/ՃԺԴ. (1665):

Վիմագրի առաջին հրատարակիչ ժ.Միրումյանը թվականը կարդացել է ՌՃՄԻ¹⁴:

11. Տապանաքար. հարթ, վրան մարդու գրաֆիկ պատկեր՝ խաչված ձեռքերով, գիրը՝ 4 տող (նկ. 12).




ԱՅՍ է ՀԱ/ՆԳԻՍՏ/ՈՒՆԻՆ/ԱՆԻՆ /
ԹՎԼԻՆ, ՌՄԹ. (1760):

Ուլուխան, ար., թրք. մեծ + խան բառերից, իբրև մեծ իշխան: Հիշատակված է ժԶ-ժԷ դդ.¹⁵:

12. Տապանաքար. գորշավուն գրանիտից, եզերված երկրաչափական պատկերներով, վրան մարդու գրաֆիկ պատկեր՝ խաչված ձեռքերով, գիրը՝ 2 տող, մասամբ եղծված (նկ. 13).


14 Նույն տեղում, էջ 199:

15 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1948, էջ 199:



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ / ՈՒԼԲԵԿԻՆ, ԹՎ.ԼԻՆ՝ Ռ. (1551):

13. Տապանաքար. գորշավուն գրանիտից, պարզ, առանց քանդակների, մի կողմին 2 տող (նկ.14).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՉԱԶՈՒՆ / ՈՒՆ, ԹՎ.ԼԻՆ՝ ՌՃԿԲ. (1713):

Կարծում ենք, անձնանվան հիմքում ընկած են «քաջ», «չաչք» արմատները, և գուցե հենց Չաչունի (Քաջունի) անձնանունն է:

14. Հուշակոթող. վերին մասը ջարդված, գերը՝ 6 տող (նկ.15).

ԷՍԷ

ԷՍ ԱԼ Ո

ՀՍԿԸ ԵՑԻ

ՍՀՍՈՐԴ

ԴԱՍԱՐ

ԵՏԹՎԼԻ

ԷՍ՝ /ԷՍԱԻՈ՛ՆՍ, ԿԼԱՆԼԿՆԵՑԻ / ԼԽԱԶՍ ՈՐԴՈՅ / ԼՄԼՔԱՍԱՐ՛ԵՆ, ԹՎ.ԼԻՆ՝ ՌՀ. (1621):


15. Տապանաքար. օրորոցաձև, քանդակազարդ, ձիավորի և որսորդի պատկերներով, վերին նիստին, 1 տող (նկ.16).

ՄԱՍԻՆ ՎԱՌՎԱՌԻՆ ԹՎ.ԼԻՆ՝ ՌՃԾԸ

ՄԱՍԻՆ, ՎԱՌՎԱՌԻՆ, ԹՎ.ԼԻՆ՝ ՌՃԾԸ. (1709):

Հր. Աճառյանը նշում է, որ այս իգական անձնանունը ծագում է ԹՈՐՉՈՐՈ անունից, և որ այս անունով հայտնի է Վառվառէ կույս նահատակը, որի վարքը մտել է Յայսմաուրքի մեջ: Հնագույն վկայությունը ժՁդ. է¹⁶:


16. Տապանաքար. օրորոցաձև, ընկած, վերին նիստին, 1 տող (նկ.17).



ՄԱՐՏԻՐՈՍ, ԹՎ.ԼԻՆ՝ ՌՃԻ. (1671):

16 Նոյսի հ.Ե, Երևան, 1962, էջ 42:

17. Տապանաքար. հարթ, վերին նիստին, 2 տող (նկ. 18).



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ / ԳՐԼԻԳԼՈՂԻՆ
ԹՎԼԻՆ՝ ՌՃԺԶ. (1667):

Ամփոփելով նշենք, որ եկեղեցուն կից տարածքում պահպանվել են նաև մի խումբ անարձանագիր տապանաքարեր, խաչքարեր, որոնց քանդակներն ու ոճական առանձնահատկություններն առավել բնորոշ են ուշ միջնադարին: Եկեղեցին և շրջակայքը կարող են մանրազնին հետազոտություն, ինչի շնորհիվ, վստահաբար, ի հայտ կգան նոր վիմագրեր:

Հիշատակարանային բնույթի նորահայտ արձանագրությունները հիմնականում գերծ են բարբառային ձևերից ու գրված են դասական հայերենին համահունչ: Վերիշենի եկեղեցին մեկն է 17-րդ դ. կառուցված կամ վերականգնված գյուղական պաշտամունքային այն բազմաթիվ կառույցներից, որոնց գոյությունը պետք է դիտարկել այդ դարի Սյունյաց անապատական շարժման լուսավորչական ու գիտակրթական վերազարթոնքի համապատկերում:



Նկ. 1 Հարված Ղարաշ և Նեկիրար կազմողների խաչքարից, 1581թ.



Նկ. 2 Խաչքար Ոսանիսի, 1581թ.



Նկ. 3 Եկեղեցու բակը



Նկ. 4 Խաչքար Խանինազի, 1550թ.



Նկ. 5 Խաչքար Սահակ քահանայի, 1651թ.



Նկ. 6 Խաչքար Աղամի



Նկ. 7 Տապանաքար Ոսկու, 1649թ.



Նկ. 8 Տապանաքար Շահնազարի, 1648թ.



Նկ. 9 Տապանաքար Գալիթի, 1648թ.



Նկ. 10ա Տապանաքար Մելքոնի, 1661թ.



Նկ. 10բ



Նկ. 11 Տապանաքար Հոսնի, 1665 թ.



Նկ. 12 Տապանաքար Ուլրիսանի, 1760 թ.



Նկ. 13 Տապանաքար Ուլրէկի, 1551 թ.



Նկ. 14 Տապանաքար Չաչունու, 1713 թ.



Նկ. 15 Տապանաքար Մլքասարի, 1621 թ.



Նկ. 16 Տապանաքար Սասի, Վառվառի, 1709 թ.



Նկ. 17 Տապանաքար Մարտիրոսի, 1671 թ.



Նկ. 18 Տապանաքար Գրիգորի, 1667 թ.

САТЕНИК ХУРШУДЯН

НОВОВЫЯВЛЕННЫЕ НАДПИСИ ИЗ ВЕРИШЕНА.
ПО СЛЕДАМ СЕДРАКА БАРХУДАРЯНА

Ключевые слова: *Горис, село, Сюник, город, река, церковь, надпись.*

Село Веришен расположены в Республике Армения, в Сюникской области, на расстоянии 2 км к северо-западу от города Горис, на берегу реки Варарак.

В статье представлены надписи, которые находятся около церкви Св.Рипсиме в Веришене.

Церковь Св.Рипсиме – одна из одностолпных базилик Армении, которая, согласно надписи на фасаде церкви, была основательно реконструирована в 1621 году. Предполагается, что церковь была построена на месте бывшего языческого храма, о чем свидетельствуют дохристианские находки, обнаруженные в 2007 году во время очистительных работ, организованных администрацией села Веришен.

Седраком Бархударяном были расшифрованы и во втором томе «Свода армянских надписей» опубликованы лапидарные надписи церкви Св.Рипсиме. В ходе работ было выявлено, что на месте до нас дошла только надпись тимпана на западной стороне церкви, а два крест-камня и одна надгробная плита были перенесены в город Горис, и размещены во дворе церкви Св. Григория Просветителя.

В статье проанализированы вышеуказанные надписи, подчеркнуты некоторые важные факты, а также представлены не опубликованные лапидарные надписи, найденные в 2016–2017 годах.

Эти новонайденные надписи эпитафического характера датированы XVI–XVII вв., и, на основе стилистических особенностей могут быть отнесены к позднему средневековью. В этих надписях не выявлены языковые формы, которые присущи диалектам: надписи написаны в соответствии с канонами классического армянского правописания. Таким образом, найденные нами лапидарные надписи свидетельствуют о существовании большого армянского прихода. Исходя из вышеотмеченных данных, подчеркивается необходимость проведения тщательных археологических исследований в окрестностях церкви, в результате которых с высокой степенью вероятности будут выявлены новые надписи.

SATENIK KHURSHUDYAN

NEWLY DISCOVERED INSCRIPTIONS FROM VERISHEN.
FOLLOWING THE FOOTSTEPS OF SEDRAK BARKHUDARYAN

Keywords: *Goris, village, Syunik, town, river, church, inscription.*

The Verishen village is located in Syunik region of Armenia, 2 km northwest of Goris, on the bank of the Varakak River.

The article presents the lapidary inscriptions of the St. Hripsime church yard in Verishen. St. Hripsime church is one of the single-nave basilicas of Armenia, which, according to the inscription on the facade of the church, was fundamentally recon-

structed in 1621. It is suggested that the church was built at the place of a pagan temple, as evidenced by the pre-Christian findings discovered in 2007 during renovation works, organized by the administration of Verishen village.

The lapidary inscriptions of St. Hripsime church were decoded and published by Sedrak Barkhudaryan in the second volume of the “Corpus of the Armenian Inscriptions”. As a result of the study, it was revealed that only the tympanum inscription has survived in situ on the western side of the church, meanwhile two cross-stones and a gravestone were relocated and placed in the yard of the St. Grigor Lusavorich church in Goris.

This article discusses the results of study of the abovementioned inscriptions and some important facts. It also presents the unpublished lapidary inscriptions, discovered in 2016 and 2017.

These new-found inscriptions-epitaphs are dated back to the XVIth–XVIIth centuries and can be referred to the late Middle Ages judging from their stylistic peculiarities. They are deprived of dialectic forms: inscriptions are written in accordance with the rules of the Armenian classical orthography. Thus, the discovered lapidary inscriptions are indicative of existence of a large Armenian parish community. In addition, the importance of a new holistic archaeological investigation within the surrounding territory of the church must be noted, which would reveal new inscriptions with a high degree of certainty.

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅԱՅՏ ՎԻՍԱԳՐԵՐ ՍՈՐՔԻ ՏԱՐԱԾԱԾՐՁԱՆԻՑ

Հիմնաբառեր՝ նորահայր վիմագրեր, Սորթի տարածաշրջան, միջնադար, րուսականարար, իսաչքար, եկեղեցի, արխիվ:

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Հնագետ Արսեն Բոբոխյան) 2017թ. օգոստոսին ուսումնասիրություններ իրականացրեց Գեղարքունիքի մարզի Սոթք, Կուլթ, Շատվան և Ազատ գյուղերում: Հայտնաբերվեցին շուրջ մեկ տասնյակ իսաչքարային հիշատակագրություններ և տապանագրեր, որոնք ներկայացնում ենք ստորև՝ կից գրչագրերով, վերծանություններով, ծանոթագրություններով և տեղագրական բնույթի հակիրճ ակնարկով¹:

Ուսումնասիրության պատմությունը

Սոթքի տարածաշրջանի վիմագրերի առաջին ուսումնասիրություններն իրականացվել են դեռևս 19-րդ դ. կեսերին՝ տեղագիրներ Սարգիս Ջալալյանցի², Մեսրոպ Սմբատյանցի³, Հովհաննես Շահխաթունյանցի⁴, ավելի ուշ՝ Ղևոնդ Ալիշանի⁵ կողմից: 20-րդ դարասկզբին այս խնդրով զբաղվել է նաև Երվանդ Լալայանը⁶: Սակայն առաջին հիմնավոր, վիմագրագիտության պահանջներին հարիր մեթոդներով արձանագրությունների ընդօրինակումը, վերծանումը և հրատարակումն իրականացրել է մեծանուն վիմագրագետ Ս.Բարխուդարյանը 1950–1970-ական թթ.՝ արդյունքներն ամփոփելով «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի IV պրակում⁷: Տարածաշրջանի վիմագրերի հրատարակության «բարխուդարյանական» համընդգրկուն աշխատանքն իր ծավալներով և բնակավայրերի պատմու-

- 1 Վիմագրերը վերծանելիս մեզ օժանդակելու համար խորին շնորհակալություն ենք հայտնում վիմագրագետներ Գագիկ Սարգսյանին, Արսեն Հարությունյանին և հնագետ Հուսիկ Մելքոնյանին:
- 2 **Սարգիս Ջալալյանց**, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Բ, Երևան, 2016, էջ 311–319:
- 3 **Մեսրոպ արք. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, 1895, էջ 592–627:
- 4 **Յովհաննես եպ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Ս. Էջմիածին, 2014, էջ 376–277:
- 5 **Ղ. Ալիշան**, Սիսական. տեղագրութիւն Սիսեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 63–75:
- 6 **Եր. Լալայեան**, Նոր-Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք. Տեղագրութիւն, ԱՀ, գ. XIX, Թիֆլիս, 1910, էջ 11–34:
- 7 ԴՀՎ, պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդնիսի շրջաններ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 289–384:

թյան ու հնուժյուղների վերաբերյալ հիմնավոր տեղեկություններով մինչ օրս չգերազանցված ու բարձրարժեք սկզբնաղբյուր է:

1980-ական թթ. Սոթքի տարածաշրջանում ուսումնասիրություններ կատարեցին նաև հայագետներ Սուրեն Սաղումյանը⁸, Հասմիկ Կարապետյանը⁹, Արամ քհն. Հունանյանը¹⁰, իսկ վերջին տարիներին՝ հնագետներ Արտավազդ Զաքյանը, Արաքսյա Մեչինյանը¹¹ և վիմագրագետ Սուսաննա Աղամյանը¹²:

Բնակավայրերի տեղագրությունը

Սոթք. Նախկինում Սողք, ապա Ձող անուններով հայտնի գյուղը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի հարավ-արևելքում՝ ծովի մակարդակից 2020 մ միջին բարձրություն վրա: Հնում եղել է համանուն գավառի¹³ վարչաքաղաքական կենտրոնը և քարավանային ճանապարհի կարևոր հանգրվան:

Արձանագրություն ունեցող հուշարձանները գյուղում այժմ երկուսն են. Ս. Աստվածածին բազիլիկ եկեղեցին և նրանից արևմուտք գտնվող հին գերեզմանատունը: Առանձին կանգնած արձանագիր խաչքարեր ու տապանաքարեր կան նաև գյուղի տարբեր կողմերում, որոնք, հավանաբար, գտնվել են վերը նշված հուշարձանների տարածքում կամ եկեղեցուց հարավ ընկած և այժմ գոյություն չունեցող գերեզմանատանը¹⁴:

Մինչ այժմ գյուղից հայտնի է 24 արձանագրություն՝ ամփոփված Ս. Բարխուղարյանի կազմած ժողովածուում¹⁵, դրանց ավելացնում ենք ևս 3-ը:

Կուլթ. Նախկինում Զարգիբիլ, ապա Զառքենդ¹⁶ անուններով հայտնի Կուլթ գյուղը գտնվում է Սոթքից 3 կմ հարավ-արևելք, Սոթքի լեռնանցք բարձրացող ճանապարհի աջ կողմում՝ ծովի մակարդակից 2060 մ միջին բարձրության վրա: Գյուղի հնուժյուղները հետազոտած Ս. Բարխուղարյանը նշում է, որ բնակավայրի հին անունը հայտնի չէ: 1991թ. վերանվանվել է Կուլթ՝ ըստ Ստ. Օրբելյանի կազ-

8 Սոթքի տարածաշրջանում Ս. Սաղումյանի կատարած վիմագրագիտական ուսումնասիրությունները հրատարակված չեն:

9 Լ. Կարապետյան, Մեծ Մագրա գյուղի վիմագրերը, ՊԲՀ, 1986, Հ^տ 2, էջ 232–237:

10 Արամ քհն. Հունանյան, Սյունիքի Սողք գավառի պատմամշակութային հուշարձանները (Գևորգյան հոգևոր ճեմարանի ավարտաճառ), Ս. Էջմիածին, 1988: Ծնորհակալություն ենք հայտնում Տեր Արամին՝ աշխատանքը տրամադրելու համար:

11 Ա. Զաքյան, Ա. Մեչինյան, Պահպանական պեղումներ և մաքրման աշխատանքներ Ազատ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցու տարածքում (հրատարակության ընթացքում): Հոդվածի տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում հեղինակներին – Ա. Գ.:

12 Ս. Աղամյան, Նորահայտ վիմագրեր Սևանա լճի արևելյան ափին, «Մերձավոր արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», Հոդվածների ժողովածու, հ. XI–XII, Երևան, 2017, էջ 190–197:

13 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 2007, էջ 205–207:

14 Վաղմիջնադարյան ամբոցի հողածածկ ավերակների վրա ձևավորված գերեզմանատան վերջին կանգուն խաչքարերն ու տապանաքարերը ոչնչացվել են 1980-ականն թթ.:

15 ԴՀՎ, պրակ IV, էջ 328–333:

16 Խ. Ավդալբեգյան, Սովետական Հայաստանի բնակավայրերի անունները, ԼՀԳ, 1971, Հ^տ 11, էջ 23–32:

մած Սոթից գավառի գյուղերի ցանկում առկա Կուլթն գյուղանվան¹⁷: Ս.Բարխուդարյանը հիշատակում է նաև մի եկեղեցի, որը կիսավեր վիճակում տեսել է Մեսրոպ Սմբատյանցը, և որն իր այցելություն ընթացքում այլևս չկար¹⁸: Գյուղից մոտ 2 կմ հարավ-արևելք՝ ձորի վերնամասում, պահպանվել են հին գյուղատեղի ավերակները և գերեզմանատունը, ուր կան տասնյակ գեղաքանդակ խաչքարեր ու տապանաքարեր: Մինչ այժմ Կուլթից հայտնի է 6 վիմագիր¹⁹, որոնցից 5-ը գտնվում է վերը նշված գերեզմանատանը, իսկ մեկը, որն այժմ կորած է համարվում, գտնվել է գյուղամիջում՝ ավերակ եկեղեցու մոտ: Կուլթից ներկայացնում ենք 1 արձանագրություն, որը հավանաբար գտնվել է գյուղի՝ այլևս գոյություն չունեցող եկեղեցու շրջակա գերեզմանատանը:

Շատվան. Նախկինում Հյուսիս-Կուլի աղալու, ապա Նարիմանլու²⁰ անուններով հայտնի Շատվան գյուղը գտնվում է Սոթիցից 4 կմ հարավ-արևմուտք՝ Վարդենիս-Սոթք ճանապարհի աջ կողմում, ծովի մակերևույթից 2004մ միջին բարձրության վրա: Ե.Լալայանը նշում է, որ գյուղում տեսել է հայկական եկեղեցու հիմնապատեր և կոտրատված մի քանի խաչքարեր²¹, որոնք չգտանք: Մինչ այժմ գյուղից հայտնի է երկու արձանագրություն²², որոնց կավերացնենք ևս երկուսը:

Ազատ. Նախկինում Աղբիլիսա, ներկայիս Ազատ գյուղը դարձյալ գտնվում է Սոթիի լեռնադաշտում՝ Սոթք գյուղից 3 կմ հարավ, ծովի մակերևույթից 2050 մ միջին բարձրության վրա: Արձանագրություն ունեցող հուշարձանները գյուղում երկուսն են. հին գերեզմանատունը և Ս.Աստվածածին եկեղեցին: Մինչ այժմ Ազատից հայտնի է 20 արձանագրություն²³, որոնց կավերացնենք ևս 2-ը:

Նորահայտ արձանագրություններ


1. Տապանաքար. օրորոցածև, գտնվում է Սոթքի Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան կողմում, երկու լայներես նիստին: Ա. նիստ՝ 4 տող.

| | |
|--|---|
| <p>ԹՎՈՒՃԼԶ "ԷՆԵԳԻՍՏՄԻԻԹԱ ԲԻՆԴՈՒՐԱՍԱԵԹԵՈՐԴ ԻՔՄԱԼԱԲԻՆ</p> | <p>ԹՎ.ԻՆ. :ՌՃԼԶ: (1687) / ԴԱՅՄ Է ՀԼԱՆԳԻՍՏ ՄԽԵԹԱ/ՐԻՆ, ԴՈՒՐԱՍԱՆԻՆ՝ ՈՐԴ/ԻՔ ՄԱԼԱԲԻՆ:</p> |
|--|---|

17 Ստեփանոս Օրբելեան, Պատմություն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 514:
 18 20-րդ դարասկզբին գյուղ այցելած Եր. Լալայանը նշում է, որ եկեղեցին քանդել և տեղը կալ են դարձրել (Եր. Լալայեան, նշվ. աշխ., էջ 28):
 19 ԴՇՎ, պրակ IV, էջ 308–310:
 20 Խ. Ավդալբեգյան, նշվ. աշխ.:
 21 Եր. Լալայեան, նշվ. աշխ., էջ 20:
 22 Հ. Կարապետյան, Նշմարներ Վարդենիսի վիճագրությունից, «Հուշարձան» տարեգիրք, Ա, Երևան, 1987, էջ 99–103:
 23 Արձանագրություններից 14-ն ամփոփված են Ս.Բարխուդարյանի կազմած ԴՇՎ IV պրակում, իսկ 6-ը ներառված են 2008թ. «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի հնագիտական ջոկատի կողմից եկեղեցում կատարված պեղումների արդյունքներն ամփոփող հոդվածում:

«Մալաք» իգական անձնանունը²⁴ հանդիպում է նաև Գեղարքունիքի Երանոս գյուղի Ս.Աստվածածին եկեղեցու գերեզմանատանը գտնվող 1685թ. մի տապանագրում²⁵: Մալաքի որդիներ Մխիթարի և Դուրասանի համար մեկ տապանաքար պատրաստելը միգուցե պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ եղբայրները մահացել են միաժամանակ՝ ինչ-որ պատահարից կամ կռվի ժամանակ: Նմանատիպ արձանագրություններ հայտնի են Գեղարքունիքի մարզի Նորատուս, Վաղաչեն, Շիրակի մարզի Սարալանջ և այլ բնակավայրերից. Նորատուսում, որտեղ կռվում զոհված մահմեդական եղբայրների համար մեկ գերեզմանաքար է պատրաստվել²⁶, Վաղաչենում՝ երկու եղբայրների²⁷ ու հայր և որդու²⁸, Սարալանջում՝ հայր և որդու համար²⁹:


Բ. նիստ՝ 3 տող: Պատկերված «ուսումնառություն» տեսարանում, որտեղ կերպարներից մեկը ձեռքին ունի արձանագիր պնակիտ.



Ա. Բ. Գ. /
Դ. Ե. /
Զ.

«Այբբենարանի» առկայությունը ուսումնասեր եղբայրների, նրանց ուղեկցող արձանագիր պնակիտի և դաստառակի³⁰ պատկերներով տեսարանում նոր և չգիտարկված երևույթ է տապանաքարային պատկերագրություն մեջ³¹:

2. Սոթքի Ս.Աստվածածին եկեղեցու հարավային պատին՝ մուտքից 5 մ դեպի ձախ, արտաքուստ, 1 տող.



Թ.

Ենթադրվում է, որ սա վարպետանշան է:

- 24 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 164:
- 25 ԴՆՎ, պրակ IV, էջ 238, արձ. 998:
- 26 А. Хачатурян, Корпус арабских надписей Армении, VIII–XVI вв., Выпуск I, Ереван, 1987, с. 66.
- 27 ԴՆՎ, պրակ IV, էջ 187, արձ. 772:
- 28 Նույն տեղում, էջ 186, արձ. 768:
- 29 ԴՆՎ, պրակ X, էջ 81, արձ. 125 (ծանոթագրված է, որ ննջեցյալները մահացել են համաճարակից կամ դժբախտ պատահարից, իսկ տապանաքարին երկու ննջեցյալների անվան առկայությունը բնավ չի ենթադրում, թե նրանք թաղվել են մեկտեղ):
- 30 Դաստառակին կարծես թե արձանագրված է «ԵՍ» անձնական դերանունը, սակայն դրա մասնակի եղծվածության պատճառով տեքստում այդ մասին չենք խոսում:
- 31 Տապանաքարային պատկերաքանդակներում պնակիտի պատկերի և ուսումնասերի կերպարի մասին մանրամասն տե՛ն Հ. Պետրոսյան, «Ուսումնասերի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում, «Քրիստոնեական Հայաստանի արվեստը», Միջազգային գիտաժողով, Երևան, 2001, էջ 43–45, Լ. Մինոնյան, Ծառ-ծաղկաքաղիկ, Երևան, 2017, էջ 314–323:

3. Տապանաքար, օրորոցաձև, գտնվում է Կուլթ գյուղի կենտրոնում՝ բաղնիքի մոտ, արևմտյան լայներես նիստին՝ 3 տող.

ՏՄՍՏ ԱՄՈՒՐԶ: ՄԱՐԵՆ ԳԵՐՄԵՆԻՆԷՅԻԱՐԻՐԲԱԿՄ
ԱՆ ՅԻԱՎԿՈՅՆՄԶԱՆՓ ԱՆԻՄԱՂԱՀԱՍԱԿՄ
ԻՔՍՓՄՍՈՒԳԵԹՈՂԾՆՈՂԱՑՍՈՐԿԱՂԷԲԱՂԵԹՄԻ ՇԵՑԷՔ:

...ԵՍ՝ ԱԼՍՏՈՒԱՅԾԱՏՈՒՐ, Զ:ձ: (100) ՏԱՐԵՆ ԴՊԵՐՔՍ ՇԻՆԵՑԻ ԿԱՐՄԻՐ ՔԱՐԻՆ /...ԱՆ...ՑԻ ՎԱՍՆ ՀՈՂԳՈՅՍ ԻՄ ԶԱՆՓԱՇԵՍ, ՏՂԱ ՀԱՍԱԿՄԱԻ՝ / Ի ՔՍ Փ՝ՈՒԵՑԱԻ՝, ՍՈՒԳ ԵԹՈՂ ԾՆՈՂԱՑՍ, ՈՐ ԿԱՐԴԵՔ ԱՂԱԻԹՔՍ ԼՅԻՇԵՑԵՔ:

Ննջեցյալն, ըստ էության, երիտասարդ հասակում կյանքից հեռացած Ձանփաշն է, իսկ քարգործ վարպետը՝ Աստվածատուրը, որի ձեռամբ, թերևս, կառուցվել է նաև գյուղի երբեմնի կարմրաշեն եկեղեցին³²: Կարծում ենք, հենց այս տեսանկյունից կարելի է մեկնաբանել տապանագրի առաջին տողի իմաստը: Նախկին հետազոտողների կողմից տապանաքարը չնկատվելու պատճառը հավանաբար եղել է մահմեդականների տներով և այլ կառույցներով (այժմ ավերակ) շրջափակված լինելը և դժվար տեսանելի վայրում գտնվելը:

4. Խաչաքանդակներով հարդարված ժայռաբեկոր, գտնվում է Շատվան գյուղի կործանող գերեզմանատան հարավային բլրի գագաթին, արևմտյան երեսին՝ 4 տող.

ՏԼԵԱՅՈՒՆՅ ԱՅ/
ՔՍ Տ/ ...
ԵՍ՝ ԱՊԵՐՍ, Կ/ԱՆԿԼԵՅՑԻ:
ԹՎԼԻՆՅ. :ԶԿԶ: (1517):

«ՏԻ» տառակապակցությունը, որը, ենթադրում ենք, որ «ՏԵԱՌՆ» բառի կրճատ ձևն է, վիճաբերում մեզ հանդիպում է առաջին անգամ:

5. Խաչքար, գտնվում է նույն բլրի հարավարևմտյան լանջին, երկրորդական օգտագործման նպատակով տաշտի վերածված, եզրագոտիներին՝ 2 տող.

ՄԲԽԱԶԵՐՍ ԼԱԻՐՆ ՄԵՐ ՄԻԻԹԱՐ ՔԼԱՀԱՆԱՆԱ... ՄԱԻՐ...

ՄԲ ԽԱԶԵՐՍ ԼԱԻՐՆ ՄԵՐ ՄԻԻԹԱՐ ՔԼԱՀԱՆԱՆԱ... ՄԱԻՐ...

32 Ս.Բարխուդարյանը հիշատակում է Մարտունու շրջանի Վանեվանի վանքից ոչ հեռու գտնվող այրերից մեկի ժայռին քանդակված խաչն ու արձանագրությունը, որը հայտնում է Աստվածատուր գործողի անունը: Գիտնականն այն թվագրում է ԺԶ դարով (Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 182, Հ^փ 133): Նույն դարով կարելի է թվագրել նաև Ջանփաշի տապանաքարը (խմբ.):

Վիմագիրը խիստ եղծված է, որոշ հատվածներ անընթեռնելի են: Ենթադրում ենք, որ հայր Մխիթարը Շատվանի՝ այլևս գոյություն չունեցող եկեղեցու հոգևոր առաջնորդն է եղել:

6. Ազատի Ս. Աստվածածին եկեղեցու կենտրոնական որմնամուկթի հարավային կողմում, խաչապատկերի շուրջը՝ 4 տող.

| | | | | |
|----|---|---|----|------------------|
| ՄՐ | Յ | Ը | ԱՃ | ՏՐ ԱԾ/ |
| ՈՂ | Յ | Ը | ՐԿ | ՈՂ, ՈՂՐՄ, ԵԱ, Յ/ |
| ԽԻ | Ղ | Ը | Ք | ԽԻՋԱՐՆ՝/ԻՆ. |
| ԻՆ | Ղ | Ը | ԿԵ | ԱՄԷՆ: |

7. Ազատի Ս. Աստվածածին եկեղեցու կենտրոնական որմնամուկթին՝ նախորդի մոտ, խաչապատկերի շուրջը՝ 4 տող.

| | | | | |
|----|---|---|----|---------------|
| ՄՐ | Յ | Ը | ԱՃ | ՏՐ ԱԾ/ |
| ՈՂ | Յ | Ը | ՄԻ | ՈՂ, ՈՂՐՄԻ/ |
| Մ | Ղ | Ը | Ք | ՇԱ, ՀԱ, Ջ/ԻՆ. |
| ԻՆ | Ղ | Ը | ՄԵ | ԱՄԷՆ: |

Շահագ անձնանունը, ըստ ամենայնի, Շահագիդ արական անվան կրճատ ձևն է: Հաշվի առնելով եկեղեցու կառուցման թվականը և գրչություն ոճը՝ այս և նախորդ հիշատակագիրը կարող ենք թվագրել 17-րդ դ. առաջին կեսով:

Այսպիսով, քննարկվող նորահայտ վիմագրերը մեծ մասամբ վերաբերում են 16–17-րդ դդ.: Դրանք կարևոր սկզբնաղբյուր են Սոթք գավառի ու հատկապես նախկինում չուսումնասիրված և սկզբնաղբյուրներում անհայտ բնակավայրերի պատմության լուսաբանման համար:

Հավելված

Ս. Բարխուդարյանի երջանկահիշատակ այրի Կլարա Ասատուրյանը մահվանից ամիսներ առաջ Բարխուդարյանի անձնական արխիվից մեզ տրամադրեց Սոթքի տարածաշրջանի³³ Ակունք գյուղի Հին գոմեր կոչվող վայրում արված և չհրատարակված՝ «Արտաշես Վրուրը³⁴ ծանր խոհերի մեջ» խորագրով³⁵ մի լուսանկար (1959թ.)³⁶ (նկ. 1, 2):

33 «Սոթքի տարածաշրջան» տերմինն օգտագործում ենք, նկատի ունենալով այն տարածքը, որը ներառում էր պատմական Սյունիք աշխարհի Սոթք գավառը: Հմտ. Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 514–515:

34 Հայր ու որդի Արամ և Արտաշես Վրուրյների հնագիտական գործունեության վերաբերյալ մանրամասն տես Ա. Շահնազարյան, Արտաշես Վրուրյի արխիվը, ԼՀԳ, 1980, Հ⁴ 5, էջ 112–116:

35 Ամենայն հավանականությամբ լուսանկարի հեղինակը Սեդրակ Բարխուդարյանն է:

36 Ձեռագրի և անտիպ լուսանկարի տրամադրման համար խորին շնորհակալություն ենք հայտնում Ա. Բորոխյանին:

Տիկին Կլարան մեզ տրամադրեց նաև Ս. Բարխուդարյանի արխիվում պահվող լուսանկարիչ Արամ Վրույրի «Ջուղա: Երկու խոսք» վերտառությամբ, 22 էջ ծավալով բնօրինակ ձեռագիրը, որը որոշ խմբագրումներով վերջինս «Արամ Վրույրի «Ջուղա» հնագիտական անտիպ ակնարկը» վերնագրով հրատարակվել է Արտաշես Վրույրի կողմից ՊԲՀ 1967թ. 4-րդ համարում³⁷: Բնօրինակի հետ համեմատությունը պարզեց, որ հոդվածից դուրս են մնացել Վրույրի՝ Ջուղայի ռուսական զորամաս այցելության մանրամասները, որ «Քրիստոս» և «Սուրբ» բառերը փոքրատառ են, իսկ հայատառ թվերը՝ արաբական կամ հռոմեական թվանշանների են վերածել: Միևնույն ժամանակ տպագիր տարբերակում հոդվածը գիտական ոճով է շարադրված, խմբագրված են հոդվածի մտքերը, եզրակացություններն առավել հիմնավոր են, ավելացված են որոշ վիճակագրական տվյալներ:



Արձ. 1ա-բ



Արձ. 2



Արձ. 3




Արձ. 4



Արձ. 5-6

37 Ա. Վրույր, Արամ Վրույրի «Ջուղա» հնագիտական անտիպ ակնարկը, ՊԲՀ, 1967, Հ^տ 4, էջ 169-180:



Նկ. 1-2 Արցաշեն Վրոյրը ծանր խոհերի մեջ, 1959թ.
 (լուս. Ս. Բարխուդարյանի անձնական արխիվ)

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՐՅԱՆ

НОВОВЫЯВЛЕННЫЕ ЛАПИДАРНЫЕ НАДПИСИ ИЗ СОТКСКОГО РЕГИОНА

Ключевые слова: *нововыявленные лапидарные надписи, регион Сотка, средневековье, надгробный камень, хачкар, архив.*

Обсуждаемые нововыявленные лапидарные надписи в большинстве своем относятся к XVI–XVII векам. Они являются важным источником информации, в частности для выявления ранее не исследованных мест проживания, и дополняют ранее изданный список лапидарных надписей региона.

Поскольку регион Сотка богат средневековыми историко-культурными памятниками, то обнаружение и публикация лапидарных надписей очень важны с точки зрения дополнения результатов продолжительных археологических исследований и полного воссоздания образа средневековых поселений.

AVETIS GRIGORYAN

THE NEWLY DISCOVERED LAPIDARY INSCRIPTIONS FROM SOTK REGION

Keywords: *newly discovered lapidary inscriptions, Sotk region, medieval period, gravestone, cross stone, archive.*

The article discusses newly discovered inscriptions that mostly refer to the XVIth–XVIIth centuries. These significant sources of information are particularly important for the study of history of previously unexplored settlements, and supplement the list of previously published lapidary inscriptions of the region.

The discovery and publication of lapidary inscriptions of the Sotk region that is rich in medieval historical and cultural monuments is very important for supplementation of results of long-term archeological investigations and complete reconstruction of the image of medieval settlements.

ԱՐՄԵՆ ԲՈՒՌՆՅԱԼ

ՍԵՂԻԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱԼԸ ԵՎ ՎԻՃԱՊԱՔԱՐԵՐԻ ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆԸ 1920–1930-ԱԿԱՆ ԹԹ.

Հիմնաբառեր՝ Սեղրակ Բարխուդարյան, վաղ հնագիտության խնդիրներ, հնագիտական հուշարձանների հետազոտություն, վիշապաքարեր, հայ հնագիտությունը 1920–1930-ական թթ.:

Սեղրակ Բարխուդարյանը հայտնի է որպես միջնադարի խոշոր հետազոտող, սակայն նա իր գիտական ուղին սկսել է հնագույն Հայաստանի ուսումնասիրությունում¹: Նրա գիտական գործունեությունը² կարելի է բաժանել երկու հիմնական փուլերի՝ 1928–1937թթ., երբ զբաղվել է վաղ հնագիտության ու հուշարձանների պահպանության խնդիրներով (1928–1930 թթ.՝ Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում ուսուցիչ և 1932–1937թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանում ու Հնությունների պահպանության կոմիտեում գիտաշխատող լինելու ընթացքում), և 1950-ական թթ. երկրորդ կես – 1970թ., երբ կենտրոնացել է միջնադարի (վիմագրության) խնդիրների վրա (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կազմում):

Հետաքրքրությունը վաղ շրջանի հնությունների նկատմամբ սկսվել է դեռևս Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետում ուսումնասիրության տարիներին (1924–1928թթ.), ինչի ձևավորման գործում մեծ նպաստ պիտի ունենային ուսուցիչները և հատկապես՝ Ա. Քալանթարը, որի հետ ուսանող Ս. Բարխուդարյանը մասնակցում էր տարբեր դաշտային աշխատանքների:

Հնագիտության զարգացման միտումները Հայաստանում 1920-30-ական թթ.

Մշակույթի և մասնավորապես հնագիտության զարգացումը 1920–1930-ական թթ. Խորհրդային Հայաստանում ուղղակիորեն կապված է քաղաքական

1 Օգտվելով առիթից խորին շնորհակալություն եմ հայտնում Սեղրակ Բարխուդարյանի տիկնոջը՝ Կարա Ասատրյանին, վիշապաքարերի մեր հետազոտության ընթացքում տրված խորհուրդների և համապատասխան նյութերի տրամադրման համար:

2 Ս. Բարխուդարյանի կենսագրության և գործի մասին տես **Ս. Ավագյան**, Սեղրակ Բարխուդարյան, ԼՀԳ, Հ^տ 5, 1970, էջ 113–114: **Հ. Թումյան**, Վաստակավոր հնագետ-պատմաբանը (Ս. Գ. Բարխուդարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ), ՊԲՀ, Հ^տ 4, 1973, էջ 74–80: **Պ. Մուրադյան**, Հարյուրամյակների միջով, հարյուրամյակների հետ [Սեղրակ Բարխուդարյանի վաստակը], Սովետական Հայաստան, 16 սեպտեմբերի, 1976, էջ 4: **Գր. Մ. Գրիգորյան**, Ականավոր վիմագրագետը, ԼՀԳ, Հ^տ 3, 2005, էջ 188–193: **Գ. Սարգսյան**, Սեղրակ Բարխուդարյան (Ծննդյան 110-ամյակի առթիվ), ՊԲՀ, Հ^տ 2, 2008, էջ 287–289:

պատմութեան հետ³: Համապատասխանաբար այն կառաջարկեինք բաժանել երկու հիմնական փուլերի. 1. Նոր տնտեսական քաղաքականութեան (ՆՏՔ/ՀՅՈ) ազատականացման շրջան (1921–1928թթ.), 2. Պլանային տնտեսութեան տոտալիտար շրջան (1928–1937թթ.):

ՆՏՔ-ի ընթացքում հնագիտութիւնը Հայաստանում ծաղկում է, որը պայմանավորված է Հնութիւնների պահպանութեան կոմիտեի և այլ կազմակերպութիւնների ակտիվ գործունեութեամբ: Շարունակելով Հայաստանի առաջին հանրապետութիւնում սկսված գործընթացները՝ Խորհրդային Հայաստանի մարմինները հիմնադրեցին գիտակրթական հիմնարկներ, թանգարաններ, գիտական ինստիտուտներ, հուշարձանների պահպանութեան մարմիններ, արտերկրից Հայաստան տեղափոխեցին հայկական մշակութային բազմաթիվ արժեքներ, ստեղծեցին համապատասխան օրենսդրական դաշտ: Այս գործերով զբաղվում էին հայ ժողովրդի մեծ նվիրյալները, որոնց թվում էին Մ.Սարյանը, Ա.Թամանյանը, Թ.Թորամանյանը, Ա.Քալանթարը, Գ.Հովսեփյանը, Ե.Լալայանը, Ե.Շահազիզը և այլք, որոնք պայքարելով ազգային արժեքների պահպանման համար, փորձում էին համագործակցել միջազգային կազմակերպութիւնների հետ և աշխատել գիտական բարձր մակարդակով:

Այս շրջանի հայ հնագետների միջավայրում նկատվում է երկու ուղղութիւն. Ա.Քալանթարը, ղեկավար դիրք գրավելով Երևանի համալսարանում և Հնութիւնների կոմիտեում, ներկայացնում էր պետերբուրգյան դպրոցը, որը հնագիտութիւնը առավելապես դիտարկում էր պատմական զարգացումների համատեքստում (= մեկնողական): Մինչդեռ Ե.Բայբուրտյանը, որը ներկայացնում էր մոսկովյան դպրոցը, հնագիտութիւնը դիտում էր զուտ որպէս այդպիսին՝ առանց այն խառնելու պատմական խնդիրների հետ, զբաղվելով կոնկրետ մասնագիտական հարցերով (= նկարագրական)⁴: ՆՏՔ-ի շրջանում Ս.Բարխուդարյանը համալսարանի ուսանող էր և աշակերտում էր Ա.Քալանթարին, ուստի նրա հետագա գործունեութեան ընթացքում էապես զգացվում է պատմական հնագիտութեան ազդեցութիւնը, ինչպէս նաև թեմատիկայի այն ոլորտը, որը բնորոշ է եղել Ա.Քալանթարի դպրոցին (այդ թվում՝ ջրաբաշխական համակարգ, վիշապաքարեր, վիմագրութիւն):

3 Հմմտ. Ս. Գ. Գարիբձեյան, Из истории научных связей Советской Армении (1920-ые годы), Вестник архивов Армении 3, 1982, с.54–61. Ս. Գարիբձեյան, Научная интеллигенция Армении (1920 – середина 1930-х гг.), Ереван, 2013. Հնագիտության համար տե՛ս Գ. Ե. Արեշյան, Հնագիտության զարգացումը Սովետական Հայաստանում, ԲԵՀ, Հ^տ 3, 1987, էջ 108–120: Գ. Սարգսյան, Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ, Երևան, 2005 (համապատասխան գրականութեամբ):

4 Այս հնագետների մասին հմմտ. Ա. Քալանթար, Հայաստան. քարե դարից միջնադար, Ա. Քալանթարյան (խմբ.), Երևան 2007: Ե. Ա. Բայբուրտյան, Последовательность развития древнейших культур Армении на основе археологического материала, Р. Бадалян (ред.), Ереван, 2011: Բ. Պիտրովսկին իր հիշողություններում նշում է, որ Ե. Բայբուրտյանն առանձնապէս չի հետաքրքրվել միջնադարյան հուշարձաններով (Բ. Բ. Պիտրովսկий, Материалы к биографии, Санкт-Петербург, 2008, с.324, 326), ինչը չի կարելի ասել Ա. Քալանթարի մասին, որը հավասարապէս ոգևորված էր ինչպէս վաղ, այնպէս էլ միջնադարյան հնագիտության խնդիրներով:

1928թ. հետո թեև շարունակվում են հնագիտական աշխատանքները⁵, սակայն հատկապես 1930-ական թթ. երկրորդ կեսից հնագետների նկատմամբ սկսած բռնուլթյունները էապես դանդաղեցնում են հայ հնագիտության զարգացման տեմպերը: Դադարում են ակտիվ գիտամշակութային ու հետազոտական աշխատանքները, և նույն նվիրյալները, որոնք ակտիվորեն փաստագրում էին հուշարձանները, ստեղծված իրավիճակում սկսեցին պայքարել դրանց ոչնչացման դեմ: Հայ հնագիտության ձևավորման այս նախնական փուլին ավարտվում է Ա. Քալանթարի, Ե. Բայբուրյանի, ինչպես նաև Ս. Բարխուդարյանի ձեռքակալությունը: Տարիներ անց, աքսորից վերադառնալուց հետո, Ս. Բարխուդարյանը գլխավորապես զբաղվում է միջնադարի հնագիտության խնդիրներով:

Վիչապաքարերի ուսումնասիրությունն ակտիվանում է 1920-ական թթ. ոռոգման խնդիրների կարևորմանն ու հետազոտմանը զուգընթաց, ինչն ուներ նաև հստակ գաղափարական հենք: Ելնելով Վ. Լենինի՝ Կովկասի կոմունիստներին ուղղված նամակում արտահայտված այն մտքից, թե «Ոռոգումն ամենից կարևոր է, այն կվերաստեղծի, կվերածնի երկիրը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ», հայ իրականության մեջ մեծ ուշադրություն էր դարձվում ոռոգման և նրա պատմության խնդիրներին⁶: Այս կապակցությամբ իրականացվում էին լայնածավալ ջրատնտեսական աշխատանքներ, ինչպես նաև գիտական հետազոտություններ, որոնք ուղղված էին հնագույն Հայաստանի ջրատնտեսության և ջրի պաշտամունքի (վիչապաքարերի) հետազոտությանը⁷: Հրատարակվում են համապատասխան աշխատանքներ, որոնց թվում, ըստ Ա. Գասպարյանի, հատկապես էական էր «Նորք» հանդեսում հրատարակված Ա. Քալանթարի «Քարե դարը Հայաստանում» կարևոր հոդվածը⁸: Ոռոգումը կարևորում էր ողջ հայ հասարակությունը, ինչը երևում է, օրինակ, 1925–1927թթ. Այդըր լճի ջրերը ոռոգման նպատակով կիրառելու աշխատանքների արձագանքներից⁹: Այս կապակցությամբ Աշ. Հովհաննիսյանն իր մի գրառման մեջ անդրադառնում է քարեդարյան և բրոնզեդարյան հուշարձաններին (կրոմեխներ, մեգալիթներ, դոլմեններ ևն), այդ թվում նաև՝ ոռոգման հնագույն հետքերին, որոնք խոսում են ջրաշինարարության հնագույն

5 1930-ական թթ. Ս. Բարխուդարյանը զբաղվել է հիմնականում հուշարձանապահպան գործունեությամբ, բայց մասնակցել է նաև հետախուզական աշխատանքների և պեղումների: Այսպես, հայտնի է, որ 1934թ. նա եղել է Գյումրիի մսի կոմբինատի պեղումների արշավախմբի կազմում՝ Ա. Քալանթարի և Ե. Բայբուրյանի հետ (Ե. Ա. Байбуртян, նշվ. աշխ., էջ 6, 19):

6 Գ. Ա. Агаханян, Развитие орошения в Советской Армении, Труды армянского научно-исследовательского института Гидротехники и мелорации 2, Ереван, 1957, с. 233: Գ. Վ. Շիրմազան, Ա. Ա. Գարբիսյան, Ջրատնտեսական աշխատանքները Սովետական Հայաստանում (1920–1940թթ.), ԲՀԱ, Հ^տ 1, 1961, էջ 15–49: Ա. Գասպարյան, «Նորք» հանդեսը, ԲՀԱ, Հ^տ 1, 1968, էջ 190:

7 Գ. Շիրմազան, Ա. Գարբիսյան, նշվ. աշխ., էջ 49:

8 Ա. Գասպարյան, նշվ. աշխ., էջ 90:

9 Գ. Շիրմազան, Այդըր լճի ջրի կայանի շինարարության այցելուների տպավորությունների մատյանը, ԲՀԱ, Հ^տ 1, 1961, էջ 143–155:

ակունքների մասին¹⁰: Ուշագրություն դարձնենք այն հանգամանքին, որ մեծ ջրաչինարարական ծրագրերի (Այդրը լիճ, Շիրակի և Սարղարապատի ջրանցքներ) ժամանակաշրջանը համընկնում է վիչապաքարների հետազոտության ամենակտիվ շրջանի հետ (1924–1927թթ.): Ուշագրավ է, որ ինչպես հնում, այնպես էլ այդ տարիներին Արարատյան դաշտը և նրա ոռոգման խնդիրները դառնում են հայկական պետականության կայացման առանցքային հարցը¹¹:

Ահա այս միջավայրում և նման հարցադրումների մեջ էր դաստիարակվում ուսանող, ապագա հնագետ-վիճագրագետ Ս.Բարխուդարյանը, և բնական է, որ այդ նույն խնդիրները հետագայում պիտի արտացոլվեին նրա գիտական աշխատանքներում:

Վաղ հնագիտության խնդիրների հետազոտությունը

Համալսարանն ավարտելուց հետո Ս.Բարխուդարյանը ձեռնամուխ է լինում վաղ հնագիտության խնդիրների (հուշարձանների դասակարգում, ամրոցներ, դամբարանադաշտեր, ոռոգման համակարգեր, կոթողային հուշարձաններ ևն) հետազոտությանը՝ ցուցաբերելով ոչ միայն իր ժամանակի համար արդիական մոտեցումներ: Այդ և ավելի ուշ շրջանի հրատարակություններում¹² նա մասնավորապես քննում է Հայաստանի հնագույն հուշարձանների տիպաբանության խնդիրը, կարևորում է բնագիտական մեթոդների կիրառման անհրաժեշտությունը հնագիտության մեջ, խրախուսում ոչ թե դամբարանների, այլ բնակավայրերի պեղումները, հնագիտական տվյալները դիտարկում պատմական համատեքստում, քննադատում սիրողական մոտեցումներն ու առաջնային համարում հայկական հնագիտական դպրոց ձևավորելու գաղափարը: Նշենք, որ «Վելիքուխի երկիրը» կոթողային աշխատանքում, որն, ի դեպ, արժանանում է «Մելքոնյան» մրցանակի, արվում է ուրարտական և տեղական մշակույթների համադրման առաջին փորձերից մեկը (եթե ոչ առաջինը): Խորհրդային Հայաստանի հիմնական տարածքին համընկնող, ուրարտական աղբյուրներում հիշատակվող Վելիքուխի, էթիունի և Ուգուրի-էթիունի երկրներին նվիրված աշխատանքներում Ս.Բարխուդարյանն առաջին անգամ ուրարտական պետությունը փորձում է դիտարկել տեղական մշակույթների և այդ դարաշրջանի Հայաստանի մշակութային բազմազանության տեսանկյուն

10 Նույն տեղում, էջ 146:

11 Գ. Ա. Агаханян, укр. соч., с. 234.

12 Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1935: Նույնի Վելիքուխի երկիրը, ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ I, 1935, էջ 153–204: Նույնի Նյութեր հայ ժողովրդի էթնիկական կազմի մասին. ուղիների ծագումը (Ետիունի-Ուգուրիետիունի-Ուտիք), Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի II, 1937, էջ 195–221: Նույնի Ժողովրդի դերը մեր պատմական հուշարձանների կերտման գործում, ՏՀԳ, Հֆ 8, 1958, էջ 43–53: Ս. Բարխուդարյան, Գ. Կարախանյան, Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները, ՊԲՀ, Հֆ 4, 1959, էջ 195–210: Ս. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, ՏՀԳ, Հֆ 7–8, 1960, էջ 53–80: Նույնի Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ռոտզման գործի վերաբերյալ, «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», 1, Երևան, 1964, էջ 259–284:

նից, տարածաշրջանը բաժանում է մշակութային ու քաղաքական ենթամիավորներ-
րի, որոնք խմբվում էին առանձին հովիտների շուրջը¹³, մի մոտեցում, որ միայն
վերջերս է արդիական դարձել միջազգային հնագիտական շրջանակներում:

Անդրադարձ վիշապաքարերին

*Ս. Բարխուդարյանը հիշյալ աշխատանքներում անդրադառնում է նաև վիշա-
պաքարերին առնչվող խնդիրներին: Փաստորեն, կոթողային արվեստի այս հնա-
գույն նմուշների միջոցով նա կապ է ստեղծում հնագույն և միջնադարյան Հայաս-
տանի միջև (կարելի է ասել՝ իր երիտասարդ և հասուն տարիքի հետաքրքրու-
թյունների միջև): Վիշապաքարերին Ս. Բարխուդարյանը կարող էր տեղում ծանո-
թանալ ինչպես Ա. Քալանթարի հետ գիտարշավների ընթացքում (Արագած,
Արտանիշ), 1920-ական թթ. (տե՛ս ստորև), այնպես էլ հետագայում՝ 1930-ական
թթ., երբ արդեն գիտաշխատող էր (Գեղամա լեռներ)¹⁴: Մասնավորապես նա բնու-
թագրում է վիշապաքարերը և համարում ջրի աստվածուծայան պատկերներ¹⁵:
Դրանք քննում է որպես հնագույն ջրաբաշխական համակարգի կարևոր կետերում*

13 Ուրարտագիտական խնդիրների վերաբերյալ Ս. Բարխուդարյանի հետաքրքրվածություն-
ը կապված է ուսուցիչներ Ա. Քալանթարի (հնագիտական տեսանկյունից) և Գր. Ղա-
փանցյանի (պատմական տեսանկյունից) հետ: Վերջինիս խորհրդով նա ուրարտերեն է
սովորել: 1930-ական թթ. առաջին կեսին Սևանի ավազանում և Սարդարապատում Ս. Բար-
խուդարյանը ուղեկցել է ուրարտագետներ Ի. Մեշյանինովի և Բ. Պիոտրովսկու (Կ. Ասա-
տուրյան, Դրվագներ Բորիս Պիոտրովսկու և Սեդրակ Բարխուդարյանի գիտագործնա-
կան հարաբերություններից, Ա. Փիլիպոսյան (խմբ.), «Բ. Պիոտրովսկին և հնագիտու-
թյունը», Երևան, 2014, էջ 11–16: 1932 թ. Բ. Պիոտրովսկու՝ Նոր Բայազետի շրջան՝ Ծովինար
և Աղամյան այցելության մասին տե՛ս **Б. Б. Пиотровский**, *Материалы к биографии*, с. 342):

Այս համատեքստում մի ուշագրավ տեղեկություն է պահպանվել Ա. Քալանթարի մոտ.
Սևանա լճի ափերի 1926 թ. ուսումնասիրության ընթացքում արշավախմբի ամենաերի-
տասարդ անդամ, ուսանող-պրակտիկանտ Ս. Բարխուդարյանն արձանագրությունների
էստամպաժներ էր պատրաստում, այդ թվում նաև՝ Օձաբերդի սեպագիր արձանագրու-
թյան էստամպաժը, ժայռի գագաթից կախված (**Ա. Քալանթար**, Երկու սեպագիր Ռուսա
Ա-ի Սարդուրի որդու, «Օրագիր Հայաստանի պահպանության կոմիտեի», 3, 1927, էջ
43–44, նկ. 7):

14 1932 թ. թվագրվող Վրաստան և Հայաստան կատարած իր ձեռագիր հաշվետվության մեջ
Բ. Պիոտրովսկին գրում է, որ այցելել է Նոր Բայազետի շրջան (որտեղ, ինչպես արդեն
նշեցինք, հանդիպել է Ս. Բարխուդարյանին), ապա ավելացնում է. «Երանոս գյուղից մենք
իրականացրեցինք լեռնանցում Ազ-դաղի գագաթի մոտով՝ այդ անցումը ուսումնասիրելու
և վիշապների գոտում հայտնվելու համար: Լեռներում մեզ ուղեկցում էր Երանոս գյուղի
բնակիչ Ա. Սիմոնյանը, որն իր հետ բերել էր նաև բեռնափոխադրող ավանակ: Բաշ Գառ-
նիից անցնել վիշապների մոտ չկարողացանք, քանի որ տեղացի բնակիչները մերժեցին
մեզ տանել Իմիրզեկ և վիշապների գոտի կողմից այլ վայրեր: Հայաստանի պետական թան-
գարանի արշավախումբը, որ դուրս էր եկել մեզնից հետո, վիշապները հետազոտելու հա-
տույն կատակով, նույնպես չկարողացավ ներթափանցել նրանց մոտ» (**Б. Б. Пиотровский**,
Материалы к биографии, с. 344–345): Հայաստանի պետական թանգարանի արշավախմբի
կազմում պետք է լիներ նաև նրա աշխատակից Ս. Բարխուդարյանը:

15 **Ս. Բարխուդարյան**, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները,
էջ 41–42: Նույնի Հայաստանի կոթողային հուշարձանները, էջ 53–54: Նույնի Միջնադար-
յան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 122:

գտնվող հուշարձաններ¹⁶: Քանդակագարդ վիշապաքարերը մենհիրներից տարբերելով՝ նա նշում է վերջիններին «առանց որևէ զարդի» լինելը¹⁷: Նա մենհիրները թվագրում է նեոլիթյան ժամանակաշրջանով, իսկ վիշապաքարերի թվագրումը համարում է ոչ հստակ (բերում է այլ կարծիքներ. Ք.ա. I հազ.՝ Բ. Պիտտրովսկի, մեր թվարկության առաջին դարեր՝ Մ.Աբեդյան)¹⁸: Էվոլյուցիոն կապ է տեսնում կոթողային արվեստի նմուշների (մենհիր-վիշապաքար-արամեական արձանագրություն-վաղ միջնադարյան կոթող-խաչքար) զարգացման մեջ, սակայն նշում է, որ մենհիրներն ու վիշապաքարերը «հետագա խաչքարերի համար միայն գաղափարատիպերի արժեք կարող են ունենալ»¹⁹: Հատուկ ուշադրություն է դարձնում վիշապաքարերի գործառույթային կողմին և շեշտում, որ դրանք մեծորիակ հուշարձաններ են. նա կարծում է, որ «վիշապների տարբեր կերպարանք ու նշաններ ունենալը հավանաբար տարբեր տոհմերի տոտեմական կենդանու արտահայտությունն է՝ ջուրը պատկերող ընդհանուր կենդանու՝ ձկան վրա»²⁰:

Մենհիրների համար Ս.Բարխուդարյանը նշում է, որ դրանք կարող էին կանգնեցված լինել նշանավոր մարդկանց տոհմերի առաջնորդների գերեզմանների վրա²¹, շուրջանակի մանր քարերով և հողով ամրացված²²:

Նա վիշապաքարը դիտարկում է քարի պաշտամունքի (որպես կայծակի և ամպրոպային աստծո խորհրդանիշ)²³, ինչպես նաև վիշապամարտություն²⁴ համատեքստում:

Գլխավերևում անցք ունեցող մենաքարերի համար նա գրում է, որ դրանց մեջ ժամանակին ազուցված են եղել թևավոր խաչեր, որոնք վաղուց ընկել են²⁵: Իսկ մենաքարերի կողային անցքերի վերաբերյալ ենթադրում է, որ դրանք ծառայել են ծանր քար քարշ տալու համար²⁶: Կարևորում է մի շարք այլ հարցեր, որոնք հետազոտում է ական են դառնում վիշապաքարերի հետազոտության գործում²⁷:

16 Նույնի Դիտողություններ և նոր նյութեր հին Հայաստանի ոռոգման գործի վերաբերյալ, էջ 260–261:

17 Նույնի Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 122:

18 Նույնի Հայաստանի կոթողային հուշարձանները, էջ 54:

19 Նույնի Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 122:

20 Նույնի Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, էջ 41:

21 Նույնի Հայաստանի կոթողային հուշարձանները, էջ 53:

22 Նույնի Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 122:

23 Նույնի Հայաստանի կոթողային հուշարձանները, էջ 69:

24 Ս.Բարխուդարյան, Գ. Կարախանյան, Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները, էջ 286–287:

25 Ս.Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 128:

26 ԴՎԿ, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց՝ Ս.Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 81:

27 Հմնտ., օրինակ, «Գեղարքունի-գել» կապի ստեղծումը «Վելիքովի երկիրը» աշխատության մեջ, որ հետազոտում դառնում է վիշապաքարերի և դրանց անվան մեկնության կարևոր միջոց (А.Е.Петросян, Отражение индоевропейского корня *wel- в армянской мифологии, Вестник общественных наук 1, 1987, с.56–70):

Ս. Բարխուդարյանի և վիշապաքարերի/մենաքարերի համատեքստում հատկապես կարելի է քննարկել հետևյալ տվյալները²⁸:

1. Ս. Բարխուդարյանի անձնական արխիվում պահպանվում է մի լուսանկար, որը մեզ տրամադրել է նրա տիկինը՝ Կ. Ասատուրյանը (նկ. 1): Վիշապաքարերից մեկի մոտ Անբերդի արչավախմբի չորս անդամներն են, ըստ Կ. Ասատուրյանի՝ Հ. Հաջյանը, Տ. Իզմայլովան (Հաջյանի կինը), Կ. Ղաֆաղարյանը և անհայտ մեկը:

Նկարից պարզվում է, որ խոսքը Պրոսպեկտ 1 վիշապաքարի մասին է (Արագածի հարավային փեշեր, Քարակապ կոչված վայր, Ջհանգիր աղայի յայլա, այժմ կոչվում է Պրոսպեկտ²⁹): Այս նույն տարածքում գտնվող երեք վիշապաքարերի մասին Բ. Պրոտորովսկին գրում է. «Այդ վիշապները հետազոտվել են ԽՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալի և Պետական էրմիտաժի արչավախմբի կողմից, որ 1936թ. աշխատում էր Անբերդի ամրոցում»³⁰: Հաջորդ վկայությունը պատկանում է Ն. Տոկարսկուն, որն Անբերդում իրականացված հնագիտական աշխատանքների մասին խոսելիս ավելացնում է. «Ժամանակ հատկացվեց Արագածի վիշապների մոտ էքսկուրսիա կատարելու համար»³¹: Արչավախմբի աշխատանքներին (1936թ.) մասնակցում էին Հ. Օրբելին, Հ. Հաջյանը, Ա. Բորիսովը, Տ. Իզմայլովան, Բ. Պրոտորովսկին, Կ. Տրեվերը, Ն. Տոկարսկին, Ա. Յակոբսոնը, Դիմիտրովսկին (Լենինգրադ), Ս. Բարխուդարյանը, Ե. Բայբուրդյանը, Կ. Ղաֆաղարյանը, Ս. Երեմյանը, Խ. Գյուլամիրյանը (Երևան): Նկարիչն էր Ա. Վրուլը, տնտեսվարը՝ Պ. Բոյախանջյանը: Արչավախմբի հյուրն էր Լ. Քալանթարը, այցելուներն էին Ս. Տեր-Ավետիսյանը, Լ. Գյուլգալյանը, Ե. Ռախմանինան³²: Այս անունների մեջ պետք է փնտրել նկարում առկա անձանց:

2. «Խորհրդային Հայաստան» թերթի 1926թ. սեպտեմբերի 26-ի համարում Ա. Քալանթարի հրատարակած հոդվածում նշվում է, որ Հնուկյանների պահպանության կոմիտեն Արտանիշում վիշապաքարեր է փաստագրել Սևանի ավազանի և շրջակայքի գիտարչավի ընթացքում՝ 1926թ. օգոստոսի 17-ից սեպտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում: Հոդվածում մասնավորապես ասվում է. «Ջրի կուլտի գոյության և ջրաբաշխական սիստեմի կատարելության ամենացայտուն

28 Այդ կոթողներին առնչվող մանրամասները կարելի է գտնել հետևյալ աշխատանքում՝ Ա. Բորիսյան, Ա. Զիլիբերտ, Պ. Հնիլա, Վիշապաքարերի հնագիտություն, Ա. Պետրոսյան, Ա. Բորիսյան (խմբ.), «Վիշապ քարակոթողները», Երևան, 2015, էջ 269–396:

29 Այժմ գտնվում է Ալիխանյան եղբայրներ 2 հասցեում, «Վեստրոն» հեռուստաընկերության, նախկին ֆիզիկայի ինստիտուտի կուլտուրայի տան դիմաց:

30 **Б. Б. Пиотровский**, Вишапы: каменные статуи в горах Армении, Ленинград, 1939, с. 13. հմմտ. նաև **Б. Б. Пиотровский**, Страницы моей жизни, Москва, 2009, с. 138: Բ. Պրոտորովսկին Անբերդում աշխատել է 1934 և 1936 թթ. (**Б. Б. Пиотровский**, Материалы к биографии, с. 304–305; **Б. Б. Пиотровский**, Страницы моей жизни, с. 291):

31 **Н. М. Токарский**, По страницам истории армянской архитектуры, Ереван, 1973, с. 24.

32 **Н. М. Токарский**, там же, с. 24. Հմմտ. **Կ. Ասատուրյան**, Դրվագներ Բորիս Պրոտորովսկու և Սեդրակ Բարխուդարյանի գիտագործական հարաբերություններից, էջ 12: Անբերդի 1936 թ. արչավախմբի մասին տե՛ս նաև **Ս. Բարխուդարյան**, Սհագանգը, ՊԲՀ, Հփ 2, 2008, էջ 292–298:

ապացույցներն այստեղ ևս հայտնվեցին. լճի արևելյան հրվանդանի շրջանում գտնված են 5 հատ վիշապ, այն քարե հսկաներից ձկի ձևով, որոնց առաջին անգամ հայտնագործեց Մաուր Գեղամա լեռներում, ապա Կոմիտեի հնագիտական էքսպեդիցիան Արագածի վրա»: Հողվածից պարզ է դառնում նաև, որ արչավախմբի աշխատանքներին մասնակցել են հնագետներ Ա. Քալանթարը (ղեկավարը) ու Ե. Բայբուրժյանը, ճարտարապետ Գ. Սիրանյանը, լուսանկարիչ Ա. Վրուլյը և ուսանող Ս. Բարխուդարյանը: Հողվածում նշվում է նաև, որ նյութերը չափազրվել և լուսանկարվել են³³:

Ուշագրավ է, որ արչավախմբին մասնակցած Ս. Բարխուդարյանը «Սևանա լճի ափին» հիշատակում է ոչ թե հինգ, այլ մեկ վիշապաքար³⁴: Մեկ այլ տեղ Ս. Բարխուդարյանը վիշապաքարերի կապակցությունը չեչտում է «Սևանա լճի հյուսիսային ափերը»³⁵, ապա մասնավորեցնում՝ նշելով Արտանիշ անունը: Այսպես, խոսելով ջրի պաշտամունքի մասին, նա գրում է. «Դրա համար ապացույց է նաև լճի հյուսիսարևելյան ափերին, Արտանիշի մոտ Հն. Պահպանություն կոմ. էքսպեդիցիայի հայտնաբերած «վիշապը»... Լճի կողքին լինելը, բայց և լեռնային մասերում սաստիկ ջրի պահանջ ունենալը, լեռնային երկրին ու բնությունը հատուկ ամպրոպներն ու կայծակը ստեղծել են օձի, վիշապի-ջրի պաշտամունքը»³⁶: Այլ կապակցությամբ Ս. Բարխուդարյանը գրում է. «Հայաստանում հայտնաբերված բոլոր «վիշապներն» ընկած վիճակում են»³⁷, ինչից կարելի է ենթադրել, թե Արտանիշում իր տեսած վիշապաքարերը ևս ընկած են եղել: Այն, որ իր բոլոր անդրադարձներում հեղինակն օգտագործում է մենհիրի (Շամիրամ) և վիշապաքարի (Իմիրգեկ 2⁸⁸) նույն նկարները³⁹, առաջին հայացքից վկայում է այն մասին, որ նա իր ձեռքի տակ այլ նկարներ, այդ թվում Արտանիշինը, չի ունեցել: Խնդիրն այն է,

33 Ա. Քալանթար, Սևանա լճի ափերի հնագիտական ուսումնասիրությունը, «Խորհրդային Հայաստան», 26 սեպտեմբերի, 1926, էջ 4 (հոդվածն անանուն է, ստորագրված է՝ «Մ.»). պատկանելությունը Ա. Քալանթարին ճշտվում է հեղինակի կազմած աշխատանքների ցանկից, որ տպվել է հետևյալ գրքում՝ Ա. Քալանթար, Հայաստան. քարե դարից միջնադար, էջ 10, Հ^ր 26):

34 Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, էջ 41: Արտանիշում մեկ վիշապաքար է հիշում նաև Հ. Թումյանը, որը բերում է նաև դրա լուսանկարը (Հ. Թումյան, Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձանները I. Դիլիջանի շրջան, Երևան, 1937, էջ 19, նկ. 29) (նկ. 2): Արտանիշի վիշապաքարերին վերաբերող այլ լուսանկարներ հայտնաբերել ենք մենք, հուշարձանագետ Կ. Բայրամյանի հետ, Ն. Մատի պետերբուրգյան լուսանկարչական արխիվում (նյութական մշակույթի պատմության ինստիտուտ), 2015թ.: Ինչպես ցույց են տալիս մեր դաշտային հետազոտությունները, այդ վիշապաքարերը ներկայումս իրենց տեղում չեն:

35 Ս. Բարխուդարյան, Հայաստանի կոթողային հուշարձանները, էջ 53:

36 Նույնի Վելիքովսի երկիրը, էջ 183, 187:

37 Նույնի Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 122:

38 Վերցված է հետևյալ գրքից՝ Н. Я. Марр, Я. И. Смирнов, Вишапы, Ленинград, 1931, таб. 19.

39 Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, նկ. 14: Նույնի Հայաստանի կոթողային հուշարձանները, նկ. 1, 2: Նույնի Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, նկ. 44, 45:

որ ձերբակալությունից հետո՝ 1937թ., Ս. Բարխուդարյանի արխիվը ոչնչացվել է⁴⁰, իսկ մինչ օրս պահպանված նյութերում, որոնք գտնվում էին նրա կնոջ՝ Կ. Ասատուրյանի պահպանության տակ, վիչապաքարերի մասին տեղեկություններ կամ լուսանկարներ չկան (բացառությամբ Պրոսպեկտ 1-ի վերոհիշյալ լուսանկարի)⁴¹:

3. Սյունիքում վիմագրերի փաստագրման ընթացքում Ս. Բարխուդարյանը հիշատակում է մի շարք արձանագիր խաչքարեր, որոնք նախկին վիչապաքարեր են: Դրանց թվում են Աղավնաձորի (Ներքին Ուլգյուր) երկու ցլակերպ վիչապաքարերը, որոնք վերածվել են արձանագիր խաչքարերի (նկ. 3): Ըստ առաջինի արձանագրության՝ 1009թ. պատվիրատու Սարգիս երեցի կողմից քարը վերածվել է խաչքարի Ս. Աստվածածին անվամբ: Երկրորդում (1199թ.) ասվում է, որ քարը ներկայիս տեղն է բերվել Որկոր վայրից և խաչքարի վերածվել վարպետ Մարգարի կողմից իր հոր՝ իշխան Սմբատի և մոր՝ Սեթիի հիշատակին: Ս. Բարխուդարյանը նկատում է այս քարերի «հին կոթողի տեսք» ունենալը⁴²: Նույն համատեքստում Ս. Բարխուդարյանը հիշում է նաև Վերին Ուլգյուրի գյուղատեղիի (Ռինդ գյուղի վարչական տարածք) ժամի դուզ վայրը՝ 10–14-րդ դդ. գերեզմանոցով և 13–14-րդ ու 17-րդ դդ. խաչքարերով⁴³, որոնց թվում կան երկու վիչապանման քարեր:

Հեղինակը քննարկում է Կարմրաչենի 990թ. խաչքարը, որի արձանագրությունն ասում է, թե ինչպես ոմն Գրիգորիկ այդ արձանը գտնում և դժվարությամբ տեղափոխում է եկեղեցու դուռը⁴⁴: Այս խաչքարը ևս նախկին ցլակերպ վիչապաքար է (նկ. 4):

Անգեղակոթի հյուսիսային եզրին գտնվող միջնադարյան և ժամանակակից գերեզմանոցի վաղ միջնադարյան կոթողը, որ ավելի ուշ դարձել է խաչքար⁴⁵, ևս եղել է ցլակերպ վիչապաքար:

Ս. Բարխուդարյանը հիշատակում է նաև Հարժիսի ու նախիջևանյան Բիչանակի քարավանատների մոտ գտնվող ցից քարերը, որոնք եղել են ճանապարհից ուղեցիներ՝ հատկապես ձմռանը⁴⁶: Այդ քարերը նախկին մենհիրներ կամ վիչապաքարեր են⁴⁷:

4. Մենհիր/վիչապաքարերի համատեքստում Ս. Բարխուդարյանը քննում է նաև օրինակներ հայկական մատենագրությունից: Այսպես, Թովմա Արծրունին

40 Ս. Բարխուդարյան, Աղավնաձոր, էջ 310–311:

41 Կ. Ասատուրյան, անձնական հաղորդում, 07.10.2014թ., Երևան:

42 ԴՇՎ, պրակ III, էջ 34–35, նկ. 21: Հմմտ. Ա. Շահինյան, Վայոց ձորի վիչապ-կոթողները, ՊԲՀ, Հփ 1, 1976, էջ 286–289 և Ս. Մ. Мурадян, Обращенные в хачкары вишапы-стелы из Елегнадзора, В. Г. Луконин (ред.), Художественные памятники и проблемы культуры Востока, Ленинград, 1985, с. 20–26.

43 ԴՇՎ, պրակ III, էջ 34:

44 Նույն տեղում, էջ 41–42, նկ. 29, 29ա:

45 ԴՇՎ, պրակ II, Սիսիանի, Գորիսի և Ղափանի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 120, արձ. 359:

46 ԴՇՎ, պրակ III, էջ 81:

47 Բիչանակի կամ Բջնակի համար տե՛ս Ա. Այվազյան, Նախնադարյան կայան Նախիջևանի ԻՍՍՀ հյուսիսում, ԲԵՀ, Հփ 3, 1974, էջ 240–241:

նկարագրում է մի «գոգավոր տեղ» Լեզք գյուղից վեր, «ուր հույժ գեղեցիկ առասպելաբանում են Շամիրամի սպանած գեղեցիկ զորականների վերքերի սպիանալու մասին»⁴⁸: Ս.Բարխուդարյանը գրում է, թե այստեղ Արծրունին խոսում է ուրարտական շրջանից մնացած, մենհիրանման քարերի մասին, որոնք կանգնեցված են եղել Շամիրամի սպանված զինվորների վրա⁴⁹:

Այսպիսով, Ս.Բարխուդարյանի տվյալները և մեկնությունները որոշակի ճշտումներ են մտցնում վիշապագիտական խնդիրներում: Դրանք հատկապես կարևոր են այդ կոթողների ուսումնասիրությունից պատմության, խաչքարացման⁵⁰, միջնադարյան ընկալման, ինչպես նաև գործառույթի հետազոտման տեսանկյունից:

Վերջաբան

Մեծանուն հայագետ Ս.Բարխուդարյանը էական նպաստ ունի ոչ միայն միջնադարյան, այլև հնագույն Հայաստանի ուսումնասիրության գործում: Մասնավորապես, արդեն Երևանի պետական համալսարանում ուսանելու տարիներին (1924–1928թթ.), նա մասնակցել է վաղ հնագիտական հուշարձաններ ուսումնասիրող արշավախմբերի աշխատանքներին, իսկ համալսարանն ավարտելուց հետո, գիտական գործունեության առաջին փուլում (1928–1937թթ.), հիմնականում զբաղվել է հնագույն հասարակությունների նյութական մշակույթի խնդիրներով: Այս հոգվածում մենք փորձեցինք ցույց տալ Ս.Բարխուդարյանի ավանդը հնագույն Հայաստանի կոթողային արվեստի կարևոր հուշարձան վիշապաքարի հետազոտման գործում: Զարգացնելով իր ուսուցիչ Ա. Քալանթարի տեսությունները վիշապաքարերի և ջրաբաշխական համակարգերի մասին, Ս.Բարխուդարյանը քննել է վիշապաքարերի սահմանմանը, զարգացմանը, գործառույթին, հնագիտական համատեքստին ու պաշտամունքին վերաբերող հարցեր: Վիշապաքարերի հետազոտության` Ս.Բարխուդարյանի տեսությունները ներկայումս նույնպես չեն կորցրել իրենց արդիականությունը:

48 Թովմա Արծրունի և Անանուն, աշխատասիրությամբ Մ. Վարդանյանի, Երևան, 1985, III. ԺԸ, էջ 335:

49 ԴՀՎ, պրակ II, էջ 70:

50 Վիշապաքարերի խաչքարացման և վիշապաքար-խաչքար կապի մասին մանրամասն տե՛ս Ա. Շահինյան, Հայաստանի միջնադարյան կոթողային հուշարձանները, Երևան, 1984: Հ. Լ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008: Հ. Պետրոսյան, Մի քանի դիտողություն վիշապ կոթողների վերաբերյալ, Ա. Պետրոսյան, Ա. Բորոյան (խմբ.), «Վիշապ քարակոթողները», Երևան, 2015, էջ 81–98:



*Նկ. 1 Արագածյան Քարակապի վիշապարարը
(Ս. Բարխուդարյանի անձնական արխիվ, 1936 թ.)*



*Նկ. 2 Արարանիչի վիշապարարերից մեկը (Հ. Թումյան, Խորհրդային Հայաստանի
պարամական հուշարձանները I. Դիլիջանի շրջան, Երևան, 1937, նկ. 29)*



Նկ. 3 Աղավխաձորի խաչքարացված վիշապաքարերը
(Ա. Բորոխյան, 2013 թ.)



Նկ. 4 Կարմրաշենի խաչքարացված վիշապաքարը
(Ա. Բորոխյան, 2013 թ.)

АРСЕН БОБОХЯН

СЕДРАК БАРХУДАРЯН И ИССЛЕДОВАНИЕ КАМЕННЫХ ВИШАПОВ В 1920–1930-Х ГГ.

Ключевые слова: *Седрак Бархударян, проблемы ранней археологии, изучение археологических памятников, вишапы, армянская археология в 1920–1930-х гг.*

Седрак Бархударян известен как специалист по средневековью, однако он начал свою научную карьеру исследованием проблем ранней археологии. Уже в студенческие годы он принимал участие в различных полевых работах, направленных на изучение культуры древней Армении. Он занимался проблемами ранней археологии особенно на первом этапе своей научной деятельности, в 1928–1937 гг. В некоторых публикациях (“Страна Великухи” – 1935 г., “Памятники материальной культуры Советской Армении” – 1935 г., “Стелы древней Армении” – 1960 г., и др.) С. Бархударян обращался к проблемам ранней археологии, опираясь на идеи, опережающие своё время. В частности он подчеркивал необходимость применения научных методов в археологии, поощрял раскопки особенно поселений, рассматривал археологические данные в историко-теоретическом контексте, критиковал любительские подходы своего времени и считал очень важным вопрос создания армянской археологической школы. Предлагаемая статья посвящена проблеме изучения вишапов С. Бархударяном. На основе опубликованных и архивных данных делается попытка представить вклад автора в изучение этих уникальных монументальных стел древней Армении.

ARSEN BOBOKHYAN

SEDRAK BARKHUDARYAN AND INVESTIGATION OF THE DRAGON-STONES DURING 1920–1930'S

Keywords: *Sedrak Barkhudaryan, problems of early archaeology, investigation of archaeological sites, dragon-stones, Armenian archaeology in 1920–1930's.*

Although Sedrak Barkhudaryan is well known as a specialist of the Middle Ages, he began his scientific career with investigation of the problems of early archaeology. During his studentship he took part in various archaeological projects aimed at exploring the culture of ancient Armenia. He worked on issues related to the problems of the early archaeology especially during the first stage of his scientific activities, in 1928–1937. In his several publications (“The Velikukhi Country” – 1935, “The Monuments of Material Culture of the Soviet Armenia” – 1935, “Stelae of the Ancient Armenia” – 1960, etc.) S. Barkhudaryan addressed the problems of early archaeology, drawing on the ideas that were way ahead of his time. In particular, he underlined the necessity of using of scientific methods in archaeology, encouraged the excavations especially of settlements, considered the archaeological data in historical and theoretical context, criticized the amateur approaches of his time and attached great importance to the issue of creation of an Armenian archaeological school. The present report is dedicated to the problems of investigation of dragon-stones by S. Barkhudaryan. On the basis of published and archival data an attempt is made to introduce the author's contribution to the research of those unique monumental stelae of the ancient Armenia.

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱԼ

ՇԻՐՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՅ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԵՒՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր՝ *Շիրվան, Սեդրակ Բարխուդարյան, Կապան(ք)ի թագավորություն, Դարբանդ, Սյունյաց թագավորություն, Խաչմուս, վիճակիր:*

Վիճակագրագիտության ոլորտում նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու արժանավոր հետնորդ Սեդրակ Բարխուդարյանի աշխատությունների շարքում՝ թերևս ո՛չ ծավալով, բայց նշանակությամբ կարևոր տեղ են գրավում Հայոց Արևելից կողմանց մասին պատմագիտական գործերը: Այդ ուսումնասիրությունները, բնականաբար, հաճախ որպես սկզբնաղբյուրային ելակետ ընդունում են վիճակագրական տեղեկությունները, սակայն մեծապես հիմնված են նաև պատմական-աղբյուրագիտական տվյալների վրա: Ինչպես նշում է Գագիկ Սարգսյանը, Սեդրակ Բարխուդարյանի պատմագիտական հոդվածների մի մասը վերաբերում է Արցախի և անդրկուրյան հայաբնակ տարածքների կնճռոտ հարցերի լուսաբանմանը¹: Այս խնդրի վերաբերյալ Ս. Բարխուդարյանն ունի նաև ուսուցիչական մեկ անտիպ մենագրություն, որը լույս տեսավ նրա մահվանից 31 տարի անց՝ իր տիկնոջ և պատմաբան-աղբյուրագետ Ալեքսան Հակոբյանի խմբագրությամբ²:

Ս. Բարխուդարյանն օգտագործել է իր բազմակողմանի գիտելիքները՝ ընդհանրական ակնարկների, իսկ այնուհետև՝ մենագրության վերածելով վերոնշյալ հոդվածները: Առատորեն օգտագործելով պատմագիտական, աղբյուրագիտական, ժողովրդագրական տվյալները՝ նա կարողացել է գիտական խորաթափանցությամբ համադրել դրանք: Ընդ որում, Ս. Բարխուդարյանն անդրադարձել է այնպիսի թեմաների, որոնք մինչ այդ շատ քիչ են արծարծվել, կամ բոլորովին այլ դիտանկյուններից են քննվել հայագիտության մեջ:

Այս առումով հատկապես հիշարժան է Ս. Բարխուդարյանի ծավալուն մի հոդվածը, որն առնչվում է պատմական Շիրվանի հյուսիսային հատվածում հայկական գահատոհմի գոյության խնդրին³: Այստեղ խոսքը 12-րդ դ. պատմագիր Մատթեոս Ուռհայեցու ուղագրավ վկայությունների մասին է, որոնցում հեղինակը տեղե-

1 Գ. Գ. Սարգսյան, Սեդրակ Բարխուդարյան (ծննդյան 110-ամյակի առթիվ), ՊԲՀ, 2008, Հիմ 2, էջ 288: Տե՛ս օրինակ՝ Ս. Գ. Բարխուդարյան, Արցախի, Շաքիի և Փառխուսի իշխանությունները IX–X դարերում, ՊԲՀ, 1971, Հիմ 1, էջ 52–76:

2 Ս. Գ. Բարխուդարյան, Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений (науч. ред. Алексан Акопян, Клара Асатурян), Ереван, 2011.

3 Տե՛ս Ս. Գ. Բարխուդարյան, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, ՊԲՀ, 1969, Հիմ 3, էջ 125–148: Այս հոդվածի ռուսերեն տարբերակը, որպես 8-րդ գլուխ, ընդգրկվել է արդեն հիշատակված հետևյալ աշխատության մեջ՝ Ս. Գ. Բարխուդարյան, 2011, с. 97–137.

կուլթյուններ է հաղորդում ժամանակակից Դաղստանի հարավում՝ Դերբենտի շրջակայքում գոյություն ունեցած հայկական թագավորության վերաբերյալ: Նշված տեղեկությունները, նախքան Ս. Բարխուդարյանը, պատշաճ ուշադրության և ուսումնասիրության չեն ենթարկվել հետազոտողների կողմից: Պատճառը եղել է այն, որ դրանք արժանահավատ չեն համարվել, և կամայական մեկնությունների արդյունքում դրանց այլ տեղորոշում ու նույնականություն է վերագրվել:

Առկա տեղեկությո՞ւններ

10-րդ դ. սկսած՝ նախկին Մագքթաց երկրի տարածքում հիշատակվում է հայկական մի թագավորություն, որի մայրաքաղաքը Դերբենտն էր, այն ժամանակվա հնչողությամբ՝ Դարբանդ: Այս քաղաքի անունը, որը պարսկերեն նշանակում է «դռնակապ», հաղորդվում է նաև հայկական տարբերակով՝ Կապանք: 10-րդ դ. երկու պատմական անցքերի հետ կապված (961թ. և 972թ.) նշվում է այս թագավորությունը՝ տարբեր անուններով: Այնուհետև Դարբանդի հայոց թագավորությունը հիշատակվում է 11-րդ դ. իրադարձությունների առնչությամբ՝ նույնպես երկու անգամ (1040թ. և 1085թ.): Բոլոր այս տեղեկություններն էլ պատկանում են 12-րդ դ. պատմագիր Մատթեոս Ուռհայեցուն, ով, փաստորեն, ժամանակով շատ մոտ է եղել իր նկարագրած իրադարձություններին, ուստի նրա այդ հաղորդումները միանգամայն արժանահավատ կարող են համարվել⁴:

Հաշվի առնելով Մագքթաց երկրի Կապանքի և Սյունիքի Կապան քաղաքի անունների նույնությունը, ինչպես նաև այլ անվանաբանական փաստեր (որոնց մասին կիսոսենք ստորև), նախկինում Ուռհայեցու այս տեղեկությունները վերագրվում էին Սյունիքին և Սյունյաց թագավորներին: Նման մոտեցում էր որդեգրել Միքայել Չամչյանը⁵, որին հետևել են այլ պատմաբաններ⁶: Ս. Բարխուդարյանը, սակայն, համադրելով վիճաբանական և մատենագիտական տվյալները, հիմնավորապես ցույց տվեց, որ խոսքն իրականում Կովկասյան լեռների հարավարևելյան ստորոտում ընկած երկրամասի մասին է: Այստեղ հարկ է հաշվի առնել, որ գրաբարում Կապանք տեղանվան մեջ կապան բառը պարզապես նշանակում էր «նեղ լեռնանցք, կիրճ» և «կապարան անցից լեռանց», «կապած ճամբայ՝ դռնե-

4 Վերջերս հրատարակված մի հոդվածում Ալեքսան Հակոբյանը փորձում է վիճարկել Ուռհայեցու տեղեկությունները [Ա. Յակոբյան, Մատթեոս Ուռհայեցու վկայությունը 961 թուականին Անին մայրաքաղաք հռչակելու մասին (տր աղբիւրագիտական քննութիւն), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և Ժողովուրդներ», հ. 29 (սմբ. Սաֆրաստյան Ռ., Չոբանյան Պ. և ուրիշներ), Երևան, 2011, էջ 309–331]:

5 Մ. Չամչյանց, Պատմություն, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 1004: Չամչյանցի այս մոտեցման պատճառն այն էր, որ նրա օրոք տակավին չկային ո՛չ պատմատեղագրական ուսումնասիրություններ, որոնցում նկարագրվեին առկա արձանագրությունները, ո՛չ էլ հայտնի էին Ուռհայեցու երկի շատ ձեռագրեր (տե՛ս Մ. Գ. Բարխուդարյան, 1969, էջ 126):

6 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը. պատմա-աշխարհագրական ակնարկ, Երևան, 1966, էջ 59, 124 (որտեղ հեղինակն անհասկանալիորեն հղելով Մատթեոս Ուռհայեցուն՝ «Դարբանդ-Կապանի» թագավորությունը նույնացնում է Սյունյաց թագավորությանը), ինչպես նաև՝ Տ. Մ. Սահակյան, Սյունյաց թագավորության հիմնումը և նրա քաղաքական դերը XI դարում, ՊԲՀ, 1966, Հ^տ 3, էջ 226:

րով»⁷, որպիսին էր Դերբենտի պարսպապատ անցումը: Ի դեպ, Կապան(ք) տեղանունը հանդիպում է Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների տարբեր վայրերում⁸: Ս.Բարխուդարյանից հետո Կապան(ք)ի թագավորություն = Դարբանդ նույնություն տեսակետն ընդունում է նաև Հրաչ Բարթիկյանը⁹:

Ուշագրավ է, որ Ուռհայեցին հստակ նշում է նաև Կապան(ք)ի թագավորության սահմանները՝ Աղուանից և Օսաց երկրները: Առաջինի դեպքում խոսքը Բուն Աղվանքի մասին է, որը գտնվել է Կուր գետի ձախափնյա ավազանում՝ Շիրվանից արևմուտք, և չի հասել մինչև Կասպից ծով, իսկ երկրորդի պարագային՝ պետք է, ըստ երևույթի, հասկանալ Հյուսիսային Կովկասի ընդհանրական անվանումը, քանի որ Դաղստանի տարածքը չէր կարող սահմանակից լինել օսերի երկրին: Այս նույն սկզբունքով՝ արխագները նույնպես ամբողջ Հյուսիսային Կովկասը կոչում էին օսերի անունով Աս (Aś)¹⁰: Ուրեմն ստացվում է, որ Դարբանդի կամ Կապան(ք)ի թագավորությունը գտնվում էր Աղվանքի, Հյուսիսային Կովկասի և Կասպից ծովի միջև¹¹: Ըստ էության, Ուռհայեցին նշում է Դարբանդի թագավորության երկու սահմանակից երկրամասերը, որոնք առավել մոտ էին Մեծ Հայքի տարածքներին, մինչդեռ ոչինչ չի հայտնում այդ թագավորության Հյուսիսային և հարավային հարևանների մասին:

Ուռհայեցու չորս վկայությո՞ւնները

Առաջին անգամ՝ 10-րդ դ. իրադարձությունների նկարագրության մեջ, Մատթեոս Ուռհայեցին Կապան(ք)ի թագավորությունը կոչում է Աղուանից՝ նշելով, որ Աղվանից Փիլիպպոս թագավորը մասնակցել է Անին մայրաքաղաք հռչակելու հանդիսություններին: Ըստ Ուռհայեցու՝ «Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զՏէր Յովհաննէս կաթողիկոսն Աղուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. եւ մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբ, զորդին Գողազգակայ որդւոյ Վաչագա-

7 Գ. Աւետիքեան, Խ. Միրսիճեան, Մ. Ազերեան, Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 1053, Մ. Ազերեան, Գ. Ճէլալեան, Առձեռն բառարան հայկազնան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 422, Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. 1, Երևան, 2000, էջ 631:
8 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 946–949:
9 Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխատասիրությամբ Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 332, ծանոթ. 132ա:
10 Л. Г. Лопатинский, Заметка о народе адыге вообще и кабардинцах в частности, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 12, Тифлис, 1891, с. 4, ком. †, В. И. Абаев, Историко-этимологический словарь осетинского языка, т. 1, Москва-Ленинград, 1958, с. 79–80.
11 Ա. Հակոբյանի Ուռհայեցու Աղուանից (երկիր) բնորոշումը սրբագրում է Ալանից (երկիր) [Ա. Յակոբեան, 2011, էջ 309, Ս. Գ. Բարխուդարյան, 2011, ս. 98, ком. 209], սակայն այս դեպքում, նախ, պետք է լիներ Ալանաց, այնուհետև պարզ չէ այս սրբագրման տեքստաբանական և աղբյուրագիտական հիմնավորումը: Ա. Հակոբյանի սրբագրության համաձայն ստացվում է, որ ունենք միևնույն երկրի (ալաններ = օսեր) հիշատակությունը, այնինչ ակնհայտ է, որ Ուռհայեցին նշում է Դարբանդի թագավորության երկու հարևան երկրամասերը:

նայ, որք էին թագաւորը Աղուանից աշխարհաց»¹²: Սա տեղի է ունեցել «Յամի [եւ ՚ի] թուականութեանս Հայոց ի Նժ»¹³: Այսպիսով, 961թ. (Հայոց 410թ.) «Աղուանից» Փիլիպպոս թագավորը ներկա է գտնվել Աշոտ-Գագիկ (Աշոտ Գ) Ողորմած Բագրատունի թագավորի (953–977) կողմից Անին Մեծ Հայքի մայրաքաղաք հռչակելու արարողութեանը¹⁴:

Այդ միջոցառումից հետո Փիլիպպոս արքային և Հովհաննես կաթողիկոսին հարգանքով և պատվով ճանապարհեցին դեպի իրենց՝ Աղվանից աշխարհը. «Եւ յայնժամ զթագաւորն Աղուանից զՓիլիպպէ եւ զկաթողիկոսն զՏէր Յովհաննէան, զեպիսկոպոսունսն եւ զգօրսն, որ եկին զհետ թագաւորին եւ հայրապետին, եւ յուղարկեցին մեծամեծ տրօք եւ սիրով յաշխարհս Աղուանից...»¹⁵: Իրար մոտ գտնվող այս երկու հիշատակություններից պարզորոշ երևում է, որ սկզբում Փիլիպպոս, իսկ այնուհետև Փիլիպպէ կոչվող արքան նույն անձնավորությունն է, որը երկու դեպքում էլ հանդես է գալիս որպես «Աղուանից թագաւոր»:

Կարելի էր կարծել, թե նշված հատվածներում խոսքը հենց Աղվանքի մասին է՝ Պարտավ մայրաքաղաքով: Սակայն խնդիրն այն է, որ այդ ժամանակաշրջանում Պարտավում իշխում էին իսլամադավան ամիրաներ, ուստի հայ թագավորի մասին խոսք լինել չէր կարող: Ամենայն հավանականութեամբ, Դարբանդ-Կապան(ք)ի հայ արքան, պարզապես ընդունելով «Աղուանից թագաւոր» տիտղոսը, դրանով արտահայտում էր իր հավակնությունները: Հնարավոր է նաև, որ Աշոտ Բագրատունին ինքն էր այդ տիտղոսը շնորհել Դարբանդի թագավորին: Ուռհայեցու մյուս տեղեկություններից ևս ակներև է դառնում, որ հիշյալ Փիլիպպոս/Փիլիպպէ արքայի բուն երկիրը տարբեր էր Աղվանքից:

Հաջորդ վկայություն մեջ, որը վերաբերում է նախորդից մոտ 10 տարի անց տեղի ունեցած իրադարձություններին, Ուռհայեցին նույն թագավորությունը կոչում է Կապանի և հիշատակում է նույն՝ Փիլիպպէ արքային: Այսպես, Բյուզանդիայի Չմշկիկ կայսեր արշավանքի առնչությամբ Ուռհայեցին պատմում է, թե ինչպես է Աշոտ Ողորմած թագավորը (953–977) հավաքում իր գաղնակիցների զորքերը Հարբում. «Յայնժամ ամենայն թագաւորազունքն Հայոց՝ ազատքն եւ իշխանքն եւ ամենայն մեծամեծքն աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. թագաւորն Կապանին Փիլիպպէ եւ թագաւորն

12 Պատմութիւն Մատթէոսի Ուտհայեցոյ, Երուսաղէմ, 1869, § Զ. էջ 3–4, նոյնի ժամանակագրութիւն (Բ տպագրութիւն), Վաղարշապատ, 1898, էջ 3–4, նոյնի 1973, էջ 2–3:

13 Նոյնի 1869, § Դ. էջ 3, նոյնի 1898, էջ 3:

14 Բագրատունի այս թագավորը որոշ գրչագրերում կոչվում է Աշոտ, որոշներում՝ Գագիկ, մի քանիսում էլ՝ այդ երկու անունները միաժամանակ են հանդես գալիս – հմնտ. Մատթէոս Ուտհայեցի, 1973, էջ 3, 297, ծանոթ. 16: Հ. Բարթիկյանի այս մեկնաբանումն ընդունում է Կարեն Սաթևոյանը [Կ. Սաթևոյան, Անի-Շիրակի պատմության էջեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 10, ծանոթ. 4, 5], մինչդեռ Ա. Հակոբյանը Աշոտ-Գագիկ թագավորին նույնացնում է Աշոտի որդի Գագիկ Ա-ի (989–1017) հետ [Ա. Յակոբեան, 2011, էջ 310, 311, ծանոթ. 4, հմնտ. նաև Ս. Գ. Бархударян, 2011, с. 103]:

15 Պատմութիւն Մատթէոսի Ուտհայեցոյ, 1869, § Զ. էջ 5, նոյնի 1898, էջ 4, նոյնի 1973, էջ 3:

Աղուանից Գուրգէն...»¹⁶: Աշոտ Բագրատունին իրեն դաշնակից արքաների ու իշխանների այս զորահավաքը կատարել է 972թ. (Հայոց 421թ.)¹⁷:

Ուշագրավ է, որ կողք-կողքի հիշատակվում են Կապան(ք)ի, այսինքն՝ Դարբանդի թագավոր Փիլիպպեն և Աղվանքի թագավոր Գուրգենը: Ընդ որում, հիմա էլ վերջինս էր լուրջ անվանապես կոչվում «թագաւոր Աղուանից», քանզի նստում էր Լոռե բերդաքաղաքում, պատկանում էր Կյուրիկյան գահատոհմին և պարզապես իշխում էր Աղվանքի որոշ արեւմտյան գավառներին¹⁸:

Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ երրորդ անգամ մեր խնդրո առարկա երկիրը կոչվում է կրկին Կապանի թագավորություն. այստեղ պատմվում է Կյուրիկյան Դավիթ Անհողին արքայի ու Դվինի իսլամադավան ամիրայի միջև ծավալված պատերազմի և այն մասին, թե ինչպես են Դավիթ Անհողինին ռազմական օգնություն ուղարկում Անիի, Կապան(ք)ի և Աբխազաց արքաները¹⁹: Նշված պատերազմը տեղի է ունենում 1040թ. (Հայոց 489թ.). «Դարձեալ ի թուականութեանս Հայոց ի յամի ՆՁԹ... զօրաժողով արար մեծ ամիրայն Պարսից Ապուսուար իբրեւ հարիւր յիսուն հազար՝ զազգան անօրինաց, եւ մեծաւ սրտմտութեամբ յարձակեալ զայր ի վերայ քրիստոնէից եւ դառնաշունչ բարկութեամբ մտաւ յաշխարհն Աղուանից ի գաւառն Դաւթի Անհողին...»:

Կյուրիկյան Դավիթը, որը կրում էր «Աղվանից թագավոր» տիտղոսը, որոշ ժամանակ խուսափում է ճակատամարտից, մինչև որ ստանում է իր դաշնակիցների օժանդակությունը: «Եւ լուեալ զայս Յովհաննէս, [որ նստէր յԱնի] յուղարկէր Դաւթի արս չորս հազար. նոյնպէս եւ յուղարկեալ ի Կապանին թագաւորն. եւ նա տայր նմա արս երկու հազար: Եւ այսպիսի օրինակաւ սպառնացեալ Ափխազաց թագաւորին, եւ նա յուղարկէր յօգնութիւն Դաւթի արս չորս հազար: ... Իսկ Դաւիթ քսան հազարաւ հասանէր ի վերայ այլազգեացն արանց քաջաց...»: Այդպիսով, իր զորքերի թիվը հասցնելով 20 հազարի, Դավիթ Անհողինը պարտության է մատնում թշնամական բանակին: Ս. Բարխուդարյանի ենթադրությամբ՝ նշված հատվածում հիշատակված Կապան(ք)ի թագավորը, որի անունն Ուռհայեցին չի նշում, պետք է որ լիներ Փիլիպպեի որդի Սևադան²⁰:

Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ չորրորդ անգամ մեր խնդրո առարկա երկիրը կոչվում է Դարբանդ աշխարհի Հայոց թագավորություն, «որ ասի Կապանք»: Նկարագրելով Հայոց եկեղեցու ներքին տարածայնությունները՝ Ուռհայեցին գրում է. «Եւ եղև ի զօրանալն Պարսից փոխեցաւ ավոռ հայրապետութեանն ի Գանձակ. որ հանդիպեցան յայսմ մատենագրութեանս մերում՝ կաթողիկոսք Աղուանից՝ Տէր Յովհաննէս եւ Տէր Գէորգն, Տէր Յովսէփն, Տէր Մարկոսն եւ Տէր Ստեփաննոսն. եւ թագաւորք Աղուանից՝ Գազիկ եւ Դաւիթ եւ Կիւրիկէ, որք նստէին յայժմուս ի Լօռէ քաղաքն Հայոց»: Այսպես, Աղվանից կաթողիկոսներն իրենց ավո-

16 Նույնի 1869, § ԺԴ. էջ 20, նույնի 1898, էջ 17, նույնի 1973, էջ 11:

17 Նույնի 1869, § ԺԳ. էջ 17, նույնի 1898, էջ 14, նույնի 1973, էջ 9:

18 Մակար եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Թիֆլիս, 1900, էջ 171:

19 Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ, 1869, § ԾԱ-ԾԴ, էջ 90-96, նույնի 1898, էջ 78-82:

20 Ս. Գ. Բարխուդարյան, 1969, էջ 130, С. Г. Бархударян, 2011, с. 106-107.

ուանիստը տեղափոխել էին Գանձակ, իսկ թագավորները նստում էին Լոռե բերդաքաղաքում: Միևնույն ժամանակ, «էին եւ այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք, սահմանակից Աւզաց եւ Աղուանից, որք էին թագաւորք անարատք եւ սրբակրօնք, որք յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ աստուածասէր սուրբ թագաւորքն, որք էին անուանք այսօքիկ...»²¹: Ինչպես տեսնում ենք, Ուռհայեցին դարձյալ կողք-կողքի հիշատակում է «Աղվանից» Կյուրիկյան թագավորութիւնը և Դարբանդի (Կապանքի) թագավորութիւնը:

Մեջբերված պարբերությունը Ուռհայեցին առնչում է 1085թ. (Հայոց 534թ.)²²: Որ դրա մեջ Դարբանդ աշխարհի կամ Կապան(ք)ի թագավորներ ասելով՝ Ուռհայեցին նկատի ունի առաջին երկու վկայություններից Հայտնի Փիլիպպոս/Փիլիպպէի գահատոհմը՝ միանգամից երևում է նշյալ պարբերության շարունակություն մեջ, ուր «որք էին անուանք այսօքիք» գրելով՝ պատմագիրն անմիջապես թվարկում է Փիլիպպեի պապին, հորը և երեք հաջորդներին, որոնցից վերջինը՝ Գրիգորը, ողջ էր դեռևս Մատթեոս Ուռհայեցու օրոք, այսինքն՝ մինչև պատմագրի աշխատության ավարտը՝ 1136թ.: Ըստ Ուռհայեցու՝ այս թագավորներից յուրաքանչյուրը նախորդի որդին էր:

Դարբանդի հայ արքաները

Ի՞նչ գիտենք Դարբանդի թագավորության գահատոհմի մասին: Նախ, ունենք թագավորների հաջորդական 6 սերունդների արքայացանկը, որը հաղորդում է Ուռհայեցին իր պատմության՝ վերոնշյալ վերջին հիշատակության մեջ. Վաչագան/Վաչական, Գոչազդակ (տարբերակներ՝ Գողազգակ, Գոչակտակ²³), Փիլիպպէ, Սևադա, Սենեքարիմ, Գրիգոր: Ս.Բարխուդարյանն այս անվանացանկի վերջում ավելացնում է Յովհաննէս անունը, որը Հայտնի էր միայն մեկ տապանաքարի արձանագրությունից՝ նշանավոր Նաչմաս գյուղում²⁴: Արձանագրությունը հետևյալն էր՝ «Յովհաննէս կրէյսար»: Ի դեպ, նույն Նաչմաս գյուղում Հայտնի էր նաև նախորդ թագավորի՝ Գրիգորի տապանաքարը, նույն կարճ արձանագրությամբ՝ «Գրիգոր կրէյսար»²⁵: Մ.Բարխուդարյանցը, փորձելով բացատրել կրէյսար բառերը, գրում է՝ «արդեօ՞ք կեսար»²⁶:

Այսպիսով, ամբողջացնելով Դարբանդի թագավորների՝ 7 սերունդներից բաղկացած ցանկը, Ս.Բարխուդարյանն այն զուգադրում է նույն ժամանակաշրջանի

21 Պատմության Մատթեոսի Ուռհայեցու, 1869, § ՃԻԶ, էջ 278–279, նույնի 1898, էջ 231, նույնի 1973, էջ 151–152:

22 Նույնի 1869, § ՃԻԴ, էջ 272, նույնի 1898, էջ 226, նույնի 1973, էջ 148:

23 Հր. Աճառյանը որպես գլխաբառ դնում է Գողազգակ տարբերակը, սակայն նշելով մյուս երկու տարբերակներն էլ՝ գրում է, որ «հարազատ ձևը անստույգ է» [Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 486]:

24 Մակար եպս. Բարխուդարյանց, Պատմության Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 15:

25 Նույն տեղում:

26 Սեդրակ Բարխուդարյանը, թերևս տեխնիկական վրիպակի պատճառով, Մակար Բարխուդարյանցի հղումը, «էջ 15»-ի փոխարեն, տալիս է «էջ 195»: Հետագա որոշ հետազոտողներ թյուրիմացաբար նույնությամբ ընդօրինակում են այս վրիպակը:

Սյունյաց արքաների ցանկին՝ դարձյալ 7 սերունդ²⁷ (ստորև ներկայացվող աղյուսակում՝ Սյունյաց արքաների գահակալման թվականներն ավելացրել ենք ըստ վերջին պատմագիտական ուսումնասիրությունների):

| Սյունյաց (Բաղքի) թագավորներ | Դարբանդի (Կապանքի) թագավորներ |
|------------------------------|-------------------------------|
| Սմբատ Ա (970/987 – 998) | Վաչագան/Վաչական |
| Վասակ Ա (998 – 1040) | Գոշակտակ/Գոշագգակ |
| Սմբատ Բ (1040 – 1051) | Փիլիպպե/Փիլիպպոս |
| Գրիգոր Ա (1051 – 1072) | Սևադա |
| Սենեքերիմ (1072 – 1092/1096) | Սենեքարիմ |
| Գրիգոր Բ (1092/1096 – 1166) | Գրիգոր |
| Հասան (1166 – 1170) | Յովհաննէս |

Երկու արքայացանկերի մեջ կրկնվում են միայն երկու իրարահաջորդ անուններ՝ Սենեքերիմ/Սենեքարիմ և Գրիգոր, երկու դեպքում էլ՝ 5-րդ և 6-րդ սերունդներում: Այնուհետև Ս.Բարխուդարյանը հերթով ներկայացնում է Դարբանդի հայկական թագավորությունից յոթ արքաներին՝ ըստ նրանց մասին մեր ունեցած սուղ տեղեկությունները²⁸:

Առաջին երկուսի՝ Վաչագանի և Գոշակտակի մասին, փաստորեն, միայն գիտենք, որ նրանք եղել են Փիլիպպե/Փիլիպպոս թագավորի համապատասխանաբար պապն ու հայրը: Փիլիպպեի մասին, ինչպես արդեն նշեցինք, կան երկու պատմական վկայություններ: Փիլիպպեի որդի Սևադայի գործունեությունից մասին, ինչպես վերը տեսանք, առանց նրա անունը տալու, խոսում է Ուռհայեցին՝ ըստ Ս.Բարխուդարյանի ենթադրությունից: Բացի այդ, այս Սևադայի վերաբերյալ ունենք 13-րդ դարի պատմագիր Ստեփանոս Օրբելյանի խիստ ուշագրավ տեղեկությունները: Մասնավորապես, դրանցից իմանում ենք, որ Սևադան ուներ երկու դուստր՝ Շահանդուխտ և Կատա, և մեկ որդի՝ Սենեքերիմ (ըստ Ուռհայեցու՝ Սենեքարիմ): Հայտնի է նաև Սևադայի կնոջ անունը՝ Սոփի(ա):

Դեռևս Փիլիպպեի գահակալման օրոք, այսինքն՝ նախքան Դարբանդում Սևադայի գահ բարձրանալը, վերջինիս դուստր Շահանդուխտն ամուսնանում է Սյունյաց Գրիգոր թագավորի հետ, և քանի որ նրանք զավակներ չեն ունենում, Գրիգորի մահից հետո Սյունյաց թագավոր է դառնում Շահանդուխտի եղբայր Սենեքերիմը, որը փաստորեն նաև Դարբանդի կամ Կապանքի հայոց արքան էր (տե՛ս աղյուսակ 1): Այս մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Խսկ Գրիգոր առեալ էր իւր կին զամենօրհնեալ և մեծահաւատ բարեպաշտուհին Շահանդուխտ ի տանէն Աղվանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի. և էին անզաւակ. եւ կամէր մնալ թագաւորութիւն նոցա անժառանգ. ապա խորհեալ ի միասին ընդ իշխանան՝ ածեն յԱղվանից զՍենեքերիմ՝ եղբայր նորին Շահանդուխտոյ թագաւոր»:

27 Ս. Գ. Բարխուդարյան, 1969 էջ 127, С. Г. Бархударян, 2011 с. 102.

28 Ս. Գ. Բարխուդարյան, 1969 էջ 128–132, С. Г. Бархударян, 2011 с. 102–110.

րազն մանուկ, յոյժ գեղեցիկ տեսլեամբ եւ առոյգ Հասակաւ՝ Հանճարեղ եւ իմաստուն, նաեւ երկիւղած յԱստուծոյ: Եւ ստանայ զսա ժառանգ իւրեանց թագաւորութեանն ամս ինչ. եւ վախճանի եւ սա»²⁹:

Սեւադայի կրտսեր դուստրը՝ Կատան, ևս բնակվում էր Սյունիքում, իր ավագ քրոջ՝ Թագուհի Շահանդուխտի մոտ: Նրանք երկուսով եռանդուն շինարարական գործունեություն էին ծավալել Սյունիքում³⁰, իսկ ամենահայտնի իրենց գործը Վահանավանքում կրկնահարկ Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումն էր, որի առթիվ թողնված արձանագրությունը ցայսօր կանգուն է: Այս վիճաբերից իմանում ենք, որ «Ի ԵԼԵ. [535=1086] թվականիս, ես՝ Շահանդուխտ դուստր Սեւադ/աի Աղվանից թագաւորի եւ ամուսին Գրիգոր թագաւ/որի, որդո Աշոտկա, վասն ոչ գալո մեր ի միասին ժառա/նգ [ը]ստ մարմնո, ես եւ քոյրս իմ Կատայս շինեցաք զՍբ./ Աստուածածինս փոխարեն գթոց նորա: Որչափ կենդանի եմ/ նմա կատարեն զՍբ. խորհուրդն եւ յետ այնորիկ զմեզ/ կՏցորդ արասցեն անմահ զենմանն Ք[րիստոս]ի»³¹:

Ուշագրավ է, որ Շահանդուխտի մայր Սոփի(ա)ն նույնպես, ըստ երևույթին, դստեր հետ միասին Դարբանդից տեղափոխվել էր Սյունիք (գուցե իր ամուսնու՝ Սեւադայի մահից հետո³²), քանի որ 1976թ. Վահանավանքում գտնվել է Սոփիի տապանաքարը՝ հետևյալ արձանագրությամբ. «Սոփի Աղվանից թագուհի գոքանչ Գրիգոր/թագաւորի որդո Ա/շոտկա մայր Շա/հանդուխտ: Թվ./ԵԼ. (530=1081)³²»:

Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Սյունյաց թագավոր դարձած Սենեքերիմն ուներ երեք որդի՝ Գրիգոր, Սմբատ, Սեւադա, և մեկ դուստր՝ Կատա: Սակայն Վահանավանքի պեղումների ժամանակ Գ. Գրիգորյանի հայտնաբերած մի տապանաքարի 7 տողանոց արձանագրության մեջ հիշատակվում է Սենեքերիմի ևս մեկ որդին՝ Կիւրիկէ անուկով. «ԶԿիւրիկէ որդի Սենիքարեմ թ/ագաւորի կիսաւ/է հանգուցեալ/ յաղաւթս/: Յիւլեցէք:/ Թ: ԵԼԵ [= 1099թ.]³³»: Իսկ Հովհաննավանքի վիճաբերից մեկում էլ հիշատակվում է Բաղաց Գրիգոր թագավորի մեկ այլ դուստր՝ Ծուշիկ անուկով, որն անհայտ հանգամանքներում հալածվելով հեռացել էր Սյունիքից³⁴: Հնարավոր է, որ հենց դրա համար է, որ նրան չի հիշում Ստեփանոս Օրբելյանը: Ինչ վերաբերում է վերոնշյալ Կյուրիկեին, ապա ենթադրվում է, որ նրան Օրբելյա-

29 Պատմություննահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1910, ԾԹ. էջ 318–319, Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, աշխատասիրությամբ Ա. Արքահայանի, Երևան, 1986, ԾԹ. էջ 268–269:

30 Տես Ստեփանոս Օրբելյան, 1986, ԽԵ, էջ 218, ԾԹ. էջ 270:

31 ԴՀՎ, պրակ II. Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Մ. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 138: Շահանդուխտ թագուհու և նրա Կատա քրոջ մեկ այլ համատեղ վիճաբեր էլ՝ բավական ընդարձակ տեքստով, գտնվել է ավելի ուշ (տես Գր. Մ. Գրիգորյան, Վիճաբություններ Վահանավանքի 1970–1978թթ. պեղումներից, ՊԲՀ, 1980, Հ⁴ 2, էջ 156):

32 Գր. Մ. Գրիգորյան, 1980, էջ 162–163:

33 Գր. Մ. Գրիգորյան, Վահանավանքի պեղումների նախնական արդյունքները, ԼՀԳ, 1970, Հ⁴ 10, էջ 88–89:

34 Կ. Գ. Ղաֆաղարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 77, արձ. 4:

նը չի հիշատակում այն պատճառով, որ նա վաղամեռիկ էր («Կիսաւրէ Հանգուցեալ»)³⁵:

Երկու°, թե° մեկ Սենեքերիմ

Ս.Բարխուդարյանը Սյունյաց (Բաղքի) թագավոր հիշատակված Սենեքերիմին և Դարբանդի (Կապանքի) թագավոր հիշատակված Սենեքարիմին համարում է նույն հոր երկու նույնանուն զավակներ: Իրականում, սակայն, նման պատմական վկայություն չունենք. պարզապես Ստեփանոս Օրբելյանը Սենեքերիմին համարում է Սյունյաց արքա և Աղվանից արքայազն, իսկ Մատթեոս ՈւռՀայեցին՝ Դարբանդի արքա (և բնականաբար, մինչ այդ, Դարբանդի արքայազն): Ուստի կարելի էր ենթադրել, որ երկու պատմագիրների երկերում հիշատակված Սենեքերիմ(ներ)ը նույն անձնավորությունն է, մանավանդ որ նրանց գործունեության ժամանակաշրջանն էլ նույնն է:

Որտեղից° է, ուրեմն, գալիս Ս.Բարխուդարյանի ենթադրությունը: Խնդիրն այն է, որ դավազրաբար սպանվելուց հետո Սենեքերիմը թաղվում է Սյունիքի Վահանավանքում («Ձոր եւ եկեալ մեծամեծացն եւ որդեացն իւր՝ կոծ մեծ արարին ի վերայ եւ բարձեալ տարան ի սուրբ ուխտն Վահանու. եւ անդ եղին ի շիրմի ընդ այլ թագաւորսն»)³⁶): Մատենագրական այս վկայությունը, սակայն, մինչ օրս չի հաստատվել հնագիտական կամ վիմագրական տվյալներով: Սենեքերիմի տապանաքարը Վահանավանքում չի հայտնաբերվել³⁷:

Միևնույն ժամանակ Սենեքերիմի անունով մի տապանաքար 19-րդ դ. կեսերին հայտնի էր Դերբենտ քաղաքից հարավ՝ Խաչմաս գյուղի գերեզմանատանը: Ս.Բարխուդարյանը ենթադրում է, որ հենց Խաչմասում է գտնվել Դարբանդի հայ արքաների տոհմական գերեզմանատունը³⁸: Տեղում եղած նշանավոր եպիսկոպոս Ս.Ջալալյանցը 1858թ. գրում է. «Գերեզմանատունք այս գեղջ, զարդարեալ կան գեղեցիկ մահարձանօք, բայց այժմ գլխովին մացառուտ»: Ըստ Ջալալյանցի՝ գերեզմանների մեջ առկա էր մի տապանաքար, որի վրա գրված էր՝ «Այս է տապան Սենեքերիմ արքայի»³⁹:

35 Ստորև բերվող աղյուսակ 1-ում չենք նշել Կյուրիկեին և Շուշիկին:

36 Ստեփանոս Օրբելեան, ԾԹ. էջ 320, Ստեփանոս Օրբելյան, 1986, ԾԹ. էջ 270:

37 Մեծ տաճարի պունապրահի արևելյան հատվածում կատարված պեղումների արդյունքում գտնվել են Սենեքերիմի երկու նախորդների՝ Սմբատ Բ և Գրիգոր Ա թագավորների, Սենեքերիմի մայր Սովիայի և այլոց տապանաքարերը [Գր.Մ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XV դարեր), Երևան, 1981, էջ 35, ծանոթ. 3]:

38 Ս.Գ. Բարխուդարյան, 1969, էջ 125, 132, С.Г. Бархударян, 2011, с. 98, 109. Ա. Հակոբյանը, սակայն, կարծում է, թե Խաչմասի տապանաքարերին առկա Սենեքերիմ, Գրիգոր, Յովհաննես արքայանունների հայտնվելու հիմքը զուտ գրական է [Ա. Յակոբեան, էջ 316, ծանոթ. 16]:

39 Սարգիս վրդ. Ջալալեանց, Ճանապարհորդությունիս ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիփսիս, 1858, էջ 420: Մի քանի տասնամյակ անց այս տապանաքարի մասին գրում է Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցը, սակայն նա, ըստ երևույթին, անձամբ չի տեսել այն, այլ նկարագրում է Սարգիս Ջալալյանցի տեղեկության վրա հիմնվելով (տե՛ս Մեսրոպ արք. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Մաղխանի և միս վանօրեից և քաղաքացն և զիտօրեից՝ որք ի Շամախույ թեմի, Տիփսիս, 1896, էջ 544):

Դժբախտաբար, մի քանի տասնամյակ անց Խաչմաս գյուղ այցելած Մակար վարդապետ Բարխուտարյանցն այլևս չի կարողանում գտնել այս տապանաքարը: Ըստ նրա՝ ամեն տարի, Մեռելոցի օրերին, ամբողջ գյուղի բնակչությունը գալիս էր Սենեքերիմ թագավորի գերեզմանին, եղերերգ հնչեցնում, ապա փռում սփռոցները և թագավորի անունը ոգեկոչելով՝ ողորմաթաս խմում նրա հիշատակին: Բարխուտարյանցի խոսքով՝ «Երեք օր ամեն ճիգ թափեցինք և ամեն ջանք ի գործ դրինք գտնել Սենեքերիմ թագավորի տապանաքարը..., բայց անհնարին եղաւ գտնել»⁴⁰: Այնուհետև գյուղի տարեց կանայք Բարխուտարյանցին պատմում են, որ «ղաչաղների» (= ավագակների) երկյուղից իրենք արգեն մի քանի տարի չեն կարողանում գալ Սենեքերիմի մահարձանի մոտ, և «երևում է, որ տարել են թագաւորի քարը...»: Մակար Բարխուտարյանցն պեղացնում է, որ իսկապես «տեղ տեղ երևում է մեծ և փոքր հանգստարաններում, որ գողացած և տարած են տաշած քարերից, որոց տեղերն մնացած են փոսեր միայն»⁴¹: Ընդհանրապես, այս գերեզմանոցը գտնվում էր բավական անմատչելի տեղում՝ խիտ անտառի մեջ, «ծածկուած մեծ մասամբ մացառներով, բայց յայտնի է Ղուբայեցւոց եւ Դարբանդեցւոց՝ տեղը մանաւանդ Խաչմասեցւոց»⁴²:

Եթե Խաչմասում հայտնի Սենեքերիմն, իրոք, Դարբանդի հայ թագավորն է, և եթե ստույգ է Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունը՝ վահանավանքում Սյունյաց Սենեքերիմի թաղված լինելու վերաբերյալ, ապա այս պարագային կարելի է առաջադրել հետևյալ վարկածը: Հնարավոր է, որ երկու Սենեքերիմների դեպքում պարզապես գործ ունենք միևնույն պատմական անձնավորության կրկնակի թաղման հետ, որպիսին կարելի է հանդիպել միջնադարում, տարբեր տեղերում: Որպես կանոն, նման դեպքերում հանգուցյալի մարմնի մեկ հատված (օրինակ՝ ձեռքը կամ մատը) թաղում էին այլ վայրում: Քանի որ նշանավոր քաղաքական ու հոգևոր գործիչների գերեզմանները համարվում էին սրբազան և ուխտատեղի էին դառնում իրենց հետևորդների համար, ուստի կրկնակի թաղման երևույթը կարող էր միտված լինել հնարավորինս շատ հավատացյալ երկրպագուների կրոնական պահանջը բավարարելուն:

Տվյալ դեպքում, հայտնի է, որ Սյունյաց Սենեքերիմ թագավորը սպանվեց Պարտավի, Գանձակի և [Ա]ռանի մուսուլման ամիրայի⁴³ դեմ մղած պայքարի արդյունքում. ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ հարևան իսլամական իշխանությունները նախանձով էին լցված Սյունյաց թագավորության հանդեպ և այն իբրև խոչընդոտ էին տեսնում իրենց ճանապարհին. «Սակս որոյ խանդացեալ անիծեալ Իսմայէլականացն ընդ գեղեցիկ եւ ամուր թագաւորութիւնս Բաղաց զոր խոչ մեծ համարէին ինքեանց. եւ ելեալ ամիրայն Պարտաւայ եւ Ռանայ եւ Գանձակայ բազում զօրօք դայ

40 Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին-Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 134:

41 Նույն տեղում, էջ 135:

42 Մեսրոպ արք. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 544:

43 Ս.Բարխուտարյանը սխալմամբ նշում է հոգնակի թվով՝ «Պարտավի, Գանձակի և այլ շրջակա ամիրաներ» [Ս. Գ. Բարխուտարյան, 1969, էջ 131], հետագայում նրա ռուսերեն մեկնաբանության մեջ այս վրիպումը սրբագրվել է [տես Ս. Գ. Бархударян, 2011, с.107]:

ի պատերազմ ընդ Սենեքերիմայ...»⁴⁴: Այստեղից հետևում է, որ դավադրաբար սպանվելով՝ Սենեքերիմ արքան միանգամայն կարող էր ստանալ հավատի համար նահատակված մարտիրոսի սրբապատկ: Բացի այդ, Սենեքերիմը միաժամանակ Դարբանդի ու Սյունյաց թագավորն էր, և նրա մահից հետո երկու երկրամասերում էլ բնականաբար ցանկություն կառաջանար ունենալու իրենց թագավորի գերեզմանը:

Ս. Բարխուդարյանը, սակայն, այլ լուծում է առաջարկում խնդրին. նրա խոսքով՝ «Դերբենդի թագավոր Սևադայի երկու որդիները՝ երկուսն էլ Սենեքերիմ անունով, թագավորել են՝ մեկը Դերբենդում, մյուսը՝ Սյունիքում: Հայոց մեջ սովորական չէ երկու որդիներին նույն անունը տալ, բայց դրա դիմաց հայտնի են երկանուն անձինք, թեկուզ Բագրատունի թագավորներից՝ Հովհաննես-Սմբատ: Ինչպես և Աղվանքի թագավորությունը վերականգնող Համամը, որը կոչվել է նաև Հովհաննես, նույն և Սենեքերիմ-Հովհաննես թագավոր Փառխոսի, մեռած 1003թ.: Ներկա դեպքում, իհարկե ենթադրաբար, կարելի է կարծել, որ Սևադայի որդիներից մեկը՝ Սենեքերիմը, որն, ըստ երևույթին, ավագն էր, տարվել է Սյունիք, և երկրորդին Դերբենդի թագավոր օծելիս ի պատիվ առաջինի, որը միջնադարյան օրենքով՝ օրինական ժառանգն էր թագավորության, վերանվանել են նույնպես Սենեքերիմ, թե՛րևս երկրորդ անունը շնչելով»⁴⁵:

Այնուհետև, Սենեքերիմի կամ Սենեքերիմների հաջորդ Սյունյաց Գրիգոր և Դարբանդի Գրիգոր արքաներին Ս. Բարխուդարյանը համարում է տարբեր անձեր՝ տարբեր մահվան թվականներով: Սակայն, հաշվի առնելով վերոնշյալ մեր դատողությունները, հնարավոր է նույնպես ենթադրել, որ եղել է միայն մեկ Գրիգոր, որը միաժամանակ թագավորել է Սյունիքում և Դարբանդում:

Ինչպես արդեն նշեցինք, Խաչմասում գտնվել է Գրիգոր թագավորի տապանաքարը: Միևնույն ժամանակ, բոլորովին վերջերս, վիմագրագետ Արսեն Հարությունյանը խիստ հետաքրքրական տեսակետ է հայտնել՝ ենթադրելով, որ Սիսիանի պատմության թանգարանի բացօդյա քարադարանում ցուցադրվող բազալտե սարկոֆագը պատկանում է Սյունյաց Գրիգոր Բ արքային: Այս սարկոֆագը պատահականորեն գտնվել է Շաքի գյուղում՝ 1985թ. շինարարական աշխատանքների ժամանակ: Սարկոֆագի վրա ընթերցվում է հետևյալ եռատող տապանագիրը. «Ձտառապ/եալ Գրիգո/րի յարքա»⁴⁶: Եթե ընդունենք, որ Սյունիքում և Դարբանդում այդ ժամանակաշրջանում գահակալել է միայն մեկ Գրիգոր թագավոր, ապա նրա՝ երկու տեղ թաղված լինելու հանգամանքը կարելի է բացատրել միևնույն պատճառով, ինչ նրա հայր Սենեքերիմի դեպքում:

Գրիգոր թագավորի մահից հետո, ըստ էության, Սյունյաց և Դարբանդի թագավորությունները նորից առանձնացել են. Սյունիքում իշխել է Հասանը, իսկ Դարբանդում՝ Հովհաննեսը:

44 Ստեփանոս Օրբելեան, 1910, ԾԹ. էջ 319–320:

45 Ս. Գ. Բարխուդարյան, 1969 էջ 131, С. Г. Бархударян, 2011, с. 109:

46 Ա. Հարությունյան, Սյունյաց Գրիգոր Բ արքայի անվանակիր սարկոֆագը, «Բանբեր հայագիտության», 2018, Հ^տ1 (16), էջ 138, 141, 145–148:

Սյունյաց և Դարբանդի թագավորությունների անկումը

Սյունյաց Հասանը Ներքին Խաչենի իշխանական տոհմից էր՝ իշխան Վախտանգի որդին և Սակուի թոռը: Որպես «արքա Հասան» նա հիշատակվում է Արցախում գտնված մի արձանագրության մեջ՝ «Խենչալ խաչ» կոչվող խաչքարին⁴⁷: Քանի որ Սյունյաց Գրիգոր թագավորը արու գավակ չունեք, նա իր դուստր Կատային ամուսնացրեց այս Հասանի հետ և կարգեց իրեն հաջորդ⁴⁸: Այս մասին Ստեփանոս Օրբելյանը գրում է. «Բայց Գրիգորն որ իշխէր Բաղաց, ետ ամել ի Խաչենոյ իշխանացն մանուկ մի Հասան անուն ի Գեռաբարեցեացն. եւ ետ զդուստր իւր Կատայն նմա ի կնուցիւն. եւ կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ...»⁴⁹: Երբ սելջուկ-թուրքերը 1170թ. պաշարեցին Բաղաբերդը, Հասանը իր ընտանիքը տարհանեց և վերադարձավ իր ծննդավայրը. «Մինչ զբերդն կամէին առնուլ՝ Հասան կացոյց բերդապահս, եւ ինքն առեալ զկին իւր եւ զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն եւ անց, զնաց ի գաւառ իւր եւ ի տուն ի Խաչէն»⁵⁰: Այսպիսով, Սյունյաց թագավորությունը վերջ գտավ՝ մոտ 200-ամյա գոյությունից հետո:

Ըստ երևույթին, մոտավորապես նույնքան է գոյատևել նաև Դարբանդի Հայոց թագավորությունը: Հատկանշական է, որ Սյունյաց և Դարբանդի տիրակալներն միջև ինամիական կապերի մասին տեղեկություն կա դեռևս Սյունիքի առաջին արքա Սմբատի օրոք, որն ամուսնացած էր Դարբանդի իշխանի դստեր հետ (տե՛ս աղյուսակ 1): Ս. Օրբելյանը հաղորդում է այս Սմբատի Ա-ի կնոջ անունը՝ Ծահանդուխտ, որի հորը՝ Սևադային, կոչում է «Աղվանից իշխան»⁵¹: Հաջորդ նման դեպքը, ինչպես տեսանք, տեղի էր ունեցել Սյունյաց Գրիգոր Ա-ի օրոք, որն ամուսնացել էր, դարձյալ Ծահանդուխտ անունով, Դարբանդի («Աղվանից») արքայադստեր հետ, որի հոր անունն էլ Սևադա էր:

Փաստորեն, չնայած ընդհանուր սահմանի բացակայությունը, Սյունյաց և Դարբանդի թագավորություններն իրենց գոյության ողջ շրջանում սերտորեն համագործակցել են: Ակնհայտ է, որ այդ գործակցության հիմնական նպատակը Աղվանից Հայ թագավորության վերականգնումն էր և Գանձակի, Պարտավի ու Առանի տարածքում ստեղծված օտար ամիրայությունների կազմաքանդումը: Սակայն ի վերջո այս ռազմաքաղաքական պայքարն ավարտվում է ամիրայության հաղթանակով և սելջուկ-թուրքերի նվաճողական հորդանքերի առաջխաղացմամբ:


47 ԴՇԿ, պրակ V, Արցախ, կազմեց՝ Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 83–84, արձ. 253:

48 Մակար եպս. Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, էջ 139:

49 Ստեփանոս Օրբելեան, 1910, ԿԱ, էջ 337, Ստեփանոս Օրբելյան, 1986, ԿԱ, էջ 280:

50 Նույն տեղում, էջ 337, նույն տեղում, էջ 280: Այս «Գեռաբարեցի» Հասանի և Ներքին Խաչենի գահերեց իշխան Հասան Ա-ի (1150–1181) հետ նրա ունեցած անչլոթյան մասին տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 137:

51 Ստեփանոս Օրբելեան, 1910, ԾԵ. էջ 299–300, Ստեփանոս Օրբելյան, 1986, ԾԵ. էջ 256–257:



ТОРК ДАЛАЛЯН

ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЦАРСТВА
НА ТЕРРИТОРИИ ШИРВАНА В ТРУДАХ СЕДРАКА БАРХУДАРЯНА

Ключевые слова: *Ширван, Седрак Бархударян, Царство Капан(к)а, Дарбанд, Сюнийское царство, Маттеос Урхайеци, Степанос Орбелян, Хачмас, лапидарная надпись.*

В статье рассматриваются сведения исторических, топографических и эпиграфических источников, касающихся одного армянского царства Средневековья (X–XII вв.), о котором пишет Седрак Бархударян в одной из своих обширных статей. Это царство, находившееся в северной части исторической области Ширван, на территории «Маскутской страны», он называет «Армяно-албанским царством Дербента». В исторических источниках данное королевство чаще называлось Капан(к)ским царством, поскольку армянское наименование города Дербент было Капан(к). Принимая во внимание тождество этого топонима с названием города Капан в Сюнийском царстве, а также хронологическое совпадение и схожести в именах царей, многие историки армянское царство Дарбанда отождествляли с Сюнийским царством. Таким образом, сведения историкографов Маттеоса Урхайеци (XII в.) и Степаноса Орбеляна (XIII в.) оказались неточными и неверными. Однако, при сравнении списков царей Сюника и Дарбанда, С. Бархударян подтвердил, что данные указанных авторов совершенно достоверны. В нашей статье предложены некоторые корректировки в интерпретации параллельных списков царей с учетом точки зрения С. Бархударяна.

TORK DALALYAN

PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIAN KINGDOM IN SHIRVAN REGION
IN THE WRITINGS OF SEDRAK BARKHUDARYAN

Keywords: *Shirvan, Sedrak Barkhudaryan, Kingdom of Kapan(k), Darband, Syunik Kingdom, Matheos Urhayetsi, Stepanos Orbelyan, Khachmas, inscription.*

This article discusses the data of historical, topographic, and epigraphic sources concerning a medieval Armenian kingdom (X–XII cc.), which has been broached in one of the extensive articles by Sedrak Barkhudaryan. This kingdom, located in the northern part of historical Shirvan within the territory of «Mazkout Land», is called by Barkhudaryan the “Armenian-Albanian Kingdom of Derbent”. In historical sources, this state formation was often referred to as the Kingdom of Kapan(k), since the Armenian name of Darband (Derbent) was Kapan at that time. Taking into consideration the equivalence between this toponym and the name of Kapan town in Syunik Kingdom, as well as the chronological overlap and similarities in the names of the kings, many historians identified the Darband Armenian kingdom with the Syunik Kingdom. In this case, it turned out that the information

ԱԼԵՔՍԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ

ԿՈՉԵՈՆ-ԿՈՆԴԻ 591 Թ. ԵՆԹԱԴՐԵԱԼ ԲԵՐԴԻ ՅԵՏՔԵՐՈՎ

Հիմնաբառեր՝ Էրեբունի-Երևան, Կոտայք գաւառ, Ոսպրան Հայոց գաւառ, Երևանի բերդ, Կոնդի բիզանդական ամրոց, Կոզեոն, Հայաստանի երկրորդ բաժանում, Սեդրակ Բարխուդարեան, Ժան Շարդէն, Սասանեաններ:

Ի դարի մեծագոյն հայագէտներից մէկի՝ Սեդրակ Բարխուդարեանի գիտական հետաքրքրութիւնների շրջանակը յիշուած սահմաններ չունէր: 1947թ. ԳԱ «Տեղեկագրում» նա հրատարակեց կարեւոր յօդուած՝ «Մի քանի դիտողութիւններ Երեւանի Կաթողիկէ եկեղեցու արձանագրութիւնների վերաբերեալ» վերնագրով¹, որի հիմնական խնդիրը սոցիալ-տնտեսական պատմութեան ոլորտն էր: Սակայն լայնախոհ հեղինակը նաեւ մանրամասն աղբիւրագիտական ակնարկ տուեց Երեւան քաղաքի պատմութեան մասին՝ նախորդ կարծիքների որոշակի ճշգրտումներով, եւ դա հետագայում օգտագործեցին ու յղեցին մեր մայրաքաղաքի պատմութեան յաջորդ մեծ գիտակները՝ Կարօ Ղաֆաղարեանը եւ Թադեոս Յակոբեանը²: Կ'ուզէի յուսալ, որ իմ այս հետազօտութիւնը կարող է արժանի տուրք համարուել այդ մեծ հայագէտների յիշատակին:

Այս հետազօտութեամբ ես փորձում եմ պատասխան տալ այն գլխաւոր հարցին, թէ ե՞րբ եւ ինչո՞ւ, այսինքն՝ ո՛ր կոնկրետ պատմական փոփոխութիւնների արդիւնքում պիտի Երեւան քաղաքի կենտրոնը տեղափոխուէր Էրեբունի-Արինբերդից դէպի ներկայ կենտրոն: Դրա պատասխանն անպայման պիտի գտնել՝ առնուազն փարատելու համար հիմնականում ազրբեջանցի եւ թուրք պատմաբանների այն կասկածը, թէ Էրեբունին ու հետագայ Երեւանը (Երեւանի բերդի շուրջը) նոյն քաղաքները չեն: Միանգամից նշեմ, որ ըստ ներկայումս յայտնի ողջ աղբիւրագիտական նիւթի մեր քննութեան՝ բաւականին իւրօրինակ Երեւանի բերդը (Ք.ա. 782թ. Բիախնելիի հզօր Արգիշթէ Ա արքայի հրամանով ամայի վայրում հիմնադրուած Արին-բերդ-Էրեբունիէից³ 4կմ հեռու), որի տեղը Հրազդանի ձորալանջին բնականից պաշտպանուած է միայն մէկ՝ արեւմուտքի կողմից, կարող էր

1 ՏՀԳ, 1947, Հ^տ 5, էջ 69–78:

2 Կ. Ղաֆաղարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (հնագոյն ժամանակներից մինչև 1500 թ.), Երևան, 1969:

3 Էրեբունի-Երեբոն-Երևան անուան գիտական ստուգաբանությունը (=«Երջանիկ քաղաք») հին յոյների Դելփեան Ապոլոնի տաճարի գուշակի հասանութեամբ հիմնադրուած քաղաքների անունների գուգահեռով՝ «Օլիա-պոլիս») տես Յ. Կարազեօղեան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում. Մեպագիր տեղանուններ (Այրարատում և յարակից նահանգներում), Երևան, 1998, էջ 79–82:

կառուցուած լինել *Ձ դ. վերջին, Սասանեան Իրանի եւ Բիւզանդիայի միջեւ Հայաստանի երկրորդ բաժանման արդիւնքում*⁴:

Իր երկը 3 փուլով՝ 643, 650 եւ 659թթ. գրած⁵ Սեբիոս պատմիչը դրանցից առաջինում նկարագրել է Մեծ Հայքի երկրորդ՝ 591թ. բաժանման տուեալ սահմանագիծը եւ նշել Հրազդան գետը, ապա Կոտայք գաւառը (բիւզանդական մասում)՝ մինչեւ Գառնի գիւղաքաղաք⁶ (աշխարհացոյցեան Մազազ գաւառում), որը բոլորի համոզմամբ՝ պարսից մասում էր: Սրան աւելանում է յունարէնով պահպանուած՝ այսպէս կոչուած «Նառացիո»-ի ու նրան յանգող վրացական մի աղբիւրի (Արսէն Սափարեղու) տեղեկութիւնը, ըստ որի՝ *Ձ դ. վերջերին Հայոց Մովսէս Եղիվարդեցի կաթողիկոսը (574–604թթ.) ասում էր, թէ չի անցնի Ազատ գետը ու չի գնա խոնարհուելու հռոմեացիին*⁷: Նման վկայութիւն ունի նաեւ Յովհաննէս Դրասխանակերտցին. «Յետ այսորիկ, ըստ հրամանի կայսերն Մաւրկայ, զՅոհան ոմն ի գաւառէ Կոզայ, ի Բազարան գեղջէ, կացուցանեն կաթողիկոս յունական կողմանն՝ բնակեցուցանելով գնա ի քաղաքագիւղն Աւան, ուր եւ շինեացն իսկ ինքնին Յոհան զպայծառակերտ քաւարանն սուրբ եւ շուրջանակի նորայ արդարեաց կալուածս կայանի իւրոյ: Իսկ մեծ հայրապետն Աբրահամ, ըստ նախասաց բանին, ի Դուին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ, վասնզի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»⁸: Նախորդ հետազոտողներից ակադ. Սուրէն Երեմեանը եւ Բաբէկէն Յարութիւնեանն իրենց բոլոր քարտէզներում, ցաւօք, անտեսել են Սեբիոսի վկայութիւնը եւ Կոտայքի (ուր Աւան գիւղն էր՝ բիւզանդամէտ հայ քրիստոնեաների հիմնած հակաթոռ կաթողիկոսարանով) ու Ոստան

- 4 Հմմտ. Ա. Յակոբեան, Ոստան Հայոց գաւառի հիւսիս-արևմտեան սահմանը և Երևանի բերդի կառուցման ժամանակի խնդիրը, «Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը». միջազգային Բ գիտաժողով՝ նվիրված հայագետ-բյուզանդագետ Կարեն Յուզբաշյանի (1927–2009) ծննդյան 90-ամյակին, Նյույորքի ժողովածո, Երևան, 2017, էջ 197–206:
- 5 Մանրամասն տնն Ա. Յակոբեան, Սեբիոսի Պատմության հատուածարժանման խնդիրը և Ջուարթոնցի տաճարի կառուցման մասին գլուխը, Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Երևան, 2005, սն. 213–270:
- 6 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմություն, Չորրորդ տպագրություն, բաղդատությունը ձեռագրաց, հանդերձ առաջարանի և ծանօթագրությունները ի ձեռն Սո. Մալխասեանց, Երևան, 1939, գլ. Ժ, էջ 47, Պատմություն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, գլ. ԺԲ, էջ 84 («...մինչև ցգետն Հուրագդան, և գաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի...»):
- 7 «Մովսէս կաթողիկոսը ուշադրություն չդարձրեց [կայսեր] հրամանին՝ ասելով. «Ես չեմ անցնի Ազատ գետը, չեմ ուրի փոսն հացը և չեմ խմի ջրախսան տաք զինի»» (La Narratio de rebus Armeniae, Edition critique et commentaire par G. Garitte, Louvain, 1952, p. 42, § 115, Հր. Բարթիկեան, «Narratio de rebus Armeniae» յունարէն թարգմանությամբ մեզ հասած մի հայ քաղկեդոնական սկզբնաղբիւր, «Բանբեր Մատենադարանի», հ. 6, Երևան, 1962, էջ 467):
- 8 Յովհաննէս կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 73, Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, ՄՀ, հտ. ԺԱ., Ժ. դար, Անթիլիս, 2010, էջ 401, Yovhannēs Draxanakertc'i, Histoire d'Arménie, Introduction, traduction et notes par P. Boisson-Chenorhokian, Lovanii, 2004, p. 94.

Հայոց գաւառի միջեւ (կոչուած նաեւ՝ Ոստան Դւնայ՝ Դուին եւ Արտաշատ մայրաքաղաքներով) սահմանը Արաքսից բարձրացրել ղէպի Գառնի լու Ազատ գետով: Այնինչ պարզ է, որ աղբիւրագէտը պարտաւոր է սահմանը դժեւ ե՛լ Հրազդանով (նրա ստորին հոսանքով), ե՛ւ Ազատի գետագծի ինչ-որ կտորով՝⁹ յետոյ էլ հասցնելով Գեղամայ լեռնաշղթային (որով անցնում էր Այրարատ նահանգի սահմանը Սիւնիքի հետ):

Սակայն Հրազդանի ստորին հոսանքի ափագծի ո՞ր կէտից պիտի Ոստան Հայոցի սահմանը թեքուէր արեւելք ու գնար ղէպի Ազատի գետահովիտ: Ահա այստեղ առաջ է գալիս Երեւանի բերդի խնդիրը, որը գտնւում է նոյնանուն էրեբունէ-Երեւանից շուրջ 4 կմ հիւսիս-արեւմուտք: Ըստ էութեան՝ ակնյայտ է, որ այդ բերդը ինչ-որ մի պահի կառուցուել է էրեբունէ-Երեւան բնակավայրի համայնքային հողատարածքի մի անկիւնում (վերջինս գոնէ բիաինական եւ անտիկ շրջանում խոշոր քաղաք էր, որը Ք. յ. Բ. դ. Տերվան Երօսա < *Երօսա[v] > ձեւով, թերեւս, յայտնի էր նաեւ Կլաւդիոս Պտղոմէոսին¹⁰, իսկ Ե. դ. վերջում՝ «Հնոց եւ նորոց պատմութիւն Դաւթի եւ Մովսէսի Խորենացոյ» վերնագրով վարքագրական մի փոքր երկի անանուն հեղինակին¹¹), ինչի պատճառով էլ ահա ստացել է նոյն անունը. այլ ոչ թէ՛ քաղաքի բնակչութիւնը կամաց-կամաց է տեղափոխուել էրեբունէ – Արին-բերդից ղէպի ներկայիս կենտրոն («մի կողմի վրայ տարածուելու հետեւանքով»)՝¹²: Ըստ այսմ՝ շրջակայ երկու գաւառների՝ Կոտայքի եւ Ոստան Հայոցի միջեւ սահմանը չէր կարող անցնել էրեբունէի ու նոր բերդի արանքով, եւ բնակավայրի ողջ հողատարածքը պիտի լինէր զրանցից կա՛մ մէկում, կա՛մ միւսում:

Պարզ է, որ վերոնշեալ գիտնականները հետեւել են Ժ. Գ. մատենագիր Վարդան Արեւելցուն, որն իր «Աշխարհացոյց»-ում Կոտայք գաւառի մասին գրում էր,

9 Ըստ Էդ. Դանիելեանի և այլոց մի շտապողական մօտեցման՝ սահմանն իբրև թէ անցել էր հրազդանի վերին հոսանքով, որից յետոյ իջել էր Գեղամայ լեռների լանջերով ու Ազատ գետով (տես Է. Դանիելյան, Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանումը (591–629), ԼՀԳ, 1986, ՀՊ 8, էջ 56):

10 **Claudii Ptolemaei** Geographia, Ed. **C. Müller**, Vol. I, Pars I, Parisiis, 1901, V, 12, 7, p. 944, **Ptolemaios Claudios**, Handbuch der Geographie, Griechisch – Deutsch, Herausgegeben von **A. Stückelberger** und **G. Grasshoff**, Basel, 2006, V, 13, 16, p. 553. Ի ղէպ, Պտղոմէոսի միս հատուածում յիշուած է **Կոզալա** (Κοζάλα) բնակավայրը, որը, գուցէ, կարելի է համադրել մեզ հետաքրքրող թաղամասի **Կոզոն** անունն հետ (**Claudii Ptolemaei** Geographia, V, 12, 5, p. 939; **Ptolemaios Claudios**, Handbuch der Geographie, V, 13, 11, p. 551):

11 Հնոց և նորոց պատմութիւն վասն Դաւթի և Մովսէսի Խորենացոյ, Թուղթ Դիոնէպիոսի, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 80–81 («և Մովսէս ծածկեր զինքն կարկատուն զգետով և գծով կերպարանաւք գնացեալ ի գե[լ]ի մի ի Քաղաքադաշտին և կացեալ անդ որպէս մուրացիկ, և ոչ ոք էր, որ ճանաչէր զնա. իսկ Դաւիթ և Մամբրէ և Պաղոս և Աբրահամ՝ ընկերք Մովսէսին, կացին **Երևանի**: Եւ էր ի ժամանակին յայնմիկ կաթողիկոս Հայոց Տէր Գիւտ՝ աշակերտակից Մովսէսի». այստեղ և յետայսու բնագրերում ընդգծումներն իմն են – Ա. Յ.): Հմմտ. **Ա. Տերյան**, Երևան անվան ծագման շուրջ, – «Երևան». Գիտական հոդվածների ժողովածոյ, ՀՊ 2, Երևան, 2009, էջ 130–138:

12 Այդպիսի շտապողական պնդում տես օր.՝ **Կ. Ղաֆադարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 16բ:

Թէ այնտեղ էին Չագապանքն ու Երեւանը¹³: Սակայն մենք ունենք նաեւ աւելի հաւաստի մի աղբիւր յաջորդ ԺԴդ. սկզբից՝ Տիրացու ժամանակագրի վկայութիւնը, որտեղ նա իր ընդօրինակած (1336թ., Սուրխաթում) Վարդան Այգեկցու ժողովածոյի վերջում թողած Յիշատակարանում գրում է. «Ես՝ Տիրացու ողորմելի ծոյլ քահանայ մեղօք ի լի, ի գաւառէն Արշատի, ի քաղաքէն Երեւանի, որդի Սարգիս քահանայի, որ է եւ էր ի խեղճ հալի, յօտար աշխարհս այս եկի, ի Ղրիմ քաղաքս Աւզպէկղանի, յեկեղեցիս պարոն Շահնշահի. զգիրքս գրեցի զՎարդանի...»¹⁴: Ահա այս Արշատ գաւառանունը՝ գրուած պատուոյ նշանի տակ, այլ բան չի նշանակում, քան Ար[տա]շատ, եւ այլ բանի չի վերաբերում, քան աշխարհացոյցեան Ոստան Հայոց գաւառին (լաւ յայտնի է նաեւ, որ Վարդան Արեւելցին յաճախ եղում է իր ժամանակի փոփոխուած իրողութիւններից եւ մասնաւորապէս՝ գաւառները ներկայացնում շատ աւելի մեծ ընդգրկումով, քան էդ. անանուն հեղինակի «Աշխարհացոյց»-ում էր¹⁵): Արդ, եթէ պատկերացնենք Երեւանն իր նշուած հողատարածքներով Ոստան Հայոց գաւառում (աւելի կոնկրետ՝ նրա հիւսիս-արեւմտեան անկիւնում), այդ դէպքում մենք հասնում ենք Հրազդանի ձախ մեծ վտակ Գետառի հին հունի խնդրին:

Բանն այն է, որ, ինչպէս ակնյայտ ցոյց է տալիս աշխարհագրական հորիզոնականների դիտարկումը, սկսած Աբովեանի պոլրակին արեւելքից յարող հատուածից Գետառի ներկայ հունը լոկ ջրանցք է, որը տարել են Նորք-Մարաշի ու Այգեստանի լանջերի փեշերով՝ խնդիր ունենալով ոռոգել իր այգիներով յայտնի Երեւանի կենտրոնն ու հարաւը մինչեւ Զրվէժ վտակին հասնելը («Հայրենիք» կինոթատրոնի դիմաց): Ըստ այդ նիշերի՝ հին Գետառը հոսել է Աբովեանի պոլրակով մինչեւ «Պոլիտեխնիկ», թէքուել դէպի Ֆրանսիայի հրապարակ, ապա Մաշտոցի պողոտայի ու Կողբացու փողոցի արանքով հասել քաղաքապետարանի հրապարակ, որտեղից էլ գինու գործարանի առջեւով Հրազդանին է միացել՝ ուշ միջնադարում կառուցուած (կամ վերակառուցուած) Կարմիր կամուրջ իջնող մի ձորակով¹⁶. այն լաւ երեւում է Երեւանի՝ Վ. Նազարեւի 1858թ., Ա. Ստոցկու 1865թ., Ղ. Ալիշանի 1880թ. եւ ուրիշների յատակագծերում («պլաններում»)¹⁷: Դրանցում լաւ երեւում

13 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, Քննական հրատարակութիւն Հ. Պերպերեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Բարիզ, 1960, էջ 14, 31 («Կոտայք Երևան քաղաքն է իր վիճակով, և Չագապանքն անդ է»):

14 ՄՄ, Մեսրոպ Մագիստրոսի արխիւ, թղթ. 28, էջ 335՝ ըստ Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (ինագոյն ժամանակներից մինչև 1500թ.), էջ 293; ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, Ե. Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 72, Ն. Ակիսեան, Հին Երևանը, «Հանդէս ամսօրեայ», 1934, Հ^փ 5-7, էջ 328:

15 Անանուն Է դարի, Աշխարհացոյց, Գիտա-քննական քննագիր Ա. Յակոբեանի, «Հանդէս ամսօրեայ», ՃԻԷ տարի, Վիեննա-Երևան, 2013, սն. 35-194:

16 Երախտապարտ եմ շատ երկրաբանների ու ճարտարապետների, ովքեր ինձ հետ մանրակրկիտ քննարկել են այս հարցը, և յատկապէս՝ Հայկ Մելիք-Ադամեանին ու Երևանի երախտաշատ գլխաւոր ճարտարապետ Գուրգէն Մուշեղեանին:

17 Հմտ. մեր յստեղած-նկարներում (Հ^փ 2): Վերը նշում և ուրիշ շատ յատակագիծ-«պլաններ» տես օր.՝ հետևեալ ժողովածոյում. Երևանը քարտեզներում և հատակագիծներում, Մաս I, Երևան, 2008, էջ 27-44:

են քաղաքի կենտրոնի հիւսիս-արեւելք – հարաւ-արեւմուտք առանցքով անցած Գետառի պատմական հունի գիծը մատնանշող՝ ԺԹ-ը. հորիզոնականները, ինչպէս նաեւ Կոզեռն-Կոնդի բլրի հարաւային, ըստ ամենայնի՝ բերդակիր բարձունքը (տե՛ս Երեւանի նոր գլխաւոր յատակագծում, նկ. 1): Այդպէս է նաեւ Երեւանի գլխաւոր յատակագծի «Աբովեանի պուրակ» պլանշետի հատուածում (տե՛ս նկ. 2), ուր պարզ երեւում է Հերացի փողոցի բարձր հորիզոնականները կտրող-անցնող Գետառի նոր հունը: Այդպէս է եւ 1930թ. ստեղծուած Աբովեանի շրջանի՝ ՀՍՀ Ա հատորում գետեղուած քարտէզում (տե՛ս նկ. 3), ուր Գետառը հասցուած է Հրազդանին հէնց Երեւանի կենտրոնում՝ դրանով համապատասխանելով ցարական 5-վերստանոց ռազմական քարտէզների ականդոյթին:

Այս ամենից բացի՝ լաւ յայտնի է, որ դարաւոր ախոյեաններ Սասանեան Իրանն ու Բիւզանդական կայսրութիւնը Հայաստանի եւ Միջագետքի թէ՛ առաջին, թէ՛ երկրորդ բաժանման ժամանակ իրար դէմ անվերջ սահմանաբերդեր էին կառուցում, որոնք դիմացինն անխնայ քանդում էր իր յաջողութեան դէպքում (օրինակներ՝ Դարա-Մծբին, Կիթառիճ-Ափում, Քղիմար-Նփրկերտ, 591թ. աղստեւեան սահմանագծում՝ Կայծոն-Կայեան, թերեւս՝ Հաղարծին-«Աշոտ Երկաթի» բերդ եւն¹⁸): Եւ ահա՛ թւում է, որ Երեւանի բերդն էլ կառուցուել է Հրազդանով ու Գետառով անցնող սահմանագծի վրայ Սասանեանների կողմում (անշուշտ, արքայից արքայ Սոսրով Ապրուէզի հրամանով, բայց, ինչպէս ընդունուած էր՝ լաւագոյն հայ վարպետների ձեռքով): Ընդ որում, դիմացն էլ՝ Կոզեռնի կամ Կոնդի կոչուող բլրի հարաւային ծայրի ուռուցիկ գագաթին (պաշտպանական տեսանկիւնից՝ յարմար), բիւզանդական Մաւրիկիոս կայսրն է իր բերդը կառուցել (կամ միգուցէ՛ լոկ ամրացրել)¹⁹: Ահա այս դէպքում է պարզ դառնում, թէ՛ ո՛ր պատմական պահին է արդիական դարձել Ս. Սարգսից դէպի հարաւ, ըստ էութեան՝ բաց դաշտում (լոկ արեւմուտքից եւ մի փոքր էլ հիւսիսից բնական պաշտպանուած) եւ այն էլ՝ բաւականին մեծ չափերի ամրոցի կառուցումը: Այդ բերդն, իհարկէ, դեռ բազմիցս ամրացուել է հետագայ դարերում, նաեւ՝ ԺԶ–ԺԼ դդ. մահմեդական խաների ու փաշաների կողմից, բայց՝ ոչ աւելին (ազբիւրներում եւ գրականութեան մէջ առաւել յայտնի է 1583թ. օսմանեան զօրավար Ֆարհադ փաշայի կատարած աշխատանքը²⁰, որն ամրացրեց կամ միգուցէ՛ անգամ գոլգահեռ գծով հիմքից կառուցեց դէպի Իրանի կենտրոն ուղղուած հարաւային պարիսպները, որ մինչ այդ, բնականաբար, ամենաթոյն էին): Իսկ նոր բերդի կառուցումն էլ հէնց շատ հասկանալի պատճառ է դարձել, որպէսզի էրբբունէ-Երեւանի բնակչութիւնը կազմակերպուած

18 Հմմտ. նաև «Աշխարհացոյց»-ում (սն.155, նախ.211). «ամենայն քան ի լերանց Հայոց ի Դկոյաթ իջանէ, նախ՝ Քաղիթթ, որ բոլսէ ի լերանց Սալնայ և Սանասոյ, և իջեալ կտրէ յիբրեաց գ՛Նփրկեր[տ] և գ՛Քղիմար, որով բաժաննեցան Հոռոմք և Պարսիկք»:

19 Իբրև վարկած՝ այդ բերդը, գուցէ, կրել է մի յունահունչ անուն՝ *Կոծեռն-Կոզեռնի նման, որը յետոյ ժողովուրդը ստուգաբանել է բաւականին անմիտ «Կոզեռն»՝ «ուլտի ձագ» իմաստով: Համառոտ նշեմ, որ, իմ կարծիքով, շատ ատիլ մեծ է հասանալիանութիւնը, որ Յովհաննէս Տարսուեցի Կոզեռն վարդապետի մականունն է ԺԱ դարում առաջացել տուեալ թաղամասի անունից (որի եկեղեցում նա ծառայում էր), այլ ոչ թէ՛ հակառակը:

20 Մանրամասն տես օր.՝ Թ.Խ.Հակոբյան, Երևանի պատմությունը (1500–1800 թթ.), Երևան, 1971, էջ 21–23:

եղանակով տեղափոխուելի յարակից տարածք, մասնաւորապէս՝ հին Գետառի ափը, արդի քաղաքի կենտրոնը, որը նախկինում լոկ այգեստան-հողակտոր էր: Ի դէպ, ամրոցի հիւսիս-արեւմտեան անկիւնում 3-4 յարկի խորութեամբ պահպանուած կազեմատները պատերը մեզ վրայ աւելի շատ վաղ միջնադարի պաշտպանական ճարտարապետութեան տպաւորութիւն են թողնում (այդ կազեմատներից դէպի հիւսիս-արեւելք եւ դէպի հարաւ մի քանի կիլոմետրանոց գաղտնուղիներ են գնում²¹, որ ամենից շատ են գրաւում զբօսաշրջիկներին):

607թ. Հայոց Աբրահամ Աղբաթանեցի կաթողիկոսի պահանջած յայտնի «Ձեռնարկ»-նամակում (պահպանուած՝ «Գիրք թղթոց»-ում) յիշատակուող Երեւանը («Դաւիթ, Երեւանայ [երէց]») ²², անկասկած, արդէն այս նորապատկեր բնակավայրն էր: Հարկ է նշել, որ Երեւանի բերդ է յիշուած նաեւ Սեբիոսի երկի որոշ ուշ ձեռագրերում (աւելի վաղ երկու գրչագրերի ընթերցումը «Հէրեւան» է). Որդսպուլի եւ Արծափի բերդերից առաջ այն անյաջող շրջապատել էր արաբական զօրաբանակներից մէկը 647 կամ 648թ. արշաւանքի ժամանակ («Եւ եկին ժողովեցան ի Հէրեւան, եւ մարտեան ընդ բերդին եւ ոչ կարացին առնուլ») ²³: Սակայն, քանի որ այդ արշաւանքի երթուղին դեռ չէր հասել Այրարատին, ուսումնասիրողները հակուած են Երեւանի փոխարէն վերականգնել այլ հաւանական տեղանուններ՝ Կոգովիտից հարաւ, օր.՝ Թաղ. Ավդալբէգեանը՝ Առեստաւանը Բերկրիի մօտ (ենթադրելով նախնական «*Երաստաւան» տարբերակ) ²⁴, Գեւորգ Աբգարեանը՝ Հէրը (բնագիրը վերականգնելով «*Հէր եւ անդ...») ²⁵, էդ. Դանիէլեանը՝ Հերեան գիւղը Հարք գաւառում (Դաւիթ Անյաղթի ծննդավայրը) ²⁶:

Յիշենք նաեւ, որ Ժ. Յովհաննէս Դրասխանակերտցին է մի ուշագրաւ վկայութիւն պահպանել է-Ը դդ. Երեւան քաղաքագիւղի մասին, ընդ որում՝ յղելով իր նախորդ պատմագիրներին (ըստ ամենայնի՝ Շապուհ Բագրատունուն):

- 21 Ես հաւանական եմ համարում, որ այդ գաղտնուղիներից առաջինի ելքը հետագայում վերածուել է ԺԴ դարով թուագրուող՝ այսպէս կոչուած մոնղոլական գետնափոր դամբարանի (9 մ խորութեամբ), որը վերջին տասնամեակներում յայտնաբերուեց Ստանիսլաւսկոյ անուան թատրոնից քիչ ներքև. այդ դամբարանի մասին տե՛ս Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ. (հիմնական արդյունքները), Երևան, 2005, էջ 121-122: Իսկ երկրորդ գետնուղու ելքը, կարծես թէ, նշնարում է Երևանեան լճի ձախափնեայ ձորալանջին, Կողբ թաղամասում (ԴՕՍԱՖ-ի ստակակայանի դիմաց):
- 22 Գիրք թղթոց, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 200: Հմնտ. Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 147, ծանոթ. 41: Վերջինում իրաացիօրէն տե՛ս նաև. «...նոյն էջի կարծեցեայ երկրորդ յիշատակութիւնը – «Ձոջիկ Երևանից», ինչպէս պարզել է Ստ. Կանայեանցն Ուխտանէսի վրայ հիմնուելով, սխալագրութիւն է. պետք է լինի «Ձոջիկ Արամունից»: Հմնտ. Ստեփան Կանայեանց, Անյայտ գաւառներ հին Հայաստանի, Վաղարշապատ, 1914, էջ 66, ծանօթ. 4»:
- 23 Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, գլ. ԽԴ, էջ 118, Պատմութիւն Սեբէոսի, գլ. ԽԲ, էջ 145:
- 24 Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, էջ 145-147:
- 25 Պատմութիւն Սեբէոսի, էջ 145, տողատակ 11, էջ 314, ծանոթ. 512:
- 26 Է. Լ. Դանիէլեան, 647 թվականի արաբական արշավանքը Հայաստան, ՊԲՀ, 1982, Հ^ր 2, էջ 114, նոյնի՝ Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000, էջ 175-176:

«Դաւիթ, որ էր ի պարսիկ տոհմէ յազգէ թագաւորաց՝ աստանաւր եկեալ առ իշխանն մեծ Գրիգոր՝ խնդրէ առ ի նմանէ տալ իւր զքրիստոսական դրոշմն, զոր եւ խնդութեամբ իսկ զնա ընկալալ՝ հրամայէ կաթողիկոսին Անաստասայ տալ նմա զկնիք մկրտութեանն սրբոյ: Եւ վասն զի յառաջագոյն Սուրհան անուանիւր, ապա իշխանն մեծ ընկալեալ զնա ի ջրոյ սուրբ ավագանին՝ Դաւիթ զնա յորջորջէ յանուն հաւր իւրոյ. եւ տայ բնակութիւն նմա զգիւղն Չագ ի նահանգին Կոտայից, որ զկնի ամաց իսկ ի Դուին քաղաքի ընկալաւ զմարտիրոսական պսակն: Յայնմ ժամանակի ասեն լինել զկուրն, որ ի քաղաքագիւղն Երեւանի, զոր եւ բաւական քեզ ուսուցանեն զայնր պատերազմի զհանգամանս, որ նախքան զմեզ զնա պատմագրեցին»²⁷: ԺԲԳ. Ժամանակագիր Սամուէլ Անեցիին, անշուշտ, նոյն ճակատամարտի մասին յիշատակում է այսպէս. «ՈՎ. [=660թ.] Երեւանու կուրն, յորում զգիւրդն գտցես առ պատմագրութիւնս, առաջնոցն՝ Շապուհ եւ Ասողիկ յիշեն»²⁸: Անեցու այս պնդումը շփոթութեան վրայ հիմնուած սխալ է համարել կարծեցեալ Շապուհ Բագրատունու «Պատմութեան» հրատարակիչ Մեսրոպ եպս. Տէր-Մովսիսեանը²⁹, սակայն Մարգարիտ Դարբինեան-Մէլիքեանը տուեալ ճակատամարտի ժամանակը, որ պիտի կապուի Դաւիթ Դնեցու նահատակութեան տարուայ հետ (693 կամ 701թ.), արդէն իրատեսաբար վերագրել է 700–704թթ. արաբական արշաւանքի շրջանին (այդպիսով՝ իրաւացիօրէն մերժելով նաեւ արաբների 647/648թ. արշաւանքի հետ կապելու ցայսօր էլ շտապողաբար շրջանառուող տեսակէտը)³⁰: Ի դէպ, Յովհաննէս Դրասխանակերտցու տուեալ վկայութեան առիթով կարելի է նշել, որ ըստ դիտարկումների՝ մեր մատենագիրները «քաղաքագիւղ», «գիւղաքաղաք» կամ «աւան» եզրոյթները կիրառում էին, որպէս կանոն, ամրոցներ ունեցող բնակավայրերի համար՝ յատուկ տարբերելով դրանք «գիւղերից»:

Կարեւոր է արձանագրել նաեւ հնագիտական նիւթի մատուցած ուշադրաւ պատկերը: Ինչպէս լաւ երեւում է 1969թ. Ստ. Եսայեանի հրատարակած ամփոփիչ մենագրութիւնից եւ հետագայ աւելի համառօտ անդրադարձերից (Հայկ Յակոբեան, Ֆրինա Բաբայեան, Աղաւնի Ժամկոչեան), Երեւանի կենտրոնի հատուածում անտիկ եւ վաղ միջնադարի հատուկենտ նիւթեր յայտնաբերուել են միմիայն Գետաւի՝ մեր վերհանած վաղնջական հունի արեւմտեան ափերին՝ Կոզեռն-Կոնդի բլրի փեշերին (Օպերայի շէնքի տակ եւ Յովհ. Թումանեանի տուն-թանգարանի շրջակայքում)³¹: Եւ

27 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, էջ 92, Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանանի, էջ 414, Yovhannes Draxanakertc‘i, Histoire d’Arménie, p. 117.

28 Սամուէլի քահանայի Անեցոյ Հաւաքումը ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելումներով և ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 79:

29 Տե՛ս Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ, Ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ V–VI:

30 Մ. Դարբինյան-Մելիքյան, Դիտողություններ Հովհաննէս Դրասխանակերտցու «Պատմութեան» վերաբերյալ, ՊԲՀ, 1981, Հ^տ 3, էջ 154–164:

31 С. А. Есаян, Ереван (археологический очерк), Ереван, 1969, с. 41, Հ. Պ. Հակոբյան, Ծիծեռնակաբերդի 1998, 2007 թթ. հնագիտական ուսումնասիրությունների նախնական ար-

դա բնական է, քանի որ, ինչպես նշեցի, մինչև Զդ. վերջերը Գետառի պատմական հունի արեւելեան ափերին (ներկայիս կենտրոնում) լոկ հարեւան գաւառի սահմանակից բնակավայր Արին-բերդ-էրեբունէի այգեստան-հողակտորներն էին:

Բնական է, որ Կոզեռն-Կոնդի ամրոցը ցայսօր հնագիտորէն փաստագրուած չէ: Բայց Կոնդի բլրի՝ ամենայն հաւանականութեամբ բերդակիր լինելու վարկածի առումով չափազանց ուշադրաւ են Կարօ Ղաֆաղարեանի կռահումները (իհարկէ՝ նաեւ որոշ հնացած պնդումներով): Տե՛ս օր.՝ «Երեւան քաղաքը մօտ 6–7 հարիւր տարիների ընթացքում, մի կողմի վրայ տարածուելու հետեւանքով, եկել-հասել էր Կոնդի սահմաններին, իսկ աւելի ուշ, մեր թուականութեան IV–V դարերում, քաղաքի կենտրոն էին դարձել Կոնդն իբրեւ Միջնաբերդ, Հին Երեւան (Շահար) կոչուող թաղը...»³²: Աւելի ստորեւ. «Կարելի է ենթադրել, որ Կոնդի հին եկեղեցին [Ս.Յովհաննէսի տեղում, մինչև 1679թ. երկրաշարժը – Ա. Յ.] հայոց բերդի եկեղեցին է եղել վաղ միջնաբերդում»³³: Մի փոքր յետոյ՝ արդէն մանրամասն. «Տարբեր ժամանակներում Երեւանն ունեցել է տարբեր բերդեր: ...Հնագոյնը՝ Էրեբունի ուրարտական ամրոցն է եղել... Երկրորդը Երեւանի վաղ միջնադարեան անառիկ ամրոցն է, որի տեղն այժմ անյայտ է, բայց յիշատակուել է պատմագիրների երկերում»³⁴: ...Եթէ նկատի ունենանք հին Երեւանի թաղերը (եւ յատկապէս Շահարը), կարծում ենք, որ քաղաքի բերդը կառուցուած պէտք է լինէր Կոնդի բլուրի վրայ, այսինքն՝ այն ժամանակուայ քաղաքի միակ յարմար տեղում, որն իշխում էր շրջապատի վրայ, գտնուում էր քաղաքի գլխին եւ մօտիկ էր Հրազդան գետին: / Յրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդէնը Երեւանում է եղել մեծ երկրաշարժից մի քանի տարի առաջ, 1673թ.: Նրա նկարագրութեան մէջ, ինչպէս եւ Երեւանի գծանկար համայնապատկերի վրայ, բացի Սարգարի բերդից, կայ նաեւ մի ուրիշ բերդ, որ Այծաբերդ անունն է կրում (Կետչի կալա): Այդ բերդի մասին Շարդէնը

դյունքները, «Հուշարձան». տարեգիրք Զ, Երևան, 2010, էջ 21–34, **Ֆ. Բաբայան, Ա. Ժամկոչյան**, Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015 (հայերէն, ռուսերէն և անգլերէն): Հմնտ. նաև Կատալոգ Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի, կազմեց **Ս. Ա. Եսայան**, հ. I, Եր., 1964, հ. II, Երևան, 1967 (հայերէն և ռուսերէն):

- 32 **Կ. Ղաֆաղարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 16բ (այստեղ ընդգծումը հեղինակինն է):
- 33 Նոյն տեղում, էջ 46ա, ծանոթ. 1: Որպէս պատահական վրիպում սրբագրելի է թում՝ «...վաղ միջնադարում»:
- 34 Յացորդ ամրոցի մասին հեղինակը բաւականին սխալաշատ գրում է մի քանի էջ յետոյ. «**Երրորդը** Սարգարի բերդն է, որի մնացորդները կային Հրազդանի գլխին դեռևս ներկայ դարի 20-ական թթ.: Բերդը կառուցել է 1583թ. թուրք Ֆահրադ փաշան, քաղաքից դուրս, բոլորովին նոր տեղում, որտեղ նախապէս ոչինչ կառուցուած չի եղել: (Առաքել Դարիժեցին գրում է, որ «թուրք ՌԼԲ (=1583) Երևան բերդ շինեցաւ» [էջ 488]: Երուանդ Շահագիզն իր գրքի մէջ մի քաղուածք է բերել Նորքում 1587թ. գրուած ձեռագրի յիշատակարանից, որի մէջ այդ բերդը կոչուած է **նորահիմն** [էջ 178]: Այդ տեղեկությունը ժամանակակցի մի վկայութիւն է այն մասին, որ Ֆահրադ փաշայի կառուցած բերդը հին հայկական բերդի հետ առնչութիւն չունի:)] Մի փաստ էլ այն է, որ մենք երեսնական թուականների սկզբից ի վեր, պաշտօնի բերմամբ հետևել ենք Սարգարի բերդի բռնած տարածութեան վրայ կատարուած բոլոր տեսակի հողային աշխատանքներին, երբեմն էլ ստուգողական պետումներ ենք կատարել այնտեղ, բայց հին բերդի և ընդհանրապէս հին մշակոյթի մնացորդներ չենք գտել» (այն տեղում, էջ 96բ–97ա):

գրում է. «Բերդին մօտիկ (խօսքը Սարգարի բերդի մասին է – Կ. Ղ.) ընդամենը մի հազար քայլ հեռու, գտնուում է նրա վրայ իշխող մի բլուր, ամրացուած երկշար պատերով եւ լաւ հրակնատներով, այդ ոչ մեծ ամրոցիկի մէջ, որ կոչուում է Կետչի Կալա (Այծաբերդ), կարող են տեղաւորուել երկու հարիւր մարդ»: / Այս փոքրիկ ամրոցը հնի մնացորդն է եւ ոչ թէ նրա ամբողջութիւնը, որ բացի բլուրից, որտեղ միջնաբերդն է եղել, նա տարածուած է եղել նաեւ շահաստանի վրայ, ընդգրկել նրա հիմնական մասը: Այստեղ է եղել հայ միջնադարեան անառիկ ամրոցը: Շարդէնի ժամանակ Երեւանի այդ բերդը կորցրած է եղել իր իմաստը եւ վերածուած բնակելի թաղի, որտեղ հայերի կողքին ապրել են նաեւ հայ բոշաներ, որոնք եկել են Երեւան Արեւմտեան Հայաստանից»³⁵:

Այս ամենից բացի մենք գիտենք նաեւ, որ 610թ. սկսած բիւզանդացիները ջախջախուեցին եւ մինչեւ իրենց Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի մատոյցներն ու Եգիպտոս հալածուեցին Սասանեան արքայ Խոսրով Ապրուէզի յաղթական բանակների կողմից, որոնց շարքում նաեւ հայկական զօրաջոկատներ կային՝ ամենայն հաւանականութեամբ, նախկինում Վրկան նահանգի նշանաւոր մարզպան Սմբատ Բագրատունու հրամանատարութեամբ (նա հետագայում՝ 616/618թ. Տիգրանու կայացած «Պարսից» ժողովից յետոյ դարձաւ առաջին «իշխան Հայոց»-ը³⁶): Աշխարհաքաղաքական այդ մեծ շրջադարձի արդիւնքում հայ ժողովուրդն ստացաւ հետեւեալ նոր եւ խիստ կարեւոր ու բարեբախտ պատմական իրողութիւնները. ա) վերացաւ Մեծ Հայքի երկդարեայ բաժանումը (385/387 թուականից ի վեր), բ) ստեղծուեց Հայոց ինքնավարութեան լրջագոյն՝ «իշխան Հայոց»-ի հաստատութիւնը (որը հետագայում պահեցին ե՛ւ կայսրերը, ե՛ւ խալիփաները, եւ որը Թ. դ. վերջին վերածեց Բագրատունեաց թագաւորական իշխանութեան)³⁷, գ) Հայոց եկեղեցին Տիգրանու 616/618թ. գումարուած «Պարսից» ժողովի վճռով արժանացաւ Սասանեան տէրութեան մէջ ամենաբարձր կարգավիճակի (այդ ժողովի առիթով էլ շարագրուել էր «Աշխարհացոյց»-ը՝ մի ծրագրային տեղեկատու փաստաթուղթ հայկական պատուիրակութեան համար, որը նշում էր միաւորուած Հայաստանի տեղը եւ սահմանները՝ ողջ օյկումենէի համատեքստում): Եւ այդ ժամանակ է, թերեւս, որ Գետառի հին հունը կորցրեց իբրեւ սահմանաբաժանի՝ իր արդիականութիւնը (այդպէս եւ, հաւանաբար, էսպէս աւերուած Կոզեռն-Կոնդի բերդը): Ջրի մեծ մասը դէպի Ջրվէժ (իր Ողջաբերդի ջուր-վտակով) տանելուց յետոյ այդ հունը վերածուեց սոսկ կենտրոնի այգիներն ու բերդի խանդակը ջրով մատակարարող ջրանցք-առուի: Իսկ 1864թ. ցարական իշխանութեան որոշումով Երեւանի բերդը քանդելուց յետոյ³⁸ (1950-ական թթ. նրա հիւսիսային եւ յարակից ճորագինեայ

35 Նոյն տեղում, էջ 93բ, 96ա–բ:

36 Մանրամասն տես Անանուն Է դարի, Աշխարհացոյց, Գիտա-քննական բնագիր Ա. Յակոբեանի, սն. 43:

37 Այդ ժամանակ Սասանեան նոյն արքայից արքայի հրամանով ստեղծուեցին նաև «իշխան Վրաց» և «իշխան Աղուանից» հաստատութիւնները:

38 «Երևանի բերդը իր գոյութիւնը պահպանում է մինչև 1864 թուականը: Այդ թուի մարտի 12-ին պաշտօնապէս ենթարկւում է լիկուիդացիայի [տրոյարական յղում է՝ «Кавказский календарь на 1868 год», отд. II, с. 134, на 1874 год, отд. II, с. 1252 և այլուր – Ա. Յ.], որից յետոյ

պարիսպների հարթեցումն աւերակների վրայ Ռաֆ. Իսրայելեանի հանճարեղ նախագծով կառուցուեց զինուկ գործարանի բերդանման շէնքը³⁹), ինչպէս նաեւ Յաղթանակի կամրջի, Մաշտոցի պողոտայից դէպի այն տանող լայն փողոցի եւ Երեւանի Հէփ-ից սկսուող ու Ս. Սարգիս եկեղեցու եւ զինուկ գործարանի տակով անցնող Նորագաւթի զօրեղ ջրանցքի կառուցումով իր հետքերը վերջնականապէս կորցրեց նաեւ Գետառի՝ Հրազդանին միացնող ձորակը:

Վերջին ամիսներին Կոնդ թաղամասում 3 անգամ տեղի սիրալիր բնակիչների, ինչպէս նաեւ հնագէտներ Գագիկ Սարգսեանի եւ Ֆրինա Բաբայեանի հետ շրջելիս ինձ համար ամենից տպաւորիչը 1–1,5 յարկանի տներով յիբաւի ամրոցաձեւ կառուցապատումն էր՝ ուղիղ բլրագագաթին աստղաձեւ փոքրիկ հրապարակով (տե՛ս նկ. 1): Իսկ կէս կմ երկարութեամբ մէկ շարքով, կիսաշրջանաձեւ, 12 մ լայնութեամբ եւ մինչեւ 1,5 մ հաստութեամբ պատերով մէլիքական, խանական, հիւրանոցային տները, բաղնիքը, որոնք ըստ ամենայնի ծառայել են քաղաքի մահմեդական ընտրախաւին ու մեր օրերում նկարագրուել ճարտարապետ Մարիետա Գասպարեանի ու «Պոլիտեխնիկի» մագիստրանտներ Սանահին Մանասեանի եւ Մերուժան Առաքելեանի կողմից⁴⁰ (արժանանալով Ֆ. Բաբայեանի եւ Ա. Ժամկոչեանի դրուատանքին)⁴¹, իմ ենթադրութեամբ՝ 1679թ. աւերիչ երկրաշարժից յետոյ Սեֆեան շահերի հրամանով Երեւանը վերականգնող խանական-կոլոսակալական վարչակազմը կառուցել է հին բելգանդական ամրոցից մնացած պարիսպների հիմքերի վրայ: Այդ շարքն աւարտուում է ամենահարաւում՝ Լէօ-Պարոնեան փողոցների հատման կէտի վերելում յառնող թեք լանջին Հաջի Նովրուզ Ալիբէկի կառուցած պարսկական մզկիթի (1687թ. արաբերէն կարճ վիմագրով) պատերի ու սենեակների մնացորդներով (Երեւանի Յուշարձանների համահաւաքում թաղամասի անունով կոչուում է թափաբաշի մզկիթ⁴²), որի մի շինութիւնը կանգնած է թւում Փրանսիացի ուղեգիր Ժան Շարդէնի 1672–1673թթ. նկարագրած՝ Երեւանի հին կամ վաղնջական կոչուած աշտարակի («Tour antique à Iriwan») հիմքերի վրայ (ճանապարհորդի ուղեկիցը երկու տարբերակով նկարել է դա մօտաւորապէս Այգեստան-Սարի-թաղի բարձունքից, որն, ի դէպ, նախորդ դարերում կոչուում էր Դաւայաթաղ թաղա-

բնակիչները աստիճանաբար քանդում են նրա պաշտպանական կառուցուածքները՝ պարիսպները, աշտարակները և այլն: 1880-ական թթ. մէկը միւսի յետևից արդէն քանդում էին նախկին բերդի պաշտպանական կառուցուածքներից շատերը և սարդարի մոայլ տիրապետութիւնը յիշեցնող շատ շէնքեր: Բերդի գրաստ շրջանը աստիճանաբար ձուլում է քաղաքի հետ...» (Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1801–1879 թթ.), Երևան, 1959, էջ 584–585):

39 Յաւելելի է, որ Երևանի բերդի հիւսիսային կառուցումը պարսկապատի հարթեցման պատճառով արդի Արգիշտի փողոցը բնահողի համեմատ բարձր է մօտ 1,5 մետրով:

40 Ջերմ երախտագիտութիւնս եմ յայտնում նրանց՝ չիրատարակուած նիւթերն ինձ տրամադրելու և հանգամանալից խորհրդատուութեան համար:

41 М. Гаспарян, Архитектура Еревана XIX – начала XX века, Ереван, 2008, Ֆ. Բաբայան, Ա. Ժամկոչյան, Ուրվագծեր հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, 2015:

42 Երախտագիտութիւնս եմ յայտնում Համահաւաքի մասնագէտ Յասմիկ Կարապետեանին՝ տարիներ շարունակ համակարգուած բազմաբովանդակ նիւթերն ինձ տրամադրելու և խորհրդատուութեան համար:

մաս՝ «Ուղտերի կացարան», եւ յայտնի էր քարաւանատէր առեւտրականներին հրապուրող իր մատչելի իջեւանատներով. տե՛ս նկ. 8)»⁴³: Արդեօ՞ք այդ աշտարակը հէնց Զդ. այն «բիւզանդական» բերդից չէր պահպանուած⁴⁴:

Աշտարակը Շարղէնի բնագրում նկարագրուած է այսպէս. «Եպիսկոպոսարանի մօտ [ըստ համայնապատկեր-նկարի, որի դիտարկումը հարկ է կատարել չափազանց ուշադիր, սա՛ աւելի մեծ հաւանականութեամբ՝ հետագայի Ս. Զօրաւոր եկեղեցու տեղում մինչ մեծ երկրաշարժը եղած կառոյցն է – Ա. Յ.] գտնուում է մի հին աշտարակ՝ կառուցուած կոփածոյ քարից: Ես չկարողացայ իմանալ նրա շինութեան տարին եւ ո՞ւմ ձեռքով եւ ի՞նչ նպատակով շինուած լինելը: Արտաքուստ նրա վրայ երեւում են արձանագրութիւններ. տառերին նայելով՝ հայերէնի են նման, բայց հայերը չեն կարողանում կարդալ: Այդ աշտարակը հին է եւ ունի մի առանձին ճարտարապետական ոճ: Մէջը բոլորովին դատարկ է, իսկ չորս կողմը կան բազմաթիւ աւերակներ, որոնց դիրքին նայելով՝ կարելի է եզրակացնել, որ այդտեղ շինուած է եղել մի վանք, իսկ աշտարակը եղել է նրա մէջ: Եպիսկոպոսարանի դէմ առ դէմ գտնուում է մի մեծ շուկայ...»⁴⁵: Նոյն բնագրի նոր թարգմանութիւնն է. «Քաղաքում կան բազմաթիւ եկեղեցիներ: Գլխաւորներն են՝ առաջնորդարանը, որը կոչւում է Իրկու-երես [Երկուերես]⁴⁶ եւ Կաթողիկէն: ...Եպիսկոպոսարանի մօտ կայ մի հին, սրբատաշ քարերով կառուցուած աշտարակ, որի նկարը տեղադրել եմ այստեղ: Ես չկարողացայ իմանալ նրա ո՛չ կառուցման ժամանակը, ո՛չ կառուցողին եւ ո՛չ էլ՝ թէ ինչ նպատակի է ծառայել: Դրսից կան արձանագրութիւններ, որոնք տեսքով նման են հայերէնին, բայց հայերը չեն կարողանում դրանք կարդալ: Այս աշտարակը հնամենի [բառացի՝ անտիկ – Ա. Յ.] աշխատանք է եւ եզակի է իր ճարտարապետութեամբ: Այն ունի արտաքին պատեր եւ ներքին տարածութիւն: / Դրսում եւ շրջակայքում կան բազմաթիւ աւերակներ, որոնց տեղադրութիւնից կարելի է ենթադրել, որ այնտեղ եղել է վանք եւ սրահ կենտրոնում այդ աշտարակն է վեր բարձրացել»⁴⁷:

43 Մանրամասն տես **Կ. Ավետիսյան**, Երևանի պատմությունը անունների մեջ, Երևան, 1969, էջ 19:

44 1679թ. մեծ երկրաշարժից աներուած այդ ուշագրաւ շինութեան մասին հմմտ. նաև **Հ. Ին-ճիճեան**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն I, Կ. Ս. Վենետիկ, 1806, էջ 254, **Յովհ. եպս. Շահխաթունեանց Շահրիարեցի**, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, Կո. Բ, Ս. Էջմիածին, 1842, էջ 148–149, **Կ. Ղաֆաղարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 101; **Թ. Խ. Հակոբյան**, Երևանի պատմությունը (հնագոյն ժամանակներից մինչև 1500թ.), էջ 273–274, **Ռ. Հարությունյան**, Հին Երևանի ճարտարապետական առեղծվածների պարզաբանումը, Երևան, 2007, էջ 12–15, 42–44 (հիշտ է, վերջին երկուսը՝ ծայր աստիճան անյաշող):

45 *Stn Voyages de Monsieur le chevalier Chardin, en Perse, et autres lieux de l'Orient. Tome premier, Amsterdam, MDCCXI [1711] (առաջին հրատարակութիւնը՝ Londres, 1686), Путешествие Шардена по Закавказью в 1672–1673 гг., Пер. Е. В. Бахутовой и Д. П. Носовича, С пятью рисунками, Тифлис, 1902, с. 242–243 («Эривань в конце XVII в.» վերնագրով ներդիր ետաձայ նկարը՝ էջ 176–177-ի միջև), Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 119–120:*

46 Ֆրանսերէն՝ «Ircou-yerize, c'est à dire deux visages».

47 **Ժան Շարղեն**, Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ, Ֆրանսերենից թարգմ. **Ս. Բոչոյանը**, «Հուշարձան», տարեգիրք Գ, Երևան, 2005, էջ 209–210:

Ժ. Շարդէնի նկարագրած այս աշտարակի պատին հայերէն տառերով, բայց հայերի համար անհասկանալի վիմագրերի առիթով խիստ ուշագրաւ է Աւանի Ձդ. յովհաննաշէն եկեղեցու արտաքուստ արեւելեան պատի վրայի երկլեզուեան արձանագրութեան գոլգահեռը (փորագրուած վերծանողի վերջնական եզրայանգմամբ՝ 633թ.): Նրա բնագրում հինգ բառ հայերէն է (ընդ որում՝ երկուսը պատուոյ նշանի տակ համառօտուած), բայց միւս բառերից երկուսը հայերէն ծածկագիր են, իսկ երեքն էլ՝ յունարէն, այսինքն՝ սովորական հայ մարդու համար հասկանալի չեն: Ըստ Կ. Ղաֆաղարեանի՝ «Այդ արձանագրութիւնը փորագրուած է հնագոյն բոլորածեւ երկաթագիր գրով, որի մէջ, երկրորդ տողում, կան յունարէն գլխագիր բոլորածեւ գրով գրուած բառեր: Հայերէն գրերի մէջ էլ կան անհասկանալի բառեր արձանագրութեան առաջին տողում եւ վերջաւորութեան վրայ: Արձանագրութիւնն սկսում է «Տէր Եզր...» եւ այնուհետեւ հինգ բաղաձայն գրերից հետո «Կաթողիկոս» բառով, ուստի եւ պատկանում է եօթերորդ դարի երեսնական թուականներին, որովհետեւ Եզրը կաթողիկոս է եղել 630-ից մինչեւ 641 թիւը»⁴⁸: Այս եռատող արձանագրութեան վերծանուած բնագիրն է. «ՏԵՐ ԵԶՐ ԶՈՒԿԶ [=ՀԱՅՈՅ] ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՃՇՄԱ/ՐԻՏ ΔΩΛΟΣ ΤΩ ΘΕΩ [=ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ]: ՍԱՄԷՂ ՇՈՒԱ/ՈՒԼ [=ԾԱՌԱՅ] ՔՐԻՍՏՈՍ»⁴⁹:

Այս եզակի աշտարակը ցայսօր չի դարձել հայ արուեստի եւ ճարտարապետութեան պատմաբանների լրջագոյն քննութեան առարկայ, եւ ես ենթադրաբար բացատրում եմ դա նրանով, որ կառոյցն առաջին հայեացքից մի փոքր նմանութիւն ունի մահմեդական աշտարակ-դամբարաններին (օր.՝ Նախիջեւանում՝ ԺԲդ. Մոմինէ խաթունինը կամ Արգաւանդ-Չաֆարաբաղում՝ 1413թ. Կարա-կոյունլու էմիր Փիր-Հուսէյնինը, տե՛ս նկ. 4–7)⁵⁰: Սակայն ուշագիր դիտարկման դէպքում ակնյայտ է դառնում, որ մահմեդական դամբարանի վրայ ոչ մի դէպքում չէր կարող լինել ոչ միայն հայերէն տառերով վիմական արձանագրութիւն (անկախ նրանից, որ Շարդէնի ծանօթ հայերը դա չէին վերծանում), այլեւ կենդանիների այնպիսի պատկերներ, որպիսիք յստակ երեւում են Փրանսիացի ճանապարհորդի նկարում (տե՛ս նկ. 9–10): Այնինչ, իմ կարծիքով, աշտարակն ամենից աւելի նման է, օր.՝ Աթենքում պահպանուած՝ այսպէս կոչուած «Քամիների աշտա-

48 Կ. Ղաֆաղարյան, Աւանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 5: Աշխատանքի վերջին ամփոփումների մէջ (էջ 26) տե՛ս նաև. «...արձանագրությունը կազմել են Աւանի տաճարի քաղկեդոնիկ միաբանները, առանց Եզրի անմիջական մասնակցութեան, նրա դասանափոխութեան առթիւ... / ...հետևապէս և Աւանի արձանագրությունը փորագրուած պէտք է լինի 633 թուականին»:

49 Նոյն տեղում, էջ 7 և 10: Տե՛ս նաև Կ. Ղաֆաղարյան, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, էջ 190–192:


50 Օր.՝ Վիկիպեդիայի «Мавзолеи туркменских эмиров» յղումով (<https://ru.wikipedia.org/wiki>) – «Мавзолей туркменских эмиров – туркменский мавзолей, воздвигнутый в 1413 году при правившемс 1411 года Пир-Хусейне, сыне Эмира Саада из династии Кара-Коюнлу в Чухур-Саадском вилайете (по другим данным – при самом Эмир Сааде) в Восточной Армении. Расположен мавзолей в селе Аргаванд (бывший Джафарабад), в 8 км на запад от Еревана, по дороге, ведущей в Эджмиацин». Տե՛ս նաև Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Հազարամյակն աշխատանքները Հայաստանում 1990–2003 թթ., էջ 123

րակին», որը կանգնած է Հելլադայի մայրաքաղաքի Ակրոպոլիսի բլրի տակ եւ թուագրում է հռոմէական ժամանակաշրջանով՝ Ք.ա. Ա դ. կէսով (տե՛ս նկ. 11–12): Կարելի է լիովին ընդունելի համարել նաեւ Արմէն Միքայելեանի՝ բազմաթիւ զուգահեռներով եւ մանրամասն փաստարկուած տեսակէտն, ըստ որի՝ Շարդէնի նկարների աշտարակն, ամենայն հաւանականութեամբ, եղել է ջրի պահեստարան-աշտարակ (անգլերէն՝ water tower)⁵¹:


Վերջում լրացնեմ նաեւ, որ Գետառի հունի մի կէտից, թերեւս կենդանաբանական այգու ձորակով դէպի հարաւ-արեւելք, մինչեւ Ազատ գետ ձգուող՝ Աբովեանի եւ Արտաշատի շրջանների (կամ ներկայիս երկու մարզերի՝ Կոտայքի եւ Արարատի) սահմանագիծն, ըստ ամենայնի, համապատասխանում է Կոտայքի ու Ոստան Հայոցի հինաւուրց գաւառաբաժան գծին. այդ գծով բաժանուել են դէպի հիւսիս՝ Զրվէժ, Ողջաբերդ, Գեղադիր, Հացաւան գիւղերի, իսկ դէպի հարաւ՝ Շոռքուլաղ, Զրաչէն, Նուբարաչէն, Բարձրաչէն բնակավայրերի համայնքային հողատարածքները (դա ցոյց եմ տալիս իմ դեռեւս սեւագիր՝ «Աշխարհացոյցեան Հայաստանը» նոր քարտէզի մի հատուածում. տե՛ս նկ. 13):

Եւ ամփոփելով՝ թւում է, թէ իմ նկատած աղբիւրագիտական տուեալները եւ մնացեալ հանգամանքները բաւարար են պնդելու, որ Երեւանի բերդը Հրազդանի ձորալանջին, ամենայն հաւանականութեամբ, կառուցուել է 591թ., Հայաստանի երկրորդ բաժանման արդիւնքում՝ հիմք դառնալով էրեբունէ-Երեւան բնակավայրի նոր կենտրոնի ձեւաւորման համար: Իհարկէ, այս վարկածը վերջնական ու հիմնաւոր ապացուցելու նպատակադրումով խիստ օգտակար կը լինէին գոնէ ստուգողական պեղումները Երեւանի բերդի եւ Կոնդի բերդակիր բլրի խոր շերտերում:


51 Ա. Միքայելեան, Երևանի անեղծուածային աշտարակի գաղտնիքը, «Երևան». գիտական հոդվածների ժողովածո, Հ^ա 4, Երևան, 2016, էջ 140–151:



Նկ.1



Նկ.2



Նկ. 3



Նկ. 4




Նկ. 5




Նկ. 6




Նկ. 7



Նկ. 8



Նկ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13

АЛЕКСАН АКОПЯН

ПО СЛЕДАМ ПРЕДПОЛАГАЕМОЙ КРЕПОСТИ КОЗЕРНА-КОНДА 591 ГОДА

Ключевые слова: *Эребуни-Ереван, кантон Котайк, кантон Остан Կայոց, Ереванская крепость, византийская крепость Конда, Козерн, второй раздел Армении, Седрак Бархударян, Жан Шарден, Сасаниды.*

Выявленные благодаря новому исследованию источниковедческие основания и другие данные достаточны для утверждения, что Ереванская крепость на склоне ущелья реки ԿՀրազдан, вероятнее всего, была построена в 591 году, в результате второго раздела Армении между Византией и Сасанидским Ираном, став основой для формирования нового центра города Эребуни-Ереван. Для неопровержимого доказательства этой гипотезы, разумеется, возникает необходимость в археологическом исследовании Ереванской крепости и крепостного холма Козерна-Конда.

На территории Ереванской крепости, построенной по приказу Сасанидов, сохранился только каземат на глубине 3–4-х этажей, а от византийской крепости Конда сохранилась башня, которую в 1672 году описал французский путешественник Ж. Шарден. Именно между ними проходила граница кантонов (гаваров) Котайк и Остан Կայոց (по древнему руслу реки Гетар).

ALEKSAN HAKOBYAN

IN THE WAKE OF THE ALLEGED KOZERN-KOND FORTRESS (591 AD)

Keywords: *Erebuni-Yerevan, Kotayk' canton, Ostan Hayoc' canton, Yerevan fortress, Byzantine fortress of Kond, Kozern, second division of Armenia, Sedrak Barkhudaryan, Jean Chardin, Sassanids.*

Source study arguments and other data revealed thanks to the newest research are sufficient to claim that the fortress of Yerevan located on the slopes of the Hrazdan river gorge was most probably built in 591 as a result of Armenia's second division between Byzantium and Sassanid Iran. The fortress became the core for the formation of a new Erebuni-Yerevan town center.

Therefore, it is necessary to conduct archaeological excavations at the Yerevan fortress and Kozern-Kond's fortified hill, in order to collect sufficient evidence to support this hypothesis.

Within the territory of Yerevan fortress, built by order of the Sassanids, the casemate is preserved at a depth of 3–4 floors. Only a tower described by the French traveler J. Chardin in 1672 is preserved on the territory of Byzantine fortress of Kond. The border of the cantons (gavars) Kotayk' and Ostan Hayoc' ran between them (along the buried channel of the Getar River).

ԱՃՈՏ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ԳԱՎԱՌԱՆՈՒ ՄԻՐԱՆՇԵՆՑ ՏԱՆՈՒՏԵՐԱԿԱՆ ՏՈՐՄԸ ՍԱՂՄՈՍԱԿԱՆՅԱՆ ՀԱՎԵԼՄԱՄԲ

Հիմնաբառեր՝ մարզ, կենտրոն, պարամական, քանտուերական տոհմ,
մարտնագրական, վիմագրական, սկզբնաղբյուր, հավելում:

Գավառ կամ Գավառանի¹ գյուղաքաղաքի Միրանշենց տանուտերական տոհմը, ըստ մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրների, երևան է հանել Ս. Բարխուդարյանը Գեղարքունիքի մելիքներին ու տանուտերերին նվիրված իր հոգվածում²: Անխոնջ վիմագրագետի ուսումնասիրության համար որպես պատմագրական աղբյուր ծառայել է Գեղամա երկիրը Տաթևի վանքի իրավասությանը վերադարձնելու շուրջ Գեղարքունիքի մելիքների ու տանուտերերի 1513թ. կազմած փաստաթուղթը: Այդ վերադարձը, ըստ էության, եղել է երկրորդը: Առաջին անգամ Գեղարքունի գավառը Տաթևի վանքի ենթակայությանը վերստին բերվել է 1006թ.՝ Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես եպիսկոպոսի առաջնորդության օրոք (1006–1058), երբ, Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ, «Մաքենոցացիք զ Գեղարքունի էին յափշտակեալ»³: Ենթադրելի է, որ հափշտակումը կատարվել է Հայոց թագավոր Գագիկ Ա Շահանշահի (990–1020)՝ դեպի Սյունիք 990–992թթ. պատժիչ արշավանքից հետո, քանի որ Սյունյաց թագավորությանից Բագրատունիներին անցած տիրույթներից մի քանիստում, ըստ պատմիչի, ստեղծվում են ինքնահռչակ եպիսկոպոսական աթոռներ՝ Վայոց ձորի, Երնձակի, Գողթան⁴: Պառակտված վիճակը, բարեբախտաբար, կարճ է տևում. Սյունյաց Վասակ թագավորի (998–1040) դստեր՝ Հայոց Կատրանիդե թագուհու խնդրանքով Սարգիս Ա Սևանցի կաթողիկոսը (990–1019), ինչպես ասվեց վերը Գեղարքունիքի պարագայում, 1006թ. վերականգնում է Տաթևի հոգևոր միասնությունը՝ վերացնելով անջատված, ինքնատեղծ կառույցները:

- 1 Թ. Ավդալբեգյանի համոզմամբ. «Գավառ անունը ծագում է վոչ թե գավառ բառից, այլ Գավառնի-Գավառանի մինչ-հայկական տոհմանուն-տեղանունից» (Թ. Ավդալբեգյան, Նոր Բայազդի նորագյուտ սեպագիրն ու նրա հնագիտական միջավայրը, «Տեղեկագիր Հ.Խ.Ս.Հ. գիտության յեվ արվեստի», Յերեվան, 1927, էջ 204–219): Իր տեսակետը հիմնավորելու համարնա վկայակցում է մատենագրական ու վիմագրական հիշատակություններ, որտեղ քնակավայրն անվանվում է՝ Գավառանի, Գավառան, Գավառնի (տես նույն տեղում, էջ 216–217):
- 2 Տես Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», հ. 8, Երևան, 1967, էջ 191–227:
- 3 Պատմություն նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1910, էջ 304–305:
- 4 Տես նույն տեղում, էջ 305:

Ինչ վերաբերում է Տաթև կենտրոնից Գեղարքունիքով հանդերձ Մաքենյաց վանքի երկրորդ անջատմանը, ապա կարծում ենք, որ այն տեղի է ունեցել XV դ. կեսից հետո՝ թատերաբեմից Օրբելյան իշխանական տան հեռացմամբ և շարունակվել ավելի քան կես դար՝ մինչև 1513թ.: Տաթևի այդ թվի փաստաթուղթն ստորագրած Գեղամա տասն իշխանավորների շարքում Շահղուբաթը հինգերորդն է. «Ես՝ Շահղուբաթս Գալառնեցի, որդի Աստուածատրին՝ թոռն Միրանչին»⁵:

Այս անձանց հիշատակությունները Ս. Բարխուդարյանը գտել է ներկայիս Գավառ քաղաքի «Դարի գլոխ» կոչվող պատմական գերեզմանոցում, որի արևմտյան եզրին երկշարք ամփոփված են նրանց՝ Միրանչենց տոհմի ննջեցյալների աճյուռները: Դրանցից մեկի տապանաքարին երկու տողով արձանագրված է. «Այս է հանգիստ Ալստուլայծատուր աղին, որդի Միրանչին, տանուտէր Գալառիս, յիշեցէք ի Քս, թվլինյ : ԶՀԳ: (1524)»⁶: Աստվածատուր աղայի կողքին հանգչում է կինը՝ Շահսուլթանը, վախճանված 1531թ.⁷: Այդ տապանքարի մոտ միևնույն մեծ պատվանդանի վրա կանգնեցված է երկու գեղաքանդակ խաչքար՝ մեկը Շահսուլթանի, մյուսը՝ նրա որդի Շահղուբաթ աղայի համար⁸: Վերջինս վախճանվել է 1534թ.⁹:

Ի մի բերելով վերոհիշյալ վկայությունները՝ կարող ենք եզրակացնել, որ Շահղուբաթ աղան արդեն 1513թ. հոր հետ ներգրավված է եղել Գավառ գյուղաքաղաքի կառավարման գործում, իսկ նրա մահից հետո շարունակել պաշտոնավարել որպես տանուտեր 1524–1534թթ.:

Աստվածատուրն ու Շահսուլթանն ունեցել են նաև երկրորդ որդի՝ Թուժա(ն) անունով. գերեզմանոցի՝ Աստվածատուր աղայի հուշարձանի շարքում ժայռաբեկորե միևնույն պատվանդանին հառնող երկու մեծ ու գեղաքանդակ խաչքարերից հյուսիսայինը կանգնեցված է «ի փրկութեանս թուժա աղին, որ է որդի Աստուլա-ծայտուր աղին»¹⁰:

Թուժա աղայի խաչքարի առաջ նրա տապանաքարն է, որի հարավային կողին սղոմներով զրկված անունները (Հախլնազարյ, Թումլայ, Կուլաղա–Ա. Մ.) «անշուշտ, Թուժա աղայի զավակները կամ թոռներն են, որոնք կանգնեցրել են խաչքարերը»¹¹: Թուժա աղան ունեցել է ևս մի որդի, ինչը փաստվում է հետևյալ արձանագրությունով. «Այս է հանգիստ Փիրի բէկին, որդի Թուժան աղային. : ԶՂ: (1541)»¹²: Դատելով Փիրիի «բեկ» պատվանունից (թուրք.՝ 1. «իշխան», 2. «թուրքերի մէջ յարգական տիտղոս բարձր աստիճանաւորի, ազնուականի»¹³), եթե այն

5 Տեղագիր Գեղարքունի ծավազարդ գաւառի, որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց Մեսրոպը արքեպիսկոպոս Սմբատեանց Նախիջևանցի, Վաղարշապատ, 1895, էջ 581:

6 Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 208, տե՛ս նաև՝ ԴՎՎ, պրակ IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 54:

7 Տե՛ս նույն տեղերում, էջ 209, 54:

8 Տե՛ս նույն տեղերում, էջ 209, 54–55:

9 Տե՛ս նույն տեղերում, էջ 209, 56:

10 Նույն տեղերում, էջ 209, 55:

11 Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 210:

12 Նույն տեղում, ԴՎՎ, պրակ IV, էջ 56:

13 Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Երևան, 1944, էջ 367:

անվանակոչության երկրորդ բաղադրիչը չի եղել (Փիրիբէկ), պետք է ընդունել, որ նա գերազաս դիրք է ունեցել ողջ Գեղարքունիքի կառավարման համակարգում, թերևս եղել է փոխմելիք, այսինքն՝ փոխգավառապետ:

Վերոհիշյալ ժայռաբեկորն պատվանդանի վրա բարձրացող երկրորդ՝ հարավային խաչքարը ձևված է վասն «փրկութեանյ հոգևոյն պարոն Հեղինին... բարելաւս պարոն Գուլաղին... թվլինյ :ՋՂԷ: (1548)»¹⁴: Գուլաղին պետք է ենթադրել թուամանի և Հեղինեի երկրորդ որդի, որը, ինչպես նրա պարոն (բառը բացի հարգական դիմելաձևից նշանակում է նաև «իշխան, մեծաւոր»¹⁵) կոչումն է հուշում, վարել է Գավառնի տանուտերութեան պաշտոնը՝ հաջորդելով հորը և եղբորը, որոնք հաջորդաբար պաշտոնավարել են 1534–1541 թթ.: Չի բացառված, որ տիկին Հեղինեն ամուսնու ու որդիների հետ մասնակցութիւն ունեցած լինի Գավառի կառավարման գործում:

Սաղմոսականքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան հարավային պատին դրսից բարձրուստ վեց սողով փորագրված 1558 թ. ընդարձակ արձանագրութիւնում հիշատակվող նվիրատու չորս իշխաններից, որոնք իրենց հայրենի Գավառ գյուղը կրկին շնորհել են արագածոտնյան այդ նշանավոր մենաստանին, առաջինը պարոն թուաման ադան է¹⁶:

Սա չի կարող Աստվածատուրի որդի թուամանը լինել, քանի որ 10 տարի առաջ խաչքար էր կանգնեցվել նրա փրկութեան համար, ինչը նշանակում է, որ նա արդեն մահացել էր:

Նորագյուտ թուաման իշխանին մենք ավելի վաղ ընդունել ենք որպես նրա համանուն պապի հինգ ենթադրյալ զավակներից (Փիրի, Գուլաղա, Հախնազար, Թոմա, Կուլաղա) մեկի որդի, որը ոչ միայն կրել է իր նախնու անունը, այլև, ինչպես երևում է նրա «պարոն», «ադա» կոչումներից, ժառանգել է նաև քաղաքի տանուտերութեան պաշտոնը: «Դիվան հայ վիմագրութեան» մատենաշարի IV պրակում թուաման ավագի կամ Ա-ի տապանագրի ծանոթագրութիւնում նշված է, որ Հախնազարը, Թոման ու Կուլաղան «հավանաբար թուամա ադայի որդիներն են»¹⁷, իսկ Ս. Բարխուդարյանն ավելի վաղ իր հոդվածում, ինչպես վերև ասվել է, նրանց կարծել է նրա զավակներ կամ թոռներ¹⁸: Այդ դեպքում չի բացառվում, որ թուաման Բ-ն նույն թուաման լինի¹⁹, որի եղբայր Կուլաղային 1577 թ. տեսնում ենք որպես պա-

14 ԴՇՎ, պրակ IV, էջ 55: Խաչքարը ներկայումս գտնվում է Սարդարապատի ազգագրության թանգարանում (խմբ.):

15 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1979, 65:

16 Տե՛ս Ա. Մանուչարյան, Գավառ քաղաքի պատմության նորահայտ քարտեզն էջը, ԲԵՀ, 2016, ՀՊ 2, էջ 51–59:

17 ԴՇՎ, պրակ IV, էջ 55:

18 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 210:

19 Ճիշտ է, Թովման (=Թովմաս՝ ասոր. «երկվորյակ», տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 314) և Թուման (պրակ. 10 000, տե՛ս նույն տեղում, էջ 370) անունները տարբեր են, սակայն կարող են, այն էլ գավառական միջավայրում, նույնացվել Թովմա-Թումա-Թումա-Թուման անցմամբ, ինչը մասամբ նկատելի է Թումա Ա-Թուման Ա օրինակով:

րոնի²⁰: Դա նշանակում է, որ Կուլաղա Բ-ն Հաջորդել է Թուաման Բ-ին: Ուշադրութեան արժանի է փաստը, որ այդ 1577թ., ձեռամբ նշանավոր վարպետներ Առաքելի ու Մելիքսեթի, մի պատվանդանի վրա երկու գեղաքանդակ խաչքարեր են կանգնեցվել ամուսիններ պարոն Աստվածատուրի պահպանություն և պարոն Թաճուամի բարեխոսության համար²¹: Ենթադրելի է, որ հենց այդ թվականին Աստվածատուր Բ-ն Գավառի տանուտերի պաշտոնն ստանձնել է Կուլաղա Բ-ից հետո:

XVI դ. Գավառնի ամենաերևելի իշխանը թերևս Միրանչենց Հախնազար Բ աղան է, որը, ինչպես Քիրամ նշանավոր կազմողի կերտած 1598թ. մեծարվեստ կոթողի արձանագրության բովանդակությունն է փաստում, 1591թ. եկել ու վերականգնել է հայրենի բնակավայրը, այն բանից հետո, երբ օսմանցիները, օգտվելով Պարսկաստանում կրգրված ցեղերի միջև ընթացող գահակալական կռիվներից, 1582թ. ավերել են Գավառ գյուղաքաղաքը²² (դա Ֆարհադ փաշայի՝ Արևելյան Հայաստան կատարած 1580թ. արշավանքի արդյունքում էր, որի ժամանակ թուրքերը «խուժեցին Ղարաբաղ, գրավեցին Երևանն ու հասան Գեղարքունիք»²³):

Ս. Բարխուդարյանի տեսակետով՝ «Հախնազարը, ըստ երևույթին ժողովրդի հետ քոչած լինելով, վերադարձել է ու ղեկավարել Գավառի վերաշինությունը»²⁴:

Հախնազար աղայի խաչքարի կողքին՝ «Դարի գլուխ» գերեզմանատանը, եղել է ևս մեկ այլ մեծարվեստ կոթող՝ քիվին հետևյալ արձանագրությամբ.

Մբ խաչս բարէխաւսս պարւոնյ Շահնազարին²⁵:

Ս. Բարխուդարյանի պարզաբանմամբ՝ խաչքարը «թվական թեև չունի, բայց խաչքարի ընդհանուր ոճը ապացույց է, որ նույն տաղանդավոր Քիրամի ձեռագործն է և ժամանակակից նախորդին: Շահնազարը կամ պիտի Հաղնազարի եղբայրը լինի կամ որդին»²⁶:

Այսպիսով, տեսնում ենք, որ ամբողջ XVI դ. որպես Գավառանու գլխավոր իշխանավորներ հիշատակվում են Միրանչենց տոհմի անդամները: Նրանք ոչ միայն լուրջ դերակատարություն են ունեցել իրենց հայրենի գյուղաքաղաքի, Գեղարքունիքի, Սյունիքի և ողջ Հայաստանի կյանքում, այլև ստեղծել են բարձրարվեստ հոգևոր արժեքներ, որոնք այսօր հիմնականում ներկայանում են անկրկնելի խաչքարերի տեսքով:

Առկա փաստագրական նյութերը հնարավորություն են ընձեռում կազմելու Միրանչենց տոհմաձուր 1513–1598թթ.՝ առանձնանշելով տանուտերերին.

20 ԳՇՎ, պրակ IV, էջ 65:

21 Տե՛ս Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 211–213, ԳՇՎ, պրակ IV, էջ 61–62:


22 ԳՇՎ, պրակ IV, էջ 63: Հախնազարի խաչքարի կապակցությամբ Ս. Բարխուդարյանը գրում է, որ այն «պատվանդանից ընկած և կոտրված էր մեջտեղից, այդ պատճառով էլ տեղափոխվեց Երևան և պահվում է Մատենադարանում» (Ս. Բարխուդարյան, Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը, էջ 210): Այսօր այն կարող ենք տեսնել Մատենադարանի գլխավոր մասնաշենքի բակում:

23 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ 86:

24 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 211:

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում:



АШОТ МАНУЧАРЯН

**РОД СТАРОСТ МИРАНШЕНЦ ГАВАРАНИ
 С САГМОСАВАНСКИМ ДОПОЛНЕНИЕМ**

Ключевые слова: *Область, центр, исторический, род старост, основа, историко-географический, лапидарный первоисточник, дополнение.*

Եփարկունիկի մարզային կենտրոն Գավար, որը պատմաբանորէն կոչուած էր նաեւ Գավարանի, ընթացքով XVI դ. կառավարուած էր Միրանշենցի տոհմի ներկայացուցիչներով: Ենթացքով XX դ. կեսերին ընդհանուր պատմագրական և քարակարգի տեղեւաններով բացահայտուած էր էպիգրափիստ Տեճրակ Բարխուճարան: Ոն կազմուած էր նաեւ Միրանշենցի տոհմի քննադատական ճիւղը:

Բաղադրուած էր Տաղմոսաւանի քարակարգի 1558 թ., ի մեր կողմէն Միրանշենցի տոհմը լրացուած էր Կուման, որը կարող էր ընդհանուրէն ընդհանուր Գավարի տոհմի անդամ ըլլալ:

ASHOT MANUCHARYAN

**MIRANSHENTS FAMILY OF ELDERS FROM GAVARANI.
 THE ADDENDUM FROM SAGHMOSAVAN**

Keywords: *Province, centre, historical, family of elders, historical and geographical, lapidary source, addendum.*

The centre of Gegharkunik province town Gavar, historically known as Gavarani, was ruled by the representatives of Miranshents princely family throughout the XVI century. This family was revealed in the mid- XXth century on the basis of the historiographic data and lapidary inscription sources by the epigraphist Sedrak Barkhudaryan. He also created the genealogical tree of Miranshents family.

Based on the 1558 inscription data, the Miranshents family has been reinforced by another name Tuman, who was one of the rulers of Gavar.

ԴԻԱՆՆԱ ՄԻՐԻՉԱՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ԱՉԱՏՅԱՆ

ԵՂԵՔԱԶՈՐԻ ՆՈՐԱՅԱՅՏ ՅԼՁԱՆԸ

Հիմնաբառեր՝ Վայոց ձոր, խաղողագործություն, գինեգործություն,
վիմնագրություն, հնագիտություն, միջնադար, հնձան:


Խաղողի մշակումը և գինեգործությունը Վայոց ձորում ավանդական տնտեսական զբաղմունքներից է, որին նպաստում են նաև կլիմայական պայմանները՝ մեղմ ձմեռը, արևառատ օրերը: Արդյունքում Վայոց ձորում խաղողագործությունը զբաղվում են 1000–1700 մ բարձրության 21 բնակավայրերում¹: Վայոց ձորը Հայաստանի խաղողագործության առաջնային կենտրոններից է, որտեղ գինեգործության խորը արմատների մասին վիմագրական և հնագիտական նորանոր տվյալներ են ի հայտ գալիս: Մասնավորապես մինչ այժմ Վայոց ձորում՝ Արենի 1 քարայրում է հայտնաբերվել աշխարհում ամենահին հնձանը, որը փաստում է այս տարածաշրջանում գինեգործության 6000-ամյա ավանդույթների մասին²:

Անտիկ դարաշրջանին վերաբերող տարապանների առկայությունը Եղեգնաձորում վկայում է, որ խաղողի մշակումը շարունակվել է նաև հետագայում³:

Միջնադարյան վիմագրական աղբյուրների ուսումնասիրությունները փաստում են, որ այգի բառն ի սկզբանե վերաբերել է միայն խաղողի այգիներին: Ս.Բարխուդարյանի կազմած Դիվան հայ վիմագրության III պրակում հավաքված են Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջանների հարյուրավոր վիմագրեր, որոնց թվում մի շարք արձանագրություններ վերաբերում են խաղողի այգիների նվիրատվությանը այս կամ այն վանքին: Վիմագրերում խաղողի այգիները հիշվում են «էգի», «էքի» ձևերով, որոնք մինչև հիմա գործածում են «նոր հայերով» բնակեցված Եղեգնաձոր, Գլաձոր, Վերնաչեն և այլ համայնքներում⁴: Վայոց ձորում խաղողի այգիները գտնվում են Արփա, Եղեգիս, Ելփին, Սելիմ, Հերհեր գետերի ափերին հարող արևահայաց լանջերին: Այժմ էլ Արփայի, Եղեգիսի, Նորավանքի

- 1 Ս.Հորոսյան, Խաղողի մշակությունը Վայոց ձորում, Հայ ժողովրդական մշակույթ, XIII, Երևան, 2006, էջ 143:
- 2 Bamard H., Dooley A.N., Areshyan G., Gasparyan B., Faull K.F., Chemical evidence for wine production around 4000 BCE in the late Chalcolithic Near Eastern Highlands, Journals of Archaeological Science, vol. 38, issue 5, 2011, pp. 977–984.
- 3 Ս.Հարությունյան, Ա.Քալանթարյան, Հ.Պետրոսյան, Գ.Սարգսյան, Հ.Մելքոնյան, Ս.Հորոսյան, Պ.Ավետիսյան, Գինին հայոց ավանդական մշակույթում, Երևան, 2005, էջ 39, աղ. 11; Գ.Թումանյան, Հնձանային մշակույթը Հայաստանում, Երևան 2008, էջ 34:
- 4 Ն.Հովհաննիսյան, Ա.Եսայան, Ա.Բորոխյան, Մ.Դավլաթյան, Ս.Հորոսյան, Բ.Գասպարյան, Հայկական խաղող և գինի, Երևան, 2017, էջ 62–66:

կիրճերի թեք լանջերին պահպանվել են դեռևս միջնադարում հիմնված այգիների հետքեր⁵, որոշ տեղերում էլ՝ հնձանների մնացորդներ:



Փժանկ. 1 Հնձանի ընդհանուր հարակազիծ (չափագրությունը՝ Լ. Տեր-Մինասյանի)

Վայոց ձորում գինեգործության մասին վկայություն ունի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը: Խոսելով Օրբելյանների իշխանանիստ Եղեգիս բնակավայրում Սաջյան Յուսուֆ ամիրայի կատարած ավերածությունների մասին՝ պատմիչը պատկերավոր ներկայացնում է, թե Սյունյաց Սմբատ իշխանը ինչ վիճակում տեսավ իր նստոցը. «...տեսանէին նոքա քակեալ զարքունական ապարանսն իւրեանց, աւերեալ զեկեղեցիս և անբնական ապատացեալ զմեծամեծ աւանսն, և զգեղեցիկ դաստակերտն, ունայնացեալ զամբարս ցորենոյ և խորտակեալ զգուլբս գինւոյ»⁶:

Միջնադարում, մեծ տարածքներ զբաղեցնող խաղողի այգիներում էին գտնվում գինու արտադրական կառույցները՝ հնձանները: Վայոց ձորում միջնադարյան հնձանների վերաբերյալ մատենագիտական և վիճակագրական տվյալներից բացի, մինչև վերջերս որևէ այլ փաստեր չկային:


Այդ բացը լրացվեց 2018 թ., երբ Եղեգնաձոր քաղաքում պեղումներով հնձանային համալիր հայտնաբերվեց⁷ (գծ. 1): Հնձանը բաղկացած է երկու հատվածից. առաջինը արտադրական մասն է՝ կազմված չորս տաքարներից, իսկ երկրորդ հատվածում պահեստն է, որտեղ բացվել է մեկ հոր (ունի 1,75 մ բարձրություն և 1,46 մ տրամագիծ), որը գլաքարերով շարված, հարթ հատակով, զանգակաձև կառույց

5 Նշվ. աշխ., էջ 159:

6 Պատմություն նահանգին Միսական արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արքեպիսկոպոսի Միսեաց, Թիֆլիս, 1910, էջ 193:

7 Պեղումներն ընթացել են երկու փուլով՝ հունվար և հունիս ամիսներին: Դաշտային աշխատանքներին մասնակցել են ճարտարապետ Լիլիթ Տեր-Մինասյանը, լուսանկարիչ Արգիշտի Միքայելյանը և արշավախմբի ղեկավար, հնագետ Կարեն Ազատյանը:

է (նկ. 1): Հորի հատակը ձեւաված էր կրասվաղով, իսկ բերանը՝ փակված հարթ սալով⁸ (նկ. 2, գծ. 2):



Գծանկ. 2 Երկայնական կտրվածք

Համալիրի երկու հատվածները իրարից առանձնացված են խոշոր գետաքարերով շարված պատով: Հորից արևելք բացվել է կիսակլոր, միաշար պատ՝ կառուցված խոշոր չափերի գետաքարերով (քարերի տրամագիծը 30–35 սմ է): Կիսակլոր պատին զուգահեռ բացվել է հյուսիս-հարավ ուղղված ուղղվածության ևս մեկ պատ: Այն հարավային հատվածում կցված է արևմուտք-արևելք ուղղվածությամբ արդեն երկշար պատին, որը (երկարությունը 5,43 մ, պահպանված բարձրությունը 80 սմ) ավարտվում է գլաքարե, միաշար պատով: Կարելի է ենթադրել, որ արևմտյան, արևելյան և հյուսիսային միաշար պատերը եղել են կիսագետնափոր, ինչի մասին փաստում են նաև բնական գրունտի կտրվածքները, որի մեջ իջեցվել են պատերը: Երկշար պատն ունի 65 սմ լայնության մուտք: Բացված ուղղանկյուն կառույցը հավանաբար ծառայել է որպես մառան, թեև որևէ հնագիտական նյութով հնարավոր չէ հաստատել այս ենթադրությունը:

Ուղղանկյուն կառույցից հարավ հայտնաբերվել են գինու չորս տաքարներ (նկ. 3): Դրանք շարված են միջին չափի գլաքարերով և անջրաթափանց դարձնելու համար պատված են կրասվաղով: Հետաքրքիր է, որ հորերից երեքն ունեն գինու նստվածքի համար նախատեսված փոսիկներ, իսկ մեկը հարթ հատակով է, այսինքն՝ նախատեսված է եղել արդեն մաքրված գինու պահպանման համար (նկ. 4): Տաքարի եզրերը սովորաբար լավ սվաղված էին լինում կրաշաղախով (նկ. 5), իսկ բերանները ծածկում էին բազալտե կամ տուֆե բլորաձև, կենտրոնում անցք ունեցող սալերով (նկ. 6): Անցքը փակվել է քարե խցանով, որը գինու խմորման ընթացքում ժամանակ առ ժամանակ բացել են, որպեսզի գազերը դուրս գան⁹: Հորերի պատերին կան տարբեր բարձրության քարե ելուստներ, որոնք հարմարեցված են հորի մեջ իջնելու համար:

Միջնադարյան հնձանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում երկու բաժանմունքից բաղկացած կառույցներ են: Թեև հազվադեպ

8 Նմանօրինակ աղյուսաշար հոր 2007 թ. բացվել է Եղեգիս հնավայրում – տես Հ. Մելքոնյան, Ն. Հակոբյան, Պեղումներ Եղեգիսի Ջորաց տաճարի շուրջը, «Էջմիածին», 2016, Ը, էջ 145:

9 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի III, Հնագիտական պեղումներ Հայաստանում, Հ^տ 10, Երևան, 1962, էջ 41:

կան նաև եռամաս կառուցվածքով հնձաններ¹⁰: Եղեգնաձորյան հնձանը կազմված է երկու բաժանմունքից: Առաջին հատվածը հնձանի առաջատուն է, որը ցավոք չի պահպանվել, և որտեղ ճզմվել է խաղողը, այնուհետև քաղցրուն հոսել է դեպի երկրորդ բաժանմունքում գտնվող տաքարները: Ամբողջությամբ հանգստացած գինին այնուհետև տեղափոխել են կարասների մեջ: Գինին պահելու համար կարասներից բացի օգտագործել են նաև քարե տաքարներ, որոնցից Հայաստանում հայտնի են մի քանիսը (Երևան, Ապարան, Արմավիր), որոնցից մեկը հայտնաբերվել է Վայոց ձորի Չիվա գյուղում (այժմ պահվում է Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում)¹¹:

Հնձանում հայտնաբերվել են խեցեղեն գտածոներ (նկ. 7, 8), որոնք խոհանոցային, ամենօրյա օգտագործման անոթների բեկորներ են, այդ թվում՝ կարասների, կճուճների, սափորների, թաս-քրեղանների, խփերի տարբեր հատվածներ: Խեցեղեն օրինակները հիմնականում կարմրաներկ են, իսկ գտածոների խոհանոցային բնույթի մասին փաստում է նաև ջնարակապատ խեցեղեն նյութերի բացակայությունը: Հնձանային համալիրից հայտնաբերված հնագիտական նյութերը, համեմատելով Վայոց ձորի այլ հնավայրերի գտածոների հետ¹², կարելի է այն թվագրել գավառի ժողովման շրջանով՝ 13–14-րդ.:



նկ. 1



նկ. 2



նկ. 3



նկ. 4

10 Նույն տեղում, էջ 39:

11 Լ. Բեգլարյան, Երկրագործական մթերքների վերամշակումը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2014, էջ 163:

12 K. Franklin, A. Babajanyan, Approaching landscapes of infrastructure: Methods and results of the VayotsDzor Silk Road survey, Landscape Archaeology in Southern Caucasia, Vienna, 2016, p.138.

В 2018 году информация о виноделии в Вайоц Дзоре была дополнена археологическими данными. В городе Ехегнадзор во время раскопок был обнаружен винодавильный комплекс. Комплекс состоит из двух частей: 1 – производственной части, состоящая из четырех резервуаров, 2 – склада, где была открыта одна скважина. Археологический материал, обнаруженный в ходе раскопок, позволяет датировать винодельческий комплекс XIII–XIV веками, когда был период расцвета провинции Вайоц Дзор.

DIANNA MIRIJANYAN, KAREN AZATYAN

NEWLY-FOUND WINERY OF YEGHEGNADZOR

Keywords: *Vayots Dzor, viticulture, wine-making, Lapidary inscriptions, archaeology, Middle Ages, wine press.*

Vayots Dzor is one of the main centers of viticulture in Armenia, where numerous epigraphic and archaeological data on the deep roots of wine-making are recorded. It is known that in Vayots Dzor, in the cave Areni-1, the oldest wine press in the world was discovered, which indicates 6000-year old wine-making traditions in this region. In the third liber of the Corpus Inscriptionum Armenicarum, which was compiled by Sedrak Barkhudaryan, hundreds of inscriptions were collected from Yeghegnadzor and Vayk. Among them are a number of inscriptions relating to the donation of vineyards to different monasteries. In the Middle Ages, the vineyards occupied large areas, where the wine presses were also located. Until recently, only bibliographic data existed on these wine presses and there were no other facts.

In 2018, a new archeological data appeared on wine-making of Vayots Dzor, when in the town of Yeghegnadzor a wine-making complex was discovered during excavations. The complex consists of two parts: 1 – the production part, consisting of four tanks, 2 – the warehouse, where one well was opened. Archaeological materials discovered during the excavation allow us to date the wine-making complex back to XIII–XIVth centuries, the period of prosperity of Vayots Dzor province.

ԽԱԶԻԿ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՁԱՆՈՒՄՆԵՐԸ ՎԻՍԱԳՐԵՐՈՒՄ ԵՎ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ. ՆՈՐԱՅԱՅՏ ԱՆՁԱՆՈՒՄՆԵՐ ՎԻՍԱԳՐԵՐԻՑ

Հիմնաբառեր՝ *ձեռագիր, վիմագիր, միջնադարագիտություն, արական և իգական անձնանուններ, լեզվաբանություն, արուգաբանություն:*

Ինչպես հայերեն ձեռագրերի հիշատակարանները, այնպես էլ վիմագրերը հարուստ տեղեկություններ են պարունակում հայ ժողովրդի պատմության, կենցաղի, նիստուկացի, հասարակական ու քաղաքական տարբեր անցքերի վերաբերյալ: Ըստ այսմ՝ ճիշտ է նկատված, որ գրավոր այս հուշարձանները հայ և օտար պատմիչների տեղեկությունների հետ միասին հայ ժողովրդի պատմության հիմնական չորս աղբյուրներն են¹: Ձեռագրերի հիշատակարանները և վիմագրերը առատ նյութ են տրամադրում նաև հայոց լեզվի պատմության, պատմական բառագիտության ու բարբառագիտության և ընդհանրապես լեզվաբանական տարբերակների, այդ թվում՝ հատկանվանագիտության ուսումնասիրման համար:

Գրավոր այս հուշարձանները հարուստ են դրանց ստեղծողների (գրիչներ կամ քարգործ վարպետներ), պատվիրատուների, նրանց արյունակցական և հոգևոր ընտանիքների անդամների, նրանց հետ պարզապես առնչություն ունեցող մարդկանց կամ ժամանակի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների անձնանունների, տոհմանունների, մականունների հիշատակումներով²: Այդ անուններն, անկասկած, անցյալի մեր մտածողության, իղձերի, աշխարհընկալման, տարբեր ժողովուրդների հետ առնչությունների և միջնադարի կապերի խոստեն վկաներն են:

Հազարավոր այդպիսի անձնանունների մի ինքնատիպ շտեմարան՝ բազմակողմ քննությամբ, համեմատական նյութերով, վիմագրերի և հիշատակարանների տվյալների առատ կիրառումով, պատրաստել և ի սպաս հետազոտողների է դրել անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարան»-

1 «Հայաստանի և հայ ժողովուրդի պատմության հիմնական չորս աղբյուրներն են՝ հայ պատմիչները, օտար պատմիչները, վիմական արձանագրությունները և ձեռագիրներու յիշատակարանները»: Տե՛ս **Գ. Յովսէփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, Ասթիլիաս, 1951, հ. Ա, Յառաջաբան, էջ ԻԸ:

2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում առավել հաճախ հիշատակվող անձանց մասին կարելի է ծանոթանալ մեր կազմած աղյուսակից. տե՛ս **Խ. Հարությունյան**, Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում. 1. Նորահայտ անձնանուններ ԺԱ-ԺԳ դարերի հիշատակարաններից, «Բանբեր Մատենադարանի», հ. 25, Երևան, 2018, էջ 192:

ով³ (այսուհետ՝ ԱնՁԲԱՌ): Այն եղել և շարունակում է մնալ ոչ միայն անցյալում գործածված Հայոց անձնանունների վկայությունների և դրանց ստուգաբանությունների հիմնական աղբյուրը, այլև հաճախ ծառայում է իբրև տեղեկատու-հանրագիտարան, քանի որ բառարանում արձանագրված են ոչ միայն անձնանունը, դրա վկայությունները կամ ստուգաբանությունը, այլև յուրաքանչյուր անվան մասին հայտնի ամենափոքր տեղեկությունն անգամ:

ԱնՁԲԱՌ-ի վերջին՝ հինգերորդ հատորի հրատարակությունից անցել է ավելի քան կես դար. այս ընթացքում մի քանի անգամ բազմապատկվել են ձեռագրացուցակները, առանձին շարքով լույս են տեսել և շարունակում են հրատարակվել ձեռագրերի հիշատակարանները, իսկ մյուս կողմից՝ կազմվել և կազմվում են վիմագրերի պատշաճ ու ճշգրիտ հրատարակություններ՝ գրչագրերով և համապատասխան լուսանկարներով: Դրանց մեջ առաջնային տեղ ունի հենց «Դիվան հայ վիմագրություն» մատենաշարը (այսուհետ՝ ԴՀՎ), որի պատրաստման գործում անուրանալի է անվանի վիմագրագետ Ս.Բարխուդարյանի ներդրումը:

Նորահայտ աղբյուրների այս առատությունն ուսումնասիրողներին հնարավորություն է ընձեռում լրացնել Աճառյանի փառահեղ բառարանը նոր անձնանուններով, իսկ առանձին դեպքերում որոշ ճշգրտումներ կատարել:

Սույն հոդվածում մեր ուշադրության կենտրոնում ձեռագրերի հիշատակարանների և վիմագրերի առնչություններն են անձնանունների համատեքստում: Հոդվածն ավարտում ենք նորահայտ մի շարք անձնանունների օրինակներով, որոնք կարող են օգտակար լինել առաջիկայում այս ուղղությամբ կատարվելիք աշխատանքներին:

1. Անձնանունները վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում

Գրանյութով և գրչությամբ եղանակներով տարբեր, բայց բովանդակությամբ շատ հաճախ միմյանց մերձեցող գրավոր այս աղբյուրներն ունեն մի շարք ընդհանրություններ: Ըստ որում՝ հետաքրքիր է նկատել, որ մեզ հասած մի շարք վիմագրերում փորագրիչներն իրենց գիրն անվանում են հիշատակարան, ճիշտ այնպես, ինչպես մենք սովոր ենք տեսնել ձեռագրերում: Անիի մայր տաճարի հարավային պատի ծավալուն արձանագրության ստորին հատվածում կարգում ենք. «Գրեցաւ յիշատակարանս (ընդգծումը՝ Խ.Հ.) ի ձեռն իմ Բենէ» [ԴՀՎ, 1: 35₁₀₁]⁴: Կրկին Անիում՝ այս անգամ Ապուխանմի եկեղեցու մուտքի վերևում՝ քիվի տակ, կա հետևյալ արձանագրությունը. «...Ժէ թուականին գրեցաւ յիշատակարանս Ապուխանմ ի յխանի, որ տուեալ է գհոգո թոշակ ի սուրբ եկեղեցիս...» [ԴՀՎ, 1: 34₉₉]: Իսկ եթե նկատի ունենանք, որ որոշ վիմագրիչներ կամ քանդակների հեղինակներ իրենց կոչել են ձեռագիր հիշատակարաններին բնորոշ «գրիչ» կամ «նկարող» բառերով, ապա ակնհայտ է դառնում գրավոր այս հուշարձանների փո-

3 Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ.1–5, Երևան, 1942–1962:

4 Տողատակերը չձանրաբեռնելու նպատակով ձեռագրերի հիշատակարանների, վիմագրերի և բառարանների հղումները նշում ենք շարադրանքում և ուղիղ փակագծերով՝ համապատասխան համառոտագրումների միջոցով, որոնց ամբողջական ցանկը տրված է հոդվածի վերջում:

խաղարձ կապի ընկալումը: 1216թ. Լմբատավանքի Ս.Ստեփանոս եկեղեցու արևելյան խաչաթևի հյուսիսային պատի ընդարձակ վիմագրի վերջում Մանասե վիմագրիչն իր անունը փորագրել է տառերի հակառակ դասավորությամբ այնպես, որ ընթերցվում է ՉԻՐԳԵՍԱՆԱՄ [ԴՀՎ, 10: 70–71^{103–104}]: Գնդեվանքի 1309թ. մի արձանագրության ավարտին կարդում ենք. «Գրիգոր զրիչ յիշեցէ՛ք» [ԴՀՎ, 3: 16₁₀]: Արենիի Ս.Աստվածածին եկեղեցու արևմտյան մասում գտնվող խաչքարի 1559թ. արձանագրության մեջ կարդում ենք՝ «Ակոբ նկարող»⁵ [ԴՀՎ, 3: 31₆₆]:

Հետաքրքիր են գրավոր այս հուշարձանների միջև առկա բովանդակային ընդհանրությունները, դրանցում շատ հաճախ գործածվող միանման կաղապարները, մասնավորապես հիշատակարաններից կամ վիմագրերից անուններ ջնջողներին, գիրը խափանողներին, եկեղեցուն, վանքին նվիրված առարկաները դուրս բերողներին հասցեագրված անեծքները կամ հիշատակագրի խնդրանքը կատարողներին ուղղված օրհնությունները: Վկայակոչենք այդպիսի մեկ-երկու օրինակ: 1207թ. Կեսարիայի Տումարձա բնակավայրում [ՏեղԲԱՆ, 5:138] ընդօրինակված Ավետարանի հիշատակարանն այսպես է ավարտում Գրիգոր զրիչը. «Արդ, մի ոք իշխեսցէ հանել զսա ի դըրանէ սորին (նկատի ունի եկեղեցին՝ Խ.Հ.): Եթէ յանդանի, զպատիժն Կայենի առցէ եւ զմասն Ուղայի, եւ զՔրիստոս խաչահանողացն. ամէն: Եղիցի, եղիցի» [Հիշ. ԺԳ: 57]: Գրեթե նույն կերպ է արձագանքում Մանահինի վանքի արձանագրության հեղինակը. «Արդ, որ զմեր ընծայս հանէ յայս եկեղեցոյս, Յուդաի եւ Կաննի մասնակից լիցի...»⁶: Անիի Առաքելոց եկեղեցու արևելյան պատի կենտրոնական մասում կարդում ենք. «...Որ զգրելս մեր խափանէ ի յիմոց կամ յաւտարաց, :Գ: Հարիւր :ԺԸ: Հայրապետացն նգովել եղիցի» [ԴՀՎ, 1: 1962]: 1296թ. Մխիթար զրիչն իր հիշատակարանի վերջում գրում է. «Զինչ մարդ, որ զսայ կտրել ջանայ խեռութեամբ, ԳԺԸ (318) ⁷ Հայրապետացն նգովել (sic!) եղիցի ու մասն ու բաժին զխաչահանուացն լինի» [Հիշ. ԺԳ: 785]:

Աստվածավախ քրիստոնյայի համար իր անունը վիմագրում կամ ձեռագրի հիշատակարանում ամրագրելն ուներ շատ որոշակի նպատակ. դա առաջին հերթին գրավական էր կենաց գրում բարի գործով հիշատակվելու և յուրատեսակ երաշխիք Քրիստոսի երկրորդ գալստյանը հաջորդող ահեղ դատաստանի ժամա-

5 Շատ հաճախ վիմագրերը, հատկապես ընդարձակ շարադրանքները, և պատկերաքանդակները, նախապես գրվել և նկարվել են մագաղաթի կամ թղթի վրա, որից հետո արտագրվել կամ քանդակվել են տարբեր շինությունների որմերին, տապանաքարերին և այլուր: Հետաքրքիր է այս տեսանկյունից Մարմաշենի արձանագրության առիթով Հ. Օրբելու դիտարկումը [ԴՀՎ, 1: X]: Ըստ այդմ էլ՝ դրանց հորինողներն իրենց կոչել են գրիչներ կամ նկարողներ, որոնք կարող էին լինել փորագրողներից կամ քարգործներից տարբեր անձինք: Այլ կերպ ասած՝ այսպիսի դեպքերում գործ ունենք իսկապես գրչի և նկարողի հետ, որոնք իրենց աշխատանքն ավարտելուց հետո այն փոխանցում են քարգործ վարպետներին՝ Ս.Բարխուդարյանի խոսքով՝ «սև» աշխատանքն իրականացնելու համար: Այս մասին տես Ս.Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 150–151:

6 Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանասիրության մեջ, Երևան, 1975, էջ 59:

7 Տպված է ՅԺԸ ձևով:

նակ հոգու փրկության համար⁸: Այս հավատամքով նրանք ձեռագրեր ու եկեղեցական սպասք են պատվիրել, խաչքարեր են կանգնեցրել, կառուցել կամ նորոգել են եկեղեցիներ, վանքեր ու տարաբնույթ շինություններ, տարատեսակ նվիրատվություններ արել կամ ինչ-որ չափով նպաստել են դրանց իրագործմանը՝ ամեն անգամ ակնկալելով անվանապես հիշատակության արժանանալը:

Առանձին հիշատակարաններում ոմանք անթաքույց կերպով գրում են այդ մասին: Մխիթար անունով մի քահանա, օրինակ, 1281թ. ձեռագրի պատրաստման համար թուղթ է կոկել այն հույսով, որ գրիչն իր անունն էլ արձանագրի հիշատակարանում. «Յիշեսձի՛ք եւ ի յաւարտ յիշատակիս զՄխիթար քահանայ, որ զթուղթս կոկեաց այսու յուսով, զի յիշատակեսցի անուն իւր ի զգիրս յայս» [Հիշ. ԺԳ: 519]: Իր անունը հիշատակարանում արձանագրելու և «յիշման արժանի լինելու» նպատակով Մատթէոս գրակապն էլ ձեռագիրն է անվճար կազմել. «...զի վասն այն ձրի եւ առանց վարձու կազմեցի» [Հիշ. ԺԴ, Ա: 500]: Ոմանք էլ իրենց հոգու փրկության համար խաչքար են կանգնեցրել: Դադիվանքի 1181թ. մի արձանագրության մէջ կարդում ենք. «Թիւ :ՈՒ: (1181) ես Սարգիս՝ որդի Աշոտա, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո հանկատեան իմո: Որք երկրպագէք, յաղաւթս յիշեսձիք, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն» [ԴՆՎ, 5: 215⁷⁵⁹]: Գանձասարի վանքի տարածքում կանգնեցված խաչքարի 1245թ. արձանագրության մեջ կրկին հոգու փրկությունն է նշված՝ որպես ակնկալիք. «ՈՂԴ. (1245) ես՝ Ամաղ, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ: Որ կարդայք, յաղաւթս յիշեցէ՛ք» [ԴՆՎ, 5: 68¹⁸⁸]: 1316թ. Թագէոս կրօնավորը Ավետարան է պատվիրել և այն նվիրել Մշո Առաքելոց վանքին՝ իր և իր հարազատների հոգիների փրկության համար. «Եւ ետու զսա ընծայ ի Սուրբ Առաքեալս յետ մահուան իմոյ վասն փրկութեան հոգւոյ իմոյ եւ ծնողաց իմոց եւ եղբարց եւ ազգականաց (...))» [Հիշ. ԺԴ, Ա: 302]

Կենաց մատյանում հիշատակված լինելու ահա այս նպատակադրումով էլ ձեռագիր և վիմագիր հուշարձանների գրիչները, քարգործ վարպետները, այդ հուշարձանների պատվիրատուները, նվիրատուները կամ նրանց հետ առնչվող անձինք ամրագրում են իրենց անունները հիշատակարաններում կամ վիմագրերում՝ իբրև բարի գործերի վկայություն⁹: Եվ այս տեսակյունից միանգամայն ընկալելի

8 Կենաց գրում բարի գործով հիշատակվելու ցանկությունը, անշուշտ, պատահական չէ, այն անմիջականորեն աղերսվում է Հովհաննեսի Հայտնությանը, որում նկարագրվում է Ահեղ դատաստանը. «(...) մտեալս որք կային առաջի աթոռոյն Աստուծոյ. և գիր բանային իրաքանչիւր գործոց: Եւ այլ գիրք բանային, որոց անուսից նոցա գրեալ են ի դպրութիւն կենաց. և դատաստան եղև մտելոցն ի գիրս ըստ իրաքանչիւր գործոց իւրոց. [...] և որ ոչ գտցի ի գիրս կենաց գրեալ անկցի ի լիճ հրոյն» [Հայտ. Հովհ., Բ. 12–15]: Դանիել մարգարեի տեսիլքում, թեև ոչ այսքան մանրամասն, սակայն նույնպես առկա է ահեղ դատաստանի այդ պատկերը, ուր «Հինաուրցը», այսինքն՝ Աստված «ատեան նստաւ, և դպրութիւնք բացան» [Դանիել, Է. 9–12]: Ահա թե ինչու բազմաթիվ ձեռագիր հիշատակարաններում կարելի է տեսնել հիշատակագիրների «...ուր (այսինքն՝ դատաստանի օրը – Խ. Հ.) բանք սպառին և գործք թագաւորեն» կաղապարը կամ նրա տարբերակները, որոնք թվում է՝ ավելի զգաստության կոչ են, հիշեցում առ այն, որ բարի գործերը և ոչ թե խոսքերն են լինելու հոգու փրկության գրավականը:

9 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Պետրոսյան, Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական նյութերի ժողովածու), հ. 6,

են այդ գրությունները չաղճատելու, չջնջելու կամ չքերելու բոլոր թախանձանքները: Ահա մի այդպիսի օրինակ ԺԴ դարից. «Եւ ոք յետոյ ժառանգէք զսա, անուև կամ գիր մի՛ քերէք զառաջնոցն ու զձերն ի տեղն գրէք, ապա յայլ տեղի գրեցէք եւ զձերն անուն: Եւ թէ ոք, մեծ կամ փոքր քերէ յառաջնոյն անունն ջնջի ի կենաց գրոյն, մի՛, մի՛ գործէք, զի չար է եւ մեծ չար» [Հիշ. ԺԴ: 197]:

Այս ամենի շնորհիվ տարաբնույթ արձանագրություններն ու հիշատակարանները պահել ու մեզ են փոխանցել հազարավոր հատուկ անուններ, այդ թվում՝ անձնանուններ:

Հասկանալի է, որ, գրանյութի ընձեռած հնարավորություններով պայմանավորված, ձեռագրերի հիշատակարանները կարող են պարունակել ավելի շատ անձնանուններ. երբեմն ձեռագրի մեկ հիշատակարանում հանդիպում են մի քանի տասնյակ անուններ: Այս առումով բացառիկ է 1347թ. Սուրխաթում Նատեր գրչի ընդօրինակած ձառնտիրը, որի հիշատակարանում նշված են շուրջ վեց տասնյակ անձանց անուններ [Հիշ. ԺԴ: 359–367]: Հիշատակված անձնանունների այսպիսի քանակ մեկ վիմագրի սահմաններում դժվար է պատկերացնել: Այնուամենայնիվ, համեմատությունը կարող է ավելի հստակ պատկերացում տալ: Արձանագրությունների թվով ԴՉՎ մատենաչարի ամենահարուստ պրակն առայժմ IV է, որն արտացոլում է ՀՀ Գեղարքունիքի մարզի վիմագրական ժառանգությունը: Արձանագրությունների ընդհանուր քանակն այս պրակում 1547 է: Դրանցում վկայված անձնանունների թիվը, ըստ անվանացանկի, 2100-ից մի փոքր ավելի է (մեր հաշվումով՝ 2172): Համեմատության համար նշենք, որ հայերեն ձեռագրերի հիշատակարանների ԺԳդ. ընդգրկող հատորը պարունակում է 832 հիշատակարանային միավոր, որոնցում հիշված անձանց ընդհանուր թիվը 2698 է¹⁰:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ հայերեն ձեռագրերի հիշատակարաններն ու վիմագրերն ունեն մի շարք ընդհանրություններ. գործառութային տեսանկյունից դրանք հիմնականում ծառայել են հիշատակելու և հիշատակված լինելու նպատակին, որով էլ գրավոր այս հուշարձանները հայոց հատկանունների և հատկապես անձնանունների յուրատեսակ շտեմարաններ են դարձել: Գրանյութով և ծավալային հնարավորություններով պայմանավորված՝ դրանցով ավելի հարուստ են ձեռագրերի հիշատակարանները:

1.1. Դիտարկումներ քննվող աղբյուրներում անձնանունների վկայությունների վերաբերյալ. աղբյուրները և ԱԶԲԱՌ-ը.

Տարատեսակ արձանագրությունների և ձեռագիր հիշատակարանների քննությունը ցույց է տալիս, որ դրանցում արձանագրված մի շարք անձնանուններ անհայտ են ԱՆՁԲԱՌ-ին, իսկ որոշ անձնանուններ էլ, թեև տեղ են գտել բառարանում, սակայն վիմագրերի և հիշատակարանների ավանդած այլ տվյալների շնորհիվ

Երևան, 2005, էջ 206–207: A. Sirinian, “Libri per il paradiso: aspetti di mentalita nei colofoni armeni del XIII”, *Orientalia Christiana Periodica*, 2017 (2), pp. 280–292. **Խ. Հարությունյան**, Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, էջ 188–194:

10 Ըստ այսմ՝ յուրաքանչյուր արձանագրության մեջ վկայված է $\approx 1,5$, իսկ հիշատակարանների դեպքում՝ $\approx 3,3$ անձնանուն:

Հնարավոր է ճշտել կամ լրացնել դրանց վկայությունները, կիրառությունների ժամանակային և տարածական սահմանները, որոնք, մեր կարծիքով, հայկական անձնանվանագիտության առաջիկա ուսումնասիրությունների նյութ պետք է դառնան¹¹: Այլ խոսքով՝ գրավոր այս երկու աղբյուրները մշտապես լրացնում են միմյանց և հարստացնում մեր գիտելիքներն այս կամ այն անվան վերաբերյալ:

Այսպես օրինակ, ԱնՁԲԱՌ-ին Մ. Բարխուտարեանցի «Աղուանից երկիր եւ դրացիք» ուսումնասիրությունից¹² մեկ օրինակով հայտնի է Գնդիկ իգական անձնանունը՝ հիշված մի հնատիպ գրքի 1709թ. հիշատակարանում [ԱնՁԲԱՌ, 1: 477]: Այս անձնանվան ավելի վաղ վկայությունն արական կիրառությամբ հաղորդում է 1331թ. մեկ այլ հիշատակարան, ուր Գնդիկ-ը ներկայանում է իբրև թուղթ կոկող [Հիշ. ԺԴ: 233]:

Վայոց ձորի Մարտիրոս գյուղի Ս. Աստվածածին վիմափոր եկեղեցու Հյուսիսային պատի ԺԳ դ. արձանագրության մեջ վկայված է Թուրինյ (սեռ. Թրնջին ձևով) իգական անձնանունը [ԴՀՎ, 3: 181⁵⁴⁹], մինչդեռ ԱնՁԲԱՌ-ին նույն անունը հայտնի է ԺԷ դ. ընդամենը մեկ օրինակով [ԱնՁԲԱՌ, 2: 373]:

Ամսաճան արական անունը ԱնՁԲԱՌ-ին հայտնի է մեկ վկայությամբ ԺԲ–ԺԳ դդ. թվագրվող մի աղբյուրից [ԱնՁԲԱՌ, 1: 140]: Այս անվան մեկ այլ հիշատակում գտնում ենք Վայոց ձորի Ս. Սիրոն վանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի անթվակիր արձանագրության մեջ [ԴՀՎ, 3: 571⁵¹], որի շնորհիվ Աճառյանի բառերով՝ «անսովոր» այս անունը հաստատվում է մեկ այլ վկայությամբ:

Շատ հաճախ քննվող սկզբնաղբյուրներից մեկում վկայված անձնանվան գոյությունը հաստատում կամ լրացնում է մյուս աղբյուրը: Ահա այդպիսի մեկ օրինակ. Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի գերեզմանատանը կանգնեցված խաչքարի 1288թ. արձանագրության մեջ վկայված է Հայրատուն արական անունը [ԴՀՎ, 4: 368¹⁴⁸²], որն անհայտ է ԱնՁԲԱՌ-ին: Անվան հայր բաղադրիչը շատ բեղուն է, դրանով բաղադրված են մի շարք անձնանուններ (Հայրապետ, Հայրադեղ, Հայրմէլիք, անգամ՝ Հայրուկ), մինչդեռ երկրորդ բաղադրիչը՝ տուն-ը, անսովոր է հայոց անձնանվանակերտման համակարգի համար (ընդամենը մեկ անուն ենք գտնում այս բաղադրիչով՝ Մեծատուն [Հիշ. ԺԵ, Ա: 550]), ուստի դրանով բաղադրված անվան գոյությունը կարող է տարակուսանք առաջացնել: Հայրատուն անվան գոյությունը, սակայն, հաստատվում է մի ձեռագիր հիշատակարանի շնորհիվ՝ գրված 1461թ., որում անունը վկայված է Հերատուն ձևով [Հիշ. ԺԵ, Բ: 158]:

Շատ հետաքրքիր են Քաղաք նորահայտ անձնանվան մեզ հայտնի երեք վկայությունները: Դրանցից հնագույնը հիշատակված է Տավուշի մարզի Իջևանի շրջանում գտնվող Դեղձնուտի վանքի գլխավոր եկեղեցու մուտքին կից կանգնեց-

11 Հիշատակարանների և տարբեր արձանագրությունների (հիմնականում վիմական) հաղորդած տվյալների հիման վրա մենք այդպիսի մի փորձ ենք արել Դեղ և նրանով բաղադրված անձնանունների քննության առիթով: Մանրամասն տե՛ս Խ. Հարությունյան, Դեղ արմատով բաղադրված անձնանունները վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում, «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2018, էջ 125–127:

12 Մակար ծ. վրդ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք (Միջին – Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 173:

ված խաչքարի 1274թ. արձանագրությունն մեջ՝ խաչաքանդակի հորիզոնական թևերից վեր՝ աջ կողմում. «Քրիստոս Աստուած ողորմի **Քաղաքին**», իսկ ձախ կողմում նույն կաղապարով հիշված է **Պաւղոսը** [ԴՂՎ, 6: 113_b]: Արձանագրությունն առաջինը հրատարակած Գ. Սարգսյանը այս երկու անունների մասին լրացուցիչ որևէ տեղեկություն չի հաղորդում¹³: Արձանագրությանը հաջորդիվ անդրադարձած Ս. Բարխուղարյանը գտնում է, որ հիշատակված Պաւղոսն ու Քաղաքը խաչքարի վարպետներն են և գուցե նաև հուշարձանախմբի ճարտարապետները կամ գոնե զարդաքանդակների վարպետները¹⁴: Նույն միտքն արտահայտված է նաև Իջևանի չրջանի վիմագրական ժառանգությունը պարունակող ԴՂՎ-ի VI պրակում [ԴՂՎ, 6: 114]: Քաղաքին և Պաւղոսին վանական համալիրի ճարտարապետներ կոչելու համար վիմագրագետների համար թերևս հիմք են ծառայել տվյալ խաչքարի վրա նրանց հիշատակման հատուկ տեղը և պատշաճ հարգարված այդ հատվածը¹⁵, քանի որ նրանց վերաբերող լրացուցիչ այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն:

Քաղաք անունն անհայտ է Անջևան-ին, ուստի՝ դրա այլ գործածությունների, այդ թվում՝ արական կամ իգական անձնանուն լինելու մասին տեղեկություններ բառարանից քաղել հնարավոր չէ:

Մեր պրպտումների արդյունքում, սակայն, ի հայտ եկան նույն անվան երկու այլ վկայություններ, որոնցում Քաղաքը գործածված է որպես իգական անձնանուն: Երկու անուններն էլ վկայված են հիշատակարաններում՝ համապատասխանաբար 1443 և 1451թթ.: Կարևոր այդ հատվածները մեջ ենք բերում ամբողջությամբ. «Քրիստոս Աստուած, ողորմեա՛ պարոն Մեծատան որդոյն եւ հօրն՝ Ղազարին, եւ մօրն՝ Խըթոյն, եղբօր՝ Յոհաննէսոյն, եւ քւերցն՝ Մարթա-խաթունին, եւ ձուխար-խաթունին, եւ Մարեմին, եւ **Քաղաքին**, եւ Բաղդատին» [Հիշ. ԺԵ, Ա: 550]: Հիշատակարանը նույնությամբ տպագրվել է նաև Մատենադարանի ձեռագրացուցակում՝ հաստատելով Քաղաք անվան այս վկայությունը¹⁶: Երկրորդ վկայությունը հետևյալն է. «(...) յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց՝ հօրն Սահակին և մօրն իւր **Քաղաքէ**¹⁷» [Հիշ. ԺԵ, Բ: 12]:

Փաստորեն, Դեղձնուտի վանքի նշված վիմագրում ունենք անվան առայժմ հնագույն վկայությունը, որն, ըստ Ս. Բարխուղարյանի, առնվազն խաչքարի վար-

13 Գ. Սարգսյան, Դեղձնուտի վանքը և նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1953, Գ, էջ 33–43:

14 Ս. Բարխուղարյան, նշվ. աշխ., էջ 143–145:

15 Նույն տեղում, էջ 145:

16 Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ս. Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երևան, 2004, սիւն 1382:

17 Ուշադրության է արժանի Քաղաքէ տրական հոլովաձևը: Երեք վկայություններից երկուսում անունը ի արտաքին թեքմանը հատուկ հոլովական վերջավորությամբ է (Քաղաք > Քաղաքին), մինչդեռ այս օրինակում տրականի հոլովակերտը է-ն է, որ հատուկ է -ի հանգող բազմաթիվ անձնանունների (Վանենի > Վանենէ, Միթի > Մթէ և այլն), ինչպես ավելի վաղ նկատել է Ս. Ավագյանը (Ս. Ա. Ավագյան, Վիմագրական պրպտումներ. «Ի հանգող անձնանունների սեռական, տրական հոլովների կազմությունը Ժ–ԺԳ դարերի վիմական արձանագրություններում», Երևան, 1986, էջ 169–203): Կարելի է այստեղից ենթադրել, որ անվան ուղղական այս օրինակում ունեցել է -ի վերջնահանգ՝ Քաղաքի:

պետներից է, իսկ դրանից շուրջ երկու դար անց գրված հիշատակարանները հաղորդում են նույն անվան իգական կիրառությունը¹⁸:

Այսպիսի օրինակները քիչ չեն, սակայն վերը հիշվածներն էլ բավական են տարատեսակ արձանագրություններում և ձեռագրերի հիշատակարաններում վկայված անձնանունների զուգահեռ քննություն անհրաժեշտությունը հաստատելու համար: Դա առանձին կարևորություն ունի նաև դժվարընթեռների անձնանունների վերականգնման համար, հատկապես երբ այդ անուններն արձանագրված չեն ԱՆՁԲԱՌ-ում:

2. Նորահայտ անձնանուններ և անձնանունների նոր վկայություններ վիճագրերից¹⁹

Ստորև ներկայացնում ենք մի շարք անձնանուններ, որոնք՝

ա. եզակի օրինակով են հայտնի ԱՆՁԲԱՌ-ին,

բ. ժամանակագրորեն ավելի վաղ են վկայված, քան ԱՆՁԲԱՌ-ի օրինակ(ներ)ը,

գ. անհայտ են ԱՆՁԲԱՌ-ին:

ԱՂՎՈՐՇԱՀ – ար. (°), հայ. աղուոր «գեղեցիկ, սիրուն» և պրսկ. šāš «թագավոր» բառերից:

Անվան երկու բաղադրիչներն էլ ակտիվորեն մասնակցում են հայոց անվանակերտմանը. հանդես են գալիս ինչպես ինքնուրույն, այնպես էլ բաղադրյալ անձնանունների կազմում՝ Աղուոր, Աղուորտիկին [ԱՆՁԲԱՌ, 1: 111–112], Շահ, Շահազիզ [ԱՆՁԲԱՌ, 4: 102–103], Վահրամշահ [ԱՆՁԲԱՌ, 5: 29] և այլն:

Աղվորշահ անձնանունը (սեռ. Աղվորշահին ձևով) մեկ անգամ վկայված է Անիի Առաքելոց եկեղեցու գավթի արևելյան պատի մեջ ազուցված խաչքարի հարևանությունը անթվակիր արձանագրության մեջ՝ որպես հայր (°) Ազիզտիկինի [ԴՀՎ, 1: 30₈₇]:

ԱՄԻՐՇԱՏ – ար., արաբ. amīr «իշխան» և հայ. շատ «բազում» բառերից:

Այստեղ էլ գործ ունենք անվանակերտ ակտիվ բաղադրիչների հետ, որոնք հաճախադեպ են բաղադրյալ անձնանուններում: Ըստ որում՝ երկու բաղադրիչներն էլ հանդիպում են անձնանունների թե՛ սկզբում, թե՛ վերջում:

Ամիր-ը մեզանում բազմիցս վկայված է նաև ինքնուրույն կիրառությամբ [հմտ. ԱՆՁԲԱՌ, 1: 119–120]: Շատ բառով են բաղադրված՝ Շատաղէկ, Շատարև, Շատեմայր, Շատեր [ԱՆՁԲԱՌ, 4: 148–149], Գոհարշատ [ԱՆՁԲԱՌ, 1: 486, Հիշ. Ժե, 2: 440], Գուլշատ [ԱՆՁԲԱՌ, 1: 506] և մի շարք այլ անձնանուններ:

Ամիրշատ անձնանունը մեկ անգամ հիշված է (սեռ. Ամիրշատի ձևով) Սյունիքի մարզի Անգեղակոթ գյուղի Ս. Վարդան եկեղեցու գավթում դրված խաչքարի

18 Ի հայտ եկած այս նոր փաստերի հիման վրա չի կարելի բացատել նաև այն վարկածը, որ Դեղձնուտի խաչքարի արձանագրության մեջ հիշված Քաղաքը նույնպես իգական անուն է և գուցե բոլորովին այլ աղբյուր է նրա անունն այդտեղ արձանագրված:

19 Անձնանունները ներկայացնում ենք այբբենական կարգով: Կից տրվում է անվանակրի սեռը, անվան ստուգաբանությունը, մատենագրական վկայություն(ներ)ը: Անհրաժեշտության դեպքում արվում են նաև անձնանվանն առնչվող դիտարկումներ:

1300թ. արձանագրութեան մեջ: Նրա հիշատակին եղբայրը՝ Աղուբը, կանգնեցրել է նշյալ խաչքարը [ԴՀՎ, 2: 124371]:

ԱՊՐԵԼ – ար., հայ. ապրել «կյանք ունենալ» բառից, ինչպես որ ունենք ար. Ապրես, Ապրիկ անունները [ԱնՁԲԱՌ, 1: 202]:

Ապրել արական անձնանվան երկու վկայություն ենք գտել ձեռագիր և վիմագիր հուշարձաններում՝

1. վկայված է Արցախի Կոստապատ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու որպես բարավոր դրված խաչքարի 1241թ. արձանագրութեան մեջ. խաչքար է կանգնեցրել իր և իր կնոջ հիշատակին [ԴՀՎ, 5: 94₂₈₄],

2. երկիցս հիշված է 1672թ. գրված հիշատակարանում և կնքադրոշմին [ՄՅՀՁՄՄ, 7: 1135]:

ԱՎԹԱՇԵՂ – ար., ծագ. անհայտ:

Անունը ԺԴԴ. մեկ օրինակով հայտնի է ԱնՁԲԱՌ-ին [ԱնՁԲԱՌ, 1: 343]: Անվան մեկ այլ վկայություն (հայց. գԱվթաշէրն ձեռով) գտնում ենք Որոտնավանքի Ս. Կարապետ եկեղեցու սրահի արևելյան պատի անթվակիր արձանագրութեան մեջ. հայր Սահակ միայնակյացի [ԴՀՎ, 2: 104₃₀₁]:

ԱՐԵՎՀԱՏ – սեռը անհայտ, հայ. արև «արեգակ» և հատ «հատիկ» բառերից:

Անվանակերտման այս կաղապարը հանդիպում է հայոց այլ անձնանուններում ևս, ինչպես՝ Գուհարհատ [Հիշ. ԺԵ, Բ: 404], Ոսկեհատ [ԱնՁԲԱՌ, 4: 189], Նոնահատ²⁰ և այլն:

Արևհատ անունը մեկ անգամ հիշված է Թանատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի անթվական արձանագրութեան մեջ՝ որպես նվիրատու եկեղեցու [ԴՀՎ, 3: 84₂₃₀]²¹:

ԲԱԼԱԲ – ար.: Աճառյանն այս անվան առիթով գրում է. «(...) արևել. թրք. bäläk «խատուտիկ գուլյնով (հատկապես եգ կամ կով)...: Գործածված պիտի լինի նաև մեր մեջ, որից և ունինք Պալաքեան ազգանունը» [ԱնՁԲԱՌ, 1: 364]: Աճառյանին, սակայն, այս անվան որևէ վկայություն հայտնի չէ:

Վիմագրերում մեզ հաջողվեց գտնել այդ անվան ԺԵ և ԺԸ դդ. երկու վկայություն՝

1. հիշված է Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի գերեզմանատանը կանգնեցված խաչքարի 1486թ. արձանագրութեան մեջ. խաչքարը կանգնեցնողներից մեկն է [ԴՀՎ, 4: 137552],

20 Kh. Harutyunyan, “Gli antroponomi nei colofoni armeni: gruppi semantici e nuovi nomi”, *Orientalia Christiana Analecta* 299, Colofoni armeni a confronto, Le sottoscrizioni dei manoscritti in ambito armeno e nelle altre tradizioni scritte del mondo mediterraneo, Atti del colloquio internazionale, Bologna, 12–13 ottobre 2012, a cura di A. Sirinian, P. Buzi, G. Shurgaia, Roma, 2016, pp. 55–61 (տևն ցանկի 14–րդ, 26–րդ և 35–րդ անունները):

21 Հետաքրքիր է, որ Արևհատ անձնանունը հայտնի է Աճառյանին, այդ մասին նա հիշատակում է Հատմելք անվան առիթով [ԱնՁԲԱՌ, 3: 61], սակայն իր տեղում Արևհատ անձնանունը արձանագրված չէ:

2. *Հիշված է (տր. Բալաքին ձևով) նույն մարզի Վարդենիկ գյուղի գյուղամիջի գերեզմանատան տապանաքարերից մեկի 1713թ. արձանագրության մեջ. կողակից Հաթամի [ԴՀՎ, 4: 162⁶⁶³]:*

Բալաք անունից են, ինչպես և նշում է Աճառյանը, Բալաքյան կամ Պալաքյան ազգանունները, որոնք արձանագրված են «Հայոց ազգանունների բառարան»-ում [ԱԶԳԲԱՌ: 40 և 284] և այսօր էլ լայն տարածում ունեն մեզանում:

ԲԱԽՏԱՂԷԿ – *իգ., հայ. բախտ «ճակատագիր, հաջողություն» և աղէկ «լավ» բառերից:*

Անունը ԺԵՂ. եզակի վկայությունը արձանագրված է ԱնՁԲԱՌ-ում [ԱնՁԲԱՌ, 1: 366]:

Բախտաղէկ անվան մեկ այլ վկայություն գտնում ենք Անիի Խաչուտի եկեղեցու անթվակիր արձանագրություններից մեկում [ԴՀՎ, 1: 61183]:

ԳԷՇՄԱՐԴ – *ար., հայ. գէշ «տգեղ»²² և մարդ բառերից:*

Անվան երկու բաղադրիչներն էլ նոր չեն հայոց անձնանունների կազմության տեսանկյունից: Միջնադարյան հայկական գրավոր հուշարձաններում ինքնուրույն կիրառությամբ ավանդված են Գէշ-ը, որի հնագույն վկայությունը գրանցված է 1255թ. [ԱնՁԲԱՌ, 1: 454], և -ուկ ածանցով Գիշուկ փաղաքական անունը, որը կրկին ավանդված է ԺԳՂ. [ԱնՁԲԱՌ, 1: 473]:

Իրանական ծագում ունեցող հայ. մարդ բաղադրիչը հանդիպում է միայն բաղադրյալ անձնանուններում, ինչպես՝ Մարդազատ, Մարդան և այլն [JUSTI 1895: 194–196, ԱնՁԲԱՌ, 3: 242]: Այդ անունների թվին պետք է հավելել նաև Մարդաձայն արական նորահայտ անունը՝ ավանդված 1190թ. Այրիվանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում²³:

Գէշմարդ անվան երեք վկայություն ենք գտել՝

1. *վկայված է Օշականի եկեղեցու հյուսիսային որմի 1288թ. արձանագրության մեջ՝ որպես ամիրա²⁴,*

2. *հիշատակված է Երևանի Ս. Աստվածածին (Կաթողիկե) եկեղեցու հարավային պատի 1301թ. արձանագրության մեջ՝ որպես եկեղեցու նվիրատու²⁵,*

22 Բառի ծագումն առայժմ հստակ չէ, տե՛ս ՀԱԲ, 1: 550, ՀՍԲ: 159:

23 **Խ. Հարությունյան**, Անձնանունները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, էջ 208–209:

24 **Յովհաննու Եպիսկոպոս Շահխաթունեանց**, Ստորագրություն Կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատախրութեամբ Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 258 (վերահրատարակություն): Շահխաթունեանցն անունը անջատ է կարդացել՝ Գէշ մարդ: Անջատ է տրված նաև Ալիշանի մոտ՝ Գէշ-Մարդ, տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ բնաշխարհի Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 190: Կոստանյանը անունը միասին է դնում, տե՛ս Վիմակյան տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց, կազմեաց՝ **Կ. Կոստանեանց**, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 130c:

25 **Կ. Ղաֆաղարյան**, Յերևանի Կաթողիկեյի և նորահայտ հուշարձանի վիմակյան արձանագրությունները, «Տեղեկագիր ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի», գիրք Ա, Յերևան, 1938, էջ 173: **Ս. Բարխուդարյան**, Մի քանի դիտողություններ Երևանի կաթողիկե եկեղեցու արձանագրությունների վերաբերյալ, ՏՀԳ, 1947, Հ^տ 5, էջ 69: **Կ. Ղաֆաղարյան**, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմակյան արձանագրությունները, Երևան, 1975, էջ 138:

3. վկայված է (Գիշմարդ ձևով) Գանձասարի վանքի գավթի արևմտյան պատի Հյուսիսային մասի 1402թ. արձանագրության մեջ: Հիշված է որպես միայնակյազ և կանգնեցնող խաչի [ОРБЕЛИ 2016: 133⁵³, ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ 1981: 137¹¹¹, ԴՀՎ, 5: 54¹³³]:

ԳՈՒԼԱԶԻԶ – ար., պարս. gul «վարդ» և արաբ. azīz «նվիրական, մաքուր, թանկագին» բառերից:

Անունը բազմաթիվ օրինակներով հայտնի է Անջբևան-ին, սակայն դրանց հնագույն վկայությունը ժՁդ. է [Անջբևան, 1: 496–497]:

Մեզանում Գուլագիլ անվան վաղագույն վկայությունը, որը հավանաբար նաև գուլ-ով բաղադրված անձնանունների հնագույն օրինակն է²⁶, ավանդված է (սեռ. Գուլագրզի ձևով) Շիրակի մարզի Հայկաձոր գյուղի Կարմիր վանքի՝ ԺԱ–ԺԲդ. արձանագրության մեջ²⁷: Հայր տեր Մելիքսէթի [ԴՀՎ, 10: 24¹⁴]: Գուլագիլ անվան վաղ վկայություններից են նաև ԺԵդ. հետևյալ օրինակները՝

1. նշված է 1444թ. Աղթամարում գրչագրված Ավետարանի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Ա: 566],

2. արձանագրված է (տր. Գուլագիլին ձևով) 1447թ. Աղթամարում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում. հայր Ստեփանոս գրիչի [Հիշ. ԺԵ, Ա: 609],

3. հիշված է 1459թ. Շատվան գյուղում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Բ: 125],

4. վկայված է 1462թ. մի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Բ: 183],

5. որդի Յովանէսի, նշված է (Գուլագիլ ձևով) 1499թ. գրված Ավետարանի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Գ: 286]:

ԵՂԲԱՅՐԱՆՈՒՆ – ար., հայ. եղբայր և անուն բառերից:

Անվան երկու բաղադրիչներն էլ ակտիվորեն մասնակցում են հայերեն անձնանունների կազմությանը: Դրանցից եղբայր-ը հանդես է գալիս ինչպես ինքնուրույն՝ եղբայր կամ -իկ ածանցով փաղաքշական՝ եղբայրիկ տարբերակներով [Անջբևան, 2: 102], այնպես էլ բաղադրյալ անձնանուններում՝ եղբայրադեղ²⁸: Եթե հավելենք եղբայր բառի ժողովրդախոսակցական աղբեր և դրանով բաղադրված անունները միջնադարյան ձեռագիր ու վիմագիր հուշարձաններում (Աղբեր, Աղբերիկ, Աղբերչահ [Անջբևան, 1: 102], Աղբերադեղ²⁹), ապա պարզ կդառնա, որ այս բաղադրիչով անձնանունները բավականին տարածված են եղել:

Անձնանվան երկրորդ բաղադրիչը՝ անուն-ը, նույնպես բեղուն է: Այն ինքնուրույն գործածություն չունի և հանդես է գալիս միայն բաղադրյալ անձնանուններ-

26 Նկատենք, որ Գուլ-ով կազմված անունները, ըստ վիմագրերի և ձեռագրերի հիշատակարանների, լայնորեն տարածում են գտնում ԺԵ դարից սկսյալ: Այս մասին հիշատակում է նաև Աճառյանը [Անջբևան, 1: 496]: Առանձին անուններ, սակայն, վկայված են դեռևս ԺԳ (Գուլասար [Անջբևան, 1: 498]) և ԺԴ (Գուլխաթուն [Անջբևան, 1: 504], Գուլսարաթ [Անջբևան, 1: 505]) դարերից:

27 Անձնանունը ցանկում տեղ է գտել Գուլագրզ ձևով [ԴՀՎ, 10: 198]:

28 Խ. Հարությունյան, Դեղ արմատով բաղադրված անձնանունները, էջ 123:

29 Նշվ. աշխ., էջ 121:

րում՝ որպես վերջնաբաղադրիչ՝ Հայրանուն [ԱնջԲԱՌ, 3: 37], Մայրանուն [ԱնջԲԱՌ, 3: 190], Պապանուն [ԱնջԲԱՌ, 4: 224–225], Տիրանուն [ԱնջԲԱՌ, 5: 157], Օտարանուն³⁰ և այլն:

Եղբայրանուն նորահայտ անունը մեկ անգամ վկայված է Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղի տարածքում գտնվող Մակարավանքի 1251թ. արձանագրութայան մեջ՝ որպես վանքի նվիրատու [ԴՀՎ, 10: 3535]:

Արձանագրութայան նախորդ հրատարակիչներն այս անունը կարդացել են անջատ կերպով՝ «Եղբայր անուն»³¹, որի պատճառով այն կիսատ՝ եղբայր ձևով տեղ է գտել Աճառյանի բառարանում [ԱնջԲԱՌ, 2: 102]: Անունն անջատ է ներկայացված նաև Դիվանի նոր հրատարակութայան մեջ [ԴՀՎ, 10: 3535], թեև գրչագրում և արձանագրութայան լուսանկարում [ԴՀՎ, 10: 14835] անջատման ընդգծված հետք չի երևում, որը կարող էր անունն առանձնացնելու պատճառ լինել: Նկատենք, որ նույն պրակի անվանացանկում անձնանունը տեղ է գտել ճիշտ ձևով [ԴՀՎ, 10: 198]:

Ի հավաստումն եղբայրանուն անձնանվան միասնական գրութայան՝ հրաշալի մի օրինակ է Աղբէրանուն անձնանունը, որի ուղիղ ձևը Աղբէրանո տրական հոլովից ճիշտ կերպով վերկանգնել է Ս. Ավագյանը³²:

ՋԱՐԱՋԻՋ – սեռը անհայտ, պրակ. zar «ոսկի» և արաբ. aziz «նվիրական, մաքուր, թանկագին» բառերից:

Անվան երկու բաղադրիչներն էլ առանձնաբար հանդիպում են բաղադրյալ մի շարք անձնանունների կազմում՝ Ջարգուլ [ԱնջԲԱՌ, 2: 175], Ջարմելէք [ԱնջԲԱՌ, 2: 175], Ջարուհի [ԱնջԲԱՌ, 2: 175]: Այսօր էլ մեզանում լայն տարածում ունի նշյալ Ջարուհի անձնանունը, որի հայերեն համարժեքը Ոսկի իգական անունն է: Անվան aziz բաղադրիչը նույնպես հաճախաբեկ է հայոց անձնանուններում (տե՛ս Գուլագիզ անունը):

Ջարագիզ անվան երկու վկայութայուն ենք գտել՝

1. Հիշված է Սիսիանի շրջանի Բնունիս գյուղի եկեղեցու հարավային պատին ամրացված խաչքարի 1432թ. արձանագրութայան մեջ [ԴՀՎ, 2: 117₃₄₉],

2. Հիշված է (հայց. գ.Ջարագիզն ձևով) 1613թ. Դաշտ գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. գյուղի տանուտերերից [Հիշ. ԺԷ, Ա: 489]:

ԹՈՒՐԻՆՋ – իգ., պրակ. turunǰ կամ turinǰ «մի տեսակ նարինջ, թուրինջ» բառից:

Անունը հայտնի է ԱնջԲԱՌ-ին երեք օրինակով, որոնցից հնագույնը 1613թ. է [ԱնջԲԱՌ, 2: 373]:

30 Kh. Harutyunyan, “Gli antroponomi nei colofoni armeni: gruppi semantici e nuovi nomi”, p.53.

31 Աբել եպս. Մխիթարեանց, Տեղագրութիւն Մարմաշիւնյ [և այլ] վանացն ի Շիրակ, Երկերի ժողովածո, Ս. Էջմիածին, 2009, էջ 98, Ղ. Ալիշան, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեաց Վենետիկ, 1881, էջ 166, Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ և մայրաքաղաքին Անոյ, աշխատասիրութիւն՝ Մերքիսեղեկ քհ. Գեորգեանց Շիրակունոյ, Աղէքսանդրապոլ, 1903, էջ 168:

32 Ս. Ավագյան, Վիմական արձանագրութայունների բառարանություն, Երևան, 1978 («Աղբերանուն (<Տեղբայրանուն), թե՛ Ախբերան»), էջ 20–21:

Մեզանում Թուրինջ անվան վաղագույն վկայությունը գտնում ենք (տր. Թրնջին ձևով) Վայոց ձորի Մարտիրոս գյուղի Ս. Աստվածածին վիմափոր եկեղեցու հյուսիսային պատի ժԳՂ. թվագրվող վիմագրում [ԴՀՎ, 3: 181₅₄₉]:

ԽՈՒԲՆԱԶ – իգ. (°), պրսկ. xūb «լավ» և nāz «նազանք» բառերից:

Նորահայտ այս անձնանունը կազմող բաղադրիչներով միջնադարյան հայկական աղբյուրներին հայտնի են մի շարք անձնանուններ: Ըստ որում՝ դրանք վկայված են նաև ինքնուրույն կիրառություններ՝ Խուբ, Խուբիկ, Խուբնիգար [ԱնՁԲԱՌ, 2: 550–552], Նազ, Նազենի, Նազիկ, Նազխաթուն [ԱնՁԲԱՌ, 4: 8–11], Հերիքնազ [ԱնՁԲԱՌ, 3: 86] և այլն:

Խուբնազ անձնանվան երկու վկայություն ենք գտել՝

1. Հիշված է (տր. Խուբնագին ձևով) Գեղարքունիքի մարզի Վանեվան գյուղի Վանքով Խարաբա կոչվող բնակավայրի եկեղեցու մոտ գտնվող խաչքարի 1508թ. արձանագրության մեջ [ԴՀՎ, 4: 128₅₁₃],

2. Հիշված է (տր. Խուբնագին ձևով) նույն մարզի Ներքին Գետաշեն գյուղի Կոթավանքի բակում տեղադրված խաչքարի անթվակիր արձանագրության մեջ [ԴՀՎ, 4: 277₁₁₆₀]:

ԽՈՒՊՆԻԳԱՐ – իգ., պրսկ. xūb «լավ» և nigār «նկար, պատկեր» բառերից:

Անձնանունը 1683թ. եզակի վկայությամբ հայտնի է Աճառյանին [ԱնՁԲԱՌ, 2: 552]: Այս անվան ևս երեք վկայություն հաղորդում են ձեռագիր և վիմագիր հուշարձանները, որոնցից երկուսը ժԵՂ. են՝

1. Երկիցս վկայված է 1486 և 1489թթ. Ասպինակ գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. դուստր ստացող Դովլաթիարի [Հիշ. ԺԵ, Գ: 87, 11],

2. Հիշատակված է (տր. Խուբնիկարին ձևով) Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Կոթավանքի գերեզմանատան խաչքարերից մեկի անթվակիր արձանագրության մեջ [ԴՀՎ, 4: 277₁₁₆₃]:

ԾԱՐԱԻԿ – ար., հայ. ծարա «պապակ, կարոտ, ցամաք» բառից³³ -իկ նվագափաղաքչական ածանցով:

Անունը մեկ անգամ վկայված է Վայոց ձորի Վերին Ուլգյուր գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցու արևմտյան մասում կանգնեցված խաչքարի 1321թ. արձանագրության մեջ: Եղբայր խաչը կանգնեցնող Պետրոսի [ԴՀՎ, 3: 38₉₄]:

ՀԱՅՐԱՆՈՒՆ – ար., հայ. հայր և անուն բառերից (անվան կազմության համար տե՛ս նաև Եղբայրանուն անձնանունը):

Հայրանուն-ը եզակի օրինակով տեղ է գտել ԱնՁԲԱՌ-ում [ԱնՁԲԱՌ, 3: 37]: Ստորև բերում ենք անվան այլ վկայություններ՝

1. Հիշված է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի գերեզմանատանը գտնվող 1288թ. խաչքարի արձանագրության մեջ: Եղբայրների հետ խաչքար է կանգնեցրել ծնողների հիշատակին [ԴՀՎ, 4: 368₁₄₈₂],

33 Արմատի ծագումն աստույզ է, տես ՀԱԲ, 2: 449, ՀՄԲ: 360:

2. վկայված է (ուղղ. Հայրանուն, սեռ. Հայրանունայ և Հայրաննոյ ձևերով) 1348թ. Միլիվանքո՞ւմ ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում: Հայր Հայրապետ երեցի և որդի Գրիգորի, Ավետարանի ստացող [Հիշ. ԺԴ: 349–350],

3. վկայված է Գեղարքունիքի մարզի Մեծ Մազրա գյուղի հին գերեզմանատան անթվակիր մի տապանագրում: Ումեկի հետ տապանաքար են դրել իրենց սպանված որդու հիշատակին [ԴՀՎ, 4: 335₁₃₆₀]:

Հետաքրքիր է երկրորդ օրինակը. միևնույն հիշատակարանում Հայրանուն-ը երկու տարբեր հորովմամբ է ներկայանում՝ ա (Հայրանունայ) և ո (Հայրաննոյ): Առաջինն անկասկած հետևում է հատուկ անունների հորովման՝ դեռևս հին հայերենից եկող օրինաչափությունը, սակայն ո հորովումը բաղադրյալ այս անունների համար ևս նորություն չէ: Ս. Ավագյանը վկայակոչում է այսպիսի մի քանի անուններ՝ Ախպէրաննոյ [ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1963: 164–165₃₂, ԴՀՎ, 9: 149₂₆₇], Տիրաննո [ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1963: 248₁₇₀, ԴՀՎ, 9: 237₄₈₀]³⁴:

ՀԱՅՐԱՏՈՒՆ – ար., հայ. հայր և տուն բառերից (տե՛ս § 1.1.):

Անսովոր է անվան տուն բաղադրիչը. գրավոր հուշարձաններում այն մեկ անգամ հանդիպում է Մեծատուն անվան մեջ [Հիշ. ԺԵ, Ա: 550]:

Հայրատուն անվան երկու վկայություն ենք գտնում ԺԳ և ԺԵ դդ.

1. հիշված է Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի գերեզմանատանը գտնվող 1288թ. խաչքարի արձանագրության մեջ: Եղբայրների հետ խաչքար է կանգնեցրել ծնողների հիշատակին: Նկատենք, որ եղբայրների մեջ է նաև Հայրանունը [ԴՀՎ, 4: 368₁₄₈₂],

2. արձանագրված է (տր. Հէրատունին ձևով) 1461թ. Ուրծն գյուղում (Վեդի (°) [ՏԵՂԲԱՌ, 5: 212]) ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում: Հայր ձեռագիրը ստացող Ներսէս քահանայի [Հիշ. ԺԵ, Բ: 158]:

ՄԱՄՇԱՀ – իգ., հայ. մամ «տատ» և պրսկ. šāh «թագավոր» բառերից:

Նկատենք, որ երկու բաղադրիչներն էլ առատորեն վկայված են թե՛ ինքնուրույն և թե՛ բաղադրյալ անձնանուններում՝ Մամա, Մամախաթուն (նաև Մամխաթուն), Մամեր և այլն [ԱՆՁԲԳ, 3: 176–182], նույնը վերաբերում է նաև շահ բաղադրիչին և դրանով կազմված անձնանուններին (տե՛ս Աղվորշահ անունը):

Ստորև ներկայացնում ենք այս անձնանվան մեր գտած վկայությունները.

1. հիշված է Անիի Հովհաննեսի եկեղեցու հարավային պատի արևմտյան մասի 1251թ. արձանագրության մեջ [ԴՀՎ, 1: 930],

2. արձանագրված է (տր. Մամշահին ձևով) ԺԳ դ. մի հիշատակարանում [ՄՅՀՁՄՄ, 9: 1061],

3. վկայված է 1314թ. մի հիշատակարանում. քոյր ձեռագրի հետագա ստացող Նորշահի [Հիշ. ԺԴ, Ա: 267],

4. զուգակից Մխիթար Խալիթյանի, ամուսնու հետ հիշված են Անիի Մխիթարի բուրգի արտաբուստ վերին մասի խաչքարի անթվակիր արձանագրության մեջ [ԴՀՎ, 1: 4₉],

34 Ս. Ա. Ավագյան, նշվ. աշխ., էջ 20–21:

5. վկայված է Գեղարքունիքի մարզի Մեծ Մազրա գյուղի ներկայումս գտնվելու վայրն անհայտ անթվակիր խաչքարի արձանագրություն մեջ. մայր խաչքարը հոր և մոր հիշատակին կանգնեցրած Ամիրզատի [ԴՀՎ, 4: 3431³⁸⁸]:

ՇԱՐԱԲ – ար (°), Աճառյանին անթվակիր մի հիշատակարանից և եզակի վկայությամբ հայտնի է այս անունը, որը նրա ենթադրությամբ ծագում է արաբ. šarāb «գինի» բառից:

Մեզանում Շարաբ անվան գործածություն ավելի վաղ վկայությունն հաղորդում է Նորավանքի վիմագրերից մեկը [ԴՀՎ, 3: 225718], որի նոր ընթերցման շնորհիվ պարզվել է նաև գրչություն 1243 թվականը³⁵:

ՊԱՍՏԵՂ – ար (°), հայ. պաստեղ «մրգահյուսված եփվող լավաշանման ուտելիք» բառից:

Աճառյանին հայտնի է այս անձնանվան մեկ վկայությունն Հաղբատի վանքի անթվական մի արձանագրությունից [ԱնՁԲԱՌ, 4: 228]:

Նկատենք, որ այս անվան գոյությունը հավաստող Աճառյանի վկայաբերած արձանագրությունը³⁶ հետագայում այլ ընթերցումներ է ունեցել, որոնցից ոչ մեկով Պաստեղ անվան ընթերցումը չի հաստատվել [ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1963: 164³², ԴՀՎ, 9: 149²⁶⁷]: Ըստ այսմ՝ կարելի է կասկածել ընդհանրապես այդ անվան գոյությունը:

Հետաքրքիր է ընդգծել և այն, որ ըստ Աճառյանի՝ պաստեղ բառի հնագույն վկայությունը հայերենում ժէդ. է՝ ավանդված Գր. Դարանաղցու «Ժամանակագրություն» մեջ [ՀԱԲ, 4: 31]: Այսինքն՝ ենթադրաբար գոյություն ունեցած Պաստեղ անձնանվան հիմքում ընկած պաստեղ բառի (ապելյատիվ) ավելի վաղ վկայություն Աճառյանին հայտնի չէ:

Մեր որոնումներն այս ուղղությամբ ի հայտ բերեցին նոր փաստեր. նախ, մեզ հաջողվեց գտնել պաստեղ բառի գործածությունը 1227թ. Ավագ վանքում (տեղորոշումն անստույգ) ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում. «Սուրբ Աստուծոյ, աւգնեա՛ Սոսթենէս քահանայի, որ զպաստեղս եբեր մեզ» [Հիշ. ԺԳ: 146], իսկ Վայոց ձորի մարզի Հերհեր գյուղի Ս. Գևորգ եկեղեցու հյուսիսարևելյան մույթի մեջ ագուցված խաչքարի 1447թ. արձանագրության մեջ վկայված գտանք նաև Պաստեղ անձնանունը [ԴՀՎ, 3: 66¹⁸³]³⁷:

Այսպիսով, մի կողմից ունենք 1227թ. վկայված պաստեղ «մրգահյուսված պատրաստված ուտելիք» բառի վկայությունը, իսկ մյուս կողմից՝ դրա անձնանվանական վկայությունը 1447 թվականից:

ՏՈՒՆԿ – ար. (°), թերևս հայ. տունկ բառից կամ գուցե Նորատունկ անվան կրճատ տարբերակ (հմտ. Աստվածատուր > Ծատուր, Ասատուր և այլն):

35 Ս. Մաղումյան, Նորահայտ վիմագրեր Նորավանքից, «Հուշարձան» տարեգիրք, հ. Բ, Երևան, 1993, էջ 95: Կ. Մաթևոսյան, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017, էջ 117⁴⁵

36 Հնախօսական տեղագրություն Հաղբատայ աշխարհահռչակ վանից Սրբոյ Նշանի, գործ Ռ. Բէգ Երզնկեանց Հաղբատեցոյ, Վաղարշապատ, 1886, էջ 30:

37 Ղ. Ալիշանն այս անունը կարդացել է Աղբատ ձևով, տե՛ս Ղ. Ալիշան, Սիսական. տեղագրություն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 111:

Ե. Լալայանի կազմած Վասպուրականի ձեռագրացուցակի 1329թ. մի հիշատակարանում արձանագրված է Տնկանն անվանաձևը³⁸, որը «Տո՞ւնկ թե Տնիկ» տարակուսանքով տեղ է գտել անձնանունների բառարանում [ԱնՁԲԱՌ, 5: 172]: Իմիջիայրոց նկատենք, որ ԺԴ հիշատակարանների ժողովածուում այդ հատվածը կրճատված է [Հիշ. ԺԴ: 215]:

Աճառյանին կասկածելի թվացող Տունկ անվան երկու վկայություն ենք գտել՝

1. հիշված է (տր. Տնկին ձևով) Հառիճավանքի զանգակատան ճակատային մասում գտնված, այժմ չպահպանված քարե գուռի անթվակիր և խիստ վնասված արձանագրություն մեջ [ԴՂՎ, 10: 57⁷⁷]: Դատելով արձանագրություն զրչագրի տառաձևերից, պետք է, որ Լալայանի արտագրած հիշատակարանի թվականից շատ ուշ չլինի. ենթադրաբար՝ ԺԳ–ԺԴ դդ.,

2. վկայված է (տր. Տունկին ձևով) 1603թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. եղբայր Հայրապետի, որ նպաստեց գրչությանը [Հիշ. ԺԷ, Ա: 97]:

Երկու հիշատակարաններում էլ անձնանունը ի արտաքին թեքմամբ է ներկայանում՝ առաջինի դեպքում օրինաչափ կերպով հնչյունափոխված է նաև ու-ն:

Տունկ անունը վկայված է նաև փաղաքշական -իկ ածանցով՝ Տնկիկ, որի մի եզակի վկայություն 1304թ. Տփխիսում գրված հիշատակարանից հայտնի է Աճառյանին [ԱնՁԲԱՌ, 5: 171, նույն օրինակը տե՛ս նաև Հիշ. ԺԴ, Ա: 82]: Տնկիկ փաղաքշական անձնանվան մեկ այլ վկայություն (Տնգիկ ձևով) գտնում ենք 1308թ. Բերդակ գյուղում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. եղբայրների հետ ձեռագիր է գնել և նվիրել Թումա քահանային [Հիշ. ԺԴ, Ա: 147]: Հավանաբար Լալայանի արտագրած հիշատակարանում վկայված Տնկան անվանաձևը կարելի է համարել Տնկիկ անվան սեռ.-տր. հոլովաձև:

Ըստ ամենայնի՝ նույն Տունկ անունից -եր հոգնակերտ մասնիկով է կազմված նաև Տունգեր անունը, որում ունգական ն-ից հետո խուլ կ-ն ձայնեղացած է (կ > գ – Տունկ > Տունգ > Տունգեր, հմմտ. ընկեր > ընգեր, տնկել > տնգել և այլն): Այս փաստի օգտին է խոսում նաև վերը հիշված Տնկիկ անվան Տնգիկ ձևը, որտեղ հնչյունական նույն երևույթն է գործել: Ինչ վերաբերում է անվան -եր հոգնակիակերտ վերջնաբաղադրիչին, ապա այն բավականին տարածված է հայոց անձնանուններում՝ Լուսեր, Շատեր, Շողեր և այլն:

Տունգեր անձնանունը մեկ անգամ վկայված է (տր. Տունգերոյն ձևով) 1300թ. Կարինում գրչագրված Ավետարանի հիշատակարանում. ազգական ձեռագրի ստացող Յովհաննի [Հիշ. ԺԳ: 861]:

Այսպիսով, կարելի է ասել, որ ըստ ձեռագիր և վիմագիր հուշարձանների՝ Տունկ և դրանով բաղադրված Տնկիկ, Տունկեր անձնանունները մեզանում գործածվել են ԺԳ և ԺԴ դդ., հետագա շրջանում դրանց կիրառությունը հետքեր չենք գտել:

ՓԱՐԻՍԱԹՈՒՆ – Իգ., պրսկ. pāri «պարիկ, գեղեցկադեմ ոգի» և թուրք., թաթար. xatun «ազնվական տիկին» բառերից:

38 Ցուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Եր. Լալայան, Թիֆլիս, 1915, էջ 179:

Անվան երկու բաղադրիչներն էլ հաճախադեպ են հայոց անձնանուններում, դրանք հանդես են գալիս ինչպես ինքնուրույն գործածություններ, այնպես էլ բաղադրյալ անունների կազմում և բազմաթիվ օրինակներով վկայված են տարբեր գրավոր աղբյուրներում, ըստ այդմ՝ արձանագրված են նաև ԱՆՁԲԱՌ-ում, ինչպես՝ Փարի, Փարիզագ, Փարիխան [ԱՆՁԲԱՌ, 5: 194]: Անհամեմատ ավելի շատ են խաթուն կամ դրանով կազմված անունները:

Փարիխաթուն անձնանունը եզակի վկայություններով՝ Փարուխաթուն ձևով, հայտնի է Աճառյանին անթվական մի հիշատակարանից, այդ անվան մեկական նոր վկայություն հաղորդում են ձեռագիր և վիմագիր աղբյուրները՝

1. հիշված է (տր. Փարիխաթունին ձևով) Հալիձոր գյուղից մոտ 5 կմ հեռավորություններ գտնվող Հարանց անապատի եկեղեցու արևմտյան մուտքի կամարակալ քարի անթվական արձանագրության մեջ. մայր Սահակ աբեղայի, որ նորոգեց եկեղեցին [ԴՀՎ, 2: 54₁₃₄],

2. անունը հետագա ձեռքով ավելացված է 1484թ. մի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Գ: 61]:

Ամփոփում

Ձեռագրերի հիշատակարանների և տարատեսակ արձանագրությունների, մասնավորապես վիմագրերի ուսումնասիրությունը փաստում է, որ դրանցում վկայված են բազմաթիվ նորահայտ անձնանուններ կամ անձնանունների նոր վկայություններ, որոնք ոչ միայն հարստացնում են հայոց անձնանունների շտեմարանը, այլև փոխում են մեծաթիվ անձնանունների ժամանակագրական և սեռային (արական կամ իգական) կիրառությունների մասին մեր պատկերացումները: Վերը թվարկված անձնանունները մի աննշան մասն են այս վիթխարի նյութի և մեկ անգամ ևս ընդգծում են հայոց անձնանունների նկատմամբ համակարգված ու պատշաճ վերաբերմունքի անհրաժեշտությունը:

Համառոտագրումներ սկզբնաղբյուրների և բառարանների

ա. Հիշատակարաններ և ձեռագրացուցակներ՝

Հիշ. Ե-ԺԲ-Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր, աշխատասիրություններ Ա. Մաթևոսյանի, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1988:

Հիշ. ԺԳ-Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

Հիշ. ԺԴ-ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՄՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1950:

Հիշ. ԺԴ, Ա-Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա (1301-1325թթ.), կազմողներ՝ Խաչիկյան Լ., Մաթևոսյան Ա., Ղազարոսյան Ա., «Նաիրի» հրատ., Երևան, 2018:

Հիշ. ԺԵ, Ա-ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՄՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1955:

Հիշ. ԺԵ, Բ-ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՄՄՌ ԳԱ հրատ., Երևան, 1958:

Հիշ. ԺԵ, Գ-ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

- Հիշ. ԺԷ, Ա – Հայերեն ձեռագրերի ժեղ դարի հիշատակարաններ (1601–1620թթ.),
 Կ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974:
- Հիշ. ԺԷ, Բ – Հայերեն ձեռագրերի ժեղ դարի հիշատակարաններ (1621–1640թթ.),
 Կ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978:
- Հիշ. ԺԷ, Գ – Հայերեն ձեռագրերի ժեղ դարի հիշատակարաններ (1641–1660թթ.),
 Կ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

ՄՅՀՁՄՄ, 7 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Է. (ձեռագիրք 2101–2400), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Նախիր» հրատ., Երևան, 2012:

ՄՅՀՁՄՄ, 9 – Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Թ. (ձեռագիրք 2701–3000), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Նախիր» հրատ., Երևան, 2017:

բ. Վիճակագրեր՝

ԴՀՎ, 1 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1966:

ԴՀՎ, 2 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. II, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960:

ԴՀՎ, 3 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967:

ԴՀՎ, 4 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973:

ԴՀՎ, 5 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982:

ԴՀՎ, 6 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Զանփողդյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977:

ԴՀՎ, 9 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆաղարյան, Ս. Տ. Սաղունյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2012:

ԴՀՎ, 10 – Դիվան հայ վիճակագրութեան, պր. X, Շիրակի մարզ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017:

Ղաֆաղարյան, Կ. 1963 – Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիճակական արձանագրությունները, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Երևան:

Ուլուբաբյան, Բ. 1981 – Գանձասար, «Հայաստան» հրատ., Երևան:

Օրбели, Ի. 2016, *Надписи Гандзасара и навоуштука, собраны и подготовил к печати к. и. н. А. Акопян, Ереван.*

գ. Բառարաններ՝

ԱԶԳԲԱՌ – Տ. Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, երկրորդ լրացված հրատարակություն, հեղ. հրատ., Երևան, 2010:

ԱՆՁԲԱՌ – Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 1–5, Երևանի պետական համալսարանի հրատ., Երևան, 1942–1962:

ՀԱԲ – Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հ. 1–4, Երևան, 1926, վերահրատ. Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1971:

ՀՍԲ – Գ. Զահեդյան, *Հայերեն ստուգաբանական բառարան, խմբագրությունը և առաջաբանով՝ Վ. Սարգսյանի, «Ասողիկ» հրատ., Երևան, 2010:*

ՏԵՂԲԱՌ, 5 – Թ. Խ. Հակոբյան, Ստ. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Տ–Յ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2001:*

JUSTI, F. 1895 – *Iranisches Namenbuch, Marburg, N. G. Elwertsche Verlagsbuchhandlung.*

ХАЧИК АРУТЮНЯН

ЛИЧНЫЕ ИМЕНА В АРМЯНСКИХ НАДПИСЯХ И КОЛОФОНАХ РУКОПИСЕЙ: НОВОВЫЯВЛЕННЫЕ ЛИЧНЫЕ ИМЕНА В ЛАПИДАРНЫХ НАДПИСЯХ

Ключевые слова: *рукопись, надпись, медиевистика, мужские и женские личные имена, лингвистика, этимология.*

Хорошо известно, что колофоны армянских рукописей и надписи содержат богатую информацию об истории, социальной, политической и повседневной жизни армянского народа. Эти письменные источники богаты также личными именами, большая часть которых вошла в известный словарь личных имен Р. Ачаряна (“Словарь армянских личных имён”, т. 1–5, Ереван, 1942–1962). Тем не менее, необходимы новые исследования в этой области, которые могут обогатить словарь Р. Ачаряна.

Очевидно, что новые каталоги рукописей, новые сборники колофонов и надписей могут внести значимый вклад в эту работу. Именно по этой причине, в данной статье мы представляем несколько нововыявленных личных имен из упомянутых источников (например, Baxtafēk, Gešmard, Eḡbayranun, Xubnaz, Hayratun и т. д.).

ԽԱՇԻԿ ԻՐԱԿՅՈՒՆՅԱՆ

PERSONAL NAMES IN THE ARMENIAN INSCRIPTIONS AND COLOPHONS: NEWLY DISCOVERED PERSONAL NAMES IN THE LAPIDARY INSCRIPTIONS

Keywords: *manuscript, inscription, medieval studies, male and female personal names, linguistics, etymology.*

It is well known that, both the Armenian colophons and the inscriptions contain rich information on the history, social, political and everyday life of the Armenian people. These written sources also include numerous personal names, the majority of which can be found in Hr. Ačaryan’s famous dictionary of Armenian personal names (“Hayoc՝ anjanunneri bararan”, vol. 1–5, Yerevan, 1942–1962). However, the new research is important in this field, which would be aimed at expanding and enriching Hr. Ačaryan’s dictionary.

New catalogues of the manuscripts, new volumes of the colophons and the inscriptions can contribute to this work considerably. For this very reason, in this article we present a number of newly discovered personal names from the mentioned sources (for example, Baxtafēk, Gešmard, Eḡbayranun, Xubnaz, Hayratun etc).

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՍՏԴԻԿ ԲԱԲԱՁԱՆՅԱՆ

ՊՂՆՁԵ ԱՐՁԱՆԱԳԻՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՑ

Հիմնաբառեր՝ Սարդարապատի թանգարան,
գեղարվեստական մեյրադանշակություն, ազգագրություն,
արձանագրություն, նվիրատու, վարպետ, կնքադրոշմ:

Նվիրվում է Սարդարապատի հերոսամարտի 100-ամյակին

Սարդարապատի Հայոց ազգագրություն թանգարանում պահվող գեղարվեստական մետաղի հավաքածուի ուսումնասիրությունը էական նշանակություն ունի ուշմիջնադարյան Հայաստանի պատմամշակութային ժառանգության համալիր հետազոտության գործում¹: Հիմնականում նվիրատվությամբ ու զնամբ գոյացած հավաքածուն ընդգրկում է կենցաղային և եկեղեցական սպասքի տարաբնույթ առարկաներ, որոնցից ավելի քան 100-ն արձանագիր են: Ուսումնասիրվող բուն նյութը թանգարանի «Ազգագրություն և կենցաղ» (ԱԿՅ) ֆոնդի պղնձե արձանագիր իրերն են², որոնք գերազանցապես առօրյա և տոնական սպասքի նմուշներ են, այդ թվում՝ տարաբնույթ թասեր (փխալա, ջամ, ջրխմիկ, չարեխ), թաս-կոնքեր, մեծ ու փոքր ափսեններ, մատուցարաններ, սկոտեղներ, կաթսաներ, կաթնամաններ (կովկիթ), դուլլեր (եղակ, փարխաջ, սթըլ): Պղնձե առարկաների մակերեսը հիմնականում անագապատ է, սակայն բազմակի օգտագործման հետևանքով անագը երբեմն մասնակի թափված է: Ազգագրական տեսանկյունից առանձնանում են հատկապես կենցաղում օգտագործված առարկաները, որոնք տեղական գործածումից մաշվել ու քանիցս նորոգվել են՝ զոդման կամ թիթեղի կտորը գամերով ամրացնելու միջոցով: Հանդիպում են նաև նմուշներ, որոնք նորոգված են այնպիսի կատարելությունով, որ այդօրինակ հետքերը կարելի է դիտել իբրև զարդատարր: Հավաքածուում ընդգրկված որոշ նմուշներ կիրառվել են իբրև տան ներսույթի հարդարատարր, ինչի մասին են վկայում պատից կախելու համար ափսե-մատուցարանների նստուկներին ամրացված օղակները:

Առարկաների անձնագրային տվյալներից դատելով՝ բավականին ընդգրկուն են դրանց ծագման ժամանակագրությունն (ժէ-ի դդ.) ու աշխարհագրությունը՝

- 1 «Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանի գեղարվեստական մետաղի արձանագիր իրերը» խորագրով ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի տրամադրած դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (ծածկագիր՝ 16YR-6A073):
- 2 Նյութի տրամադրման համար խորին շնորհակալություն ենք հայտնում ֆոնդապահ Նարինե Եղիկյանին:

ՀՀ տարբեր բնակավայրերից (Շամշադին, Նոյեմբերյան, Կողբ, Բաղանիս, Բարեկամավան, Իջևան, Ալեքսանդրապոլ (ներկայիս՝ Գյումրի), Մեղրի և այլն), Արցախից, Բարձր Հայքից, Արևմտյան Հայաստանից (Մուշ, Բայազետ), Կ. Պոլսից մինչև Հունաստան, Սիրիա, Պարսկահայք, Դաղստան:

Կենցաղային օգտագործման առարկաների հարդարանքը հիմնականում պարզունակ է՝ պսակին կամ իրանին արված զույգ ակոսագոտիներով: Հանդիպում են նաև շքեղ հարդարված (երկրաչափական ու բուսական ոճավորված զարդերով, երբեմն էլ՝ կենդանիների, առավելապես՝ թռչնի պատկերներով), գեղարվեստական մետաղի տեխնիկական տարբեր հնարների կիրառմամբ (փորագրում, դրվագագարդում, ձուլում, կռում և այլն) և տարատեսակ համադրություններով ստեղծված նմուշներ³: Աչքի են ընկնում նաև վարպետների նշաններ ու կնքադրոշմներ (վարդյակաձև, կետային սեղմումով) ունեցող առարկաները, որոնք մեծապես կարևորվում են հայ մետաղագործության պատմության և, ընդհանրապես, հայոց մշակութային ժառանգության այս բնագավառի որոշ էջեր լուսաբանելու և լրացնելու առումով: Անշուշտ, մետաղի գեղարվեստական հարդարատարրերը զուգահեռներ ունեն նաև արվեստի այլ ճյուղերում՝ փայտամշակություն, խեցեգործություն, ասեղնագործություն, գորգարվեստ և այլն, որոնք առանձին ուսումնասիրության առարկա են:

Սույն աշխատության նպատակն է հրատարակել մեր ուսումնասիրությունները ընթացքում ցուցակագրված յուրօրինակ արձանագիր առարկաները՝ թվագրությամբ վաղագույն (ԺԷ–ԺԸ դդ.) և բովանդակությամբ ուշագրավ իրերն ու դրանց արձանագրությունները⁴: Վերջիններս ներկայացրել ենք ժամանակագրորեն՝ հետևելով վիճակագրատության արդի չափանիշներին՝ բնագրերին կցելով գրչանկար⁵ և լուսանկար, վերձանություններն՝ անհրաժեշտ պայմանական նշաններով և ծանոթագրություններով: Արձանագրությունից բացի, յուրաքանչյուր առարկայի դիմաց նշել ենք թանգարանային գույքահամարը, թվականը կամ մոտավոր ժամանակը, չափերը և ընդհանուր նկարագրությունը՝ ձևը, տեխնիկան և այլն:

1. Թաս-փիալա (ՀԱՊԹ–600/1, ԱԿ3–154/1), 1759թ.

Շուրթի տրամ.՝ 15 սմ, նստուկի տրամ.՝ 8 սմ, բարձ.՝ 7 սմ

Օղակաձև նստուկով, կիսագնդաձև իրանով թաս՝ հարդարված զույգ ակոսագծերով: Նստուկին կան նորոգման հետքեր, որի ներքին շրջանակին ելնդատառ թվականն է:

3 Մանրամասն տե՛ս Ա. Ասատրյան, Հայոց ազգագրության թանգարանի պղնձե առարկաների գեղագարդման ընդհանուր բնութագիրը (հիմնական զարդանախշերը, զուգահեռները, խորհրդիմաստը), «Հայկագեան հայագիտական հանդէս», հ.Լ.Զ (36), Պեյրոս, 2016, 125–150:

4 Գեղարվեստական մետաղի արձանագրությունները տեղեկություն հաղորդելուց բացի, հաճախ դիտարկվել են իբրև յուրօրինակ հարդարատարրեր: Դրանք կատարված են հիմնականում երկու եղանակով՝ պարզ փորագրության և ելնդագրի, այսինքն՝ ետնախորքի հետացմամբ:

5 Գրչանկարները՝ Արսեն Հարությունյանի:




ՌՄԸ. (1759)

Այս թասը ստույգ թվական ունեցող առարկաներից վաղագույնն է: Թվականին հաջորդում է փշածև զարդատարր:

2. Ափսե-մատուցարան (ՀԱՊԹ-8225/14, Ա43-804), 1760թ.


Շուրթի տրամ.: 30 սմ, նստուկի տրամ.: 15,5 սմ, բարձ.: 2 սմ

Օղակաձև ցածր նստուկով, լայն պսակով ափսե՝ հարդարված նշածև մեղալիոնի մեջ ներառված ոճավոր չորս զարդերով, պսակն ու հատակը՝ զույգ ակոսագծերով և կետագարդերով: Նշածև զարդերից մեկում ելնդատառ քառատող արձանագրություն է.



ԹՈՐՈՍԻ ՈՐԴԻ ԱՍ/ՏՈՒՐԻՆ, Ռ/ՄԹ. (1760)

Պսակին, արտաքուստ, այլ զրչությունմբ, թերևս հետագայում ավելացված միատող արձանագրություն.



ՊԱՅԻՆՑ ՏԼԷՅԻՐ ՊՕՂՕՍԻ ՈՐԴԻ ՅՕՎՍԵՓ


Միևնույն առարկայի երկու տարբեր զրչությունմբ արձանագրություններն ինքնին վկայում են տարբեր ժամանակներում կատարված իրադարձությունների մասին: Առաջին հիշատակագրությունն, ըստ ամենայնի, վերաբերում է առարկայի ստեղծմանը՝ 1760թ., Թորոսի որդի Աստուրի (Ասատուրի) հիշատակին: Այլ տառատեսակով և ոճով փորագրված երկրորդ արձանագրությունը հայտնում է առարկայի հետագա տիրոջ կամ նվիրատուի անունը, որը Պայինց տոհմից տեր Պողոսի որդի Հովսեփն է: Հայաստանի պատմության թանգարանի արձանագիր առարկաներն ուսումնասիրելիս՝ այս երևույթին անդրադարձել է նաև Եվգինե Մուշեղյանը, որն այն բացատրում է հետևյալ կերպ. «...առաջին նվիրատուի կողմից իրը նվիրաբերվելուց որոշ տարիներ հետո հանդես է գալիս երկրորդ նվիրատուն. վերջինս վճարում է առարկայի արժեքը և խնդրում, որ իր անունը հիշատակվի այդ նույն իրի վրա»⁶:

6 Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1. Հայերեն արձանագրությամբ առարկաներ, աշխատասիրությամբ Ե. Մուշեղյանի, Երևան, 1964, էջ 6:

3. Ափսես (ՀԱՊԹ–8225/3, ԱԿ3–804), 1762/3թ.

Շուրթի տրամ.: 14,5 սմ, նստուկի տրամ.: 7 սմ, բարձ.: 1,8 սմ

Օղակաձև ցածր նստուկով, լայն պսակով ափսես: Պսակի արտաքին կողմում՝ եռանկյունաձև զարդի մեջ միատող ելնդատառ գրուված են է, որի տակ՝ փորագիր Հիջրի թվականը.




ՎԱՐԴԱՆ
1176 (=1762/3)

Կենցաղային և եկեղեցական սպասքի հատկապես Ժէ–ԺԼ դդ. հայերեն արձանագրուվածների վերջում հաճախ նշվում է արաբական թվերով մահմեդական Հիջրի (Հիջրայի) թվականը, որի դարազուգում հուլյան տոմարով համարվում է 622թ. հուլիսի 16-ը⁷: Այս երևույթին մենք նախկինում ևս անդրադարձել ենք և բացատրել ժամանակի քաղաքական պատճառներով, քանի որ Ժէ–ԺԼ դդ. Հայաստանը պարսկաթուրքական տիրապետության տակ էր, երբ ի թիվս այլ փոխադրեցուցիչների (հատկապես թուրքերենից, պարսկերենից ու արաբերենից փոխառված բառեր ու բառաձևեր)⁸ գեղարվեստական մետաղի արձանագրուվածներում լայնորեն շրջանառվում էր նաև մահմեդական Հիջրի թվականը⁹: Նման մի ուշագրավ երևույթ էլ պահպանվել է Հրազդանի Ջրառատ թաղամասի Ս. Կարապետ եկեղեցու արևելյան կողմում կանգնեցված Հայոց ՌՀէ (1628) թվակիր խաչքարի վրա, որի խաչաթևերի ստորին մասում ընթեռնելի է Հայոց թվականի արաբական թվերով արտահայտված տարբերակը՝ բնականաբար Հիջրի տոմարով. 1037թ., այսինքն՝ 1627/8⁹:

4. Եկեղեցական կաթսա (ՀԱՊԹ–5744/1, ԱԿ3–683), 1785թ.

Շուրթի տրամ.: 14 սմ, նստուկի տրամ.: 11 սմ, բարձ.: 10,5 սմ (բարձ. կափարիչով՝ 16,5 սմ)

Օղակաձև բարձր նստուկով, երկկոնաձև իրանով, կիսազնդաձև կափարիչով կաթսա՝ դրվագումով արված երկրաչափական զարդերով: Կափարիչին ամրացված է գնդաձև բռնակ: Կաթսայի շուրթին առկա է միատող, փորագիր արձանագրուված են.



ՅԻԻՇԼԱՏԼԱԿ Է ԷՐՈՒՍԱՂԷՄ ՍԻ ՅԱԿՈՒՅ ՌՄԼԴ. (1785)

7 Մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 134–138:
8 Ա. Հարությունյան, Հ. Խուդանյան, Բուդապեշտի Ս. Աստվածածին աղոթարան-եկեղեցու թանգարանային սպասքի մակագրությունները, ՊԲՀ, 2016, Հ^ր 2 (202), էջ 140:
9 Գ. Սարգսյան, Ջրառատի Ս. Կարապետ եկեղեցին, «Հին Հայաստանի մշակույթ», XIII, Նյուօրթեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, 2005, էջ 238, արձ. 5:

Նման կաթսա հայտնի է նաև Գնդեվանքի հավաքածուից¹⁰, որն, ի թիվս այլ եկեղեցական սպասքի նմուշների, հայտնաբերվել է 1981թ., թաքստոց ծառայող կարասի միջից: Արձանագիր մյուս նյութերի շարքում Գնդեվանքի կաթսան թվագրվել է Ժէ դարավերջով: Խնդրո առարկա կաթսան նախ և առաջ ուշագրավ է այն բանով, որ Սարդարապատի թանգարանի հավաքածուում եկեղեցական սպասքը, այն էլ՝ արձանագիր, խիստ սակավ է: Համաձայն արձանագրության՝ այն նվիրաբերվել է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին:

5. Ափսե (ՀԱՊԹ–8225/4, ԱԿ3–804), 1786թ.

Շուրթի տրամ.՝ 15,5 սմ, նստուկի տրամ.՝ 8 սմ, բարձ.՝ 1,5 սմ

Օղակաձև նստուկով, լայն պսակով ափսե, որի պսակի ուղղանկյունաձև շրջանակի մեջ երկտող ելնդատառ արձանագրությունն է:



ՄԱՐՏԻՐՈՍԻ ՈՐԴԻ/ ԵՂԻԵԱՅ,
ՌՄԼԵ. (1786)

6. Ափսե (ՀԱՊԹ–4243/5, ԱԿ3–575), 1795թ.

Շուրթի տրամ.՝ 23 սմ, նստուկի տրամ.՝ 13 սմ, բարձ.՝ 3,5 սմ

Օղակաձև ցածր նստուկով, լայն պսակով ափսե, որի շրթեզրը հարդարված է ակոսագոտիներով, չորս կողմում՝ խաղողազարդերով: Երկտող ելնդատառ արձանագրությունը զետեղված է պսակի արտաքին կողմում:



ՄԷՔԻ ՈՐԴԻ ՏԼԵՂ
ԿԱՅՐԱՅ/ՊԼԵՅԻՆ,
ՌՄԽԴ. (1795)

Այս և նախորդ արձանագրություններում հիշատակված անձինք, թերևս, նվիրատուներն են:

7. Ափսե (ՀԱՊԹ–4243/4, ԱԿ3–575), 1798թ.

Շուրթի տրամ.՝ 22,5 սմ, նստուկի տրամ.՝ 12 սմ, բարձ.՝ 2,7 սմ

Օղակաձև ցածր նստուկով, զեպի վեր ուռուցիկ հատակով և անմիջապես հատակին միացած լայն պսակով ափսե: Հատակին և պսակին ունի ակոսագծեր:

Պսակի արտաքին երեսի ուղղանկյունաձև շրջանակի մեջ երկտող ելնդատառ արձանագրությունն է:

10 Ա. Մեչիյան, Գնդեվանքի եկեղեցական հավաքածուն, «Թանգարան» գիտատեսական և մեթոդական հանդես, 2009, Հ^տ 1, էջ 105–106:




Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ Ա/ՂԱՍԻՆ, ՌՄԽԷ. (1798)

Դատելով արձանագրութիւնից՝ առարկան պատկանել է հիշատակված Աղասին, որը, թերևս, նաև պատվիրատուն է:

8. Ափսե (ՀԱՊԹ-8225/8, ԱԿ3-804), 1799/1800թ.

Շուրթի տրամ.՝ 25 սմ, նստուկի տրամ.՝ 13,5 սմ, բարձ.՝ 3,5 սմ

Օղակաձև ցածր նստուկով ափսեն ձևով նման է նախորդին: Շրթեցրը կոտրված, ապա նորոգված է դամբերով ամրացված թիթեղի միջոցով: Պսակին, ներքուստ, առկա է եռատող փորագիր արձանագրութիւն.



ՔՐԻՍՏՕՍԱՆՍՈՒՐԻ/ՈՐԴԻ ՓԵԼԻՊՈՍ / 1714 (=1799/1800)

Այստեղ ևս հիշատակված արաբական թվականը վերծանում ենք մահմեդական Հիջրի թվականով:

9. Ափսե (ՀԱՊԹ-8225/7, ԱԿ3-804), ԺԸ դարավերջ

Շուրթի տրամ.՝ 21,8 սմ, նստուկի տրամ.՝ 11 սմ, բարձ.՝ 2,8 սմ

Օղակաձև ցածր նստուկով, լայն պսակով, հետ ծալված շուրթով ափսե: Պսակին, արտաքուստ, ունի երկտող ելնդատառ արձանագրութիւն.



ՊՕՅԱԾԻ/ԱԻԵՏԻՔ

Համառոտ հիշատակագրութիւնը հայտնում է Ավետիքի (որը, թերևս, նվիրատուն է) մասնագիտութիւնը, այն է՝ պոյաճի, որ նույն բոյաչի, բոյախչին է, այսինքն՝ ներկարար, ներկով աշխատող վարպետ: Հր.Աճառյանն այս բառը փոխառված է համարում թուրքերենից՝ պոյա (բոյա)-ներկ բառից: Նա նկատում է, որ Վանի և Նոր Նախիջևանի բարբառներում այս բառը գործածվում է «պոյաճի» (ինչպես սույն հիշատակագրութիւն մեջ), իսկ Ղարաբաղի բարբառում՝ «բոյախչի» ձևերով¹¹:

10. Ափսե (ՀԱՊԹ-5744/5, ԱԿ3-683), ԺԸ դարավերջ

Շուրթի տրամ.՝ 22,5 սմ, նստուկի տրամ.՝ 11,5 սմ, բարձ.՝ 2,5 սմ

Օղակաձև ցածր նստուկով, լայն պսակով ափսե: Պսակի վերնամասում ունի սեղմումով արված երեք կետ, նույն պսակի հակառակ կողմում վարպետ Կարապե-

11 Հր. Աճառեան, Թուրքերէնի փոխառեալ բառեր հայերէնի մէջ, «Էմինեան ազգագրական ժողովածոյ», հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 300:

տի անվանակիր կնիքն է և ևս երկու վարդյակաձև դրոշմ: Պսակին, արտաքուստ, ճետեյալ երկտող ելնդատառ արձանագրությունն է.



Մ Ա Ղ Ն Ս Ե Ս Յ Ի Ս Ը Ը Ր Ա Պ Ի / Ո Ր Դ Ի Գ Ր Ի Գ Լ Ո Յ Ր




Կ Ա Ր Ա Ղ Պ Ե Տ

Հազվադեպ երևույթ է պատրաստող վարպետի անվան այսօրինակ կնքադրոշմի առկայությունը¹²:

11. Թաս (ՀԱՊԹ–8207/3, ԱԿ3–802), 1810թ.

Շուրթի տրամ.: 22 սմ, նստուկի տրամ.: 12,5 սմ, բարձ.: 4 սմ

Ոչ խորը, ցածր նստուկով, դուրս ճկված պսակով թաս, որի շուրթը բոլորում է միատող փորագիր արձանագրությունը.



Գ Ր Լ Ի Գ Լ Ո Յ Ր Պ Ա Յ Տ Ր Ի Լ Ա Յ Ր Գ Ն Պ Օ Լ Ս Ո Յ Ե Տ Յ Լ Ի Ծ Լ Ա Յ Ը Լ Ա Կ Մ Բ Ա Ս Տ Ո Ւ Ա Յ Ծ Ա Ծ Ն Ի Ե Կ Ե Դ Լ Ե Յ Թ Լ Ո Յ Ն, Ո Ր Ի Գ Ե Օ Դ Ն Է Ջ Մ Ի Ա Ծ Ն Ի, 1810:

Համաձայն արձանագրության՝ նվիրատուն Կ. Պոլսի Գրիգոր Խամսեցի պատրիարքն է, որը Կ. Պոլսի պատրիարքություն անվանացանկում հիշատակվում է 1801–1813թթ.¹³: Այս վերջին՝ 1813թ. անստույգ ենք համարում, քանի որ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանոցի օրորոցաձև տապանաքարերից մեկի հնգատող արձանագրությունը հայտնում է ննջեցյալի՝ Ս. Էջմիածնի միաբան և Կ. Պոլսի երբեմնի պատրիարք Գրիգոր արք. Խամսեցու անունը, որը վախճանվել է 1811թ. դեկտեմբերի 3-ին¹⁴:

Գրիգոր պատրիարքն առարկան նվիրաբերել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցուն, որը Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763–1780) օրոք՝ 1767թ. կառուցված (կամ վերաշինված) եռանավ բազիլիկն է և զտնվում է Մայր տաճարից

12 Հաշվի առնելով այն, որ ափսե՛ն ձեռք է բերվել Սիրիայում և թանգարանին է փոխանցվել Վարուժան Սալաթյանի հավաքածուից, կարելի է ենթադրել, որ վարպետ Կարապետը գործել է Սիրիայում, ուր XX դարասկզբին, հատկապես Հալեպ քաղաքում, հաստատվել էին Այնթապից, Մարաշից, Կարինից, Ուրֆայից եկած հայ պղնձագործները, թեև մինչ այդ նույնպես Հալեպը հայկական պղնձագործության հարուստ ավանդույթներով հայտնի կենտրոն էր (տես Գալեմբեարեաններ. Այնթափ, Դամասկոս, Հալեպ, հեղինակ-կազմող՝ Լ. Թորմաճեան, Երևան, 2016):


13 «Բրիտանյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 507:

14 Ա. Հարությունյան, Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 210–211, արձ. 423:

դեպի հյուսիս՝ նախկին Վաղարշապատ գյուղի կազմում: Ներկայումս համարվում է Արմավիրի թեմի առաջնորդանիստը:

12. Ափսե (ՀԱՊԹ– 340/1, ԱԿ3–103), 1867թ.

Հարթ, գոգավոր հատակով, դեպի պսակ սահուն անցումով ափսե, որի պսակին, ներքուստ, առկա է կիսաշրջանաձև միատող արձանագրություն.



ԱՐՁԱՔԱՆԱ ՍԻՍԵՂՖԱՆՆԱԿ
ԵԿԵՂԷՑԼԻՅՈՅ, 1867:

Արձանագրությունը հայտնում է մեկ այլ եկեղեցու՝ Արզականի Ս.Ստեփանոսի անունը, սակայն այս դեպքում անհայտ է նվիրատուն, որն այն 1867թ. ընծայել է եկեղեցուն: Արզականը (հայտնի նաև՝ Արզաքենդ, Արզաքյան և այլ անվանաձևերով) գյուղ է ՀՀ Կոտայքի մարզում, Ծաղկունյաց լեռնաշղթայի ստորոտին: Բնակավայրը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Հայտնի են Ս. Գևորգ, Ս.Ստեփանոս եկեղեցիները, Նեղուցի Ս.Աստվածածին վանական համալիրը և այլն¹⁵: Խնդրո առարկա պնակը նվիրաբերվել է տեղի Ս.Ստեփանոս եկեղեցուն, որն, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է 1001թ., Սարգիս Սևանցու հայրապետության, Գազիկ Ա-ի թագավորության, Գրիգոր-Ապիրատ Պահլավունի Մագիստրոսի իշխանապետության օրոք, Գորգ քահանայի նախաձեռնությամբ¹⁶:

Բացի կենցաղային օգտագործման անոթներից, հավաքածուն ընդգրկում է նաև եղածներից թվագրությամբ վաղագույն երկու ծնծղաներ¹⁷, որոնք, որպես երաժշտական գործիք, օգտագործվել են աշխարհիկ տոնական և եկեղեցական արարողությունների ժամանակ¹⁸: Հին կտակարանում խոսվում է ծնծղաները ծիսական արարողությունների ժամանակ կիրառելու մասին (Սաղմոս ՃԾ: 5): Դրանք հայտնի են դեռևս ուրարտական ժամանակաշրջանից և հայտնաբերվել են Կարմիր բլուրի պեղումներով¹⁹: Ծնծղաների ձևերի ու կիրառության մասին պատկերացում կարելի է կազմել նաև մանրանկարների միջոցով²⁰:

15 Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ Տեղանունների բառարան), հ.1, Երևան, 1986, էջ 431:

16 Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը», հ. XII, Երևան, 2002, էջ 110–111:

17 Տ. Դալալյան, Հայերենում որոշ նվագարանների անվանումների ծագման շուրջ. քնար, շեփոր, ծնծղա, «Լեզու, խոսք, իրականություն (գոյաբանական և իմացաբանական հայեցակետեր)» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2017, էջ 253:

18 Մաղաքիա արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992, էջ 91:

19 Է. Խանզադյան, Հայկական հին երաժշտական գործիքները, Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ, Հ⁴ 5, Երևան, 1959, էջ 64:

20 Ա. Գևորգյան, Միջնադարյան երաժշտական գործիքները հայ մանրանկարչության մեջ,

Ինչ վերաբերում է ծնծղաների կիրառական ու հավատալիքային այլ առանձնահատկություններին, ապա դրանք օգտագործվել են նաև ուղղափառ դաշտում և որսի ժամանակ, որպեսզի բարձր ձայնով ու աղմուկ անելով խուճապի մատնեն հակառակորդին: Ծնծղաների ձայնն ունեցել է նաև չարխափան նշանակություն: Բացի ձայնի մոգական նշանակությունից, չարը վանելու հետ էր կապվում նաև ծնծղաների եզրը բոլորող շրջագոտին, որն, ըստ ժողովրդական հավատալիքների, խորհրդանշում էր կյանքի փակ շրջանը, չարի ու բարու պայքարը և պատահական չէ, որ վնասված ծնծղաներին վերագրում էին տիրոջ դեմ ուղղված չարիքն իր վրա վերցնելու նշանակություն²¹:


Ծնծղաները պատրաստվում էին տարբեր նյութերից, առավելապես՝ բրոնզից: 1828թ. տրապիզոնցի ալքիմիկոս Քերովբե Ավետիսը ոսկի ստանալու հերթական փորձը կատարելիս ստեղծում է ծարիրի ու պղնձի խառնուրդից հատուկ համաձուլվածք, որն աչքի էր ընկնում ձայնի հնչեղությունից: Այն սկսում են օգտագործել երաժշտական գործիքներ պատրաստելու համար, իսկ ծնծղաների ձուլման գաղտնիքը սերնդեսերունդ փոխանցվում է Քերովբե Ավետիսի ընտանիքում, որը ստացավ Զիլջյան նշանավոր ազգանունը²²:

Սարգարապատի ծնծղաներն ունեն պարզ հարգարանք, կենտրոնական ու ուղղիկ հատվածի շուրջը և եզրին փորագիր համակենտրոն շրջագծեր: Մի դեպքում արձանագրությունը բոլորում է կենտրոնական հատվածը, մյուսի վրա այն կիսաշրջանաձև է ու մանրատառ.

13. Ծնծղա (ՀԱՊԹ–1160, ՀՄ–59), 1689թ.

Տրամ.՝ 24,5 սմ

Առարկան վնասված է, փորագիր արձանագրությունը կիսով չափ բոլորում է շուրջը.



ՅԼԻՇԱՏԼԱԿ Է ՄԱՂԹԱՍԻ ԳԱԶՊԱՐԻՆ, ՈՐ ԵՏ Ի ԴՈՒՌՆ ԽԱԻՅԱՅ
ՄԲ ՍԱՐԳԻՍ ԶԻՆԱԻՈՐԻՆ, ԹՎԻՆ ՌՃԼԸ. (1689):

Հիշատակված մահտեսի (մաղթասի) Գասպարը նվիրատուն է, որն առարկան ընծայել է Խոյի Ս.Սարգիս եկեղեցուն: Տեղանվանական բառարանի տվյալների համաձայն՝ Պարսկահայաստանի Խոյի գավառի համանուն քաղաքում հիշատակված է երկու եկեղեցի, որոնցից մեկը Ս.Սարգիսն է՝ կառուցված ժԸ դարավերջին²³:


«Բանրեր Մատենադարանի», հ.6, Երևան, 1962, էջ 341, տես նաև նույնի Արիեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973, աղյուսակ XLIII, 7:
21 Հ. Պիկիյան, Ծնծղա. Նվագարան և մոգական գործիք, ՊԲՀ, 1992, Հ^տ 2–3, էջ 214–224:
22 Ա. Մեշինյան, Գնդեվանքի եկեղեցական հավաքածուն, էջ, 107:
23 Տեղանունների բառարան, հ.2, Երևան, 1988, էջ 768:

Ամենայն հավանականությունով, այն ներկա արձանագրություն մեջ վկայված եկեղեցին է, որի կառուցման ժամանակը կարելի է որոշակիացնել՝ նկատառելով առարկայի թվականը, այն է՝ ԺԷԳ. երկրորդ կես:

14. Ծնծղա (ՀԱՊԹ–1162, ՀՄ–61), 1695թ.

Տրամ.: 22 սմ

Այս ծնծղան ևս վնասված է, փորագիր արձանագրությունը բոլորում է կենտրոնի ուղուցիկ հատվածը.



ՅԼԻՇԼԱՅԼԱԿ Է ՊԵՏՐՈՍԻ ՈՐԴԻ
ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՄԱՍԻՐՈՍ Ի ԴՆՈՒՂԻՆ
ՍԲ ԳՐԻԳՈՐԻ, ԹՎԼԻՆՂ ՌՃՆԴ. (1695):

Նմանատիպ ծնծղաներ հայտնի են Գնդեվանքից: 1875թ. վանահայր Պետրոս վարդապետը բացելով հացատան հորը, հայտնաբերել է վանքապատկան առարկաներ՝ մոմակալներ, սկուտեղ, կաթսա, թաս, զանգեր և մի զույգ ծնծղա՝ «Յիշատակ է Գնդեվանայ Սուրբ Նախավկայի, թվին ՌՃՆ (1691)» արձանագրություն²⁴: Ծնծղաներ հայտնի են նույն Գնդեվանքի մեկ այլ թաքստոցից, որոնք, ինչպես վերը նշեցինք, հայտնաբերվել են 1981թ.: Գնդեվանքի այս ծնծղաները կրում են 1679թ.²⁵:

Ինչ վերաբերում է հիշատակագրությանը, ապա պետք է նշել, որ Պետրոսի որդի Կարապետն այն նվիրաբերել է Ս. Գրիգոր եկեղեցուն, որը, թերևս, գտնվել է Մասիրոս բնակավայրում: Այս անունով գյուղ է հիշատակվում Վանի նահանգի Հեքյարի գավառում, որը նախորդ դարասկզբին 30 տուն բնակչություն ուներ²⁶: Այս բնակավայրի մասին այլ մանրամասներ մեզ հայտնի չեն, սակայն, եթե հավանական համարենք նրանց նույնականությունը, ապա վկայված Ս. Գրիգորն այս գյուղի եկեղեցին է, որին արված նվիրատվությունը ԺԷ դարավերջին ինքնին վկայում է բնակավայրի մարդաշատ լինելը:

Այսպիսով, Սարգարապատի հայոց ազգագրության թանգարանի «Ազգագրություն և կենցաղ» ֆոնդի (ծնծղաները «Հնագիտություն» ֆոնդից են) արձանագիր առարկաները ոչ միայն կարևորվում են ԺԷ–ԺԹ դդ. առօրյա կենցաղի որոշ կողմեր բացահայտելու, այլև իրենց հարուստ հարդարանքով դիտարկվում են իբրև գեղարվեստական մետաղի բարձրարժեք նմուշներ: Պղնձե առարկաների

24 Քաջբերունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ, հրատ. պատրաստեցին՝ Ա.Քալանթարյանը, Գ.Սարգսյանը, Հ.Մելքոնյանը, Երևան, 2003, էջ 116:

25 Ա. Մեշիսյան, Գնդեվանքի եկեղեցական հավաքածուն, էջ 106:

26 Տեղանունների բառարան, հ.3, Երևան, 1991, էջ 705:


վրա եղած համառոտ և ընդարձակ արձանագրությունները տեղեկություն են հաղորդում նվիրատուների ու պատվիրատուների անձի, նրանց մասնագիտության, պղնձագործ վարպետների մասին, իսկ մի մասը՝ ճշգրտում թվականի, ծագման կամ ձեռքբերման վայրի հետ կապված հարցեր:



Արձ. 1



Արձ. 2ա



Արձ. 2բ



Արձ. 3



Արձ. 4



Արձ. 5



Արձ. 7



Արձ. 6



Արձ. 8




Մրձ. 9



Մրձ. 10ա



Մրձ. 11



Մրձ. 10բ



Մրձ. 12



Մրձ. 13



Մրձ. 14

АРСЕН АРУТЮНЯН, АСТХИК БАБАДЖАНЯН

МЕДНЫЕ ПРЕДМЕТЫ С НАДПИСЯМИ ИЗ КОЛЛЕКЦИИ АРМЯНСКОГО ЭТНОГРАФИЧЕСКОГО МУЗЕЯ САРДАРАПАТА

Ключевые слова: *Музей Сардарапата, художественный металл, этнография, надпись, донор, мастер, печать.*

Изучение художественного металла Армянского этнографического музея Сардарапата имеет важное значение для пересмотра позднесредневековой и ран-

несовременной истории и культуры Армении. Объектом нашего изучения являются медные сосуды с надписями из коллекции фонда «Этнография и быт», которые были собраны посредством пожертвований и покупки. Коллекция состоит из различных бытовых сосудов повседневного использования (чаши, тарелки, подносы, миски, котлы, ведра и др.), а также литургических сосудов (кимвалы, урны), более ста из которых имеют надписи. Судя по результатам исследований, хронологический диапазон данных предметов (XVII–XX века) и ареал их распространения (от Греции до Ирана и от Дагестана до Сирии) достаточно широки. Целью настоящей работы является исследование наиболее ярких экземпляров художественного металла и их надписей, благодаря которому будут выявлены не только точные даты, имена доноров и мастеров, но и будет создана новая база данных для менее изученной области материальной культуры этого периода. Среди множества сосудов с очень простой декорацией встречаются экземпляры с богатой орнаментацией, состоящей из растительных, животных элементов и с армянскими надписями. Все надписи представлены в соответствии с современными стандартами эпиграфики с прилагаемыми рисунками и фотографиями, а также с расшифрованными текстами, включая необходимые условные знаки и заметки.

ARSEN HARUTYUNYAN, ASTGHİK BABAJANYAN

METALWORK ITEMS WITH INSCRIPTIONS FROM THE COLLECTION OF THE ARMENIAN ETHNOGRAPHY MUSEUM IN SARDARAPAT

Keywords: Museum of Sardarapat, artistic metalwork, ethnography, inscription, donor, craftsmen, stamp.

The study of the collection of the artistic metalwork of the Armenian Ethnography Museum in Sardarapat is important for revising the late medieval and early modern history and culture of Armenia. Our studies focus on the copper vessels with inscriptions from the collection of “Ethnography and Everyday Life” fund, which were collected through donations and purchases. The assemblage includes a variety of vessels of daily domestic use (cups, plates, trays, cooking pots, caldrons, buckets etc.) as well as liturgical vessels (cymbals, urns) with more than a hundred inscriptions. Based on the research results, the chronological range of those items (XVII–XX cc.) and their geographical distribution (from Greece to Iran and from Daghestan to Syria) are rather wide. The objective of this paper is the study of the relatively remarkable metalwork items and their inscriptions. Thanks to this research both the issues of precise dating, names of donors and craftsmen would be revealed, and a new database would be created for the less studied field of the material culture of that period. Although the majority of the vessels are poorly decorated, there are items with rich ornamentation, consisting of floral, zoomorphic elements and Armenian inscriptions. All inscriptions are represented in accordance with the modern standards of epigraphy, with attached drawings and photos, as well as with deciphered texts, including necessary conventional signs and notes.

ԳՈՅԱՐ ՄԵԽԹԱՐՅԱՆ

ՀԱՅԵՐԸ ԳԵՐՄԱՆԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴ ՍԱՍՈՒԻԼ ԳՄԵԼԻՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՈՒԲ

Հիմնաբառեր՝ Ս. Գմելին, հայեր, Արևելյան Այսրկովկաս,
Դերբենպ, Բարու, Շամսիսի, Գիլան, 18-րդ դար:

Արևելյան Այսրկովկասի 18-րդ դ. երկրորդ կեսի հայ բնակչության պատմությունը հայագիտության առավել խորը և համակողմանի ուսումնասիրվածներից է: Նշված ժամանակաշրջանի ամենաարժեքավոր սկզբնաղբյուրներից է Սանկտ Պետերբուրգի կայսերական ակադեմիայի ակադեմիկոս, ազգությամբ գերմանացի Սամուիլ Գոտլիբ (Գեորգ) Գմելինի (Gmelin, Samuel Gottlieb Georg) (1745–1774) Ուղեգրությունը¹, որտեղ ներկայացված են Արևելյան Այսրկովկասի և Իրանի հյուսիսային նահանգների (Գիլան, Մազանդարան) հայերի կենսապայմաններին, սոցիալ-իրավական կարգավիճակին, հոգևոր-կրոնական կյանքին, ավանդույթներին ու սովորույթներին վերաբերող նյութեր: Սակայն Ուղեգրությունն անհասկանալի ձևով գրեթե դուրս է մնացել պատմագիտության էջերից:

Այս սկզբնաղբյուրի եզակիությունն այն է, որ Ս. Գմելինն Աստրախանում էր հայտնվել Արևելյան Այսրկովկասն ու Իրանի հյուսիսային շրջանները համալիր ուսումնասիրելու նպատակով ստեղծված ակադեմիական («Ֆիզիկական») արշավախմբի կազմում (ղեկավարի կարգավիճակով): Արշավախումբը ստեղծվել էր 1768–1774 թթ. ուսու-թուրքական պատերազմի ընթացքում՝ կայսերական բարձր հովանու ներքո, և որի ղեկավարը պարտավոր էր գրի առնել ու պարբերաբար Սանկտ Պետերբուրգ ուղարկել տարածաշրջանի ժողովուրդների պատմության, սոցիալատնեսական, հոգևոր-մշակութային կյանքի նկարագրությունը:

Արշավախմբի ճանապարհն անցնում էր Աստրախանով, որտեղ որոշ ժամանակ հանգրվանելու ընթացքում Ս. Գմելինն ուսումնասիրում է տեղի ժողովուրդների կենցաղը, ավանդույթները, սովորույթներն ու զբաղմունքը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով հայերին:

Ս. Գմելինը, գտնվելով ուսսական պետության ծառայության մեջ, հատկապես հետաքրքրվում էր այցելած երկրների քրիստոնյաներով, մասնավորապես հայերով: Արևելյան Այսրկովկասի հայ բնակչության կյանքի նկարագրությունը շարադր-

1 Ակադեմիկոս Ս. Գմելինի բազմախառը աշխատությունը գերմաներենով հրատարակվել էր դեռևս նրա ճանապարհորդության ընթացքում (S. G. Gmelin, Reise durch Russland zur Untersuchung der drei Natur-Reiche, SPb., 1770–1784): Կայսերական ակադեմիան զուգահեռաբար՝ 1771–1785 թթ. աշխատությունը թարգմանաբար ներկայացրել է ռուս ընթերցողին (С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, СПб., 1771–1785).

ված է նրա «Ճանապարհորդություն» ստվարածավալ աշխատության ուսուցիչական հրատարակության երրորդ հատորի առաջին և երկրորդ մասերում (1785թ.): Ակադեմիկոսն անդրադառնում է Դերբենդի, Ղուբայի, Շամախու, Բաքվի, Ռեշտի և իրանական այլ բնակավայրերի հայերի կյանքին՝ սկսած սոցիալ-իրավական կարգավիճակից, առևտրային գործունեությունից, հոգևոր-եկեղեցական կյանքից, ազգագրական խճանկարից մինչև հայերի հոգեկերտվածքի նկարագրությունը: Սակայն հավաքած պատմագիտական և ազգագրական նյութը նա հետագայում չի համեմատում Աստրախանի հայերին վերաբերող նույնիմաստ նյութերի հետ, որոնց մանրամասն անդրադառնում է իր Ուղեգրության երկրորդ հատորում (1777թ.):

Սակայն Ս. Գմելինը Կասպից ծովի ափամերձ շրջանները և Իրանը դիտարկում էր ոչ միայն գիտնականի, այլև տարածաշրջանում Ռուսական կայսրության ունեցած ռազմաքաղաքական, առևտրատնտեսական շահերի տեսանկյունից: Հետևաբար, չնայած այն հանգամանքին, որ նա հայերին վերաբերվում էր որպես ռուսական պետության հուսալի էթնիկ հենարանի, այնուամենայնիվ, հաճախ ոչ միանշանակ գնահատականներ է տալիս նրանց: Այսպես, գիտնականը երբեմն մեղադրում է հայերին «պարսիկներին» հետ ջերմ հարաբերություններ ունենալու մեջ, քանի որ նրանց տեսնում էր իր պետության քաղաքական շահերի ընկալումների ամբողջությունում: Այսպես, Գիլանի հայերի մասին ակադեմիկոսը նշում է, որ թեև հայերը ռուսահպատակ էին (հավանաբար, նկատի ունի Ռեշտի հայ վաճառականներին), սակայն ավելի շատ «պարսից սրինգի տակ էին պարում»²:

Այսպես, գիտնականը երբեմն մեղադրում է հայերին «պարսիկներին»³ հետ ջերմ հարաբերություններ ունենալու մեջ, քանի որ նրանց տեսնում էր իր պետության քաղաքական շահերի ընկալումների ամբողջությունում:

Ս. Գմելինը ԺԼ.դ. 70-ական թթ. առաջին կեսին Դերբենդից մինչև Բաքու ընկած տարածքի մահմեդական բնակչության մասին նշում է, որ նրանք «թաթարական» և «պարսկական» արյուններից առաջացած «խառնուրդ» են⁴, որը դեռևս ձևավորված ժողովուրդ չէ:

Արշավախմբի գործունեության շրջանակներում գերմանացի գիտնականին հաջողվում է հավաքել և մեզ փոխանցել տարածաշրջանի հայ բնակչության թվի մասին որոշ տեղեկություններ: Այսպես Ս. Գմելինի վկայությամբ Դերբենդ քաղաքում 1770-ական թթ. շուրջ 4000 ընտանիք կար, որոնցից 100-ը՝ հայկական⁵:

Ղուբա քաղաքի մերձակայքում մի քանի հայկական տներ են եղել, որոնցից մեկում իջևանել է արշավախումբը: Կասպից ծովի ափի Նիզաբադ կայանից ոչ հե-

2 С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, II половина, СПб., 1785, с. 544.

3 Հողվածուս հանդիպող էթնիկական անվանումներն օգտագործել ենք պահպանելով բնօրինակի ձևաչափը:

4 С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, I половина, СПб., 1785, с. 19.

5 С. Гмелин, նշվ. աշխ., էջ 19: Жизнь Артемия Араратского, уроженца селения Вагаршапат близ горы Арарат, ч. II, СПб., 1813, с. 115.

ուու եղել է Բարագուեն (կամ Վարագուեն) կոչվող հայկական գյուղը, որի տարածքով իրենք անցել են⁶:

Ս. Գմելինի հաղորդմամբ Շամախի քաղաքում կար 50 հայ ընտանիք⁷, որոնք խառն ապրում էին թաթար բնակչության հետ:

Ապշերոնի թերակզու Սալիան գավառում գյուղերը անկանոն կերպով սփռված էին Կուր գետի երկու ափերին, որտեղ ապրում էին պարսիկներ, թաթարներ և «ոչ մեծ քանակությամբ հայեր»⁸:

Ս. Գմելինը, ներկայացնելով հայ բնակչության թվի մասին տեղեկություններ, ցավոք, որևէ աղբյուր չի հիշատակում: Մյուս կողմից, հիմքեր չկան դրանց թերահավատորեն վերաբերվելու, քանի որ արչավախմբի նպատակն էր նույնությամբ գրի առնել այն ամենն, ինչին որ ականատես կլինեն: Հետևաբար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 18-րդ դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասը Իրանից փաստացի անկախ քաղաքական կարգավիճակում էր գտնվում, և յուրաքանչյուր խան իր տիրույթների բացարձակ ու կամայական կառավարիչն էր (սոցիալ-իրավական կամայական քաղաքականություն), Ս. Գմելինի փոխանցած տեղեկությունները հավաստի լինելու մեծ հավանականություն են ձեռք բերում՝ մնալով որպես նշված ժամանակաշրջանի գրեթե միակ ու եզակի սկզբնաղբյուր:

Բացի հայերի թվի մասին տեղեկություններից, Ս. Գմելինի Ուղեգրությունում խոսվում է նաև նրանց սոցիալ-իրավական կարգավիճակի մասին: Այսպես, Շամախիում հայ բնակչությունը խանի գանձարան հաստատագրված հարկեր էր վճարում յուրաքանչյուր ընտանիքից 100 ուրբու չափով⁹: Շամախու հայ ազգաբնակչությունը հարկերից բացի պարտավոր էր խանին ջիզյա վճարել տարեկան 2 ուրբի և 40 կոպեկ, չամուսնացածները՝ 1 ուրբի և 20 կոպեկ, իսկ մինչև 20 տարեկանները ազատված էին հարկերից¹⁰:

Ս. Գմելինի փոխանցմամբ՝ անհրաժեշտություն դեպքում Շամախիում խանը ցանկացած ճանապարհով հավաքում էր պահանջվող մթերքը, պարենը, ձիերը, անասունը, փողը, սակայն հիմնական ծանրությունն ընկնում էր հայերի վրա¹¹:

Ըստ Ս. Գմելինի, Դերբենդում հայերը «խանին ոչ մի հարկ չէին վճարում»՝ փոխարենը պարտավորվելով ոստիկանական պարտավորություններ կատարել¹²:

Հայերը Շամախիում և Դերբենդում, օտարերկրացիներին բնակարաններ տրամադրելուց բացի, պարտավոր էին քաղաքի դարպասների մոտ պահակային ծառայություն կատարել, քանի որ «ինչպես Դերբենդում, այնպես էլ Շամախիում առավել շատ վստահում էին հայերին, քան թաթարներին ու պարսիկներին»¹³:

6 С. Гмелин, նշվ. աշխ., էջ 48:

7 Նույն տեղում, էջ 96:

8 Նույն տեղում, էջ 112–113:

9 Նույն տեղում, էջ 96:

10 С. Гмелин, նշվ. աշխ., էջ 96:

11 Նույն տեղում, էջ 97–98:

12 Նույն տեղում, էջ 19:

13 Նույն տեղում, էջ 98–99:

Դերբենդում հայերի վստահելի բնակիչներ լինելու մասին է վկայում Ս. Գմելինի հաղորդած այն փաստը, որ խանի շրջապատում մշտապես հայեր կային¹⁴: Դա այն դեպքում, երբ Դերբենդը Ֆաթհ Ալի խանի ժառանգական տիրույթը չէր, նա այն նվաճել էր գեներով, իսկ տվյալ պարագայում վստահել տեղացիներին (այն էլ այլադավան)՝ մեծ ռիսկ էր: Մյուս կողմից, խանի կողքին «մշտապես» ներկայություն կարող էին ունենալ միայն նրա վստահելի մարդիկ: Հայտնի է, որ Ֆաթհ Ալի խանի և Դադստանի տիրակալների միջև 1774թ. Ղուբայի խանություն Գավդուշան կոչվող դաշտավայրում տեղի ունեցած ճակատամարտում խանի զորքի շարքերում արիաբար կռվում էին շուրջ 70 հայեր, որոնց 20-ը զոհվում են՝ մեծ կորուստներ հասցնելով թշնամուն¹⁵:

Ս. Գմելինը գրում է, որ բարձր հարկեր սահմանելու համար Բաքվի հասարակ քաղաքացիները Մելիք Մուհամմադ խանին չէին սիրում ու տարածված էր այն համոզմունքը, որ Բաքվում «արդարադատություն չես գտնի»: Այդ միտքը հատկապես առկա էր հայերի շրջանում, որոնք ցանկանում էին այնքան գումար գտնել, որ կարողանան խանի ճնշումներից ազատվել: Բաքվեցիները դժգոհում էին նաև խանի պահանջած գումարի չափերից, քանի որ իրենք գրեթե ի վիճակի չէին լինում այն վճարել¹⁶:

Ս. Գմելինը հիշատակություն է թողել նաև Արևելյան Այսրկովկասի կրոնական ու դավանական իրավիճակի մասին: Նրա խոսքերով՝ Բաքու քաղաքի «գլխավոր օրենքը» շիա ուղղության մահմեդականությունն էր, սակայն հանդուրժողականություն էր ցուցաբերվում նաև սուննիների նկատմամբ, իսկ հայերն իրենց պատարագը գաղտնի էին կատարում¹⁷: Դա փաստում է, որ խանական իշխանությունները հետապնդում էին հայերին ազատ դավանանքի համար: Շամախու խանությունում Ս. Գմելինը ականատես է լինում մի տեսարանի, երբ հայկական երկու վանքերը պատրաստվում էին խանին 1000 ուլբլի նվիրատվություն տալ և վախենում էին, որ Ֆաթհ Ալի խանը մոտ ապագայում կարող էր կրկնել պահանջը¹⁸:

Հին և Նոր Շամախիների միջակայքում գտնվում էին հինգ հայկական գյուղեր՝ Մերգանի, Մադրասա, Սաղիան, Քերքենջ և Քելուխունի, որոնք խիստ ավերածությունների էին ենթարկվել Ֆաթհ Ալի խանի կողմից Շամախու գրավման ժամանակ (1769թ.)¹⁹: Այս գյուղերի շրջանում գտնվող երկու վանքերի հոգևոր սպասավորները վախենում էին բացահայտորեն օգտագործել եկեղեցական անոթներ, սրբապատկերներ և այլ պարագաներ, քանի որ խանը կարող էր բռնազրավել դրանք: Այդ պատճառով հայկական վանքերում Աստվածամոր սրբապատկերից բացի ոչինչ ցուցադրված չէր, գրում է Ս. Գմելինը²⁰:

14 Նույն տեղում, էջ 44:

15 Русско-дагестанские отношения в XVIII – начале XIX в. Сборник документов, Отв. ред. В. Гаджиев, Москва, 1988, с. 152.

16 С. Гмелин, նշվ. աշխ., էջ 84:

17 Նույն տեղում, էջ 81:

18 Նույն տեղում, էջ 97–98:

19 Նույն տեղում, էջ 96:

20 Նույն տեղում, էջ 107:

Ս. Գմելինն առանձին կետով անդրադառնում է մահմեդականների վերաբերմունքին Իրանում ապրող քրիստոնյաների նկատմամբ: Այսպես, նա գրում է, որ ըստ քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքի մահմեդականներին կարելի է բաժանել երեք մասի: Առաջին խմբում նա առանձնացնում է մոլի կրոնապաշտներին, որոնք ընդգծված խուսափում են քրիստոնյաների հետ հարաբերություններից: Երկրորդ խմբում ընդգրկված մահմեդականները հանդուրժող էին, քրիստոնյաների հետ զանազան առնչություններ էին ունենում, հավանաբար, առևտրային գործունեություն: Սակայն երրորդ խումբը՝ հարբեցողները, կենցաղային մի շարք իրավիճակներում գրեթե տարբերություն չէին դնում իրենց և քրիստոնյաների միջև²¹:

Արշավախումբը տեղեկություններ է հավաքում նաև հայկական բնակչության մասին ինչպես Արևելյան Այսրկովկասում, այնպես էլ Իրանի հյուսիսային շրջաններում:

Խոսելով Իրանում գտնվող կաթոլիկների մասին, Ս. Գմելինը փաստում է, որ նրանք Ռեչտում եկեղեցի ունեին, իսկ էնգելիում տուն կար, որտեղ պատարագ էին կատարում²²: Ըստ նրա՝ Ռեչտի կաթոլիկ միսիոներների գործը հայերին դավանափոխ անելն էր:

Առևտրից և արհեստներից բացի հայերն Իրանում զբաղվում էին խաղողագործությամբ և գինեգործությամբ: Ս. Գմելինի փոխանցմամբ՝ Շիրազում և Սպահանում գինի պատրաստողները հայերն էին, որոնք խաղողի ընդարձակ այգիներ ունեին²³:

18-րդ դ. երկրորդ կեսին տարածաշրջանում ծայր առած քաոսի հետևանքով ակտիվանում են բնակչության տեղաշարժերը: Հակոբ Շամախեցի կաթողիկոսը նշում է, որ Սեֆյան պետության անկումից հետո շուրջ 40 տարի «թագաւորութիւն կարմրագլխաց» չէր հանդարտվում²⁴: Ապակայունացած իրավիճակը Թավրիզի շրջակա գյուղերից և այլ վայրերից մի խումբ հայերի ստիպում է ընտանիքներով 1753թ. մեկնել էնգելի՝ Աստրախան տեղափոխվելու և այնտեղ հիմնավորվելու նպատակով²⁵:

Նշված ժամանակաշրջանում բնակչության (հատկապես, հայերի) տեղաշարժերն Այսրկովկասում այնքան էին ահազանացել, որ որոշ հոգևորականներ չէին կարողանում ձեռնարկել հոգևոր տուրքերի հավաքումը: Հարցը կարգավորելու նպատակով միջամտում է Հակոբ Շամախեցի կաթողիկոսը՝ կարգադրելով,

21 С. Гмелин, Путешествие по России для исследования трех царств естества, ч. III, II половина, СПб., 1785, с. 566–569.

22 Նույն տեղում, էջ 634:

23 Զուղայում հայերից բացի խաղողի մշակմամբ և գինեգործությամբ էին զբաղվում նաև անգլիացի ձեռնարկատերերը, որոնց ընկերությունը Բնդեր-Արբասում դեռևս ծաղկուն վիճակում էր գտնվում: Գինին անգլիացիները Արևելահնդկական ընկերության միջոցով արտահանում էին Եվրոպա (նույն տեղում, էջ 700):

24 ՄՄ ձեռ. 2911, էջ 102բ: Հմտ. J. Perry, The Zand Dynasty, – The Cambridge history of Iran: From Nadir Shah to the Islamic Republic, Cambridge, 1991, vol. VII, p. 96.

25 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 26, էջ 1–2:

որ ժողովուրդը որ վիճակում որ հաստատված է, այնտեղ էլ վճարի եկեղեցուն հասանելիք տուրքը²⁶:

Այսպիսով, Ս. Գմելինի փոխանցած տեղեկությունների արդյունքում հայտնի է դառնում, որ 18-րդ դ. երկրորդ կեսին, Իրանում կենտրոնացված պետության բացակայության պայմաններում, Արևելյան Այսրկովկասում ձևավորված կիսանկախ խանություններում կտրուկ վատթարանում է հայերի սոցիալական և իրավական դրույթները:

Ամփոփելով նշենք, որ Ս. Գմելինի ուսումնասիրությունները Արևելյան Այսրկովկասի և Հյուսիսային Իրանի հայերի քաղաքական պատմության, ազգագրության, սոցիալ-տնտեսական մի շարք հարցերի ուսումնասիրության առումով գիտական և փաստագրական մեծ արժեք ունեն: Նրա հավաքած փաստական նյութը ամբողջացնում է տարածաշրջանի վերաբերյալ նախորդ ժամանակաշրջանների նկարագրություններն ու ուսումնասիրությունները: Լուսաբանվում են մերձկասպյան շրջանների և Իրանի Հյուսիսային նահանգների (Գիլան, Մազանդարան) ժողովուրդների, մասնավորապես հայերի ազգագրությանը, պատմությանը, սովորույթներին, հոգևոր և նյութական կյանքին վերաբերող նորանոր էջեր:

МХИТАРЯН ГОАР

АРМЯНЕ В ПУТЕВЫХ ОЧЕРКАХ НЕМЕЦКОГО ПУТЕШЕСТВЕННИКА САМУИЛА ГМЕЛИНА

Ключевые слова: *Самуил Гмелин, армяне, Восточное Закавказье, Дербент, Баку, Шамакхи, Гилян, XVIII век.*

В 1768–1774 гг. Императорская академия Санкт-Петербурга организует научную экспедицию для изучения прикаспийских регионов и северных провинций Ирана (Гилян, Мазендеран).

Самуил Гмелин, находясь на службе у российского государства, особенно интересовался христианским населением посещаемых стран, в частности, армянами. Во время своих поездок он тщательно изучил условия жизни, социально-экономическую и правовую ситуацию армян в северных районах Восточного Кавказа и северного Ирана, а также их духовную и религиозную жизнь, традиции и обычаи. Академик С. Гмелин исследовал все аспекты жизни армян региона, начиная с этнографической мозаики до описания их менталитета.

MKHITARYAN GOHAR

ARMENIANS IN THE ITINERARY NOTES OF THE GERMAN TRAVELER SAMUEL GMELIN

Keywords: *Samuel Gmelin, Armenians, Eastern Transcaucasia, Derbent, Baku, Shamakhi, Gilan, 18th century.*

In 1768–1774 the Saint Petersburg Imperial Academy organized a scientific expedition in order to explore the Pricaspian regions and the northern provinces of Iran (Gilan, Mazandaran).

26 ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ.1, վավ.52, էջ 1:

When serving in the Russian Empire, Samuel Gmelin was especially focused on the Christian population settled in the countries he visited, particularly Armenians. During his trips, he thoroughly studied the living conditions, socio-economic situation and legal status of the Armenians living in the Eastern Transcaucasia and northern regions of Iran. Academician Samuel Gmelin has also explored all aspects of life of the Armenians, ranging from the ethnographic mosaic to description of their mentality.

ՅԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱՀ** Ազգագրական հանդես
ԲԵՀ Բանբեր Երևանի համալսարանի
ԲՀԱ Բանբեր Հայաստանի արխիվների
ԴՀՎ Դիվան հայ վիճագրության
ԼՀԳ Լրաբեր հասարակական գիտությունների
ՀՍՀ Հայկական սովետական հանրագիտարան
ՄՀ Մատենագիրք Հայոց
ՄՄ Մաշտոցյան Մատենադարան
ՊԲՀ Պատմաբանասիրական հանդես
ՏՀԳ Տեղեկագիր հասարակական գիտությունների

ՍԵՂՐԱԿ ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ – 120
ԳԻՏԱԿԱՆ ՀՈՂՎԱՃՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Խմբագիրներ՝
Գագիկ Մարգարյան
Արսեն Հարությունյան

Ամփոփումների թարգմանությունների սրբագրիչ՝
Բնեսա Հովսեփյան

Ձևավորումը և էջադրումը՝
Արթուր Հարությունյանի

*Շապիկին՝ Մարմաշենի վանքի գլխավոր տաճարի 1225թ. նորոգման
արձանագրությունը (լուսանկարը՝ Հրայր Բազե Խաչերյանի):*



120 945445 3774629150145

ISBN 978-9939-9178-3-2



9 789939 917832